

1353

1 tin  
1353





1999



Հ Բ Ա Բ Ո Ւ Գ Խ

Ա Բ Ա Բ Ա Դ Ա Յ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՄԱԲՈՒՐ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԴԼՄ  
ՄԱԲԱՌՈՂ ԹՃՆԱՄԵԱՅ

Ե Ի

ԼՈՒՇՈՒՄԸ ԵՆԻՐՈՅ ՀՅՈՄԵԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆՑ  
Ի ԳՆԵԱՅ ԳԼԽԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԵՐ ՄՐՈՒԹԵԱՆ  
ԿԱԹՈՂԻԿԷ Ս . ԵԿԵՂԵՑԻՈՅ

1502



Հ Ա Տ ՈՐ Ի .

Ա Շ Ի Ա Տ Մ Ա Ր Ե Ա Յ

ԹԱԳԷՈՍ ՄԻՀՐԳԱՆ Ց . ԱՍՏՈՒՍՇԱՍՏՈՒՐԵԱՆ  
ՄԻՀՐԳԱՏԵԱՆՑ

ՅՅԳՈՅ ՀՍԵԱՏԱՅԵՆՈՅ ԵՐ Ի ՊՏԱՐՄԱՆՆ ՀԱՅԱՍՏԱՆ  
ԵԱՅՑ ՈՂՂԱՓՈՒ Ս . ԵԿԵՂԵՑԻՈՅ

1856 ՓԵՏՐՎԱՐ Ի Կ . ԳՈԼԻՍ ՍԱՄԱԹԻՍ

ԳՈՐԾ Ե Ր Կ ՀԵՂԵՆԱԿԸ

Կ . ՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԵԱՅ

— 1 8 7 0 —

28 1356

41353-60

45

Արքայապետ Ս. Ս. ԱՅՐԻՔ  
ԱՐՔԷՍԵՅԱՆ ԳԵՄԱՐԵԱՍԻ ԶԱՅՐ.  
ԸՆԴՐ ԱՐԿԻ Ի ԶԵՐԱԳԱՐԱՅԷՍ՝

Ի ՅԻՇԱՏԱԿ 1871 ՅԱՐԿ

ԲԱՆՈՒՄԵՆԻ, ՀՈՒԻՈՅ ԻՄՈՅ

ՄԻՀՐԴԱՏԵԱՆ ԹԱԴԷՈՍԻՍ

Ե Օ Ի

Ինչպէս որ մտերս հրատարակուած « Յատ-  
կութիւն Արարադայ » մտկադրով տետրին Ազ-  
գին մէջ իմացուցած եմք Արդոյ հատարակու-  
թեան, որ մեր ժամանակաւ բրած աշխատու-  
թիւնները ընդ գրուանաւ մնացած են; զորոնք  
Ս. Եկեղեցիս պաշտպաններու եւ անոր ծառայու-  
թիւն մը ընելու նպատակաւ գրած եմ. կը յու-  
սայինք թէ կամ ընկերութեամբ եւ կամ բա-  
րերար անձի մը նպաստիւք ՚ի լոյս կընծայեմք,  
բայց դժբաղդարար յոյսերնիս պարապ ելաւ . . .

Ուստի սոյն աշխատութեանցս Տրդ. գործին  
երեք Մասն ուլ ահա կը հրատարակենք մեր ծախ-  
իւքը գրոջմելով, ոչ թէ մենք մատենագիր երեւ-  
նալու, այլ Սրբազան Հարց վկայութիւնները հա-  
ւաքած ըլլալով ՚ի լոյս կընծայեմք, գրեա թէ իբր

աղքատակ լուծա մը մեր ահապահն դատարան  
թեամբը 'ի սէր Ազգիս եւ 'ի Ս. Եկեղեցւոյ կը  
նախընտրէր, մանաւանդ որ նոր 'ի նորոյ հակառակ  
կու թիւններ տեսնելով պարտաւորեցանք 'ի լոյս  
լնձ աչել, թէ պէտ եւ այժմ՝ ժամանակներս ալ շնե-  
րէր (քանզի երկու տարիէ 'ի վեր իմ նախնի վի-  
ճակս կորսնցս զամ առաւել եւս կը առաւապիմք  
սոյն վէճերը տեսնելով), բայց դիտցուի որ 1854  
թուէն մինչեւ 1856 թուոյն ձեռնարկած եւմ հան-  
գուցեալ հաղելոյս Յակոբ Ս, Պատրիարք Հօր  
յորդորմամբը եւ հարկեցուցիչ հրամանաւն նոյն  
ժամանակը որ Ս. Եկեղեցւոյս վրայ արեւմտեան  
պիւններ կը տեղադր այժմեան պէս, զորս ընթեր-  
ցողք կրնան իմանալ երբ կարդալու ըլլան, այ-  
ոհինքն Աթոռ Պետրասի, Կերտազա լրագրին եւ  
մանաւորապէս Պատուելի Զամուրճեանի եւ այլ  
անձանց շաղակրատաւ թիւնները, որանցմով Արք-  
րազան Հոյրը կը տագնապէր, բայց սակայն ետ-  
քը մէկ երկու Ամիրայից միջնորդութեամբը վէճը  
իրբ թէ դադրելով կարեւոր չդատեց տալու  
վտանորոյ այն ժամանակէն 'ի վեր թագուն մնա-  
ցած էր Ահա տնտեց դէմ պատասխան մընէ այս,  
թէ պէտեւ նոյն միջոցին ազգային լրագիրը բաւա-  
կան դէմ գրեցին, մանաւանդ Մատիս լրագրոյ  
Մեծարդոյ խմբագիրը, եւ այս ալ կրտսնք չկար-  
ծուի որ յիշեալ անձանց դէմ տալու թիւն կամ  
անձնական վէճ մը ունինք, քան լոյսի միայն թէ  
ճշմարտութիւնը երկու անհանելու համար քրտնա-  
ջան աշխատու թեւամբ 'ի լոյս ընծ աչեցինք, ինչ որ



Հոգին սուրբ պարզեւած է մեղ, քանքարաթա-  
գոյց չըլլալով իմ սրբազան պարտաւորութիւնս  
կատարելու ժոյթ տարի այս անձուկ վիճակիս  
մէջ. յուսալով այն պատգամին սրկըսէ. « Զօրու-  
թիւն Աստուծոյ ՚ի տկարութեան ճանաչի » :  
Ռատի խնդրելով յընթերցողաց յիշման արժանի  
սունել զձառայս Աստուծոյ որ եմ :

1870 Հոկտեմբեր 12

Թ. ԲԻԶՐԴԱՏԵԱՆ

Ի Սամաթիա



Ն Պ Ը Տ Ը Կ Գ ՈՐ ՆՕ ՈՅ Ս

Արդ ժամանակիս թշուառութիւնը զմեզ  
կը բռնադատէ դրիչ ձեռք առնուը եւ դա-  
յուս լինդդէմ մեր անարատ Ս. Եկեղեցւոյ վը-  
րայ եղած թշնամութեանը դէմ զինելու, քան-  
զի ֆրիստտի եկեղեցին պատառ պատառ բա-  
ժանելով ամեն կողմէն որտաման ձայներ կ'ել-  
լեն. ոմանք պոսպական դրօշակին ներքեւը մը-  
տած՝ Պապական դրօշակաւ կը զինին նոյն ե-  
կեղեցին սյաշտպանել ուղելով, իբր թէ Հը-  
ռովմայ Եկեղեցին է մի միայն ճշմարիտ Եկե-  
ղեցի եւ անոր վարդապետութիւններն են ան-  
սրխալ. ոմանք Գաղղիական կառավարութեան  
դրօշակաւ, ոմանք Գերմանական, ոմանք Ռու-  
սական եւ Հելլենական դրօշակաւ, ոմանք Անգ-  
ղիական, եւ ոմանք ալ աշխարհիս անդունդ-  
ներէն վեր ելած եւ հաղիւ թէ նոր լուսաւոր-  
ուած՝ մեր ծերացեալ եւ այնչափ բարբարոս-  
ներէ եւ հեթանոսներէն անթիւ եւ անհամար  
անտանելի հալածանայ մէջ թափառելով եւ  
իբր ոսկի ՚ի բալս ՚ի հրոյ փորձեալ նախածնող  
եւ անդրանիկ եկեղեցիներնուս դէմ կը զինին Ա-  
մերիկայի դրօշակաւ, իբր թէ Աւետարանա-  
կան ճշմարտութիւնը իրենց քովն է, եւ իբր թէ  
իրենց եկեղեցին է միայն Աւետարանական ճըշ-

մարտիս եկեղեցին, թող եւ ասանց դարաննե-  
րուն մէջ ընկող ընտանի դաւաճանաց բրած  
դաւաճանութիւնները եւ այլն:

Մենք ալ ֆրիաստուական Ս. գրօշին ներքե-  
ւը մտնելով եւ նորա Ս. խաչը մեզի օգնական  
ու պաշտպան առնելով, այս վերագրեալներուն  
մէջէն այժմ միւսները մէկտէ թողլով՝ միայն Հր-  
ուովմի շողոքորդներուն, այսինքն պապական ե-  
կեղեցւոյ կառավարութեան ներքեւ մտնող եւ ա-  
նոր պաշտպանութեամբը կամ գրօշակաւը մեր ա-  
մենամաքուր Ս. եկեղեցւոյն վրայ դրով եւ բանիւ-  
յարձակող թշնամիներնուս համար կը գրչադի-  
նիմք, որ 6 դարէ ՚ի վեր կը փրէ այս գէշու-  
թիւններն ու տարաձայնութիւնները, այսինքն  
Ունիթուեանց եւ անոնց յաջորդներուն բրած  
զազրայի գէշութիւնները եւ խօսած ու գրած  
մտորական վարդապետութիւնները, որ ազգիս  
մէջ տարաձայնութիւն ձգեցին, եւ միշտ ազ-  
գիս խաղաղութիւնը կը շփոթեն եւ կուզեն  
ոյարտաւորել ստութեան գլուխ խոնարհեցնե-  
լու, այնպիսի եղանակաւ մը, որ չընդունողը  
հերետիկոս եւ կամ անհաւատ համարուելէն ՚ի  
դատ, այլեւ նորաձեւ բան (ֆորմա) մըն ալ ե-  
լած է այժմ, որ ոմանց դաղափարին մէջ բողոքա-  
կանութեան աղանդին մէջ գլխած կը հերքը-  
տի՞ էւ այնպիսի ժամանակ մը, ինչպէս որ մօ-

\* Տես Վենետիկացոց եւ Վիէնացոց հրատարա-  
կած գրութիւնները եւ անոնց գրութեանը հետեւող  
Պ. Չամբուրճեանին դորձքերը:

աներս կը դրէ Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետներէն մէկը ըսելով թէ՛ «Անդդիւային կը դատապարտէ զՊապը, եւ զպապականները, Յոյնը կը նշովէ, Ռուսը կը հալածէ, Գերմանացին հազար ու մէկ արիւնհեղու թիւններով պապական իշխանութիւնը կը ջնջէ, եւ Եւրոպան ընդհանրապէս զՊապը իւր լատինական կողարին մէջ կը պարաւանդէ, եւ դարձեալ սորոմելի պատգականները չեն դադարիր պապին գլխաւորութիւն պահանջել այս ամեն ազգաց վրայ, ցաւային այն է որ, որքան այս արհամահելի գլխութիւնը կը պահանջէ, այնքան եւ մարմնոյ հուսաարութեան մէջ կը մնայ»

«Ապա այսքան ներհակ պարագաներու մէջ մէկ մխիթարութիւն եւ յոյս միայն գտած է իւր գլխաւորութեան Հայաստանեայց եկեղեցին, որ վասն զի Ռուսի պէս զինքը չ'հալածեր, եւ Յունաց հետ չ'նշովեր, այլ առաքելական հոգւով կը վարուի անոնց դէմ, եւ այդ սնտոխ պահանջմունքները հերքելէն ետքը, զինու զօրութեամբ դէմ չ'դնէր իրեն ըղձիցը, Պապն ալ կարծիք կ'ընէ որ իւր ըղձացեալ գլխաւորութիւնը պիտի գտնայ ազգիս հոգեւոր իշխանութեան եւ եկեղեցւոյ վրայ, եւ այս ազգիս ներկայ միճակը կշռելով, որ թագաւորութիւնն իսկ կորսնցուցած, (անոնց անդ թութեամբը ու դէշութեամբը, նոյնպէս ալ կուղեն որ կրօնքն իսկ ալ բառնան, որն որ դրունք դժոխոց մինչեւ ցայսօր չը կրնացին յաղթահարել ու պիտի

չ'կրնան.) իւր հոգեւոր իշխանութենէն ալ ազգին խիստ փոքրիկ մասը բաժնուած, (նա'եւս անոր ձեռնտուութեամբ), եւ մանաւանդ թէ քանի մը վեատ Սարգիսներ ալ գտնուած է մեջերնիս, որոնք անձանց պատիւնին աւելի կ'ընտրեն, քան ազգի եւ եկեղեցւոյ զերագունութիւնը. իրենք բաժնուելէն ետքը, կուզեն որ ազգային յատկութիւննիս ալ սրապին առանձնաշնորհութիւն ընեն" (Պաշտպանութիւն : Երես 22 :

Թէպէտ եւ հիները անցան զնացին անյոյս, որոնց մեր նախնիքը ժամանակին իւրաքանչիւր ոք իր կարողութիւնը տանելուն չափ պատասխանեց, բայց այժմ կը տեսնամք, որ նոյն Ունիթոռեանց հազար ու մէկ անդամ հերքուած մտորական վարդապետութիւնը ընդունել տալ կուզեն վերստին նորին մնացորդները եւ հետեւողները, մանաւանդ վիէննայու Միսիթարեան միաբաններէն Հ. Պալճրեանին հրատարակած «Աթոռ Պետրոսի» անուամբ մատենանը, որ բազում հայհոյութիւն ու մտորական վարդապետութիւններ կը քարոզէ այս նիւթիս վրայ կերպ կերպ որոտմունքներով, ու վայելը կը կարգայ չ'ընդունողներուն վրայ, նոյնպէս ալ կերպիւ մը՝ նոյն մտորապետին հետեւող եւ իբր անոր արձագանքը եզող Պ. Յոհաննէս Չամուրճեանին հրատարակած գրութիւնները, որ կուզեն հաստատել Հոռովհականաց այս նոր տեսակ եւ ընդհա-

նուր եկեղեցիէն հերքուած մուրական վարդապետութիւնը , իայց քա՛ւ թէ վախնայ Հայոց ազգը այսպիսի սուտ եւ խարէապատիւ չոր որոտմունքէ մը , եւ իւր զխոյսած ու ներքին համոզմամբ ընդունած ճշմարտութիւնը ապացուցանելու տարակուսի . ի՞նչ է այս որոտմունքը , եւ ո՞րն է այն մուրական վարդապետութիւնը ու խարերայ Չայնը , ահա՛ զաա զաա կը դնեմք :—

Ս.Ա.Մլին. Ազգարարական ճառ եւ համառօտ նկարագիր Ազգիս Հայոց եւ պատասխանատուութիւն մերս եկեղեցւոյ 'դէմ՝ մաքառողաց :

Երկրորդ. Եկեղեցւոյ նախնական Սահմանադրութենէն զտուելով . մտացածին վարդապետութեամբ կողճատեն Ս . Աւետարանի խօսքերը , Պետրոս Սրբազան առաքելոյն վրայ՝ տնոր չ'ընդունած իշխանութիւնը բեռցնելով , ինչպէս , « դու ես վէմ եւ 'ի վերայ այդը վիմի շինեցից զեկեղեցի իմ՝ եւ դրունք դըժուխոց զնա մի յազթահարեացն . եւ տաց քեզ զվականս արքայութեան երկնից , եւ զոր միանդամ կապեացես յերկրի , եղիցի կապեալ յերկինս , եւ զոր արձակիցես յերկրի , եղիցի արձակեալ յերկինս . եւ կամ , այլ ես աղաչիցի զհայր վասն քո , զի մի պակասեցին հաւատք քո . եւ դու երբեմն դարձցիս , եւ հաստատեացես զեղբարս քո » . եւ թէ՛ « Սիմոն Յոնանու՝ սիրե՞ս զիս առաւ եւ քոն զդուստ :— Ասէ ցնա , այո՛

Տէր . . . զի սիրեմ զքեզ: — Ասէ ցնա, արած ես՝  
 գոչխարս իմ ո՛ր: Այս խօսքերուն լուծումը Հայ-  
 աստանեայց Ս. Եկեղեցին ըստ տուչութեան  
 Հոգւոյն ընդհանուր եկեղեցւոյ Սահմանադրեալ  
 ծանօթութենէն քաղելով, հաւատացեալները  
 ապահովուցած է ժամանակ առ ժամանակ եւ  
 կապահովցնէ. բայց ամենաչարը իւր գործակ-  
 ցաց միջնորդութեամբը պակաս չ'ըներ իւր յա-  
 բուցմունքը, ճշմարտութիւնը աղճատելու հա-  
 մար, ինչպէս երբեմն Յովբայ վերայ վորձու-  
 թեան մատեաւ. բայց օրհնեալ է Աստուած որ  
 յաղթութիւնը միշտ ճշմարտասէր կողմանն է:

Երրորդ. Կը պահանջուի Հայոց ազգէն որ  
 Պապը ընդհանուր եկեղեցւոյ գլուխ ճանչնայ  
 եկեղեցւոյ սրբազան վարդապետաց զրուածնե-  
 րէն բռնադատուած. եւ յիրաւի, եթէ լու չը-  
 հասկնայ սրբազան վարդապետաց խօսքին զօ-  
 րութիւնը, այս թակարդին մէջ իյնալու ար-  
 դելք մը չիկայ, եւ ազատ չէ ինքզինքը պաշտ-  
 պանելու, քանզի եկեղեցւոյ նախնական աւան-  
 դութիւնը եւ հաւատքը անարատ պահպանե-  
 լու պարտականութիւնը ունի անշուշտ:

Չորրորդ. Կը պահանջուի Հայոց ազգէն թէ  
 ընդունի Ս. Լուսաւորչի Հովմայ Սեդրեսարոս  
 Պապէն Պաարիարքական իշխանութիւն առնուլը,  
 եւ ուրանայ Սրբոյն Թադէոսի եւայլն առաքե-  
 լոց յաջորդութիւնը եւ Առաքելական իշխա-  
 նութիւնը, որ անուրանալի ճշմարտութիւն մը-  
 նէ Ազգիս Հայոց մէջ անխախտ շարունակելը:



եւ այս ալ խաբէութեամբ եւ խառնաձայն շը-  
փոթմամբ ընդունել տալ կուզեն, իբրեւ թէ 'ի Ս.  
Լուսաւորչէն սկսեալ Հայոց կաթողիկոսունք  
միշտ հպատակութեան եւ հնազանդութեան  
գիրեր գրած ըլլան Պապին, որ է 'ի հիմանց  
սուտ. թէ եւ գրուած կայ, բայց չէ թէ իբրեւ  
գլխոյ եկեղեցւոյ հնազանդելու գիրեր կը նը-  
շանակեն, ինչպէս Ս. մասին մէջ բաւական  
հասկցուելէն 'ի զատ, նոյնպէս ալ այս գլխոյն  
մէջ տեղն 'ի տեղը սխաի ապացուցուի :

Հինգերորդ. կառաջարկուի որ ընդունիմք  
Ս. Գրիգոր Լուսաւորչի ու Սեղբեստրոս Սրբա-  
զան հայրապետին մէջ իբր թէ եղած հաւատոյ  
դաշնագրութիւնը, յորմէ կուզեն հետեւցնել  
թէ հպատակի Հայոց եկեղեցին Հռովմի հայրա-  
պետաց, կամ լաւ եւս ասել թէ այսու կեղծ  
գրութեամբ Հռովմայու պարզեւ մատուցանել  
կուզեն ազդն Հայոց, եւ կըսեն ալ թէ եկեղե-  
ցական դասակարգութիւնը ինն է, եւ այն ին-  
ներորդն ալ Հռովմայու Պապն է, որ բոլոր հայ-  
րապետաց գլուխ եւ ղեկավար է, վասն զի գըր-  
եալ թէ « իններորդ վահագոյն քան զամենե-  
սին Պապիս » . Յիրաւի եթէ այն դաշնագրու-  
թիւնը ինչպէ՞ս եւ ո՞ր եղանակաւ եւ որ՞ու հետ  
ըլլալ չգիտնայ մէկը, եւ թէ Հայաստանեայց  
եկեղեցին 'ի նախնեաց անտի ինն դասակար-  
գութիւնը ունեցած չըլլայ, այս առաջարկու-  
թիւնները ընդունելու կը պարտաւորի :

Վեցերորդ. կաղաղակեն թէ՛ հռովմէական

եկեղեցին է միայն ընդհանուր եկեղեցի եւ անոր վճիռներն են ընդհանուր եկեղեցւոյ վճիռ, որ 'ի սկզբանէ անտի նորա հրամանաւ ընդհանուր ժողովք՝ կազմուեցաւ, եւ անոր վճիռներովը եկեղեցւոյ անսխալութիւնը պաշտպանուեցաւ, կըսեն յանիրաւի, վասնորոյ երեւակայեալ վիճակներու, այսինքն՝ կեսարիոյ, Եջմիածնի, Կիլիկիոյ, Սիւնեաց, եւ այլ տեղերու երեւակայեալ եպիսկոպոսներ կարդած ունի, եւ այն եպիսկոպոսաց ժողովքովը բրած վճիռներուն Տիեզերական ժողովոյ վճիռ անուանելով ինքզինք կը խաբէ. այս ալ մէկ երեւակայութեան հիւանդութիւն մ'է. ասով մասնաւոր հռովմէական եկեղեցւոյ ընդհանուրի ազդեցութիւն վաստկցնել կուզէ, բոլոր ուղղափառ կաթողիկոսաց, արքեպիսկոպոսաց իրաւասութիւնը յափշտակելով, հակառակ նախնի Տիեզերական ժողովոց արդարացի սահմանադրութեանց, եւ ասով հռովմէական եկեղեցւոյ անսխալութիւն մը հաստատել կերեւակայէ:

Եօթներորդ. Անդնդային որոտման շառաչմունքը այն է թէ ընդհանուր եկեղեցւոյ հետ միաձայն վարդապետութեամբ միացեալ ըլլալը բաւական չէ, այսինքն՝ Նիկիական հանդանակ ունենալը եւ զանի աներկմիտ հաւատով դաւանելը օգուտ մը չունենար՝ մինչեւ որ առաքելապետին Պետրոսի յաջորդաց երեւակայեալ Տիեզերական իշխանութեան յարեւելից մինչեւ յարեւմուտս գլուխ չը խոնարհուի եւ անոր եկե-

զեցւոյն եւ հանած վճռոյն չը հնազանդութի. ե-  
թէ ոչ յորթոյ հատեալ ցամաքեալ ուռ կը հա-  
մարութի. որովհետեւ մի միայն առաքելական ե-  
կեղեցին այն է, եւ այլն եւ այլն :

Ապաքէն ահա այս առարկաներէն բռնա-  
դատեալ կսկսիմք Աստուծով բացատրել, թէ  
Ս. Գրոց եւ թէ Սրբազան հարց վկայութեամբը,  
այս եւ ասոր նման խնդիրները լուծելու. որով  
նախ կսկսինք համառօտ կերպիւ Հայաստանեայց  
եկեղեցւոյ նկարագրութիւնն ընել, հանդերձ  
պատասխանատուութեամբ ընդդէմ մաքառողաց  
ի վերայ կաթողիկէ Ս. Եկեղեցւոյս. եւ ապա յիշ-  
եալ խնդիրներն կարգաւ մասն եւ մասն բացատ-  
րելէն զկնի Ռեթերորդ Մասն ալ Յաւելուու-  
ծով մը բոլոր ազանդաւորաց եւ բողոքականաց  
դէմ վերջաբան պատասխան մը գրել, որք մա-  
քառեալ են եւ որք մաքառին այժմ ՚ի վերայ  
մերս անարատ Ս. Եկեղեցւոյ :

Բ Ն Ա Բ Ա Ն

«Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, եւ ինքն է փրկիչ մարմնոյ» . (այսինքն եկեղեցւոյ) Պօղոս Առաք. Եփես. Ե. 23

Եւ նա (Քրիստոս) է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ . (այսինքն հաւատացելոց) Կողոս. Ա. 18.

Եւ զնա եղ գլուխ 'ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նորա, լրումն որ դամենայն յամենայնի ընու : Եփես. Ա. 23 :

Մի ոք զձեզ խաբեսցէ. որ կամիցի խոնարհութեամբ եւ կրօնիւք հրեշտակաց, զոր չիցէ անսեւալ, զրահեա վարեալ եւ տարապարտ հոգարտացեալ 'ի մասց մարմնոյ իւրոյ, եւ ոչ ունիցի զգլուխն Քրիստոս, ուստի ամենայն մարմինն յողիւք եւ խաղալեօք տարբերեալ եւ խառնեալ անէ զանուան Աստուծոյ (Կողոս . Բ. 18 . 19 )

Եթէ ճաշակիցէք զի քաղցր է Տէր : Աս որ մատուցեալ էք 'ի վէմն կենդանի, որ թէպէտ 'ի մարդկանէ անարգեալ, այլ աս 'ի յԱստուծոյ ընտրեալ եւ պատուական է : Եւ դուք իբրեւ զվէմն կենդանիս շինիք տաճար հոգեւոր յանարատ քահանայութիւն մատուցանել զհոգեւոր պատարագս՝ հաճոյ Աստուծոյ, 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի :

Քանզի կայ իսկ 'ի գրի . եթէ անհաւասիկ զնես 'ի Սրն վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական, եւ որ 'ի նա հաւատասցէ մի ամաչեսցէ : Չեզ այսուհետեւ հաւատացելոցդ վէմ պատուական . իսկ անհաւատիցն՝ վէմն զոր անարգեցին շինողքն, նա եւ զեւ գլուխ անկեան եւ վէմ գլորման եւ վէմ գայթակղութեան, որ դայթակղին ապատամբեալք 'ի բանէն յոր եւ եղան : (Պետրոս Առաք. Թղթ . Ա. Բ. 3 . մինչեւ 8 ) :

ԱՂԲԻԻՐ ԳՐՈՒԱԾՈՑ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՐՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԶՈՐՍ ԱՌԱՔ Ի ՎԿԱՅՈՒԹԻԻՆ Ի ՄԷԶ

ԴՈՐԾՈՑՍ ԱՅՍՈՐԻԿ

ԴԱՐ ԱՌԱԶԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Նոր կտակարան, կանոն Առաքելական, Ս. Կղեմէս, Ս. Դիոնեսիոս Արխապագացի եւ Ս. Իգնատիոս:

ԴԱՐ ԵՐԿՐՈՐԴ

Հեգեսիպոս, Ս. Յուստինոս, Ս. Պողիկարպոս եւ Ս. Երանոս:

ԴԱՐ ԵՐՐՈՐԴ

Փիլիմիլիանոս, Գրիգոր Նէօկեսարեայ, Յղիկիանոս Կեսարիոյ, Կղեմէս Աղէքսանդրացի, Ս. Կիպրիանոս եւ Ս. Դիոնեսիոս Աղէքսանդրացի:

ԴԱՐ ԶՈՐՐՈՐԴ

Հուսաւորիչ, Ագաթանդեղոս, Եւսեբիոս Յակոբ Մծբնայ, Եփրեմ Սարուոց, Կիւրեղ Երուսաղէմայ, Գրիգոր Ստուածաբան, Գրիգոր Նիւսացի, Աթանաս Աղէքսանդրիոյ, Բարսեղ Կեսարու, Մակար Երուսաղէմայ, եւ այլն եւ այլն:

ԳԱՐ ՀԻՆԳԵՐՈՐԳ

Ս. Եպիփան, Ոսկեբերան, Սահակ Պարթեւ  
Ս. Մեսրոպ, Խորենացի, Մեծն Ներսէս, Յով-  
հան Մանդակունի, Եղիշէ Ս. վարդապետ, Ամբ-  
րոսիոս, Հերոնիմոս, Սերբերիանոս, Օգոստինոս,  
Դաւիթ անյաղթ, Կորիւն, եւ այլ թարգմանիչք  
ի նմին դարու :

ԳԱՐ ՎԵՅԵՐՈՐԳ

Երանելին Գիւտ, Ղազար փարպեցի, Հեղի-  
կիոս Երուսաղէմայ, Պետրոս ֆերթող Սիւնի,  
Մեծն Գրիգոր Հռովմայ, Ս. Գերմանոս Կ. Պօլսոյ,  
Դոմնաս Ապամիայու, Երանելին Պրոկղ, եւ այլն :

ԳԱՐ ԵՕԹՆԵՐՈՐԳ

Կոմիտաս Կաթողիկոս, Վրթանէս քերթող,  
Յովհան Դամասկացի, Ստեփաննոս Ա. Սիւնեցի,  
Ս. Յովհան Խմաստասէր, Անանիա Շիրակացի, Սե-  
բէոս Եպիսկոպոս, Մովսէս Ավանեցի եւ այլն :

ԳԱՐ ՈՒԹՆԵՐՈՐԳ

Սահակ Կաթողիկոս, Ակակ Մէլիտինոյ, Աբ-  
րահամ Եպիսկոպոս, Թէոդօրոս Անախոքա, Գրի-  
գոր Հռովմայ, Սիոն Կաթողիկոս, եւ այլք :

ԳԱՐ ԻՆՆԵՐՈՐԳ

Ջաքարիա Կաթողիկոս, փոռ Պատրիարք

Պօլսոյ, Համամ վարդապետ, Յովհաննէս Կաթողիկոս, Մաշտոց վարդապետ, եւ այլն:

ԴԱՐ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Սնանիա վարդապետ, Նարեկացի, Խոսրով Կախիտպուս Անձեւացի, Ս. Գրիգոր Նարեկացի, Յովհաննէս Կողբու եւ այլն:

ԴԱՐ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Պետրոս Գետադարձ, Գրիգոր Մազիսարոս, Ս. Գրիգոր վկայասէր, Ստեփաննոս վարդապետ երանաշնորհ, Ստեփաննոս Ասողնիկ, Սամուէլ Երէց ժամանակագիր եւ այլք:

ԴԱՐ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Սարկաւազ վարդապետ, Ս. Գրիգոր Պահլավունի, Ս. Ներսէս Շնորհալի, Մխիթար Գօշ, Սարգիս վարդապետ եւ իդնատիոս վարդապետ մեկնիչք, Մակայ Աւղինոսի դործք, Ներսէս Լամբրոնացի, Գէորգ Սկեւուացի եւ այլն:

ԴԱՐ ԵՐԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Եսայի վարդապետ Նշեցի, Գրիգոր Սկեւուացի, Յօհան Երզնկացի, վանական վարդապետ, Մեծն վարդան, Մխիթար Սկեւուացի, Բարսեղայ ճօն կոչեցելոյն, Տօնական վարդապետ, եւ այլք:

Նաեւ Պատմութիւն ժողովոց, այսինքն Ա. Նիկիոյ, Ա. Կ. Պօլսոյ, Ա. Եփեսոսի Տիրեղերական Ս. ժողովոց, այլ եւ Բաղկերզոնի ժողո-





ՀՐԱԲՈՒՂ, Խ

Ա. Բ. Ա. Բ. Ա. Դ. Ա. Յ

ՄԱՍՆ Ա.



# ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՈՑ ՆԿԱՐԱԴԻՐ ԱՅԺՄԵԱՆ ԱԶԴԻՍ ՀԱՅՈՑ

Ե Ի

ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՄԱՒԱՌՈՂԱՑ  
ՄԵՐՍ ԱՆԱՐԱՏ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ

Ժամանակէ մը 'ի վեր ցաւօք սրաի տեսնելով սիրելի ազգս, որ ոմանց տուած դայթակղելի վարմունքէն եւ անոնց հրատարակած գըրութիւններէն խաբուելով եւ մանաւանդ չափազանց օտարասիրութեամբ մը՝ (չբսեմք թեթեւամտութեամբ) իրենց Ս. եկեղեցիէն պաղութիւն մը ցուցնելով, տարաձայնութիւն եւ վէճ յարուցանելու կը ջանան ազգիս մէջ, ոմանք Բողոքականաց, ոմանք Յունադաւանաց եւ ոմանք Հռովմէականաց կողմը միտելով, եւ անանկ ժամանուկ մը որ բոլոր աշխարհ ոտքի վրայ ելած արիւն կը թափեն հասարակաց ապագան լուսաւորելու եւ լաւցընելու համար. բայց մեր տարաձայնները, փոխանակ աղօթելու անոնց համար քրիստոնէավայել չարտաւորութեամբ եւ կամ դոնէ ազգիս ապագային բարելաւութեանը վրայ խորհելու, կսկսին հակառակութիւն եւ կրօնական վիճաբանութիւններ յա-

բույանել՝, ինչպէս յայտնի է Գողէճյուոց, վե-  
նետիկցւոց եւ Վիէննացւոց հրատարակած դրու-  
թիւններէն զատ, սյլ եւ Պ. Չամուրճեանին հը-  
րատարակած Զօհալն դրութիւններէն, թէպէտ  
եւ կը խոստովանիմք որ ազգիս ամենափոքր  
մասը յարում ունին այսպիսի եպերելի ընթացք-  
ներու, բայց ի՞նչ օգուտ, օտարք տեսնելով,  
առ բոլորն կը վերաբերեն՝ ազգերնիս պա-  
խարակելով, ըստ առաքելւոյն. «Փոքր ինչ խը-  
մոր դամենայն զանգուածն խմորէ»\* ։

\* Մեր դորձը պատերազմը չի դադրած եր-  
կու ամիսի չափ յառաջ դրած ըլլալով՝ այնպէս  
թողուցինք. գոհութիւն Աստուծոյ այժմ արիւնա-  
հեղ պատերազմը դադրեցաւ ու խաղաղութիւնը  
տիրեց աշխարհիս. եւ թէպէտ կայսերաց պատերազ-  
մը դադրեցաւ, բայց մեր ընտանի ազգային դա-  
ճաճներուն պատերազմը չի դադրեցաւ. ուրեմն  
առ Աստուած աղօթենք, որ կամ այնպիսի տարածայն-  
ները ազգիս մէջէն բառնայ, եւ կամ իր օրհնեալ  
կամօքը այնպիսիներուն դարձ տայ, որ ազգերնուս  
մէջ անդորրութիւնը ու միութիւնը եւ հետեւաբար  
սէրը թագաւորէ . . . ։

\*\* Եւ այս տարածայններն ալ երկու կերպիւ կը  
գտնանք. նախ ոմանք չգիտնալով որ՝ իրենց ազգը  
եւ եկեղեցին չկրկնեց ծունր Վահագու, վասն որոյ  
իբր թէ ուրիշ եկեղեցեաց յարելով՝ իրենց մտօքը  
իբր ճշմարտութեան կը հետեւին, եւ կամ իբր թէ  
իրենցը մոլար կարծելով ուրիշներէն ճշմարտու-  
թիւն կուզեն սորովիլ, Չեն գիտեր խեղճերը, որ ի-  
րենց մէջը մոլորապետ մը եւ մոլորութիւն մը չէ

Ահա այս դայթակղելի եւ ապօրիաւոր ընծ  
թայքներէն ստիպեալ որքան որ դիտաւորու-  
թիւն ալ ունէինք, բայց դործը ծանր ըլլալով  
եւ մեր անբաւականութիւնը ճանչնալով՝ չէինք  
համարձակեր գրիչ ձեռք առնելու, սակայն քա-  
նի մը ազդասէր անձանց ինգրանօքը եւ մանա-  
ւանդ Յակոբ Ս. Պատրիարք Հօր մերոյ հարկե-  
ցուցիչ բարձր հրամանաւը՝ պարտաւորեցանք  
յանձն առնուլ, մեր կարողութիւնը տանելուն  
չափ սակաւ ինչ տեղեկութիւն տալ ազգիս բա-

ծագած քրիստոնէական լոյսը ընկալած օրէն՝ ՚ի վեր,  
բայ ՚ի անխոհեմ կառավարութենէն եւ քսածընելի  
տարածայնութենէն, որոնց պատճառն ալ յայտնի է,  
որ ըստ մեղաց մերոց աշխարհային իշխանութիւն  
չունենալնուս եւ բոլոր երկրի մէջ ցրուելնուս հա-  
մար է, եւ ոչ այլ ինչ. եւ չեն ալ գիտեր Աւե-  
տարանական վարդապետութեան վճիռը թէ՛ հա-  
ւասք ըսածդ սիրով կը յաջողի ՚ի Գրիստոս Յիսուս,  
որն որ Հայաստանի Ս. Եկեղեցին ՚ի սկզբանէ անտի  
պարտաւոր կացուցած է զինքը, որ բոլոր քրիստոն-  
եայները նոյն սուրբ սիրով կը սիրէ ու խտրութիւն  
չընեն, ինչպէս պիտի ցուցուի գործերնուս մէջ,  
Եւ երբորդ ոմանք ալ իրենց իբր իրաւունք համա-  
րելով կը յուսան որ Ազգին մէկ բարիք մը կըլլայ,  
անա այս պատճառաւ ոմանք Յունադաւանաց, ոմանք  
Հռովմէականաց եւ ոմանք ալ Բողոքականաց կող-  
մը միաժտութեամբ կը յարին, իրենց ազգին օգուտ  
մը բնութելու յուսով. չգիտնալով որ՝ իմաստունը  
կը գոչէ թէ՛ (կարաս ծակ է տուն օտար, եւ ջրհոր  
նեղ օտարոտի, զի այնպիսին (եթէ յարի) վաղվազան

նասիրաց իբր առհաւատչեայ դրութիւն մը Հաստատանեայց Ս. եկեղեցւոյ, վասն ներկայից եւ ապագայից եւ 'իզգուշութիւն յեանոց, նա մանաւանդ եթէ դայթակղեալ մտքեր կան՝ բժշկելու թէպէտ եւ դիտեմք որ մեր հակաուակորդները ոմանք փիլիսոփայութիւն եւ ոմանք ալ աստուածաբանութիւն դիտեմք ըսելով կը պարծին, եւ մենք ալ Դաւիթ մարդարէին խօսքերէն օգնութիւն առնելով կը համարձակիմք գրել ըստ այնմ :

Կի սատակեսցի յ, Եւ ալ մեր ազգին բարիքը միշտ Աստուծմէ եղած է եւ ոչ ուրիշներէն . ասոր համար Հայոց Ս. եկեղեցին միշտ կը գոչէ ըսելով . «Օգնութիւն ինձ 'ի տեառնէ եկեսցէ, որ արար դերկինս եւ զերկիր » : Եւ միանգամայն չը դիտնալով ալ խեղճերը՝ իրենց վրայ անցած 'դացած պատմութիւնները՝ որ օտարաց յարելով կործանեցաւ մեր Ազգը, որպէս Երբեմն Արիւկեցւոց վերջին տէրութեան կործանման ժամանակին պատմութենէն յայտնի կերեւայ : Բայց ճշմարիտը խօսելու է, թէ յայտմ մասին օտարք ալ յանցաւոր չեն դատուիր, ըստ որում ամեն ազգի մէջ բնական պարտաւորութիւն մը եղած է, որ կը փախաքի իր կրօնքը իր յեզուն եւ իր ազգուութիւնը բանեցնել . սակայն խոհական մարդիկ գիտնալով այն որոտմունքներուն ինչ յարգ եւ ինչ պատիւ ունենալը, այնու կերպիւ կը կենցաղավարուին արիութեամբ, ըստ պատուիրելոյ տեառն . «Նղերուք խորագէտ իբրեւ զօձ, եւ միամիտ որպէս զաղաւնի » . ահա օրինակն ալ ունիմք առջեւնիս՝ ինչպէս որ էր Երբեմն մեր ճըշ-

« Ո՞վ է մարդ որ երկնչի 'ի տեառնէ օրէ-  
նըսգէտ առնէ զնա 'ի ճանապարհի յոր եւ հա-  
ճեսցի. զի զօրութիւն է տէր երկիւղածոց իւրոց  
եւ զկտակարանս իւր ուսուցանէ նոցա » : (Սաղ-  
մոս) : Եւ զխոնարով ալ՝ որ Հոգին սուրբ խլից  
լսել տայ եւ համերց խօսիլ, եւ յուսալով ալ՝  
որ Տէրն մեր յիմարները ու ձկնորսները ընտ-  
րեց՝ եւ ոչ փիլիսոսփայները ու աստուածաբան-  
ները, եւ ոչ ալ զնելով Առաքելական խրա-  
տուն, որ ոմանց մարգարէութիւն եւ ոմանց

մարտասէր եւ հայրենասէր ազգը՝ որ այնքան ան-  
տանելի եւ անլուր հալածանք կրեց հեթանոսներէն  
պատճառաւ իւր կրօնասիրութեանը, եւ խոհեմու-  
թեամբ ու արիութեամբ պահպանեց զինքը զրեա  
թէ հազար տարի՝ ապաւինելով յԱստուծոյ, եւ մի-  
անգամայն իր ձեռքը օգնութեան վահան ունենա-  
լով *Հոգնուսթեանը* « երբ -- Իրհ--բար եւ կամ Իրհրդոս-  
հ--թեանը . . . »

Միաբանութեամբ ըսինք, ըստ որում « Զուգու-  
թիւնն է մայր բարեաց՝ անզուգութիւն ծնօղ չար-  
եաց » զիցուք թէ (եթէ ունենար) մեր ազգն ալ հը-  
զօր աշխարհակալութիւն մը, եւ միանգամայն ան-  
խորհուրդ ըլլար ու միաբանութիւն եւ սէր չունե-  
նար, ոչինչ էր եւ շուտ մը բոլորովին կոչընչանար,  
որովհետեւ միաբանութիւնը ու սէրը եւ միանգա-  
մայն հայրենասիրութիւնը ու կրօնասիրութիւնն է  
մայր եւ հիմն բարեաց յամենայնի բարութեան, մա-  
նաւանդ անտէրունջ ազգի մը համար . . . . ըստ ո-  
րում չար եւ չարագոյն եւս չար է պատերազմն ըն-  
տանի, քան պատերազմն եւ տարածայնութիւնն եւ

վարդապետութիւն կը շնորհէ Հոգին սուրբ, եւ ըստ հրեշտակային վարդապետին մերոյ Նարեկացւոյն կը դաւանիմք, որ ինձ նման եւ ինձպիսեաց տկարաց աղայոց եւ ազխաց, Հոգին Ս. Աստուած անմուռնչ բարեխօս ըլլալով, կը լցունէ եւ կը պարգեւէ անխափր իր շնորհքը փափաքողներուն, եւ գիտնալով սրբազան Առաքելոյն խրատը, որ կըսէ. « իմաստութիւն աշխարհիս այսորիկ յիմարութիւն է առաջի Աստուծոյ » (Ա. կորնթ. Գ. 19). եւ նոյն Պօղոս սրբազանը կը գոչէ թէ « Հաւատք ձեր մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ » (Ա. կորնթ. Բ. 5): Ահա սոյն ոգեշունչ պատգամներէն համարձակելով, կարձակեմք մեր Հրաբուդիւր՝ մեզի դէմ մարանչող հակառակասիրաց վրայ. (այսինքն ոչ թէ Հռովմէ բղիած վերջին դարերու դժօխային հուրը, այլ Հայաստանեայց նախնական եկեղեցւոյ վարդապետութիւնները), յուսալով՝ որ անգամ մ'ալ չեն ընդու երկնցնել եւ ոչ դրչով պատերազմիլ մեր Աստուածային հոգւով եւ հրով վառեալ Արարտեան ամենամարտը Ս. եկեղեցւոյն դէմ:

Թշնամութիւնն օտարաց . . . , եթէ միաբանութիւն ըլլայ մէկ ազգի մը եւ մէկ ընտանիքի մը մէջ, նոյն ժամայն ամենայն բարութիւն առանց աշխատութեան իր սաքովը կուգայ, ընդ հակառակն եթէ չըլլայ իր կործանմանը ինքը կ'ըլլայ պատճառ, ինչպէս որ մեր ազգը նոյն աղետալի փորձը իր վրայ կ'ընէ . . . :

\* Ասոր բացատրութիւնը տես Ա. հատորոյ աշխատութեանս մէջ, եթէ հրատարակուի:



Արդ՝ դանք հիմա մեր խնդրոցը վրայ ,  
քանզի վերը ըսինք որ երեք կերպ կողմնակ-  
ցութիւն կը գտնուի աղգերնուս մէջ :

Նախ՝ Բողոքականութեան մասին կը գրու-  
ցեմք, որ ազխտութենէ պատճառած մէկ ախտ  
մը ըլլալով , գոհութիւն Աստուծոյ՝ որ իւր եկե-  
ղեցին խնայելով , շուտ մը հասկցաւ Հայոց աղ-  
գը ինչ դրութիւն ըլլալը եւ բացէ 'ի բաց հեր-  
քեց, եւ այսօր թէ Հռովմէականաց եւ թէ Բողո-  
քականաց հակամիտ եղող եղբայրներէն զրպար-  
տութեամբ կը բամբասուի, իբր անոնց կողմէն  
Բարբի Բարբի կոչուելու շահասիրութեամբ :  
(Ասոր պատասխանը տես 'ի վերջոյ) մատենիս, ուր  
յաւելուածով մը սլիտի դնեմք) :

Երկրորդին՝ այսինքն Յունաց գալով կը-  
սեմք, թէ մեր Եկեղեցական արարողութիւննե-  
րը ըստ մասին սկիզբը անոնցմէ առնուած կար-  
ծուելուն համար, (որն որ այն ժամանակը ընդ-  
հանուր եկեղեցին մէկ էր եւ այժմեան արա-  
րողութեանց պէս ալ տարբերութիւն չկար) :  
Եւ այժմ խարտութիւն մը եւ յայտնի հակառա-

\* Ասոր պատասխանը տես «Արօնազխտութիւն»  
Միքայէլ վարդապետի Սալլանդեան , եւ «Պաշտպա-  
նութիւն ուղղափառութեան Հայոց Ա. եկեղեցւոյ»  
ըսուած մատենաներուն մէջը , որ բանասէր հեղի-  
նակները ըստ բաւականին հասկցուցած են , թէ մեր  
Արքազան արարողութիւնները Թաղէոս եւ Բարզու-  
ղիմէոս Առաքեալներէն եւ Արուստղէմայ եկեղե-  
ցիէն յԱռաքելոց անտի իջած է եւ ոչ յայլմէ . զի-  
տեմք թէ պէտ եւ նախնիք մեր ոմանք վասն հաճոյս

կութիւն մ'ալ չունենալով մեզի հետ եւ ունեցած հակառակութիւններն ալ եկեղեցւոյ եւ Աւետարանական վարդապետութեանց եւ Ս. Տիեզերական ժողովոց կը վերաբերի, եւ ոչ մեզի, որն որ պատասխանատու պիտի ըլլայ անշուշտ յաւուր ահեղ Ատենին Գրիստոսի, այն է՝ կրկին մկրտելն, կրկին ստակ դնելն առնակնուոջ, եւ զատանելն ՚ի միմեանց եւ վերստին ստակելն եւ այլն. եւ մանաւանդ ասոնցմէ ՚ի զատ անոնց եպերելի եւ դայթակղելի ընթացքնուն նայելով (այսինքն

եւ ոմանք առանց դիտութեան մեր եկեղեցական պատմութիւնը, Յունացմէ առած կը կարծէին, մեր գրերը բաւական չ'ըլլալով նոյն ժամանակները Ասորւոց եւ Յունաց գրերով վարուելնուս եւ այնուհետեւ Աստուածաշունչ մատեանը եւ ուրիշ եկեղեցական մատեանները Յունարէնէ ՚ի Հայ թարգմանելուն համար մեր Սրբազան թարգմանիչները . բայց Յունաց գրերով վարուած ժամանակնիս ալ նոյնն էր յառաջ, ինչպէս եւ է մինչեւ ցարդ. այլ պարտ է ասել թէ՛ միայն գրերը փոխուեցան Ս. Սահակայ եւ Ս. Մեսրոպայ աշխատութեամբը, որ ժամանակ որ ըստ առջութեան Աստուծոյ գրերը կատարելագործեց Սուրբն Մեսրոպը՝ նոյն Հայոց Ս. եկեղեցիին արարողութիւններն էր եւ ոչ Յունաց, եթէ պատճառ բերուի թէ՛ մեր Ս. Լուսաւորիչ Հայրը կեսարիոյ Ս. եկեղեցիէն սորվեցաւ եւ այնպէս սորվեցուց իւր ազգին, անոր ալ պատասխանը յայտնապէս ապացուցուած է նոյն վերոգրեալ մատեաններուն մէջ, թէ նոյն կեսարիոյ եկեղեցին ալ Հայոց Ս. եկեղեցին էր եւ թագէոս նախկին Լուսաւորիչ Ազգիս Սրբազան ա-

հայարսութեամբ եւ տգիտութեամբ բացի իրենցմէ ուրիշները իբր թէ քրիստոնեայ եղբայր չը ճանչնանուն), ահա անոր ալ դրութիւնները գոհութիւն Աստուծոյ բողբոլին ընդունող չկայ:

Բայց երբորդին՝ Հռովմէականութեան դաւլով կը սեմք խոնարհաբար եւ ցաօք սրտի բոլոր ազգայնոց, թէ ե՞րբ պիտի արթննայ մեր ազգը իւր թմրութեան քունէն եւ իր ոտխը ճանչնայ, եւ ե՞րբ չափազանց օտարասիրութիւնը պիտի թողու. եւ քանի՛ քանի՛ անգամ է որ

աաքեալին ուսուցածն էր, եւ ոչ Յունաց Անդրէաս եւ Փիլիպպոս առաքեալներուն . . .

Եւ գիտեմք՝ ոմանք ալ հակառակորդին (այսինքն Յունաց) բերանը գոցելու համար, եւ միանգամայն զիանալով ալ անոնց հոլարտ եւ ամբարտաւան բնաւորութիւնը, այնու ազագաւ խոնարհաբար իրենց թշնամին համողելու համար կը գըրէին խոհեմութեամբ, ըսելով թէ՛ մեր եկեղեցւոյ արարողութիւնները ձեզմէ առած ենք եւ ձեզմէ սորվեցանք, եւ կամ թէ մայր եւ դայեակ կանուանէին, մեր ազգին մէջէն տարածայնութիւնը վերցընելու համար, որ ժամանակ որ Յունաց հետ միաբանութիւն ընել կուզէին, նոյն ժամանակը թէ մեր Ազգայինները եւ թէ Յոյները կը համողէին այս կերպ յորդորներով, ինչպէս յայտնի է Շնորհալուոյն Գրիգոր Տղային եւ Ամբրոնացւոյն դրութիւններէն. ահա այս գրութիւնները պատճառ բերին Յոյնք: իբր թէ Հայոց եկեղեցին իրենցմէ բաժնուած է. եւ մեզնէ ամանք ալ տգիտութեամբ կարծեցին թէ մեր եկեղեցին Յունացմէ սորված է, եւ անկէջ իբր թէ բաժանեալ

կը փորձուի մեր ազգը այս մոլորական դրու-  
թեանէն եւ տարածայնութեանէն խարուելով . չը  
դիտեմ՝ արդեօք ե՞րբ պիտի կարդայ անցած  
դացած պատմութիւնները խոհականութեամբ  
ու շղթանայ եղածներուն վրայ  
ցաւելով . մի՞թէ առաւելագէտ այս կրօնական  
տարածայնութեանէն պատճառած դէշտութիւնը  
չէ՞ր , որ անոնց խարէական ձեռնարկութիւննե-  
րէն խաբուելով , օգնութիւն մը յուսալու մը-  
տօք աշխարհային կարողութեանը , այնքան ան-

է , բայց ոչ այնպէս : (Նոյնպէս իմա Վատինացւոց  
եկեղեցւոյն համար , զոր չափազանցօրէն կը գրէ  
Ներսէս Վամբրոնային իր եռանդը հասկցունելու  
համար , որն որ կուգէր միաբանութիւն բնել Վա-  
տինացւոց եկեղեցւոյն հետ , որ մեր աշխարհային  
կարողութեան մէկ օգուտ մը ըլլայ . բայց պարա-  
պը ելաւ Նրանելւոյն յոյսը , եւ տարածայնութեան  
ալ առիթ սոււաւ . թէպէտ՝ եթէ կենդանի ըլլար  
այժմ Նրանելին՝ ինչմը պիտի գրէր արդեօք , իր գը-  
րած Ատենաբանութեան ոգիէն յայտնի է . . . )

Այլ կ'ըսեմք , նախ՝ մեր Սրբազան Հայրապետաց  
դրութիւնները հակառակորդաց յարձակմունքներէն  
ազատելու եւ միանգամայն սուրբ սիրոյ եւ միաբա-  
նութեան համար իրենց եկեղեցին պաշտպանելու  
նպատակաւ խոնարհական դրութիւններ էին . եւ  
երկրորդ՝ դրացի ազգ ըլլալով հոստմք եւ միանգա-  
մայն հզօր անբութիւն մը , իրենց մէջը երեւելի  
դրչի տէր վարդապետներ ելլալուն , եւ մեր ազգը  
կամ խաղաղ ժամանակ չունենալուն յերեսաց բրո-  
նաւորաց թէ արտաքին եւ թէ ներքին , եւ կամ

տանելի եւ անլուր հալածանայ մէջ թախառեցաւ մեր ազգը, եւ յատկապէս Աստուծոյ պատիժն ալ կրեց ՚ի պարծանս Հռովմայ . . .

Արդ՝ փորձ կրսեն բան մը կայ, որ բանահանութիւն ունեցողին խրատ եւ աղագային զգուշութիւն կըլլայ, մի՞թէ կուզեն այնպիսիները որ ազգը առաւել եւս վարձի ու տագնապի այս խաբէական գրութեանը համար: Արդ՝ առջինները մէկդի թողլով, այլ ՚ի մօտայ զգացած ու անսածնիս գրուցեմք. արդեօք մի՞թէ

թէ Յունաց խրոխտմունքէն զերծ պահելուն համար մեր եկեղեցին, եւ ուրիշ եկեղեցեաց մէջ օրինաւոր վարդապետութիւններ որ դանային իրենց եկեղեցին կը ճոխացուայնէին ճառագրութեամբ եւ վարդապետութեամբ, ինչպէս որ սովորութիւն է ազգիս մինչեւ ցարդ, որ Վատիներէն եւ Ղազղիերէն եւ այլն գրութիւններէն կը թարգմանեմք նէ՛ անոնց եկեղեցիին յարած չեմք ըլլար, եւ ոչ անոնց արարողութիւնները բոլորովին ընդունած եւ սորված կ'ըլլամք. այլ միայն իբր անուշահոտ ծաղկանց մէջէն հիւթը կտանեմք եւ դառնը կանարդեմք: Նոյնպէս ալ կը տեսնեմք անոնք, որ մեր պատմութիւնները եւ մեր եկեղեցական գրութիւնները թարգմանելով մեր եկեղեցիին յարած եւ մեր եկեղեցական արարողութիւնները ընդունած չեն եւ չեն ըլլար, եւ մանաւանդ ինչպէս որ ըսինք, այն ժամանակները ընդհանուր եկեղեցին մէկ էր, եւ այժմեան պէս կրօնական եւ ծիսական արարողութեանց տարբերութիւն չը կար. բայց գիցուք թէ Յոյնք գրաթիւղղ ըլլալով եւ միանգամայն մեր նախնիքը անոնց

Երեսուճն տարի յառաջուան յարձն ալ խրատ  
 չեղաւ ազգիս, որ տարաձայնութեան առիթ  
 տալէն ետեւ՝ այլ եւ հինգ հոգի ՚ի մահ դա-  
 տաստարտեցան . . . եւ այժմ՝ բարեբաղդաբար  
 ըստանելով նոյն տարաձայնները եւ անմիաբան-  
 ները, եւ ժամանակէ մը ՚ի վեր ազգիս մէջ անդ որ-  
 ըութիւնը տիրելով՝ յառաջ կուտայինք Արարչին,  
 եւ այժմ՝ տեսնելով որ քանի մը տարի է որ ի-  
 ընք ղիլքենք բանադրելով եւ կուսակցութիւն  
 կուսակցութեան վրայ ելլալով միմիանց հերե-  
 նկեղեցական գրքերը թարգմանելով եւ եկեղեցա-  
 կան կարգադրութեանց վերաբերեալ խորութիւն  
 մը չընելով քան մը առած ըլլան (ըստ վերոգրեալ  
 գրութեան, եւ ոչ իրաւաբանական յաղբերէ .  
 եւ առաջիկ նկեղեցւոց համարելով, ինչպէս որ  
 այժմ կը պահանջէ Հռովմը) : Սակայն մեր թողունք  
 այժմեան խաղերայից անտախ բարբանջմունքը, չա-  
 ժաչելով, ՚ի հանոյս Պատիւն՝ ազգիս պատմութիւնը  
 կը խանդարեն լեցնելով ստութեամբ մը, թէ Ղուսա-  
 ւորիչ հայր մեր Հռովմէն օորվեցաւ եւ այնպէս սոր-  
 վեցուց Հայոց ազգին, եւ հռովմէական պարզեւ է  
 Հայոց հաւատքը եւ այլն, կրտսն . անս « Աթոռ Պետ-  
 րոսի պատմութիւնը » եւ « Կերոպա » անուն լրագիրը  
 թէ եւ « Պաշանց թուղթին » նպատակին եւ ուրիշ  
 սրբազան Հարց գրուածոցը նայելու որ ըլլանք Ղու-  
 սաւորիչ հայր մեր Հռովմ գնացնէ՝ ոչ թէ օորվեցաւ,  
 այլ սորվեցուց հաւատքը . նաեւ մեր թողունք որ  
 Ղուսաւորած էր Սե թող գանի որ Հռովմ Հայաստա-  
 տանէն որքան որ հազարաւոր մղոն հեռու է նէ՝  
 նոյնքան ալ է Հայաստանը Հռովմէն :

տիկոսութիւնը եւ անհաւատութիւնը կը յայտնեն՝ իբր ճշմարտութեան հետեւող խաբեբաները, չը գիտնալով Աւետարանական վճիռը որ կ'ըսէ. « Տունկն որ ոչ տնկեաց հայրն իմերկնաւոր խլեացիս Ուրեմն կը հարցնեմք ամեն ազգայնոց, թէ արդեօք անոնց այս կրօնամտութեան եւ տարածայնութեան ու անմիաբանութեան դժոխային ճիզվիթական հուրը չէ՞ր մի՞ որ անոնց կռիւր հնարքով մը մեր ազգին վրայ ալ տարածուեցաւ . . . եւ այժմ՝ այսպիսի ճիզվիթական հնարքներով նոր 'ի նորոյ որսորդներու ձեռօք չէ՞ մի՞ որ ազգերնիս որսալու կը ջանան . . . եւ նոյն որսորդները տակաւին 'կը յուսասան որ Հայոց ազգը պիտի որսան . . . ո՛չ, ո՛չ, եւ ոչ բնաւ . . . չը յուսան բնաւին, ըստ որում ուրախ սրտիւ կ'աւետեմք այնպիսիներուն թէ՛ ճշմարտութիւնը եւ ազատութիւնը՝ դերեզմանէն յարութիւն առաւ, եւ այսօրուան օրըս լուսաւորեալ դար կը քարոզուի բոլոր աշխարհ. եւ չը գիտնան նոյն որսորդները որ իրենց որոտմունքէն տակաւին Հայոց ազգէն խաբուող կը գտնուին. քանզի գիտեն իրենց գլխէն անցածները. . . :

Ուրեմն խոնարհաբար եւ ցաւօք սրտի կըսեմք՝ գոնէ իրենց որսացած՝ Հայաստանեայց եկեղեցիիէն աւարին մէկ մտար շահին, եւ այնուհետեւ ճշմարտութիւն քարոզելով նոր որսորդներու ձեռօք անմիաբանութեան եւ տարածայնութեան սերմունքներ չի ցանկն ազգիս

մէջ . . . որովհետեւ այժմ հասկցուեցաւ որ  
 ո՞վ է եղեր անմխարանութեան առիթ, եւ ո՞վ է  
 եղեր տարածայնութեան պատճառը աղգիս մէջ,  
 եւ ո՞ր կրօնքին դրութիւնն է եղեր մնորութիւն  
 եւ տարածայնութիւն ձեռելու իր խաշանցը մէջ  
 առիթ տուող, որ գոհութիւն Աստուծոյ այսօր  
 ակներեւ տեսնը՝ մինչեւ անգամ օտար եւ հե-  
 թանոս աղգաց դատերու առջեւ ալ ելաւ .  
 արդեօք ճշմարիտ հայերէն մէկը կա՞ր իրենց  
 մէջը կամ հայոց աղգի վարդապետ մը կա՞ր,  
 որ հալածեց զիրենք, ինչպէս որ կը բար-  
 բանջեն ասկէ ՉՅ տարի առաջ եղած ցաւալի  
 անցքին համար, որ իրենցմէ մէկ քանիին վրայ  
 կիյնայ խնդիրը եւ ոչ աղգիս, եւ տակաւին  
 ողջ ալ է պատճառին մէկը . . . քնդհակառա-  
 կըն աղգերնուս վրայ կը բեռցնեն պատճառը,  
 պատմութիւնները խանգարելով, Տե՛ս Սրբա-  
 զան պատմութիւնը, եւ Օսմանեան պատմու-  
 թեան երկրորդ հատորը:

Սրդեօք վեց հարիւր տարիէ՛ ի վեր խը-  
 բատ չեղա՞ւ աղգիս, որ այս տարածայնու-  
 թեան պատճառաւը, մեր աղատութիւնը ու աղ-  
 դային վսեմ՝ եւ վեհանձն պարզ սուրբ սէրը  
 եւ եղբայրական միութիւնը կորուսինք, խուժ,  
 դուժ, սկիւթացի եւ այլն ձեւանալով, եւ մեր  
 հայրենի դրախտակառոյց սուրբ երկիրներնուս  
 դատուեցանք, ՚ի սփիւռուս աշխարհի տարածուե-  
 լով իբր Բարէլ ձեւացանք, եւ մէկ աղգի եւ  
 արեան սերունդ չը համարելով զմեզ ու մեր



ընտանի եւ պարզ նախնական եկեղեցւոյ Ս. վարդապետութիւնները կորուսանելով՝ ուր որ գացինք եւ որ ազգի հպատակ եղանք, (մէկ երկուքէն 'ի զառ) անոնց դուրսութիւնները կարգալով՝ ու տարածայն վարդապետութեանցը հետեւելով միմեանց հակառակութիւն յարուցինք, եւ յարուցանելէ ոչ դադարիմք. այսինքն ոմանք հերձուածող, ոմանք մտորեալ, ոմանք հերետիկոս, ոմանք սուտ կրօնք, եւ ոմանք նոր աղանդ եւ բողոքակրօն ձայնելը մեծ առաքինութիւն ու աւետարանական ճշմարտութիւն համարելով:

Ս.յս դէշութիւններուն պատճառը ո՞վ է. — Հոովմ. մարդկային ազգի խղճմտանաց փորձիչը եւ քննիչը ո՞վ է. — Հոովմ. հաւատաքննութեան ատեան հաստատելով եւ ամենեցուն կրօնքը՝ եւ խիղճը քննելով՝ եղբայր եղբորմէ զատող՝ եւ Քրիստոնեայ ազգաց մէջ ապրստամբութիւն հակառակութիւն եւ երկպառակութիւն յարուցանողը ո՞վ է. — Հոովմ. եւ քանի մը դարէ 'ի վեր դասական աստուածաբանութեամբ բծախնդիր լինելով, նոր 'ի նորոյ հաւատոյ փիճաբանական վարդապետութիւններ

\* Կարդայ պատմութիւնները թէ այն կրօնական տարածայնութիւնները ու յազգակործան անմիաբաննութիւններ ուսկից ծագեցաւ մեր ազգին մէջ, կը զանառ սկիզբը Յունացմէ եւ վերջը Հոովմքէն ու վախճա՛մ թէ կործանումն ալ անկէ . . . :

եւ կերպ առ կերպ դրութիւններ հնարող եւ  
 եկեղեցւոյ միութիւնը ու պարզութիւնը եւ Ս-  
 սէրը քակողը ո՞վ եղաւ. — Հռովմ: վերջապէս Հը-  
 ոտլմ: ուշ չդնելով տեառն մերոյ պատգամին  
 որ կը զուրցէ. «Թոյլ տուք մեռելոց թաղելը  
 մեռեալա խրեանց»: Եւ Յակոբ Սրբազան ա-  
 ուաքեալը կըսէ. « ո՞վ իցէ իմաստուն եւ հանճա-  
 րեղ 'ի ձեզ, ցուցցէ 'ի բարւոք գնացից իւրոց  
 զգործս իւր հեղութեամբ իմաստութեան: Ա-  
 պա թէ նախանձ եւ դառնութիւն եւ հակա-  
 ուակութիւն ունիցիք 'ի սիրտս ձեր, մի՛ պար-  
 ծիք սուտ առնել զճշմարտութիւն: Ոչ է իմաս-  
 տութիւնս այս իջեալ 'ի վերուստ, այլ երկրա-  
 ւոր՝ շնչաւոր՝ եւ դիւական: Զի ուր հեռ եւ  
 նախանձ, անդ է անկարգութիւն, եւ ամենայն  
 իրք չարք: Իսկ վերին իմաստութիւնն, նախ՝ զի  
 սուրբ է, եւ ապա խաղաղարար, հեղ, դիւրահա-  
 ւան, ի ողորմութեամբ եւ պտղովք բարեաց, ան-  
 խիղճ, առանց կեղծաւորութեան» (եւ կը յա-  
 ւելու թէ) «պտուղ արդարութեան խաղաղու-  
 թեամբ սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղա-  
 ղութիւն» (Յակ. Գ. 13.—18): Ահա՛ ասոր հա-  
 մար է որ Հայոց ազգը խաղաղութիւնը եւ միա-  
 մըտութիւնը ու սուրբ սէրը սիրելով ուրիշ ազգի  
 մը վրայ քննիչ եւ դատաւոր չը ձեւանար՝

\* Ասոնք ըսելով տեղի տուած չըլլամք այլոց  
 մոլորելոց, ըստ որում մեր դիտաւորութիւնը Հռով-  
 մի ապօրինաւոր ընթացքը պախարակել է, որ առանց

խմատութեամբ, քանզի դիտէ որ իւր տէրը շատ աստուածարաններ եւ փիլիսոսիաներ խայտառակ բրած է . . . եւ գիտէ ալ ըստ առաքելոյն : « Որ 'միանգամ մկրտելով գրիստոս զգեցեալ եմք . . . » վասն որոյ « Այսուհետեւ չեմք ծառայո Պետրոսին կամ Պապերուն՝ այլ « Որդեգիր հօրն երկնաւորի » . եթէ որդի՛ յերեմն « ժառանգ Աստուծոյ » . ուրեմն հաւատացեալներուն եւ եկեղեցւոյ նորին ճշմարիտ գլուխը փրիստոս Աստուած է որ կը կառավարէ իւր եկեղեցին աներեւոյթաբար, զի նա միայն է քննօղ գաղտնեաց, եւ իւրաքանչիւր ու-

Տիեզերական Ս. ժողովի իր մէջը ժողովք հաստատելով բովանդակ ազգի մը համար զբարտաբանութեամբ հերետիկոս ըսելով վճիռ կը հանէ, եւ անանկ ազգի մը համար, որ քրիստոնէական լոյսը ընկալած օրէն 'ի վեր չէ ծագեր իր մէջը ազանգ մը կամ ազանդուցեա մը, որ է Հայոց ազգը. այլ եթէ պատահելու ըլլայ յայտնի ազանդուցեա մը եւ կամ յայտնի ազանգ մը ո՛ր եւ իցէ ազգաց մէջ, յայնժամ պարտաւոր է ո՛ր եւ իցէ հայրապետ մը՝ թէ իր մէջը ազգային եւ դաւառական ժողովք հաստատելով մերժել, եւ կամ Տիեզերական Ս. ժողովքի մը համար ազգել ուրիշ հայրապետաց եւ քրիստոնէաց թագաւորաց, ինչպէս էր նախնական եկեղեցւոյ ժամանակը. բայց Հրոսովմի կացուցիւնը այժմ նոյն նախնի սահմանադրութիւնը գործ չածելուն եւ իր նոր գրութիւնը իրր եկեղեցւոյ աւանդութիւն քարոզելուն ու չընդունողները իւր հերետիկոս գատապարտելուն համար է մեր խնդիրը ու բողոքը :

մեք դործոց՝ նա միայն է ճշմարիտ եւ արդար  
 դատաւորն որ պիտի դատէ . . . : Թէպէտ եւ  
 կը խոստովանիմք, որ Հռովմ' ալ Յունացմէ սոր-  
 վեցաւ այս դէշութիւնները, ինչպէս որ անոնք  
 ալ ժամանակին ոչ սակաւ դէշութիւններ յա-  
 բուցին եկեղեցւոյ մէջ, մանաւանդ Հայոց ազ-  
 գին. Գաղկեդոնի ժողովքը ընդունել տալը եւ  
 պատրիարքական .աթոռնուս վրայ նախանձու-  
 թիւնը, առարկայ մը բռնելով իրենց: Ահա ասոր  
 պէս ալ Հռովմէականք՝ յաջորդ դարերէն սկըս-  
 եալ իրենց հայրապետը ընդհանուր եկեղեցւոյ  
 վրայ իշխելու կուիւր բացին եւ ոչ ճշմարտու-  
 թիւնը:

Եւ այս դէշութիւններուն ի՞նչ է պատճա-  
 ուր ազգիս մէջ, ահա պատճառը յայտնի կերե-  
 ւայ, որ օտարաց վարդապետութեանը յարելով  
 եւ մեր ընտանի նախնական եկեղեցւոյ վարդա-  
 պետութիւնները եւ աւանդութիւնները կու-  
 ղեմք որ աղճատեմք նոր վարդապետութիւննե-  
 րէ խարուելով, եւ կամ՝ տաղտկալի թուլու-  
 թեամբ եւ դանդաղ ողւով միշտ կուղեմք որ  
 օտարք աշխատին եւ մեք վայելիմք. իբր թէ  
 Քրիստոս տէրն մեր միայն Հռովմի եւ Յունաց  
 զրկեց առաքեալ, եւ հետեւաբար անոնց յա-  
 ջորդներուն միայն հրամայեց եւ պատուիրեց  
 աշակերտելոյ, ուսուցանելոյ, եւ իբր թէ Հայաս-  
 տան առաքեալ չը զրկեց՝ ու չը պատուիրեց  
 անոնց՝ աշակերտեցէ՛ք, ուսուցէ՛ք, եւ կամ թէ  
 մեր վարդապետները ձեռնադրութիւն առած

ժամանակինն, իբր թէ աշակերտելոյ, խրատելոյ, ուսուցանելու եւ վարդապետելու հրաման եւ իշխանութիւն ընկալած չեն 'ի Հոգւոյն սրբոյ. աւս'ղ միամտութեան . . . ահա այս ապօրինաւոր ընթացքներնուս պատճառաւ եւ այժմ մեր եկեղեցւոյ մէջէն օրինաւոր հեղինակներ չունենալնուս համար, միշտ օտարաց վարդապետութիւնները թարգմանելով՝ աեղիտուած եմք բամբասել տալ մեր եկեղեցին՝ եւ դիտեմք եթէ գտանի այժմ այնպիսի հեղի-

\* Ո՛հ աւելի գէշն է՝ որ մեր նախնեաց աշխատած եւ թարգմանած դրութիւնները, որն որ աշխատեր են մեզի համարձկայելելու, եւ մեր նախնիքը բազում ու անտանելի տառապանաց մէջ թափառելով իբր նշխար հնութեան եւ իբր մատուց Որբոց պահեր են ուր որ դացեր են նէ յետագայ եկող ազգայնոցս վայելելու եւ լուսաւորելու համար, այլ մենք ընդհակառակն մեր մէջը ընկերութիւն հաստատելով այնպիսի դրեանքներ հրատարակելնու՝ եւ կամ վանականներ եւ վարդապետներ յարուցանելնուս եւ գոնէ եղածներուն յարգը գիտնալով ձեռքնտուութիւն եւ օգնութիւն ընելնուս տեղը՝ (որոնցմով կ'ըլլայ ազգիս միմիայն բարիքը եւ յառաջանալը), այլ միամտութեամբ խորամանկ թշնամիներնուս կեղծաւորութիւններէն եւ կերպ առ կերպ խարդախութիւններէն խաբուելով ազգակործան տգիտութեամբ, միշտ անօնց տուեր եմք, սպասելով որ անոնք աշխատին եւ մեք վայելեմք, իբր օձէն օգնութիւն յուսալով . . . եւ անոնք ընդ հակառակն փոխանակ մեր ազգէն ու նախնիքներէն շնորհակալ ըլլալու, այլ յանդուգն դրպարտութեամբ կը բար-

նախներ որ բաւականութիւն ունենան իր եկեղեցին պաշտպանելու եւ ճշմարտութիւնը վարդապետելու, այնպիսի անձը ըստ ճիշդիթական գրութեան՝ ոմանց գաղափարին մէջ հերեօտիկոս կամ բողոքական կը դասուի, եւ ոմանց ալ անունը չը յիշուի ըսելով չար նախանձութեամբ, իբր Աստուծոյ առած պարզեւը խափանելու ջանալով, չարաչար կուսակցութեամբ արդելք կըլլան կամ իրենց գաղափարին դէմ քարոզելուդ՝ եւ կամ անձնական վէճ մը ունենալուդ

բանջին թէ՛ մեր նախնիքը ի՞նչ են գրեր եւ ի՞նչ հեղինակութիւն ունին նէ ցոյց տան, եւ եղածներն ալ Հռովմէական պարզեւ է ըսելով կը վարձատրեն, եւ այնուհետեւ կը հահոյեն հերեօտիկոս, հերձուածող կոչելով մեզի: Որովհետեւ իրաւունք ունին ըստ բրում Արարացի եւ Եզրպտացի բրոնաւորներն ալ այսպէս կ'ընէին, որ առանց գրքի մը նալով իբր անդէն զօրաց նման իրենց թակարդին մէջ ձգելով իրենց դէնը պաշտել տան, ահա ասոր պէս ալ է Ունիթոսեանց եւ Գոլէճեանց եւ Մըխիթարեանց գործքերը, ըստ որում եղած հընութիւնները՝ առջի բռնաւորները, այսինքն Մեհրուժանի ու Ղէնկթէմուրի պէս մարդիկ ոմանք այրեցին եւ ոմանք ալ Սմրղանտու բերդին անելանի խորխորատը փակեցին, եւ 'ի վերջոյ անոնցմէ ցրուած ու մնացած նշխարներն ալ նոր Ղէնկթէմուրները (այսինքն՝ Հռովմայու միսիօնարները, եւ ազգակործան՝ Գոլէճցիները ու Մխիթարեան մուրեակները) Հռովմի Տիբերիս գետը եւ Վնետիկու Ազրիական ծովը ընկզմեցին, եւ մնացածներն ալ

համար այնպիսի անձանց հետ . . . ահա՛ այս գէշութիւններուն համար է որ բան մը չը յառաջանար ազդիս մէջ, եւ ասոր համար է որ մարդ մը գրիչ ձեռք չառներ ու լռութիւնը կը պատուէ. եւ այս գէշութիւնը ուսկի՞ց ծագեցաւ մեր ազդին մէջ, յայտնի է որ Հռովմէն եւ հռովմէասէրներէն, այնքան որ մինչեւ անգամ ֆրիստոս տէրն մեր Աստուած է եւ միանգամայն ամենասուրբ Երրորդութեան երկրորդ անձն է եւ կառավարիչ ու Գլուխ է ընդհանուր եկեղեցւոյ

իրենց ապատանարան եղած բերդին (Վանքին) մէջ փակեցին. եւ այսօր մուրողօրէն կը տաղնապիմք դիրք մը կարդալու եւ 'ի նախնեաց վկայութիւն մը գտնելու համար, բան մը գրած ժամանակնիս, եւ եղածներն ալ յայտնի է թէ՛ այս կերպ խարդախ մարդոց ու թշնամեաց հրատարակած գրութիւնները ի՛նչ յարգ ունենայը. ըստ որում իրենք կը խոստովանին թէ՛ Մխիթարեաններուն հրատարակած գիրքերը Հայոց ազգը որսալու գրութիւններ են. (տե՛ս Վենետիկու պարսաւագիրքը) թէ՛ եւ չը խոստովանին ալ նէ՛ յայտնի է իրենց հրատարակած գրութիւններէն թէ՛ ինչ խարդախութիւններ բանեցուցած են. զոր օրինակ յայտնի եղածները, Առաւօտ լուսոյին բղխումը, նոյնպէս Արեւազալին երգը, Ա. Աստուածը, Հանգանակը, Խորհրդատեարը, Շարակաւնը, ազգային, եկեղեցական եւ ժողովոց պատմութիւնները եւ այլն եւ այլն, որ ասոնք յայտնի բաներ են եւ ամեն վանքի մէջ հարադատ հին օրինակներ գտնուելէն զինի, այլ եւ շատերուն ալ բիւրաւոր տպեալները կան շատ տպարաններու մէջ տպուած:

բսես նէ, այս Բողոքականի դրութիւն է, միայն աներեւոյթ Աստուածը կը ճանչնայ կոր գլուխ, եւ երեւելի չաստուածը չը ճանչնար կոր՝ որ է Հռովմայու Պապն կըսեն: Եւ այս բանիս ապացուցութիւն տաս, եւ ճշմարտութիւնը յայանելու համար աշխատիս եւ եկեղեցիդ պաշտօղանելու որ ըլլաս ու Հռովմի դրութիւնը նշուակես նէ (բացի Բողոքական դրութենէն, որն որ մեղի ծանօթ չէ), եւ միանդամայն Հայոց Ս. եկեղեցին չը ճանչնար այդ մնորութիւնները,

Ահա այս մեր կենցաղավարութիւնը կը նմանի այն աշխատող մարդոցը՝ որ իրենք արտ կը հերկեն ու կը սերմանեն, եւ այնուհետեւ կը հնձնն, կ'աղեն ու ցորենին հատերը դուրս հանելով յարդերէն՝ ջաղացը կը դնեն որ հաց ըլլայ ու ուտեն եւ կենսական զօրութիւն ստանան, որպէս զի անօթի չը մեռնին :

Բայց ասոր հակառակը եթէ այնպիսի անմիտ եւ դանդաղ մարդիկ ըլլան որ նոյն իրենց աշխատած ցորենները իրենց թշնամեացը տան առանց վարձու, եւ այնուհետեւ անօթի մնացած ժամանակնին մուրդօրէն սպասեն, թէ իրենց թշնամին հաց շինէ եւ իրենք վարձով դնեն նէ, այն ի՞նչ թշուառ եւ ցաւալի վիճակ կ'ըլլայ այն մարդուն վիճակը . . . ըստ որում, չը գիտէր թէ՝ մեռցնելու թոյն մի դրած է հացին մէջ, թէ համեմիչ աղ . . . բայց առջինը հաստատ է եւ կարծիքի տեղի չը թողուր բանականութիւն ունեցողի մը, ինչպէս որ վերը ապացուցինք խարդախութիւննին ցոյց տալով . . . . . Արդ՝ ահա այս է վիճակը ազգիս, եւ այս է հիմն եւ պատ-



ըստ որում իւր մէջը չէ ծագած, եւ մեք ալ այժմ սորվելու եւ հեռուելու դիտաւորութիւն չունինք), ինչպէս ըսինք, ոմանց դաղափարին մէջը իբր հերետիկոս եւ բողոքական կը հերքուիս ո՛վ Քրիստոնէսայ. եւ դիտեմք որ այս հայհոյելի գրութիւնը հին է, եւ ճշմարտութիւնը քարոզողին ճակատագիրն է միշտ. ըստ որում մինչեւ անդամ մեր Տէրոջն ալ ըսին վարիսեցիները թէ՛ « Դեւ ըս 'ի քեզ » : Եւ Աստուածային վճիռ է՝ որ ճշմարտութիւնը քարոզողը միշտ պիտի հալածուի եւ անարդուի, ըստ այնմ. « Եթէ դիս հալածեցին ապա եւ դձեզ հալածեցեն » . որովհետեւ ստութիւնը միշտ պատուի է մարդկային դաղափարին մէջ, մանաւանդ « Հողի Քրիստոսի » չունեցողին, եւ այս ալ Աստուածային վճիռ է որ կըսէ. « Սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զյես . . . » : Ասոր համար ահա կոնխաւ կըսեմ, անչուշտ գրիչս ալ ոմանց դաղափարին մէջ այս վերոգրեալներուն կարգը պիտի դասուի, ստութեան գլուխ չը խոնարհեցնելուս եւ այոն այո՛ եւ ոչն ո՛չ վկայելուս համար :

Բայց կ'ազատեմ այնպիսիներուն եւ միանդամայն կ'ազդեմ աւետարանական խրատը որ Տէրն մեր կը պատուիրէ ըսելով. « Որ ասկցէ յ'եզբօր իւրում մօրոս, պարտաւոր լիցի դեհէն »

---

ճառն մօլորութեան եւ տարածայնութեան եւ ազգակործան ու ոգեկորուստ անմիաբանութեան ազդիս Հայոց . . . աւանդ աղաւնաբարոյ միամտութեան մերում . . . :

հրոյն» Այս մտածելով դռնէ խնային մեր աշխատութիւնը, որ ոչ 'ի փառս անձին' այլ 'ի փառս եւ 'ի պարծանս ճշմարտութեան, եւ փառն օգտի ընդհանուր եկեղեցւոյ աշխատեցանք: Եւ ալ խնայեն այնպիսի տարածայնները իրենց անունը, որ պատմութեանց մէջ Սահառուն Անձեւացի իշխանի, եւ Սիմօն պէկ եւ նիկոլ հերձեալ չ'եպիսկոպոսներուն նման արխուր տեսարաննին եւ Աղգատեաց անուննին չը նշանակուի, որովհետեւ նոյն ցաւալի տեսարանները բաւականէն աւելի լցուցին Հայոց պատմութեանը մէջ երկու դարէ 'ի վեր Գոլէճցիք եւ Մխիթարեանք եւ այլն բաժանեալ խառնիճաղանճ անձինք: Ո՛հ ցաւալի ու միանդամայն ողբալի՛ է քու պատմութիւնդ Հայոց Աղգ . . . :

Արդեօք այս տարածայնութիւնները պատճառ չե՞ն որ բոլոր երկիրներու մէջ ցրուելով մեր Ս. կրօնքը եւ աղագութիւնը կորուսինք. . . Ապաքէն լալադին դիմօք կը հարցնեմ՝ բոլոր աշխարհի եւ Հռովմէականութեան հակամիտեալ եղբարց, թէ՛ ո՞ւր են մեր հարազատ ոգեհատոր միլիոնաւոր եղբայրները, այսինքն՝ Բոլոնիայու, Դրանսիլվանիայու, Հունգարիայու, Հըռովմայու, Սիկիլիայու, Մարսիլիայու, Ամսթէրտամու, Լիւբունայու, Վիեննակոյ, եւ ուրիշ քաղաքները ցրուող համազգիք մեր, ո՞ւր են եւ ի՞նչ եղան . . . Արդեօք ո՞ր թշնամին հալածեց ու անհետ ըրաւ . . . չէ՞ որ Հռովմայու

սրսորդներուն քարոզութիւններէն խաբուելով  
 (չըսեմ կերպ առ կերպ բռնութիւնները հաւատա-  
 քննութեան) եւ ոգին հակառակութեան եւ  
 տարածայնութեան առ յինքեանս սեպհականե-  
 լով կորուսին զՍ.դգութիւն եւ զանարատու-  
 թիւն կրօնի. եւ սշն: (Տե՛ս զայսմանէ յիշեալ  
 Յորդորակս մեր ՚ի Մէքէոսի պատմութեան, եւ  
 Տեսարան Հայկական եկեղեցւոյ անուամբ դը-  
 րոշմեալ մատեանս մեր, եթէ ՚ի լոյս ածցի): Ա-  
 հա՛ ասոր օրինակը յայտնապէս մնացածներուն  
 վրայ ալ կ'երեւի ինչ հետեւութիւն ունենալը,  
 որ նոյն Հռովմէական կրօնի եւ դրութեանցը  
 հետեւելով բազում կուսակցութիւն բաժնուած  
 են, եւ այն ալ քսան եւ երեսուն տարուան մէջ,  
 որն որ բաժնուելով իրենց հարազատ ծնողէն  
 եւ եկեղեցիէն, անդլուխ եւ առանց հովուի մը  
 նացած ոչխարներու նման, (չըսեմ գայլերու  
 նման), մէկզմէկու վրայ կը յարձակին, կերպ  
 կերպ կուսակցութիւններու բաժնուելով. զի Հա-  
 սունեանքն մերժեն զվենետիկեցին, վենետիկե-  
 ցիքն մերժեն զփրոփականտացին, փրոփական-  
 տացիքն մերժեն զլիրանանցին, լիրանանցին մեր-  
 ժէ զվիէննացին, վիէննացին մերժէ զԳաղատա-  
 ցին, Գաղատացին մերժէ զԿալվինացին, Կալվի-  
 նացին մերժէ զսոսին, եւ ՚ի մէնջ հերքին իրա-  
 ւամբ ամենեքին:

Ահա՛ Հռովմէական պատկերը, ահա՛ հը-  
 ուովմէականութենէ պատճառեալ շատ ճշմար-  
 րտութեան և զոտութեան կերբունը և իրատեսութեան

ազբէ՛րը և տեսարանը . . . : Որ պարծենալով կը  
քարոզէ Հ. Պալճեանը եւ Եւրոպա անունը քա-  
ղիւրը :

Եկ՛ տե՛ս սիրելի ընթերցող, ու ցաւօք սրբո-  
տի մի՛ ողբար ասոնց վրայ մարգարէին ողբը՝  
ու մեր ծերունի ալեօք խորեննացւոյ Ս. հօրը  
լացը զրուցելով թէ՛ « Ո՛ տայր ինձ զըլուխ  
խմ՛ջուր, եւ զա՛շս իմ աղբիւրս արտասուաց »  
եւ թէ՛ « Ողբամ զքեզ Հայո՛ց աշխարհ . . . եւ  
ասոնցմէ՛ ՚ի զառ կըսեմք հռովմէական գրու-  
թիւններէն խարուած համազգի եղբարց մերոց,  
թէ զոնէ՛րօրինակ ըլլար անոնց՛եպերելի ընթացքը,  
որ Հռովմիւր գահասիրութեան պատճառաւ,  
իրեն սեփհական ժողովուրդին անգամ չը կըր-  
նալով խնամք տանիլ, մալորութենէ՛ ՚ի մոլորու-  
թիւն գահալիժեցան, որոնց համար պատաս-  
խանատու պիտի ըլլան անշուշտ Հռովմայու  
աստուածաբանները եւ Պապերը յաւուր ահեղ  
Ստեֆին Գրիստօսի, ըստ վարդապետութեան Ս.  
Լուսաւորիչ հօր մերոյ. « իսկ որ (ասէ) ապիրա-  
տրս խօսին առ ՚ի կորուստ բազմաց խորաման-  
կութեան, այլանդակութեան, պատրանաց եւ  
պէս պէս մըսասկարութեանց որ վրիպեցուցա-  
նեն զազէսս ՚ի ճշմարտութեան աւանդիցն, որ  
տայցեն վրէժս վասն կորստեան անիրաւելոցն,  
ըստ արգար գատաւորութեան Աստուծոյ որ  
ժառանգորդ լինին անշէջ հրոյն եւ յախտենից  
տանջանայն » (Յաճախ. ճառ. ի. 186 երես, ՚ի  
վենեափի) :

Թէպէտեւ գիտեմք՝ որ այս մուրումն թիւնս  
 ները պիտի ըլլար, ըստ որում Քրիստոս իւր  
 կանխատեսութեամբը զրուցեբ էր, թէ՛ «Որդի  
 մարդոց (այսինքն՝ ինքն Քրիստոս) եկեալ զը-  
 տանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի, (ըստ ո-  
 ռում) վասն բաղմանալոյ անօրէնութեանց ցամա-  
 քեացի սէր», որ է ճշմարտութիւն, եւ Պօղոս  
 Սրբազան՝ առաքեալը կ'ըսէ, «Ունիցին զկեր-  
 պարանս Աստուածապաշտութեան, եւ դործովք  
 ուրացեալ են», եւ դարձեալ՝ յետ իմոյ ելանե-  
 լոյն (ասէ) դայցեն դայք յափշտակողք, որ ոչ  
 իննայիցեն հօտիւ, եւ ըստ իւրաքանչիւր ցան-  
 կութեանց կուտեսցեն վարդապետս»:

«Ահաւասիկ ո՛չ տեսլեամք՝ այլ յայտնի  
 մարդարէութիւն՝ ի վերայ աշխարհի վասն վեր-  
 ջին ժամանակիս ծննդոց վատթարութեան, ի  
 վարուց եւ ի ճշմարտութեանն անընարողութե-  
 նէ» (ասէ Լամբրոնացի Ս. Հայր մեր, առ Յուս-  
 կան արդեւական ճգնաւոր): Նոյնպէս Լուսաւո-  
 ըիչ Ս. Հայր մեր հոգւոյ աչօք տեսաւ իւր տես-  
 յեանք մէջ եւ յատկապէս Աստուած իւր հը-  
 բեշտակին ձեռօքը իմացուց, որ այս վերջին  
 ժամանակներս մեր ազգին մէջէն բաժնուելով  
 քահանայք ոմանք, բազում չարութիւն եւ կերպ  
 առ կերպ մուրահան վարդապետութիւններ  
 պիտի ուսուցանէին, որք առջի Ունիթոռաց  
 հեռեւտղներէն ի զատ, ի վերջոյ անանցմէ մը-  
 նացած հատակոտոր մնացորդներն են, Գօլէճ-  
 ցիք, Վինեաիկցիք, Վիէննացիք, Լիբանանցիք:

Գաղատացիք, Հասունեանք եւ Հիւրմիւղեանք  
 եւ այլն խառնիճաղանճ, ապօրինաւոր, անհա-  
 րազատ մոլորեալ ու անվայել քահանայք. ըստ  
 այնմ, կ'ըսէ հրեշտակ տեառն մեր Ս. Լուսա-  
 ւորչին, թէ՛ ո՛ր Եւ զի կէսքն ելեալ անկեալ էին  
 կէս հօտքն ընդ ջուրսն՝ ՚ի նոյն կողմն ուստի  
 անցեալ էին, այսինքն է՝ յեփէն ժամանակս անօրէ-  
 նելոց են՝ անկեալ է՛ ճշմարտութենէն, եւ յեփս ընկե-  
 լոց են գործով ուրիշ Սրբութեան Աստուածութեան,  
 եւ Բաղդաժ Բագուն զուրիշ Սրբութեան ու ո՛ր Եւ՝  
 Գառննայն՝ ՚ի նելոց են Գայլ՝ որ կորորեն զՍ. Գառննայն.  
 այսինքն՝ որ Գնան ՚ի ճշմարտութենէն անօրէ, եւ յուրի-  
 րէրէրէր ի նելոցն Գայլ, եւ հանեն ճողաղիս ար-  
 եան ՚ի Գառննայն, այսինքն՝ ուրիշն եւ ի նելոցն,  
 եւ ի նելոցն ճողաղիս ո՛ր Բայց ունիմք միսթարական աւետիս, ո՛ր ճշմարիտ  
 հաւատացեալ Լուսաւորչերամ Հայկայ սերունդք,  
 հետեւեալ խօսիցն ՚ի հրեշտակէն, որ ասէ. ո՛ր  
 իսկ որ համբերեն միամտութեամբ ՚ի գառննայն  
 ՚ի ժողովրդոց կամ ՚ի քահանայից, թեւս առ-  
 նուցուն եւ յարքայութիւն Գրիստոսի վերանան,  
 իսկ որ զմիտս գայլոցն կամ զգործս յախշտա-  
 կութեան նոցա ունիցին, ՚ի հուրն անշէջ մատ-  
 նեցիցին ո՛ր (Աղաթ. սլատմութիւն. երես 277):  
 Ըստ Առաքելոյն «Սիրելիք, մի՛ ամենայն հողւոյ  
 հաւատայք (այլ փորձեցէք զ՛չարն եւ զբարին»  
 (Ա. Յօհ. 7. 1):

\* Կարծեմ բաւական կը սեպեն Վէնէտիկու  
 Միսթարեան միաբանք այս վկայութիւնները, որն

Ահա ասոնք գիտնալով, կըսեմք յորդորելով մեր հարազատ եւ ուղղափառ ազգայնոց թէ, թէ եւ հակառակորդք մեր սուրբ եկեղեցիին քար նետեն հայհոյութեամբ, մոլորեալ, հերետիկոս, հերձուածող, սուտ կրօնք եւ այլն բարբանջելով. թէ՛ եւ ճերմակին սեւ քսեն, թէ՛ եւ սառութիւնը ճշմարտութեան տեղ քարոզեն, համբերութիւնը եւ խոհեմութիւնը իրենց վահան առնելով արիաբար լռութիւնը պատուելու են, գիտնալով որ ժամանակը չա՛ր է . . . եւ այս գէշութիւններն ալ պիտի ըլլան, ինչպէս որ վերը ապացուցինք: \* Ձի ըստ երանելոյն Սեբերիանոսի. « Չաղին դեւք, ձաղին եւ առաքեալք, նոքա ընդ պարտութիւն զամօթի հարեալք, եւ սոքա զյաղթութիւն թագաւորին հռչակն հարկանել. ձաղեցան յայնժամ դեւքն, ձաղին եւ այժմ հերձուածողք. որք ՚ի դէմս ըն-

որ յատկապէս իրենց նման մոլորեալներուն վրա մարգարէութիւն մ'է, այլ ընդ հակառակն հեթանոսական ամբարշտութեամբ այնքան կը մեծցնեն իրենց Մխիթար Արբան, իբր թէ Հայոց ազգը բոլորովին մոլորած ըլլալով, նա ինքն մխիթար եւ իւր արբանեակները լուսաւորած եւ հոգւոյ ճամբան ցոյց տուած ըլլան Հայոց ազգին, եւ այս պատճառաւ իւր այժմեան յաջորդը Հիւրմուզեան վարդապետը «լուսանորդ» մականունն ալ տուաւ, կարգաց դուն հակառակը. . . . տես այս զգուելի գրքերը. Վարք Մխիթարայ ըսուած անճոռնի եւ սուտով լեցուն գիրքը, եւ Բազմավէպներու մէջ, Թրեան 2: Ռափայելի ճառերը, եւ այլն եւ այլն . . . :

տանեաց զթշնամեաց գործս գործ են: Զօրօրինակ,  
քան զամենայն պատերազմ, ընտանի պատերազմն  
չա՛ր է. նոյնպէս քան զամենայն մոլորութիւնս՝  
հերձուածողացն մոլորութիւն. հեթանոսն եթէ  
թշնամանիցէ ինչ զֆրիստոս, չհամարիմ ինչ  
օտարութիւն, քանզի թշնամի է խաչին. զհը-  
րէայն չը գրեմ ինչ, քանզի յայտնի իսկ թըշ-  
նամի է. իսկ հերձուածողն՝ որ պատճառի դաւա-  
նել զֆրիստոս, եւ ուրանայ ՚ի ֆրիստոսէ, որ  
բարբի է քարոզել զՀոգին Ս. եւ հայհոյէ զՍ. Հո-  
գին. այն պատերազմն տաղնայէ՛ զիս իրբեւ  
զընտանի պատերազմս. (ճառ. դ. երես 41):

Ահա՛ մեր համառօտ պատասխանը Ս. եկե-  
ղեցւոյս դէմ մեքառողաց եւ Հռովմէականու-  
թիւն, կամ լաւ եւս Պասպականութիւն քարոզո-  
ղաց, եւ այլ մոլորելոց:

Ո՛ւր էր որ այժմ՝ Աստուած յարուցանէր՝  
որպէս երբեմն մեր եկեղեցւոյ մէջէն, Հայրապե-  
տաց եւ վարդապետաց դատէն. Ներսէսներ,  
Սահակներ, Յովսէփներ, եւ Ղեւոնդի պէս արի՛  
եւ հուժկու եւ միանդամայն սրբակաց եւ իրենց  
անձը իրենց հօտին վրայ դնող զխանական եւ  
Սրբազան վարդապետներ. . . եւ ո՛ւր էր մեր  
երեւելի հայրենասէր եւ ճշմարտասէր թաղա-  
ւորներնո՞ս զատ, գո՛նէ վահանի պէս, Մու-  
շեղի պէս, Սմբատի պէս եւ վարդանի պէս կը-  
րօնասէր, հայրենասէր եւ միանդամայն ազա-  
տիչ եւ պաշտպան Հայաստանեայցս Ս. եկեղեց-  
ւոյ ամենաքաջ եւ գիւցազուն Ս. իշխանները . . .



արդարեւ ըստ մեղաց մերոց զնացի՛ն այն  
 փառքերը . . . չը մնաց այն վե՛հ Դէտերը . . .  
 չը մնաց այն արի եւ վսեմ՝ Խշխանները . . .  
 եթէ չստիպանց չթուիր ըսածս, գոնէ անոնց հա-  
 գին ունեցող ալ չը մնաց . . . ա՛ւաղ Ազգիս  
 Հայոց . . . . :

Սակայն խոնարհաբար միայն այսքանս կը  
 պատասխանէ ինեւ այժմ՝ ազդս Հայոց, սուրբ  
 եկեղեցւոյս դէմ մաքառող թշնամեաց. եւ մի-  
 անդամայն բողոք բաննալով առ Աստուած կը-  
 սէ, ըստ Լամբրոնացւոյն. « Տէ՛ր դու գիտացեր  
 զի զարդարութիւնս քո ո՛չ ծածկեցի ՚ի սրաի  
 իմում: Ասացի եւ ո՛չ թաքուցի զնոյն ՚ի ժողո-  
 վըրդենէ մեծէ, եւ նոքա շուրջ պատեն զինեւ  
 շարեօք, ո՛րոց ոչ գոյ թիւ, եւ ամենայնի յօժարու-  
 թեամբ տանիմ՝ զի զՔրիստոս շահեցայց, եւ գը-  
 տայց նմա, եւ ըստ այսմ՝ յուսոյ գնամ՝ ինդալով  
 յերեսաց աւենի սոցա, փասն Քրիստոսի անարգ-  
 եալ . . . » (Բողոք առ Լեւոն արքայ Հայոց, ձե-  
 ուագիր): Եւ այս ալ կըսեմք ըստ առաքելոյն  
 Պօղոսի թէ՛ կարող է պարծենալ այժմեան յա-  
 ջորդն Թադէոսի սրբազան առաքելոյն թէ՛ « Ոչ  
 ինչ իւրիք պակաս իցեմ՝ քան զլաւ Առաքեալսն  
 . . . » : Նոյնպէս եւ մեք որդիքս կաթու-  
 ղիկէ սուրբ եկեղեցւոց Հայոց, կը բողոքեմք եւ  
 կը գոչեմք պարծենալով ՚ի Տէր ընդհանուր ե-  
 կեղեցեաց ըսելով թէ՛ « Ոչ ինչ իւրիք պակաս ի-  
 ցեմք քան զօրթոտոքս, ուղղափառ, լուսաւոր-  
 եալ եւ սուեռարանական կոչեցեալ ու կարծեց-  
 եալսն . . . » :

Ուստի այսքանս բաւական համարելով ('ի պատասխանատուութիւն հակառակորդաց եւ 'ի տեղեկութիւն համադրայնոց մերոց) վերջ կուտանք մեր Աղգարարական գործոյն, նոյն Ս. Ներսէս Լամբրոնացիին խօսքովը, ինչպէս որ Երանելին իւր հակառակորդաց համար զբուցեց, նոյնը եւ մեք կը կրկնեմք մեզի դէմ մաքառողաց ըսելով. « Եւ զամենայն որ առ մեզ դայթակղութիւն նախանձարեկաց եւ տգիտաց ցուցանել կարող եմք, թէ (մերս վարդապետութիւն) գրոց սրբոց է ուղեկցութիւն եւ ո՛չ ինքնահաճոյ գիւտ. եւ զգիրս ո՛չ կարեմք թողուլ եւ աւանդիցն սնտեաց հետեւիլ. (այսինքն՝ հռովմէական նոր 'ի նորոյ դրութեանց հետեւիլ իբր նախնի աւանդութիւն եկեղեցւոյ.) զի մի լուկուք զկշտամբանս 'ի Քրիստոսէ, որ ասէ՝ թողէք զպատուիրանս վասն ձերոյ աւանդութեանդ, կե՛ղծաւորք»:

\* Ս.Մ զՄուրբ գրոց օրէնք աւանդութեանց տապալել առնեմք (այսինքն՝ հռովմէականաց տարօրինակ պահանջմունքը, որ իբր աւանդութիւն եւ ճշմարտութիւն եկեղեցւոյ կը կամին ցույցնել իրենց դրութիւնը, եւ այս օրինակ թիւր մեկնութիւններ տալով. Ս. գրոց միտքը եւ հաւատարիմ պատմութիւնները կը խանդարեն, վասնորոյ տապալել առնեմք վկայութեամբ Ս. գրոց). եւ դայթակղելոցն թոյլ տամք զՔրիստոսին երկրորդելով 'ի վերայ նոցին, թէ կոյրք են կուրաց առաջնորդք, որք սխալին եւ 'ի վիհ

մուրրութեան մասնին . եւ մեք (ասէ երանելին) վասն 'ի Զորոյ գեա մախացողացն լեզուագարութեան՝ յայն վիհն (նոյին) ո՛չ ընկղմիմք, (նոյնպէս եւ մեք այժմ՝ 'ի Փրօփականտայ, 'ի Լիբանան, 'ի վիհնեօիկ, 'ի վիհէննա, 'ի Գաղատիա եւ յայլ ուրեք մախացողաց լեզուագարութեան եւ սնտոի մուար վարդապետութեան նոցին վիհնն ո՛չ ընկղմիմք) , այլ զլոյս իմաստից մեր յաղթանակ իշխանութեան (նոցա) բարձրացուցեալ, լոյս տամք կուրացելոցն, եւ կոչեմք 'ի մեր ճանապարհն եւ 'ի ֆրիստոսին . . . եւ աներկիւղ գնամք 'ի մէջ նոցին, եւ զոր (յունկանէ) խօսիմք, քարողեմք (առաջի նոցա) 'ի վերայ տանեաց, ո՛չ երկուցեալ յայնցանէ, որ սպանանեն զմարմին՝ եւ զոգի ո՛չ կարեն, հաւատացեալ յԱստուած, թէ կարող է 'ի քարանցս յարուցանել որդիս Աբրահամու: (Ներսէս Լամբ. թուղթ բողոքոյ առ Լեւոն արքայ Հայոց, վասն Տուտէորդւոյ եւ նորին նմանող հակառակորդաց) :

Ուրեմն ո՛ հաւատացեալ Հայկոյ սերունդք, եկեղեցի Հայոց 'ի բերան առեալ զվարդապետութիւնն Առաքելոյն Պետրոսի, ինեւս ընդ ձեզ խօսի . « Արթուն լերուք հսկեցէ՛ք , (եւ մի՛ խարխ) զի ոտխն ձեր սատանայ իբրեւ զսախճ գոչէ, շրջի եւ խնդրէ թէ զո՞վ կլանիցէ . . . » (Պետրոս Ա. 8) :

(The text in this section is extremely faint and appears to be bleed-through from the reverse side of the page. It is largely illegible.)

(This section also contains faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.)

ՀՐԱԲՈՒՂԽ  
ԱՐԱՐԱԴԱՅ  
ՄԱՍՆ Բ.

---

ԳՈՐԾ ՎԵՑԵՐՈՐԴ

---

В. П. П. П. П. П.  
В. П. П. П. П. П.  
В. П. П. П. П. П.

В. П. П. П. П. П.

ՕԳՆԵԱ՝ Է՛Դ ԱՆՍԿԻԶԲՆ ԵՒ ՈՐԴԻԴ ՄԻԱԾԻՆ ԵՒ  
ՍՐԲԱՐԱՐ ՀՈԴԻԴ ՃՇՄԱՐԻՑ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻԻՆ 'Ի ՎԵՐԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ  
ԲԱՆԻՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԶՈՐ ԱՍՍՑ ԱՌ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼՆ

« Վկայութիւնք լաւութեանն . . .  
'ի վարդապետութիւնն Հոգւոյն սրբոյ,  
որ 'ի ձեռն մարգարէից եւ առա-  
քելոց եւ վարդապետաց դրով ա-  
ւանդեցին մեզ . . . օրինազրեցաւ  
'ի մարգարէիցն եւ յառաքելոցն եւ  
'ի սուրբ հարց մերձաւորացն Աս-  
տուծոյ » (1. ռւսա. Յաճախ . Ճառ .  
Ը . Թ .) :

Կ'սկսիմք այժմ Ս. Աւետարանին խօսքե-  
որ որ զուրցեց Տէրն մեր Պետրոս սրբազան Ա-  
ռաքելոյն եւ կամ 'ի դէմն միւս սրբազան Ա-  
ռաքելոց, զոր Հռոմէականք իրենց մուր դրու-  
թիւնը } հաստատելու գլխաւոր առարկաներէն  
մէկն ալ ասոնք ըրած են :

Ռւբրեմն հարկաւ կը հետեւի թէ նախնի սրբազան հարք ի՞նչ մեկնութիւն առւած են եւ ի՞նչպէս կը հաւատան եղեր այդ Քրիստոսի խօսքերուն, որոնց մի առ մի բացատրութիւնները նոյն հեղինակներէն առնելով կը դնեմք, այսինքն.

« Դու ես վէմ, եւ ՚ի վերայ այդը վիմի շինեցից զեկեղեցի իմ » :

« Տայ քեզ զվահանս արքայութեան երկնից » :

« Սիմօն Եօնանու սիրե՞ս զիս առաւելքան » զգոսա . . . : »

« Արածեա՛ զգառինս իմ » : Եւ դու երբեմն դարձցիս եւ հաստատեցիս զեղբարս քո » եւ այլն, դորս ասոնցմով Հռովմէականք հաստատել կուզեն Պետրոս Առաքելոյն գլխաւորութիւնը, եւ անոր յաջորդ անուանող Հռովմայի հայրապետներուն ընդհանուր եկեղեցւոյ վրայ իշխելու իրաւասութիւն ունենալը, եւ իրաւաբանութեան ազբիւր եւ կեդրոն միութեան միայն Հռովմը ըլլալը, եւ անխալութիւնը Պապերուն՝ եւ անոր հրամանաւը եւ վճռովը եղած ժողովներուն ընդունելի եւ վաւերական ըլլալը, եւ այլն :

Տե՛ս ասոնք Հաբերդի եւ Պիլուարաի Աստուածաբանութիւններէն զատ, այլ եւ Ազէքսանդրը թափօնի գիրքը, ախպ վէնէտիկ, եւ Ժողովոց պատմութիւնը եւ Աթոռ Պետրոսի անւանեալ մատեանները ախպ յիէննա, որ այս մատեաններով Քրիստոսի Աստուծոյ մերոյ վարդապետութեան եւ սահմանադրութեան գէմ կը



մարտնչին իրենց խաբէութիւնը հատուակելու :

Արդ կը գրէ Աւետարանին Ղուկաս թէ՛ ո հակառակութիւն եղեւ ՚ի մէջ նոցա թէ՛ ո՛վ ՚ի նոցանէ (առաքելոց) համարիցի մեծ : Եւ նա (Յիսուս) ասէ ցնոսա, « թագաւորք ազգաց տիրեն նոցա, եւ որ իշխենն բարերարք կոչին, այլ դուք ո՛չ այնպէս : այլ որ մեծն է ՚ի ձեզ՝ եղիցի իբրեւ զկրտսերն, եւ առաջնորդն իբրեւ զբայասաւորան, ո՞վ է մեծ, բազմեալն եթէ ըսպասաւորն. ո՛չ ապաքէն բազմեալն, բայց ես եմ ՚ի միջի ձերում իբրեւ զ՝սպասաւոր » : (Ղուկաս, իբ. 24—27) : Ո՛վ անիմանալի եւ ըսքանչելի խոնարհութեանն Քրիստոսի . . . : Որ ինքը արարչադործ Աստուած եւ հիմնադիր Սկրօնիս ըլլալով, այսպէս խոնարհեցաւ ու այս կերպ պատուիրելով խոնարհութիւն ուսուցանէ ո՛րքան յանդգնութիւն եւ ամբարշտութիւն է, որ այս Աստուածային պատգամէն եւ անսահմանելի խոնարհութենէն Քրիստոսի չը պատկառելով՝ արարած անձին մէկը ելնէ ու յանդրդնելով ես զԼուսնի եմ եւ իբրաքան եկեղեցւոյ եմ ըստ ուր ընդ հակառակն, ինքն հիմնադիր նորին Քրիստոս Աստուած ինքզինքը սպասաւոր կը կոչէ . . . այս հեթանոսական ամբարշտութիւն չէ՞ մի, եւ մանաւանդ մելորութիւն չէ՞ մի, որ հակառակ Աստուածային Սահմանադրութեան եւ խոնարհութեան կը ժպրհի իբր հեթանոս թագաւոր աշխարհային իշխանութեամբ խրոխտալ, եւ մելորական դրութեամբ նոյն Աստ-

ւածային Սահմանադրութեան դէմ անտեղի թիւր եւ օտար մեկնութիւններ ու վարդապետութիւններ հաստատել, որոնք որ Քրիստոսի ուսուցած վարդապետութեանը դէմ են :

Բայց հետաքրքրութեան արժանի բան մը կայ աւետարանին սոյն գլխոյն մէջ, որ երեք տուն ետքը կը գրէ Աւետարանին Ղուկաս թէ . « Եւ ասէ Տէր. Սիմոն Սիմոն, ահա սատանայ խնդրեաց դքեղ խարբալել իբրեւ զցորեան . այլ ես աղաչեցի վասն քո՝ զի մի պակասեցին հաւաքք քո » : Ահա յայտնապէս կերելի թէ Պետրոս Առաքելը հանած է այս մեծութեան կռիւը \* (ինչպէս որ մինչեւ ցայսօր՝ Պետրոսի յաջորդ անուանող Հռովմի Հայրապետներուն իբր սեպհական ժառանգութիւն մը եղած է այս ախտը :

Բայց երանի՛ էր որ Տէրն մեր միայն Պետրոսի « հաւատքը չը պակսելուն » համար չ'աղաչէր, այլ նորա յաջորդ անուանող Պապերուն համար ալ աղօթէր. (թէպէտ իրենք 'ի դէմս

\* Ինչպէս որ ապացոյց կրնայ համարուիլ այն խօսքը, որ երբեմն Պետրոս հարցուց Քրիստոսի թէ՛ ահաւասիկ ամեն բան թողուցինք ու քու ետեւէդ եկանք, աս մեր բրածին փոխարէն ինչ հատուցումն պիտի ըլլայ մեզի, որն որ Քրիստոս՝ Պետրոսին միտքը հակնալով իբր յանդիմանական ձեւով եւ կամ հաւասարութիւն մը դնելով անոնց մէջը, զրուցեց անոր թէ . « Նստջիք յերկոտասան աթոռ դատել զերկոտասան ազգն իսրայելի » :

Պետրոսի աղաչելով Քրիստոս՝ վասն յաջորդաց  
ալ կուզեն հասկնալ ուրիշ դիտաւորութեամբ,  
ինչպէս քիչ մը վարը պիտի զլուցեմք .) քանզի  
Պետրոսին դառնալովը գայթակղութիւնը վեր-  
ցաւ առաքելոց մէջէն . նոյնպէս եւ այժմ՝ վա-  
ժաքելի էր թէ նորին յաջորդ անուանող Պա-  
պերը այս մեծութեան ախտը ետ ձգելով, Ս.  
Եկեղեցւոյ Հայրապետացը մէջէն վերնար այս  
տարաձայնութիւնը, ինչպէս որ վկայեց եւ աղա-  
չեց Քրիստոս Պետրոսին համար ըսելով թէ՛ « եւ դու  
երբեմն դարձցիս (այս մեծութեան եւ ուրացու-  
թեան ախտէն) եւ հաստատեսցես զեղբարս քո,  
« նոյնը եւ մեք կ'ազօթեմք վասն Պապին թէ՛ »  
եւ դու երբեմն դարձցիս (այս մեծութեան եւ  
գայթակղութեան ախտէն) եւ հաստատեսցես  
զեղբարս քո », այսինքն հաստատիս 'ի դասս  
Հայրապետաց, եւ հաստատեսցես զերիցակից  
եղբարս քո, որ ըսել է դարձի դաս եւ բժշկես  
երիցակից եղբարցդ քու վրայ ունեցած գայ-  
թակղութիւնը, որ հետեւաբար խաղաղութիւնը  
եւ միաբանութիւնը Ս. Եկեղեցւոյ մէջ հաստատ-  
ուի, եւ « եղիցին մի հօտ (Ժողովուրդք Աստուծոյ)  
եւ մի հովիւ » (որ է Քրիստոս Տէրն մեր). եւ այն  
Հովիւն է որ կը գոչէ թէ. « Զմիառս իմ այլում  
ո՛չ տամ » եւ թէ « Առանց իմ ոչինչ կարէք առ-  
նել », եւ կամ թէ ինքն է որ իրեն համար կը  
վկայէ, թէ՛ էս եմ « Հովիւն քաջ », նոյն ինքն  
կենարար վարդապետն է՝ որ կը զրուցէ՛ « Մե՛  
կոչէք ձեզ ուսուցիչ, զի մի է ձեր ուսուցիչ :

(եւ այն ալ ինքն Քրիստոս է) եւ Պուք ամենեքին եղբարք էք : Եւ այս մտօք է՝ որ կաղթեմք ՚ի մէջ եկեղեցւոյ . « Հովիւ քաջ հովիւ բարի եւ յաւիտենական , նայեաց եւ այց արաբանաւոր հօտի քո , զոր ժողովեցեր առ քեզ զըթու թեամբ քով » : Այսինքն՝ դու ժողովեցեր եւ արեամբդ դնեցեր՝ ո՛վ Յիսուս Քրիստոս Աստուած Հովիւ բարի : Այժմ՝ դուցէ լիոքը ինչ հասկըցուեցաւ թէ՛ ի՞նչ դիտաւ որու թեամբ եւ ի՞նչ բանի համար աղօթեց Քրիստոս Պետրոսի համար թէ՛ « եւ դու երբեմն դարձցիս եւ հաստատեացես զեղբարս քո » , որն որ Հռովմի Աստուածաբանները եւ մենէ բաժանեալ Հռովմի շողքորդները , այս յայտնի ճշմարտութեան դէմ մոլար մեկնութիւններ կուտան , ըսելով . « Ամենեքեան պիտի մոլորին , բայց Պետրոս իւր յաջորդներուն ձեռօքը պիտի դառնայ , քննէ եւ պիտի հաստատէ եղբայրները ճշմարտութեան մէջ , քանզի անոր միայն տրուեցաւ անսրխալութիւն » :

Ահա յայտնի հայհոյութիւն ընդդէմ Հողւոյն Սրբոյ , եւ յայտնի ընդդիմութիւն պատուիրանաց եւ Սահմանադրութեանցն Քրիստոսի . քանզի Քրիստոս բոլոր Առաքելոց մէկտեղ զըրուցեց . « Ես ընդ՝ ձեզ եմ զամենայն առուրս մինչեւ ՚ի կատարած աշխարհի » : եւ « Հողին Սուրբ առաջնորդեացէ եւ ուսուցէ ձեզ զամենայն » : Եթէ ինքը Քրիստոս Աստուած մինչեւ ՚ի կատարած աշխարհի իր եկեղեցւոյն եւ առաքելոց

կամ յաջորդաց հետ պիտի ըլլայ. եւ Հոգին Ս. Աստուած պիտի առաջնորդէ եւ ուսուցանէ, եկեղեցւոյն՝ ընդհանրապէս. այսինքն՝ «Ձեզ ըսելովք. ուրեմն ո՛չ ոք միապետական դատաւոր եւ կառավարիչ պիտի ըլլայ, բաց ՚ի Քրիստոսէ. եւ ո՛չ ոք միապետական եւ անսխալ ուսուցիչ պիտի ըլլայ, բաց ՚ի Հոգին Սուրբէն: Եթէ այսպէս է, ուրեմն ամենեւին Առաքելոց յաջորդները կարօտութիւն չ'ունին ուսանելոյ ՚ի Պապէն, եւ չ'պիտի մուտնին միաստճ եւ, միակրօն մնալով՝ թէ եկեղեցւոյն եւ թէ առաքելական սահմանադրութեանցը մէջ: Այլ հաւատարմապէս առաքելոց ըսաւ վճռելով. «որ Ձեզ լսէ՝ ինձ լսէ, եւ որ զձեզ անարդէ՝ դիտ անարդէ»: Եւ ոչ թէ ըստ պատական դրութեան՝ «որ Պետրոսի եւ անոր յաջորդին լսէ ու հրահանգի՝ ինձ լսէ եւ հնազանդի. եթէ չհնազանդի մէկը անոր յաջորդին՝ Քրիստոսի ալ չը հրահանգի որ ու չը լսեր, եւ Քրիստոսի փարսխէն դուրս է եւ կը մնայ»: որովհետեւ բոլոր հրատարակած գրքերնին ՚ի սոյն խմորէ զանգեալ են Հռովմէականաց:

Արդ՝ գանք հիմա Քրիստոսի Աստուծոյ մերոյ խօսքերուն բացատրութիւնը ընել, որ Պետրոս առաքելոյն զբուցեց, եւ տեսնենք թէ՛ անոնց համար սրբազան հարց տուած ողջամիտ վարդապետութիւնները ի՞նչ են. «Դու ես վէ՛մ եւ ՚ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, եւ այլն»: Ս. Յօհանն Ռսկեքերան ասէ. «Քան

զի Պետրոսի ոչ անդրէն ինչ եղ զբանն ֆրիստոս, այլ իբրեւ զկատարեալ (դաւանութիւն) հաւատոյ ընկալաւ, եւ ասաց շինել զեկեղեցի իւր ՚ի վերայ հաւատոյ նորա ո. Մեկն. Յօհ. Ռսկեբերանի, երես 200 :

Եւ Ս. Յակոբ Մճբնայ հայրապետն ասէ. « Եւ Շմաւօն՝ որ վէմն անուանեցաւ, վասն հաւատոյ իւրոյ կոչեցաւ նա վէմ՝ ճշմարիտ ո. » (Տես Չգօն երես 19) : Եւ սուրբն Եպիփան կիարացի իր Այլակերպութեան ճառին գրէ այսպէս. « Իսկ ամենիմաստն յարուցանէ զՄովսէս եւ ի ջուցանէ զԷղիա բառնալով զկարծիս : Դարձեալ ասէ Տէրն . « Դուք զո՞ ուսեք ասէք զինէն թէ իցեմ, եւ առ ժամայն ուսեալ Պետրոս առ ՚ի յԱստուծոյ հօրէ իբրտեսող գոլ Երրորդութեանն զիսկապէս պատասխանին. « Դու ես ասէ ֆրիստոս որդին Աստուծոյ ո. եւ առ ժամայն երանեցաւ ՚ի Տեառնէ, լինել վէմ՝ հաւատոյ, անյաղթելի գոլով ՚ի դժոխական իրաց) :

Երանելոյն Սերբերիանոսի. « Զեկեղեցի վէմ կոչեմք չըսեմք. եւ ոչ զվէմն յորոյ վերայ կայ՝ ուրանամ. վէմ է եկեղեցի, քանզի զհաստատուն վէմն ունի զֆրիստոս, եւ միւս վէմ՝ զՊետրոս՝ որ դաւանութեամբն առ զանուն, դու ես, ասէ, ֆրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ ո. ճառ. Դ. երես 67 :

Ս. Հայրն մեր Եղիշէ . « Դու ես վէմ, եւ ՚ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ. — Արդարեւ իսկ վէմ է ճշմարիտ դաւանու-

Թիւն հաւատոցն: Որպէս Պետրոս 'ի վերայ' Բրիստոսի շինեաց զանձն իւր վկայութեամբ մահու, նոյնպէս եւ եկեղեցի շինեցաւ 'ի վերայ Պետրոսի հաւատոցն, ո՛չ միայն 'ի Հռովմ', այլ եւ ընդ ամենայն քաղաքս եւ 'ի գեողս մեծամեծս մինչեւ ցփոքունս, նոյն հաւատք եւ նոյն հիմն եւ նոյն հաստատութիւն: Քանզի մի է Տէր եւ մի մկրտութիւն, որով ընկալաք զթողութիւն մեղաց եւ զկենդանութիւն ոգւոց, յանուն Տեառն Յիսուսի Բրիստոսի ո: (Ճառընտիր Եղիշէի, 'ի քարոզութիւն առաքելոց, Եւ մատենագրութիւն Եղիշէի, երես 348 'ի վենետիկ):

Երանելին Յօհան Ծործորեցի ասէ. « Ի վերայ այդր դաւանութեան հաւատոյ զոր դու դաւանեցեր, շինեցից զեկեղեցի իմ՝ որ է կրկին, մի 'ի քարանց եւ 'ի փայտից շինեալն, եւ միւս որ 'ի հաւատոց միաբանութենէ շինեալ ժողովուրդք: 'ի վերայ հիման Տեառն եւ առաքելոց նորա, որպէս ասէ Պօղոս. « Հիմն այլ ոք ո՛չ կարէ դնել քան զեղեալն, որ է Յիսուս Բրիստոս ո: (Յօհ. Ծործոր. 350 երես 'ի Մեկն. Մատթէոսի):

Երանելին Ներսէս Լամբրօնացի. « Կանգնեցին՝ մեղ առաքեալքն սուրբք հրամանաւն Բրիստոսի, մինչդեռ յանապատ հեթանոսացն հալածանաց շրջեաք, խորան վկայութեան մաքուր հաւատոյ, ըստ որում ասէ առաքեալ. « Ես հիմն եղի զՅիսուս Բրիստոս: Արդ՝ իւրաքանչիւր ոք զդոյշ լինիցի 'ի շինելն, զի դուք էք տաճար Աստուծոյ կենդանւոյ, եւ հողի Աստուծոյ բնակ-

եալ է 'ի ձեզ : Եւ Գրիստոս իբրեւ զորդի իշխե  
'ի վերայ տան իւրոյ , որոյ տունն մեք իսկ եմք .  
եւ տանս ֆահանայապետ Գրիստոս : Չայս տուն  
հաւատոյ , զոր 'ի վերայ Գրիստոսի շինեցին նո-  
քա (այսինքն՝ առաքեալք եւ հաւատացեալք)  
եւ Գրիստոս 'ի վերայ իւրեանց , 'ի վերայ այդը  
ասէ վիմր շինեցից զեկեղեցի իմ . . . եւ աստ  
եւ 'ի ներքոյ այսր հաւատոյ իմանալիս տան ,  
յորում էր տախտակ Աստուածադիժ մարմնոյն  
Գրիստոսի , եւ դաւաղան նորին ծաղկեալ , վը-  
կայքն պատարադեցան , մարտիրոսքն նահատա-  
կեցան , քահանայապետքն սուրբք զառաքինու-  
թիւն նոցա Աստուծոյ նուիրեցին , եւ այլն \* :  
(Յատենա . Չեռ .) :

Երանելին իգնատիրոս ասէ . « Սպտ հոգին  
հօր 'ի բերանն Շմաւոնի խօսեցաւ , փոխանակ  
ամենեցուն ետ վկայութիւն , թէ նա է Գրիս-  
տոսն Որդի Աստուծոյ կենդանւոյն : (Մեկո . Ղուկ .  
եր . 162) : Ս . Աւետարանին այն խօսքէն առնել-  
լով որ Գրիստոս հարցուց աշակերտաց թէ՛ « իսկ  
դուք զո՞ ասեք զինէն թէ իցեմ » . եւ ո՛չ թէ՛  
« զո՞ ասես Պետրոս թէ իցեմ » ըսաւ Գրիստոս ,  
այլ առաքելոց հաւասարապէս հարցուց , եւ  
Պետրոս ալ անոնց կողմէն իբր բերան ըլլալով՝  
գաւանեց , չէ թէ Պետրոս միայն գաւանեց՝  
եւ միւսները լուռ կեցան եւ կամ նոյն գաւա-  
նութիւնը չ'ունէին , քա՛հ լիցի , որովհետեւ  
Պետրոսէն առաջ գաւանադ կար առաքելոց մէ-  
ջը , որ էր մերս Ս . Լուսաւորիչ Բարթոլիմէոս



Սրբազան առ.ա.քեալը որ առ.աջ Նաթանայէլ կը կոչուէր:

Սուրբն Ներսէս Շնորհալի. «Շինող էիցս հա-  
մայնից արարածոց 'ի յանգոյից, նոյն շինեցեր  
զեկեղեցի, վէմէ 'ի վերայ վիմին բանի». այ-  
սընքն՝ դու Քրիստոս շինեցեր զեկեղեցի քո՝ 'ի  
վերայ վիմի կամ վիմեղէն դաւանութեան Պետ-  
րոսի: Նոյնը կը գրէ երանելին Օգոստինոս՝ ը-  
սելով. «Այլ արդ՝ մենք որ Քրիստոնեայքս եմք  
եւ կոչվմք, ոչ 'ի Պետրոս հաւատամք, այլ յայն  
յոր Պետրոսն հաւատաց, շինեալք Պետրոսի բա-  
նիքն որ զՔրիստոսէ, եւ ո՛չ 'ի տաղից սմանց  
զիզեալք . . . , այլ նորա բարերարութեամբ-  
քն՝ դաւեալք օգնութիւն: Պետրոսի վարդա-  
պետն Քրիստոս, վարդապետութեամբն որ տանի  
յաւիտենական 'ի կեանս, նա ինքն եւ մեր վարդ-  
ապետն է:» (Յաղագս քաղաքին Աստուծոյ  
գիրք. ԺԼ. ԳԼ. ԾԴ.՝ 354) վերջապէս սրբա-  
զան նախնիք մեր, Պետրոսի հետ հաւասար  
բռնելով միւս առ.աքեալները եւ միանգամայն  
վէ՛ճ եւ հի՛ճ բառերը անխտիր դործածելով, եւ  
եկեղեցին ալ միայն Պետրոսի դաւանութեանը  
վրայ շինուած չըլլալը կը յայտնեն երգելով եւ  
գոչելով այսպէս. «'ի վերայ Էֆէ հասարոյ հի՛ճն Ա-  
ռա՛տեւոց եւ Մարգարէից շինեցեր զքո՝ Ս. սուրբ զե-  
կեղեցիո:» (կանոն Տապանակին: Այս դաւանու-  
թիւնը՝ նախնեաց Առ.աքեալոյն դաւանութենէն ա-  
ռած է. ինչպէս կը գրէ Առ.աքեալը «Շինեալք  
'ի վերայ հիման առ.աքեալոց եւ մարգարէից, ո-

բոյ է դըլուխ անկեան Քրիստոս» (Եփես. Բ. 30)։  
 Բայց Հռովմէական ծուռ դըրութեանց հակա-  
 ոակ դարուն համար, այս առաքելական եւ  
 հայրապետական դաւանութիւնն ու վարդապե-  
 տութիւնն Մխիթարեան միաբանութեան մէ-  
 ջէն Հայր Գաբրիէլ Աւետիքեան ընդդէմ կը  
 դինի շաղակրատելով իր Բացատրութիւն Շարա-  
 կանին մէջ, երես 454, ըսելով այսպէս. « Ի վերայ  
 վիմի հաւատոյ ասել զեկեղեցի Քրիստոսի շին-  
 եալ 'ի վերայ հաստատութեան հաւատոյ, (կըսէ  
 ու յատկացուցիչը դնելու կը վախնայ, փոխա-  
 նակ ըսելու թէ « Շինեալ 'ի վերայ հաստատու-  
 թեան հաւատոյ առաքելոց մարդարէից» . ինչ-  
 պէս ուղիղ եւ բացայայտ եւ ճշմարիտ միտքն  
 է շարականին), այլ ետքը ուրիշ կերպ մը կը  
 բռնէ իր դիտաւորութիւնը մէջ բերելով,  
 եւ Շարականին միտքը խանդարելով կը հե-  
 տեւըրնէ այսպէս, թէ ոչ ընդդիմանայ միւս  
 բանին, որով ասեմք՝ շինեալ 'ի վերայ 'վիմին  
 Պետրոսի, այլ մանաւանդ զմիմեանս վակեն եր-  
 կոքին ասացուածքս . վասն զի հաւատք՝ յորոյ  
 վրայ շինի եկեղեցի, այսինքն ժողով հաւատա-  
 տացելոց, ոչ կարէ լինել վերացեալ ինչ յինք-  
 եան՝ առանց ենթակայի ուրուք, այլ դոյացեալ  
 յենթակայ ոք, այսինքն՝ 'ի դաւանող եւ յու-  
 սուցանող, որպիսի է դիտաւորաբար Սուրբն Պետ-  
 րոս եւ այլն» . կըսեմք Աւետիքեան վարդապե-  
 տին՝ թէ ո՛չ բնաւ, ըստ որում հաւատոյ դա-  
 ւանութեան պատճառ եւ ենթակայ նախապէս

Մարդարէք էին, եւ երկրորդապէս Առաքեալք  
 եւ ուսուցիչ ու ճիշտ քրիստոսոցէ Պետրոս, այլ եւ  
 միւս առաքեալք եւս. եթէ Պետրոս իւր դա-  
 ւանութեամբն լինի ուսուցանող այլոց՝ ըստ գը-  
 ղութեան Հ. Գաբրիէլ Աւետիքեանի, ապա ու-  
 ըմբն Պետրոս եւս է ուսանող եւ ո՛չ ուսուցա-  
 նող, որովհետեւ Պետրոս Սրբազան առաքեալէն  
 առաջ դաւանող կար առաքելոց մէջ, որ է մերս  
 Բարթողիմէոս սրբազան առաքելը, ուրեմն կը  
 հետեւի թէ մերս Բարթողիմէոս՝ ուսուցիչ է  
 Պետրոսի եւ բովանդակ եկեղեցւոյ. բայց Ս. Ա-  
 ւետարանին գրած բաւական է, որ Հայր Գաբրիէլ  
 Աւետիքեանի գրութիւնը առ ոտն կոխէ, ցուցա-  
 նելով Պետրոսի դաւանութիւնը՝ ոչ ինքիւրմէն ու-  
 սուցանող եւ գոյացուցանող եւ կամ հնարող, այլ  
 երկրորդ Հօրէն, ինչպէս կրսէ տէրն մեր. «Երանի  
 քեզ Սիմոն որդի Յովնանու, զի մարմին եւ  
 արիւն ոչ յայտնեաց քեզ (այդ ըրած դաւանու-  
 թիւնդ) այլ Հայրն իմ, որ յերկինս է», այ-  
 սինքն նա է որ քեզի յայտնեց որ դուն դա-  
 ւանեցար զիս, Ահա՛ պատճառ, ահա՛ ենթակայ,  
 եւ ահա ուսուցանող հաւատոյ, որ Հայրն ամե-  
 նակալ է, զոր կեղծ գրութեամբ Պետրոսի վրայ  
 բեռցներկուզէ Աւետիքեան վարդապետը, հա-  
 կառակ Բրիտանոսի բանիցը. եւ ասկէց վար Սրբ-  
 բազան վարդապետներէն վկայութիւն կը բե-  
 րէ, հաստատել ու զերով եկեղեցին Պետրոսի վը-  
 րայ, որն որ տեսանք սոյն մասին մէջ, որ Սրբ-  
 բազան հարք Պետրոսի դաւանութեանը վրայ

չինած կը վարդապետեն, եւ ոչ 'ի վերայ ան-  
 ձին Պետրոսի\*, եւ ալ՝ ոչ միայն Պետրոսի դա-  
 ւանութեանը, այլ եւ միւս առաքելոց եւ մար-  
 դարէից դաւանութեանը վրայ շինուած կը  
 վարդապետեն, ինչպէս տեսանք՝ եւ ինչպէս ալ  
 վերողորեալ շարականին ողջամիա վարդապե-  
 տութենէն յայանի է: Եւ Եպիսիան Կիւրացի  
 Սրբազան Հայրապետն ալ այսպէս կը դաւանի.  
 «Եւ Պետրոս վարդապետեալ Սատուծոյ Հօ-  
 րէ դաւանեաց զՔրիստոս Ռդի Հօրն երկնա-  
 ւորի, ուստի եւ Սուրբ միածինն խարսխեալ  
 հաստատեաց զնա վէ՛մ հաւատոյ անդղղեցի  
 յանուն Հօր եւ Ռդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ըս-  
 տուգապէս եւ այլ Առաքեալքն առին եւս ընդ  
 նմա իշխանութիւն 'ի տեառնէ Սատուծապէս  
 նստել յաթոռս ատենի յայնմ՝ ահաւոր եւ յա-  
 ներեկաւուրն վերջնում դատել զերկոտասան Ազ-  
 գըն իսրայէլի: Նսեւ եօթանասունքն 'ի Հօրէ

\* Այո, թէպէտ եւ մեզի ծանօթ եղածներէն զի-  
 տեմք միայն, որ 'ի վերայ անձին Պետրոսի կը վար-  
 դապետէ, այն է սուրբն Սահակ Պարթեւը, բայց  
 այսքան սրբազան հարց վկայութիւններէն անսնր-  
 ուեցաւ որ 'ի վերայ դաւանութեան Պետրոսի կը  
 վարդապետեն, մանաւանդ Եկեղեցւոյ ծիարանը այս-  
 պէս կը դաւանի, որմէ կը մակարերեմք թէ նոյն  
 Ս. Սահակին գրութեանց մէջ կամ օտար ձեռք  
 մտած է եւ կամ լայնաբար վարդապետած է. այս  
 մասին տես Մայր Մաշտոցին յաղագս Հիմնարկու-  
 թեան եկեղեցւոյ բուռած գլխոյն մէջ, որ եկեղեցին  
 որու վրայ կը հիմնուի:

պատկերով առաւել եւս քան զհրեշտակս փա-  
ռօք ՚ի փառս զարդարեալ Ս.ՅԼ մեք իսկ հաւա-  
տացեալքս Ս. Երրորդութեան ունիմք համար-  
ձակութիւն յայնմ ահեղ տոննիդ. շնորհօք մա-  
հուն Յիսուսի ֆրիաստի Տեառն մերոյ որպէս  
այն զի տակ. «փրկեաց զմեզ եւ փրկեացէ»։ (Ի  
ճառն ՚ի Կանայ Գալիլեացոց. Չեռ. 1)

Գանք հիմայ «Արածեա զգառինս իմ» եւ  
կամ «զոչխարս իմ» խօսքին վրայ։ Արդ՝ այս  
խօսքը մինակ Պետրոսին համար չըլլալը, ինքը  
նոյն Սրբազան առաքեալը կը լուծէ մեր խըն-  
դիրը, բոլոր եկեղեցւոյ հովուացը ազաչեւով թէ՛  
«Աբձեցե՛ր» եւ ՚ի յեղ հօգր է Աստուծոյ՝ եւ ոչ իմ  
Նոյնպէս եւ Պօլոս Սրբազան առաքեալը կը սէր  
Մեկտինոյ երկցանց թէ՛ «Զգոյշ լերուք անձանց  
եւ անեայն հօգր»։ որո՞՞ք եր շէշ հոգին Սուրբ Կե-  
սուս հոգեւել զժողովորդ տեառնս՝ եւ ոչ Պետրո-  
սի։ (Վորժ. Ի. 28)։ Սրբազան առաքեալք երկ-  
նասոր փրկչէն սորվելով կուսուցանէին, ինչպէս  
որ կը հարկադրէր բոլոր առաքեալները ը-  
սելով. «Երթալք առ ոչխարս կորուսեալս առ-  
նրն խորայէլի»։ Այդպէ թէ մինակ Պետրոսը ու  
անոր յաջորդները «բձեշ» իշխանութիւնը ու-  
նին. այլ ամեն առաքեալները ու անոնց յա-  
ջորդներն ալ, ինչպէս որ կը սորվիցնէ երանե-  
լին եւ մեծն խտրով. «Ասաց Տէրն Պետրոսի, եւ  
նովաւ ամենայն առաջնորդաց. Արածեա՛ր զոչ-  
խարքս իմ. փանծոյ զարիւնն իմ հեղի, եւ փրկ-  
կեցի, եւ ձեզ յանձն արարի հովուել բարոք»։

զի մի ոք կորիցէ» (Մեկն. յամագրքի) :

Եւ Սուրբն Կիւրեղ Երուսաղէմացի հայրապետը կը հաստատէ ըսելով. «Պետրոս, որ յառաջագոյն երիցս անգամ ուրացաւ, դարձեալ անդրէն խոստովան լինէր, որում հովուել զմտաւոր գառինսն հրամայեցաւ 'ի Տեառնէ, այսինքն, «Արածեա զգառինս իմ» եւ «Արածեա զոչխարս իմ» (Կոչ. Լնժ. 237. տիպ Վիէննայ)

Եւ Սուրբն Կիպրիանոս 'ի Թուղթն առ Բիրինիանոս. «Ասաց Սաւաքեւոյն եւ 'ի ձեռն նոցա ամենայն առաջակայիցն, որ առաքելոյն վոխախանակաւ կարգեալք յաջորդեցին. Որ ձեղ ըսէ ինձ ըսէ» (Ղուկ. Ժ. 16) : Զայսմանէ բարւոք կը գրէ Երանելին Յակոբ Աստուածաբան Պատրիարքը. «Զոր յեա յարութեան (ասէ) Պետրոսի ասաց հովուել զոչխարս, նախքան զյարութիւնն եւ միւս առաքելոյն ասաց : Ուստի զի մի զայն խոստումն կորուսեալ համարիցէր Պետրոս, վերըստին ասաց թէ, արածեա՛ որպէս եւ յառաջըն խոստացայ, զի ուրացմամբդ ո՛չ բարձցի զայն իշխանութիւն, զի Աստուածային շնորհն անզեղջ է, որպէս եւ յուրացողէն ո՛չ բառնամ զկնիքն մկրտութեան, որ թէ դարձցի յուրացողութենէն՝ ո՛չ է մկրտելի վերստին» (Վէմ հաւատոյ. եր. 501) :

Եւ ահա ասոր պէս ալ՝ սրբազան հարք եկեղեցւոյ «Սիմօն Բօնանու սիրե՞ս զիս» երկոց հարցմանց վրայ այսպէս կը վարդապետեն, Սուրբըն Եպիփան Կիպրացի. «Սիմօն Բօնանու սի-

րե՞ս զիս ո՞ եւ «Արածեա՛ զոչխարս իմ՞» ըսե-  
լուն վրայ, իւր ճառին սկիզբը կը գրէ թէ՛ ե-  
րեք անգամ սիրե՞ս զիս հարցունելով՝ Երրոր-  
դութեան հաւատոյն վրայ վերստին հաստատեց՝  
զորն որ ուրացմամբը մերժեր էր. ըսելով այս-  
պէս. «Այլ իբրեւ ամրացոյց Տէրն մեր Յիսուս  
Քրիստոս՝ Պետրոս հաւատով Երրորդութեան  
'ի վերայ անգրգուելի վիմին զվէմն հաւատոյ,  
եւ երեք հարցմամբն զերիս ուրացութիւնսն  
սրբեաց 'ի նմանէ . . . եւ ապա Միածինն հօր  
միաւորեաց զնա առ ինքն սիրով եւ հաւատով,  
եւ ասէ. «Արածեա՛ զոչխարս իմ՞» : Ճառ. ԽԳ.  
Հաստատելոյ Պետրոս 'ի հաւատս Երրորդու-  
թեան ասուալի Առաքելոց, (Ըստ հնագոյն եւ  
ընախր ձեռագրաց) :

Եւ շնորհալի Ս. Հայրն մեր կը գրէ. «Եր-  
իւք հարցմամբ սիրոյն զերից ուրացութեանցն  
ընկալաւ զբժշկութիւնն » . եւ ապա իրեն նախ-  
կին առաքելական պաշտօնին մէջը հաստատ-  
ուեցաւ, յորմէ ուրացութեամբը զրկուած էր.  
վասնորոյ ըսուեցաւ իրեն. «Արածեա՛ զզառինս  
իմ՞ կամ «Չոչխարս իմ՞» :

Սրբոյն Յօհաննու Ռոմանեցւոյն 'ի մեկնու-  
թեան Յօհաննու Աւետարանին այսպէս . «Իբ-  
րեւ ճաշեցին, ասէ Յիսուս ցլիմօն. Սիմօն Յօնա-  
նու սիրե՞ս զիս ո՞ Գ. վասն չորս պատճառի ե-  
րիցս հարցանէ : Նախ՝ զի երիցս անգամ ուրա-  
ցաւ նա, ասաց Տէրն զի այնու փառաւորեսցէ :  
Երկրորդ՝ զի երիցս խոստովանեսցի Պետրոս ընդ

դէժ ուրացու թեանն, սրագէս զի լեզու Պետրոսի  
 անուել սպասաւորեացէ երկիր զի քան թէ սիրոյ՝  
 երրորդ՝ զի այնու ցուցցի թէ սէրն Աստուծոյ  
 հայի. 'ի հովուումն ոչխարաց ընդ երկու եղա-  
 նակի այսինքն զի հովուումն ընկալեալ լինի  
 վասն շարժման սիրոյ, եւ զի 'ի սէր եւ ընդ սիրոյ  
 այսինքն 'ի ներդարձութիւն նարս կրթեացիւ Չոր  
 րորդ՝ զի երկուք վկայութիւնն կատարեալ է. եւ  
 վասն այն երեքին խոստովանութիւն 'ի Պետրոսէ  
 խնդրէ Գրիստոս Ասէ երեք անդամ արածեա՛ս :  
 վասն երեք պատճառի ասէ : Նախ՝ ըստ Բսկեր-  
 որպէս զի ցուցցէ Գրիստոս թէ որքան համարի  
 զհովուումն ոչխարաց, եւ վասն նորա հոգ տանի.  
 երկրորդ պատճառ է զի պարտ է, հովուել ա-  
 ռաջնորդաց զհօտս երեքին կերպիւ, այսինքն  
 յօրինակաւ բարի վարուց՝ բանիւ ուղղիզ վարդա-  
 պետութեան. օգնականութեամբ ժամանակա-  
 ւորացս սղորմութեամբ, երրորդ պատճառ է զի  
 պարտ է պահել զհօտն Գրիստոսի յերկու շարեաց.  
 'ի բռնութենէ չար իշխանաց, եւ 'ի նենդու-  
 թենէ հերետիկոսաց, եւ 'ի փորձութենէ դի-  
 ւաց : Իսկ Տէրն թէպէտ եհարց թէ սիրե՞ս զիս  
 Պետրոս : ոչ ասաց թէ սիրեմ, վասն երեք պատ-  
 ճառի : Նախ՝ զի հեռացի եւ օրինակ տայէ  
 հեռանալոյն 'ի յանդգնութենէ : երկրորդ՝ զի  
 ո՛չ գիտէր ստուգապէս զմեծութիւն սիրոյն ա-  
 ռաքերոյն, եւ այնու օրինակ տայ՝ ոչ ասել  
 զայն զոր ոչ գիտեմք ստուգապէս : երրորդ՝ է  
 քա ինչան մաքուր խղճմտանաց եւ խոստովա-



նու թեան, վասն որոյ եւ ասէք, գու գիտեա զի սի-  
 բեմ' Չորրորդ' է աւ 'ի յայտնութիւն եւ 'ի գո-  
 վութիւն ամենադիտին քրիստոսին, ' Հինգ երրորդ'  
 զի նա փորձիւ գիտէր զտկարութիւն իւր, վասն  
 որոյ ոչ ասաց թէ սիրեմ' : Գիտելի է զի կրկին  
 անգամ ասաց զգառինս իմ', եւ մի անգամ  
 զոչխարս : Եւ այս վասն երեք պատճառի : Նախ  
 զի այնու ցուցցէ թէ պարտ է առաւել հոգալ  
 վասն հոգեւոր ծննդեան այնոցիկ որ նոր եւ ան-  
 կատար են 'ի հաւատս , քան թէ վասն կատար-  
 բերցնու երկրորդ' զի այսու ցուցցէ զաստիճան  
 քրիստոսեկց, զի ոմանք են որ սկսեալք' են բարի  
 առնել' եւ ոմանք զի յաջողեալք են 'ի բարին,  
 սոքա գառինք կոչին, եւ ոմանք են կատարեալ,  
 որ եւ զայլս եւս յորդորեն 'ի բարին, եւ սոքա  
 ոչխարք անուանին : Երրորդ պատճառ է զի ըստ  
 այլ իմն անսութեան երեք են կացք քրիստո-  
 սոսեկց. ոմանք կուսանք, ոմանք այրիք, եւ սո-  
 քա երկոքեանս վասն ամբժութեանն գառինք  
 կոչին, եւ ոմանք ամուսնացեալք որ ոչխարք կո-  
 չին : Զորրորդ պատճառ' զի երեք են ազգ քրիս-  
 տոսեկց, ոմանք կրօնաւորք, ոմանք առաջնորդք,  
 որք պարտին գառին ամբժութեամբ վարել, ոմանք  
 աշխարհականք որք ոչխարք կոչին : Հինգ երրորդ'  
 զի երեք են հասակ մարդոյ, մանկութիւն եւ  
 երիտասարդութիւն, որ գառին անուամբ կոչին,  
 եւ երրորդ ծերութիւն, որ ոչխար կոչի, վասն  
 որոյ ասէ զի կարդաւոր վարեցէ զնոսա \* .

« Մինչ մանուկ էիր անձամբ անձին գօտի... »

եւ յորժամ ծերասցիս . . . » : Չայս նախ՝ վա-  
սըն չարչարանայն ասէ զոր կրեցոց էր Պետրոս-  
զի՝ ի մանկութեան հասակին ո՛չ չարչարեցաւ  
այլ ՚ի ծերութեանն խաչակից եղեւ Քրիստոսի :  
Երկրորդ՝ ըստ խորհրդոյ, իբրու ասել թէ մինչ  
մանուկ էիր, այսինքն ՚ի նորութեան առաքելու-  
թեան եկեղեցւոյ քո՝ դու ինքնին օրէնս դնէիր  
եկեղեցւոյ : Խակ զինի մահուան քո այնքիկ որ յՆո-  
քո նստին, բարձցեն դքո հրամանագ, եւ ըստ  
ինքեանց կամաց դիցեն օրէնս եկեղեցւոյ եւ  
հօտի քոյ, եւ արտաքոյ կամացդ վարեցին,  
որպէս եւ է այժմ, զի քակեցին զօրէնս առաքե-  
լոյն այն ազգ, այսինքն Լատինք, եւ ըստ իւր-  
եանց կամացն դնան որպէս եւ հաճոյ է իւրա-  
քանչիւրոյն » :

Այս բանիս համար եւս կը դրէ Յակոբ  
Աստուածաբան Պատրիարքը թէ. « Զի զայն ուր  
Պետրոսի առանձնաբար ասաց թէ «արածեա-  
եւ այն, հաւասար ամենեցուն . . . յանձն  
արար զհօտն իւր: Զի այն առանձնակի հրամա-  
նըն ո՛չ աւելի ինչ ետ Պետրոսի, այլ զի նախ քան  
զյարութիւնն արար՝ հովիւ զամենեւեան առա-  
քելոյն առ ոչխարս կորուսեալս, իսկ ուրացու-  
մինքառնայ զմատակարարումն հովուութեան,  
վասն այնորիկ Քրիստոս վերատին ասաց թէ՝  
որպէս յառաջն հրաման ետու հովուել զհօտ իմ,  
այժմ կրկին ասեմ արածել, զի մի՛ կարծիցես  
թէ ուրացմամբ բարձի զհովուութիւնդ » :  
(Վէմ հաւաստոյ. երես 516) :

Դանք այժմ բանալիին վրայ, որ Գրխատոս ըսաւ. « Տաց քեզ զվրականս արքայութեան, եւ այլն, այս բանիս համար Ս. Կիպրիանոս կը վըկայէ՝ ըսելով. « Փականքն ո՛չ տուան նմա միայնակ (այսինքն Պետրոսի) , այլ միութեան եկեղեցւոյ » :

Նմանապէս ալ մեր Ս. Լուսաւորիչ հայրը կըսէ թէ. « Տէրն ետ առաքելոցն՝ զվրականս արքայութեան՝ ի ձեռս նոցա (այսինքն առաքելոց), զի ինքն իսկ Աստուած որդիին է դուռն մտողացն » . (Աղաթանդեղոս 167) : Բայց պատգամովք այս վկայութենէն վեր միայն Պետրոսի համար ըսածը Լուսաւորիչ Ս. Հօր՝ մեր աչքը կուղեն խոթել, թէ. « Եւ զնա (զՊետրոս) արար վէ՛մ հաստատութեան ամենայն եկեղեցեաց » ըսելով. եւ այս վերողբեալ վկայութիւնը՝ որ բոլոր առաքելոց մէկտեղ կը վարդապետէ Երանելին, բաներնին չդալուն համար բոլորովին զանց կընեն, ինչպէ՛ս որ Չամուրճեանն ալ ըրեր է իր Զահարէն մէջը :

Նոյնը կերպէ Հայաստանեայց Ս. Եկեղեցին բոլոր առաքելոց համար թէ. « Որք առիք իշխանութիւն ՚ի վերայ ազգի մարդկան, կապել եւ արձակել ՚ի յերկինս եւ ՚ի յերկրի » : Եւ թէ. « Հազարապետք աստուածային խորհրդոցն եւ բացողք դրան արքայութեան երկնից » . (Շարական, Կանոն առաքելոց) : Նաեւ Ռսկերերան կըսէ. « Որք յերկրի ասա բնականան, եւ ՚ի սոսինքնազարավարին յերկնայնոցն սպասաւորութիւն

կարգեցան, եւ իշխանութիւն իմն առին, զոր  
 եւ ոչ հրեշտակայն եւս Աստուած: Քանզի նոցա  
 ոչ ասաց. զոր միանգամ կապիցէք յերկրի, եղի-  
 ցի կապեալ յերկինս, եւ զոր արձակիցէք յերկրի  
 եղիցի արձակեալ յերկինս: Ատաքէն եւ որ յերկ-  
 րի անարք են, ունին եւ նոքա իշխանութիւն  
 կապելոյ, այլ զմարմինս միայն. խկ այս կապանք  
 մերձին 'ի հողին, եւ զերկնիւք 'ի վեր անցանեն.  
 եւ զոր միանգամ աստ 'ի խոնարհ գործեն քա-  
 հանայք, նոցին 'ի բարձունս վճիռ հատանէ Աս-  
 տուած, եւ զժառայիցն դասակնիք աէրն ինք-  
 նին հաստատէ . . . եւ արդ՝ զի՞նչ քան զայս  
 իշխանութիւն բարձրացին Զամենայն դատաս-  
 տան եւս հայր որդւոյ իւրում. այլ ես անսանձ  
 զի զամենայն եւս 'ի ձեռս նոցա որդին (Յիւրք  
 Գ. յաղագս քահանայութեան):

Արդ վերջապէս կը դառնի Հայաստան-  
 եաց սուրբ եկեղեցին եպիսկոպոս ձեռնադրած  
 ժամանակն անգամ, որ խնդիր մը կառաջարկէ  
 Հայրապետը նուիրելոյն, որն որ այս փականքին  
 բացատրութիւնը կրնայ համարուիլ, որ Պ. Զա-  
 մնարձեանը խարդախութեամբ մը կամ անհա-  
 բաղաա ձեռագրաց հանդիպելով Պապին ծա-  
 աայել եւ հեռուիլ ուսոյց քաններորդ վիպու-  
 թեամբը, բայց մենք հաւատարիմ աղբիւրներէ  
 քաղելով կը դնեմք իսկը այսպէս. «Կամի՞ս գու-  
 երաններոյն թող էտի եւ թարթուղիմնսի եւ  
 սրբոյն Գրիգորի Լուսաորչին, որոց էր զօրութիւն  
 պարզ եւ եւս յՅաստու ծոյ կապել եւ արձակել»:

տալ զքո հնազանդութիւն եւ զհաւատարմութիւն առ յաջորդս եւ առաջնորդս նոցին, եւ այնտիկ՝ որք զինի սորին նստին » : (Կանոն յորժամ եպիս. ձեռ. .) :

Եւ դարձեալ յայլ օրինակ մագաղաթեայ եւ երկաթագրով այսպէս. « Կամի՞ս մնալ հաւատարմութեամբ ՚ի ներքոյ բարձր իշխանութեան Մեծի Աթուոյս Բարթուղիմէոսի, Թադէոսի եւ Գրիգորի Լուսաւորչայն մերոյ, որոց էր զօրութիւն պարգեւեալ յԱստուծոյ կապել եւ արձակել, տա՛լ զքո հնազանդութիւն առ յաջորդս նոցին եւ այլն » :

Եւ ապա աղօթք մը կըսէ Հայրապետը նոյն նուիրելոյն վրայ այսպէս. « Առաքեցեր զսուրբ զԱռաքեալն ըստ քում նմանութեանդ, ետուր համարձակութիւն աշակերտել զամենայն հեթանոսս եւ զչօղիղքո՞ւ ամենազօր ՚ի նոսա փչելով եւ զամենայն աւուրս մինչեւ ՚ի կատարած աշխարհիս այսօրիկ լինել ըստ նոսա . . . իշխանութիւն կայցի (սա) առաքելաբար յերկինքս եւ յերկրի թողուլ զմեզս՝ բանալ զդրունս արքայութեան միջնորդութեամբ սորա եկելոցն առ քեզ եւ այլն » : (Նոյն)

Այժմ գանք Գրիստոսի այն խօսքին վրայ, որ զլիաւորապէս մեր խնդիրը անոր վրայ է. « Եւ դու երբեմն դարձցիս եւ հաստատեցես զեղբարս քո » : Արդ՝ մեր տուած վարդապետութիւններէն ՚ի զատ, իրենց Հռովմի եկեղեցւոյն երեւելի հայրապետի մը վկայութիւնն ալ

դոնէ ընդունիլ եւ տեսնել չեն ուզեր՝ հռովմէական. ք, այլ մտացածին վարկածներով՝ նոր՝ ինտրոյ վարդապետութիւններ կուզեն հաստատել իրենց դրութիւնը վաւերացնել ուզելով, զորն որ սուրբն Օղոստինոս այս բանիս համար յայտնի կը վկայէ թէ՛ « Ֆրիստոս Պետրոսի ասաց. ես աղաչեցի վասն քո զի մի պակասեացին հաւատք քո, եւ դու երբեմն դարձցիս եւ հաստատեսցես զեղբարս քո. մի՞ թէ միայն վասն Պետրոսի՞ աղաչեաց ՚ի բաց հանելով զՅակովբոս՝ զՅօհաննէս եւ զայլ առաքեալսն, եւ յայտնի է, որ ՚ի դէմս Պետրոսի՝ ՚ի միասին խմացեալ ինին բովանդակ առաքեալքն. վասն այնորիկ ընդ աղաչելն Պետրոսի՝ առանց երկբայութեան աղաչեաց վասն ամենեցուն » : վասն զի առաքեալները մատնութեան գիշերը ամենքն ալ դայթակղեցան, անոր համար՝ Ֆրիստոսի ազօթիցը ամենքն ալ կարօւացան :

Թէպէտ եւ Աթոռ Պետրոսի մատենին հեղինակ Հ. Պալճեանը՝ այս վերոգրեալ վկայութիւններէն ոմանց համար կը պնդէ սխալ թարգմանութիւն կոչելով, եւ ինքը (ըստ օրինակի իրեն անսխալ եկեղեցւոյն) վերստին կը թարգմանէ եւ ուղածին պէս կը « բռնէր », եւ անվաւեր համարել տալ կուզէ մէկուն հրատարակած տեարակին մէջ այս նիւթ երուն վրայ բերած վրկայութիւնները : ( Տես՝ Աթոռ Պետրոսի երես 39, 104 ) :

Ինչպէս իրենք սովորած են՝ իրենց սրտին

դպչելու խօսքերը խանդարել եւ թլխատել ի-  
 մաստը փոխելով ու այնպէս տպել, ուրիշներն  
 ալ իրենց պէս կը կարծեն: Կըսեմք իրենց խո-  
 նարհարար, թէ մեր յայտմ մասին ըրած խոր-  
 հըրդածութիւննիս, եւ թէ նախնեաց այսնիւ-  
 թերուն վրայ տուած վկայութիւնները եւ  
 թարգմանութիւնները ստոյգ չեն ու խանդար-  
 եալ են նէ, մենք ալ իրաւամբ իրենց տարեդ-  
 րութիւններէն եւ այս մասին ՚ի նախնեաց բե-  
 րած վկայութիւններնուն բոլորն ալ անվաւեր  
 կը սեպեմք ու չեմք ընդունիր, մանաւանդ եր-  
 բօր իրենց յայտնի խարդախութիւններնին կը  
 տեսնեմք: (Ինչպէս այս տեղ եւ ուրիշ տեղուանք  
 ալ ցուցուցած եմք): Եթէ նախնեաց այս բե-  
 րած վկայութիւններնիս խանդարեալ են, եւ  
 կամ ստոյգ չեն, գոհութիւն Աստուծոյ, որ Ս.  
 Աւետարանը ֆրիստոսի եւ կտակարանը Աւա-  
 քելոյ՝ դեռ անկորուստ կենդանի եւ ստոյգ  
 կեցած են, եւ գուցէ իրենք ալ վաւերական կը  
 համարին. ըստ որում մեր բոլոր բերած վկայու-  
 թիւնները եւ խորհրդածութիւնները յայտմ մա-  
 սին Ս. Գրքէն են: Ուրեմն վերստին մեր խնդի-  
 րը ձեռք կառնունք, այսինքն ֆրիստոսի Տեա-  
 ուըն մերոյ Պետրոսին համար ազաչելուն վրայ .  
 որովհետեւ Ս. Աւետարանը ունի այլ իմն խոր-  
 հուրդ այս բանիս վրայօք, որ աւելի բացայայտ  
 կընէ մեր խնդիրը. որ կը գրեն Մատթէոս եւ  
 Մարկոս Աւետարանիչները. (Մատթէոս ԻԶ. 31,  
 մինչեւ 8 35: Մարկոս ԺԴ. 27, մինչեւ 31 : )

ըստ որում Գրիստոս Տէրն մեր ըսաւ՝ աշակեր-  
 ասց. « Ամենքեան գայթակղելոց էք յինէն  
 յայսմ գիշերի . . . բայց դու (Պետրէ) մինչեւ  
 հաւու խօսեալ իցէ երկցս ուրասցիս զիս » : Ահա  
 բացատրութիւն եւ եզրակացութիւն բանիս .  
 քանզի չարչարանաց գիշերը բոլոր Առաքեալք  
 գայթակղեցան, բայց Պետրոս երդմամբ եւ նը-  
 զովիւք ուրանալուն համար, տարակոյս եւ յուզ-  
 մունք եղաւ Առաքելոց մէջը, թէ արդեօք այս-  
 սիսի ուրացութեամբ եւ գայթակղութիւն տա-  
 լովը վերստին մեր ընկերութեան մէջը պիտի  
 հաստատուի՞ . բայց Տէրն մեր՝ ուղեւով այս տա-  
 րածայնութիւնը ու գայթակղութիւնը վերցնե-  
 լու առաքելոց մէջէն, հայելով ՚ի Պետրոս, եւ  
 նա՛ միտքը բերելով Գրիստոսի խօսքը, որ յա-  
 ուաջ զրուցած էր իրեն ուրացութեանը համար,  
 բայց նա անձնապաստանութեամբ եւ մեծամը-  
 տութեամբ յամառեալ՝ չը գիտնալով որ, « Ա-  
 ռանց Գրիստոսի ոչինչ կարէ առնել », մինչեւ  
 անգամ մեռանել հարկ ըլլայ պատրաստ եմ՝ ը-  
 սելով զինքը գովեց . բայց յայտնի է, չէ թէ  
 մեռանիլ եւ չարչարանք կրել՝ այլ միայն երբոր  
 հարցուցին եւ այն ալ մէկ աղախին աղջիկ մը թէ  
 « Դու անոր աշակերտն ես, եւ կամ, անոր հե-  
 տըն ես » . եւ « Նա նզովեաց եւ երդմամբ ու-  
 ըացաւ » կրսեն Աւետարանիչները. (Նոյն գլուխ-  
 ները, Մատթէոս 12 . 69 մինչեւ 75 : Մարկոս  
 ԺԳ . 66 մինչեւ 72 : ) Սակայն յայտնի է թէ՛  
 յետոյ զզջաց եւ գառնապէս լացաւ. ահա՛ տառը



համար ֆրիստոս՝ յառաջքան զուրանալն Պետրոսի ողորմեցաւ ու աղօթեաց որ զինքը վերստին փոխօխամտութեամբ չուրանայ, եւ հաւատքը չը պակսելու եւ հաստատելու ՚ի դասս սրբազան Առաքելոց: Ըստ որում Պետրոս՝ չարաչար ուրացութեամբը մեղանչեց եւ մեծ գայթակղութիւն տուաւ ընկերացը. որով ինկաւ առաքելոց միաբանութենէն:

Ասոր համար ֆրիստոս դարձաւ եւ հայեցաւ ՚ի Պետրոս եւ ողորմեցաւ՝ տեսնելով անոր անկեղծ դարձը եւ զղլումը, եւ քանզի կանխատեսութեամբն յառաջագոյն զրուցած էր անոր թէ՛ «եւ դու երբեմն դարձցիս եւ հաստատեսցես զեղբարս քոս ուրացութեանդ մէջ՛ չը մընայով՝ քայլ անոնց գայթակղութիւնը բառնալով՝ ու անոնց վստահութիւնը քու վրադ հաստատելով՝ կատարեալ զղջմամբ եւ արտասուօք դարձի դալովդ, որով անոնց պէս Առաքելութեան պաշտամանդ մէջ հաստատուիս, եւ իմ հրամանաւս եւ արտօնութեամբս ընդունին ըզքեզ իբր իբենց հաւատարիմ ընկեր եւ եղբայր՝ եւ քանզի ըստ Անանիայի շիրակացւոյ «Պետրոս յետ ուրացութեանն ել արտաքս եւ ելաց դառնապէս, եւ Առաքելական շնորհքն անդէն մնացինս» (Յաղագս զղջման ճառին ձեռ. ր) : Որովհետեւ իմ բոլոր անօրէնութիւնս եւ սահմանադրութիւնս եւ կամացս նպատակը՝ սէրն ու միութիւնն է, ինչպէս որ ես Հօր Աստուծոյս հետ մի եմ, նոյնպէս եւ դուք կուղեմ որ մի ըլ-

լաք միաբանական խորհրդով եւ սիրով. եւ ասկէց ճանչնան պիտի ձեզ բոլոր աշխարհք թէ իմ աշակերտներս էք՝ եթէ խոնարհութեամբ եւ միութեամբ մէկզմէկ սիրէք: Բայց եթէ ամբարտաւանութեամբ եւ դահասիրութեամբ վարուիք, դիտցած ըլլաք որ իմ բոլոր անօրէնութեանս եւ կամքիս եւ հրամանիս դէմ դորձած կըլլաք. յայնժամ եթէ մեռեալներ ալ յարուցանէք եւ հրաշքներ՝ ալ ցոյց տաք իմ անուամբս՝ հիմակուրնէ կըսեմ ամենուդ թէ «նչ ճանաչեմ զձեզ»: Վասն զի՝ ինչպէս որ Պետրոսի դարձին համար աղօթեցի, իւր մեծամտութեանը եւ ուրացութեանը համար որ ձեզնէ բաժնուած էր, ու իմ աղօթքովս հաստատեցի՝ ձեր մէջը. նոյնպէս եւ յատկապէս այս ձեր միութեանը համար աղաչեցի աղօթելով առ Հայրն իմ երկնաւոր թէ՝ «եղիցին մի՛ որպէս եւ մեք մի՛ եմք»:

Եւ դարձեալ. «Եւ դու երբեմն դարձցիս եւ հաստատեսցիս յեղբարս քո՝ ըսելը, չէ թէ ուրիշները մոլորին, ու դու հաւատոյ ուղղութեանը մէջ պիտի պահես ըսել է, այլ Պետրոսի քաջալերութիւն եւ վստահութիւն տալու համար է, որ չյուսահատի ֆրիստոսի հօտին մէջ իր ընդունելի ըլլալուն վրայօք՝ երբոր ուրացութեանէն դառնայ. եւ թէ որ դառնայ՝ կրկին պիտի ընդունուի առաքելոց ամբողջութեանը մէջ եւ անդամ պիտի ըլլայ, եւ կրկին պիտի ժառանգէ ուրիշ առաքելոց պէս հովուելու եւ արածելու արտօնութիւնները, եւ որպէս զի Առաք-

եալք խոստամամբ իրենց ժողովին մէջ չառնելու  
 չը վստահին ուրացու թենէն դարչելով, ինչպէս  
 որ զրուցեցինք վերը, վասնորոյ ամեն Առաքելոց  
 առջեւ ըսաւ թէ՛ « Դու երբեմն դարձցիս եւ հաս-  
 տատեսցես զեղբարսքո՞ւ : Որովհետեւ Քրիստոս  
 իր եկեղեցին «ի դրանց դժոխոց անյաղթելի ընե-  
 լու » խոստացեր իր ներկայութեամբը եւ Ս.  
 Հոգւոյն առաջնորդութեամբը, եւ ոչ թէ Պետ-  
 րոսի գառնալով եւ զեղբարս հաստատելով ե-  
 կեղեցին պիտի անսխալ պահէր, ինչպէս որ չա-  
 բաշար կը մեկնեն պապականք, եւ այս դառ-  
 նալը յուրացու թենէ դառնալ եւ աշակերտաց  
 հետ հաւատոյ մէջ հաստատուելու համար էր եւ  
 ո՛չ թէ իր անսխալութեամբը ուրիշ սխալական  
 առաքեալները հաւատքի բերելով անսխալ պի-  
 տի հաստատուէր, եւ ոչ ալ ուրիշ առաքելոց վրայ  
 իշխան եւ հրամանատար տիրապետող կարգե-  
 ցաւ Քրիստոսի այս խօսքովը. քա՛ւ լիցի, ինչպէս  
 հաստատել կուզեն Տիեզերական ժողովոյ պատ-  
 մութիւնը եւ Աթոռ Պետրոսի անուանեալ մու-  
 լորական մատեաններուն հեղինակները, տիպ  
 վիճենայ : Եթէ ասանկ մէկ դիտաւորութիւն մը  
 ունենար Քրիստոս, Համբարձման օրը Ձիթեն-  
 եաց լեռը հաւասարապէս օրհնեցնէ առաքեալ-  
 ները, նոյն օրը յատկապէս դո՞նէ պատուէր մը  
 կուտար Առաքելոց ըսելով թէ՛ « Ահա՛ ես կեր-  
 թամ եւ կը Համբառնամ առ Հայրն իմ երկնա-  
 ւոր, այսուհետեւ զիացած եղիք՝ իմ տեղս վո-  
 խանորդ դրի Պետրոսը, ձեզ նայիմ, որ իմ տե-

դրս անոր հնազանդիք, եւ եթէ տարակուսելի բան մ'ալ ունենաք՝ անոր հարցուցէք եւ անոր վճռոյն հնազանդեցէք, եւ այլն :

Եւ այս մեր տուած բացատրութեանը զօրաւոր վկայութիւն մը կընայ լինիլ այն հարազատ օրինակները նախնեաց, որ հնազոյն օրինակներու մէջ հանդիպած ենք, այսպէս. « Եւ դու երբեմն դարձցիս եւ հաստատեսցիս յեղբարս քո ու որոց մէկը տեսանք Ս. Էջմիածնայ գըրատան մէջ 1850 ամին, եւ միւսը որ հազար տարիէն աւելի հնազոյն մազազածեայ եւ երկաթակրով մեծադիր Աւետարանի մը մէջ է, որ պահի 'ի գրանոցի Տէր Յօհաննէսի Հիւնքեարպէյէնեան քահանայի 'ի Թաղն Պալատու Կ. Պօլսոյ, որոնք ինչպէս եղաք, կրաւորական բայիւ եւ ներքոյական հարկով գրեալ է. ուրեմն կը հետեւի թէ՛ կամ երկու կերպն ալ կը գործածեն եղեր նախնիք իրենց գրուածոցը մէջ, եւ կամ թէ յառաջ գրած օրինակնուս պէս ըլլալով ետքէն փոխած ու ներգործական բայի դարձուցած են, ըստ որում երկու տեսած օրինակնիս ալ մէկը հազար եւ միւսը հազար տարիէն աւելի գրութիւն մ'է որ տեսանք, առջինը Աստուածաշունչի մէջ, եւ երկրորդը լոկ Աւետարանի մէջ. ուրեմն մեր տուած բացատրութիւնը հաստատուն է, ըստ այնմ՝ Պետրոս դառնալով եղբայրներուն մէջ պիտի հաստատուի՝ եւ անոնց նման Առաքելական իշխանութիւնը պիտի վարէ, եւ ոչ թէ անոր դառնալովը միւս

առաքելները Առաքելական իշխանութիւնը պիտի վարեն, եւ կամ հաւատքներնուն վրայ պիտի հաստատին, եւ կամ Պետրոս պիտի հաստատէ զանոնք, քա՛ւ լիցի . . . քանզի ոչ թէ միւս առաքելք ուրացան՝ այլ Պետրոս . . . : վասն որոյ անոր ուրացութենէն դարձած ժամանակն ալ՝ հաստատուեցաւ ՚ի դասս առաքելոց, ինչպէս որ Քրիստոս զուրցեր էր իրեն։ Ահա այս է կարծեմք ուղղագոյն միտքը Ս. Աւետարանին։

Եւս դարձեալ անհիմն փաստն պատկառնաց այս է, որ ինչպէս Պետրոսի համար կը զուրցեն, նմանապէս ալ « Եւ դու երբեմն դարձցիս » եւ այլն խօսքէն կը մակարերեն թէ՛ բոլոր եկեղեցեաց հովիւները պիտի սխալին, եւ Պետրոսի Առաքելոյ Հռովմի յաջորդները անսխալ մտալով՝ միւսներուն սխալները պիտի ուղղեն. կարծեմ երբէք Քրիստոսի մտքէն այս բանս անցած չէր. բայց ինձի այնպէս կը թուի որ ուրիշ բան մը մտածած պիտի ըլլայ Քրիստոս, որ իրենց դասմանը եւ վարդապետութեանը հակառակն է։ Ս. յոնքն Քրիստոս լաւ գիտցեր է թէ՛ Պետրոսի յաջորդները չափազանց պիտի փքանան, եւ իրեն ըսած « Դու երբեմն դարձցիս » եւ այլն խօսքէն զանազան թիւր եւ մոլար մեկնութիւններ պիտի տան, եւ Տէրոջը « անիւս էլս է Եփեցոյ ըլլալու արտօնութիւնը էրենց դէտէ « Եփեցոյ եւ կամ յափշտակեն Գահաբերութեմք, եւ դուցէ էրեն Եփեցոյ » անիւս արտօնութիւնը ըլլալու մտնալով պիտի

մուրրին ոմանք, եւ անալ իրեն մէկ հատիկ խօսքը իրենց պատճառ բռնելով, իր հաստատած եկեղեցիին մէջ աղանդաւոր ելլելու պատճառը ինքն պիտի ըլլայ. վասնորոյ այս խօսքս Պետրոսին չը դրուցած՝ առաջ դրաւ հաւասարութեան հիմը, թէ մէկը ամենեւին գլուխ եկեղեցւոյ կամ մեծ չը պիտի ըլլայ եկեղեցւոյ մէջ իրմէ զատ, ըստ որում երբոր առաքեալները հակառակեցան մէկզմէկու հետ թէ ո՛վ իրենց մէջէն մեծ պիտի համարուի, այն ասեն Քրիստոս Տէրն մեր ըսաւ անոնց, թագաւորի իշխանութեան օրինակը մէջ բերելով թէ՛ « թագաւորք ազդաց արեւն նոցա եւ որք իշխենն բարերարք կոչին, բայց դուք ո՛չ այնպէս, այլ որ մեծն է ՚ի ձեզ՝ եղիցի իբրեւ զկրտսերն եւ առաջնորդն իբրեւ սպասաւոր » : Եւ ետքը ինքզինք օրինակ բերաւ թէ՛ գիտցէք որ ձեր մէջը ինծմէ աւելի մեծ չը կայ, բայց ահա ես ալ ձեր մէջը սպասաւորի պէս եմ : « Ո՞վ է մեծ, բազմեալն թէ սպասաւորն, ո՞չ ապաքէն բազմեալն, բայց ես եմ ՚ի միջի ձերում իբրեւ սպասաւոր » : Թող լսեն Պապական եւ կեղեցին գլուխ եւ հայր եկեղեցւոյ, եւ Պատն ալ անսխալ գլուխ եւ եկեղեցւոյ ըսողները, թէ որ Աստուծամէջնն վախնար : Եւ այս Քրիստոսի պատուիրանացը հակառակ գլուխ եկեղեցւոյ ըլլալէն ալ չը բաւականալով, այլ եւ աշխարհային թագաւորութեան ալ ձեռք կը զարնեն, եւ այնուհետեւ Քրիստոսի քիանորդ եւ րեզակալ կը կացուցանեն ինքզինքնին. որն որ Քրիստոսի պատուէրին եւ հրամանացը

ու կամքին բոլորովին դէմ է, ինչպէս որ տեսանք, եւ մանաւանդ այս աշխարհի թագաւորութեան համար ալ ինքը ըսաւ թէ՛ « իմ թագաւորութիւն չէ յայսմ աշխարհի » . եւս թող լսեն Քրիստոսի քրիստոսը տնտանող պապերը : Որովհետեւ Քրիստոս այս փառասիրութեան ակտը (որ եկեղեցւոյ գլուխ եւ թագաւոր եմ ըսելն է) շատ կը պախարակէ եւ կը սրբողի՝ « Բայց ո՛չ նոյնպէս եւ դուք » ըսելով . եւ այս Քրիստոսի սաստը 'ի հիմանց կը տապալէ պապականաց անհիմն պատճառը, ըստ որում ոչ միայն « Բայց ո՛չ նոյնպէս եւ դուք » ըսաւ, այլ եկեղեցւոյ մէջ հաւասարութիւն պահելու համար ինքզինքը իբր օրինակ ցոյց տուաւ՝ « Ես եմ 'ի միջի ձերում իբրեւ սպասաւոր » ըսելովը :

Եւ ետքը Առաքելոց իշխանութեան հաւասարութիւնը լաւ հաստատելու համար մէջ բերաւ այն խօսքը՝, որ կըսէ . « Եւ դուք էք որ ցանդ կայիք ընդ իս 'ի փորձութիւնս իմ, եւ ես ուխտեմ ձեզ, որպէս եւ Հայր իմ ուխտեաց ինձ Արքայութիւն, զի ուտիցէք եւ ըմպիցէք 'ի սեղան իմ յԱրքայութեան իմում, եւ նստիք յերկոտասան ակտու դատել զերկոտասան ազգն իսրայէլի » : Այս տեղը լաւ նկատել եւ ուշի ուշով լուսաւոր մտօք խորհրդածել պէտք է, թէ ո՞րչափ արեգական նման յայտնի կը փայլի Առաքելոց հաւասարութիւնը, եւ պապին գլխաւորութիւնը 'ի հիմանց կը կործանի այս խօսքովը, վասն զի չ'ըսաւ Քրիստոս Պետրոսի թէ դու

դատաստանին օրը դահադլուխ մինակ պիտի բաղմիս երկրօտասան ազգն խորայելի դատելու համար. ոչ միայն ուրիշ առաքեալներէն իշխանութիւնը չը մերկացուց Պետրոսի տալու եւ միայն զՊետրոս ճոխացնելու համար, այլ եւ անոնց դլուխ անդամ նստելու խօսք մը չը ցուցուց դատողութեան ակտուր նստած ժամանակնին:

Եւ ետքը Պետրոսի ըստ ինքեան առանց Աստուածային օժանդակութեան սխալական ըլլալը լաւ հաստատելու համար, որպէս զի անոր յաջորդները իրենց անձին չը վստահին, օրինակ առնելով իրենց սկզբնական նախորդէն, որ ինչպէս այն սխալեցաւ՝ իրենք ալ կրնան սխալել, վասն որոյ կ'ըսէ Քրիստոս անոր. «Միմօ՛ն, Միմօ՛ն, ահա սատանայ խնդրեաց զքեզ խորբալել իբրեւ զցորեան, այլ ես աղաչեցի վասն քո զի մի պակասեացին հաւատք քո»: Թէպէտ վերը զըուցեցինք այս խօսքին վրայօք ինչ նպատակաւ զըուցելը Քրիստոսի, սակայն ուրիշ խորհուրդ մ'ալ կը պարունակէ այս խօսքին մէջ, նոյն խնդիրէն ՚ի դատ, որն որ հօս կը նշանակեմք. քանզի Տէրն մեր այս խօսքը երկու դիտմամբ ալ ըսաւ. մէկ մը՝ որպէս զի միւս առաքեալները զանի ըստ ինքեան անսխալ չը կարծեն, անոր համար առաքելոց ժողովին մէջ ըսաւ. երկրորդ՝ Պետրոս զինքը անսխալ չը կարծէ ըստ ինքեան՝ առանց Աստուածային օժանդակութեան, վասն որոյ կ'ըսէ՝ տկարութիւնը ցոյց տալով թէ որ ես առ հայր աղաչանօ-



քրս քեղի չ'օգնեմ, դու շատոնց կը դատապարտուիս այս քու յանձնապատանութեանդ եւ մեծամտութեանդ համար. բայց 'ի վերայ այսր ամենայնի մի' յուսահատիր, քու հաւատքդ չը պակսելու համար կ'աղաչեմ՝ ես հօրս. իրաւ դու մոլութեանդ փորձութիւնը պիտի կրես, ու երեք անգամ երդմամբ չ'եւ նշովիւք պիտի ուրանաս, այլ մի թերահաւատիր, ահա՛ ես քեղի կանխաւ կաւետարանեմ քու զղջալիք. մի՛ շրւարիր այն փորձութեան դիշերը, զի ո՛չ թէ դու միայն, այլ ամեն ոչխարները պիտի ցրուին. ըստ որում՝ «Վմենեքին դայթակղերոց էք յայսմ դիշերին». եւ թէ՛ «Հարից զհովիւն եւ ցրուեսցի ոչխար հօտին». անոնք ամենքն ալ պիտի դայթակղին, բայց ետքը դու ալ պիտի դառնաս, անոնք ալ պիտի դառնան, եւ իրենց սիրելի եւ սքանչելագործ վարդապետը կրկին պիտի ճանչնան: Վասն որոյ կը քաջալերէ զՊետրոս ըսելով թէ «դու երբեմն դարձցիս եւ հաստատեսցես զեզբարսո: Ասկէց ուղիղ մակաբերուեսցաւ որ այս խօսքը՝ Հռովմայ եկեղեցւոյ անսխալ եւ դուրս ըլլալուն համար առանձնանորհութիւն մը չ'է՛, (թէ եւ հրեշտակ երկնից աւետարանէ՝ ըստ առաքելոյն), ինչպէս որ այս խօսքին վերը եւ վարը չը կարդալով ծուռ կը մակաբերեն, այլ՝ միւս առաքելները չը դայթակղին անոր երդմամբ եւ նշովիւք ուրացութեանը համար, եւ առաքելական ժողովին մէջ անընդունակ չը կարծեն. անոր համար քաջալերութիւն մ'է

Թէ Պետրոսի եւ թէ միւս առաքելոց, որ չը յուսահատին իրենց ըրածին եւ Պետրոսի ուրացութեանը վրայ, ինչպէս ամէն ուղղախորհուրդանձ՝ խօսքին կարգը վերէն մինչեւ վար տեղն 'ի տեղը թէ որ կարգայ՝ կրնայ հասկընալ եւ իմանալ, կարգալ նոր սովորող անգամ ալ ըլլայնէ:

Սակայն ինչպէս որ յառաջ ըսի, թէ Քրիստոս նախագէտ ըլլալով որ պապականները իր խօսքը թիւր պիտի մեկնեն, բոլոր Պետրոսի դուսը դալիք փորձութիւնները մէջ բերելով խօսեր է, եւ թէ՛ ճշմարիտը ըսելով Պետրոսի յանձնապատանութիւնը պատժելու եւ անոր արկարութիւնը իրեն ճանչցնելու համար թոյլ տուեր է որ այն փորձութեան մէջ իյնայ, որ հաստատած եկեղեցիին մէջէն այս տեսակ սրնափառութիւն եւ եղականութիւն ցուցնող մը չը գտնուի, թէ եւ գտնուի ալ՝ ինքը առիթ արուած չ'ըլլայ այն մտորութեանը, վասնորոյ մէկ քիչ ժամանակի մէջ կտակի վերջին գիշերը այն խօսքը բոլորը մէկէն խօսելով՝ 'ի հիմանց քակեց բոլորը ծուռ դրութիւնները:

Ուրեմն, թո՛ղ մէկգի գնեն այս հպարտութեան ախտէն յառաջ եկած վարդապետութիւնը, յանիրաւի չը յափշտակելով գրիստոսի իշխանութիւնը եւ արտօնութիւնը, վասն զի ամէն ուղղափառ Քրիստոնեայ կը հաւատայ, որ մարդիկ ըստ ինքեան անսխալ չեն կրնար ըլլալ այլ՝ եկեղեցին ալ անսխալ է նէ, Քրիստոսի եւ եւ Հոգւոյն Սրբոյ ներկայութեան համար է ան-

սըխալ որոյ վասն խոստացաւ Քրիստոս թէ  
 «Ես ընդ ձեզ եմ՝ զամենայն աւուրս մինչեւ ՚ի  
 կատարած աշխարհի» . եւ վասն Հոգւոյն Սրբոյ  
 ըսաւ թէ՛ «Ընդ ձեզ բնակեացի եւ ընդ ձեզ ե-  
 ղիցի ՚ի յաւիտեանս» :

Արդ՝ եթէ Քրիստոս, ըստ պատկան դը-  
 րութեան, իր եկեղեցւոյն անսխալ գլուխ մը կար-  
 դած էր, իրեն ներկայութիւնը եւ Հոգւոյն Սրբ  
 բոյ եկեղեցւոյն հետ բնակիլը աւելորդ կը հա-  
 մարի հա՛րկաւ : Արդ՝ քա՛ւ լիցի ըսել որ անպի-  
 տան եւ աւելորդ է Անոնց առաջնորդութիւնը .  
 ըստ որում այն Աստուածն է, որ աշխարհք ՚ի  
 յոչնչէ դոյացոյց, մէկ «եղիցի» բառով մը ըս-  
 տեղծեց, ու այսքան սահմանադրութիւններ չը  
 դրաւ . այլ՝ այս բանիս համար ինքը տէրն մեր  
 եւ Աստուած բացարձակ վճռեց եւ պատուիրեց  
 այս երկրորդ ստեղծագործութեանը՝ ու ըսաւ  
 սահման դնելով թէ՛ «Ինքը պիտի կառավարէ  
 իր եկեղեցին, եւ ոչ այլ ոք՝ բաց յինքենէ» : Ու-  
 բեմն պատկին գլուխ եկեղեցւոյ ըսելը եւ ընդու-  
 նիլը մոլորութիւն է եւ աւելորդ . եւ Աստ-  
 ուած ալ ո՛չ մոլորութեան առաջնորդ է, եւ ո՛չ  
 ալ աւելորդ . բան մը սահմանած է . ուստի ան-  
 տեղի եւ մոլորական է այս վարդապետութիւնը,  
 եւ Ս. Սեբեարանի ոգւոյն հակառակ է, որ սնա-  
 վառութիւնը եւ եղականութիւնը առ ժամ կը  
 կոխէ, այս բանիս ըսելով թէ՛ «Ես եմ՝ ՚ի միջի ձե-  
 րում իբրեւ սպասաւոր . . . : Որ ունիցի հաւատս  
 հաւատացէ, եւ որ ոչն ունիցի, ինքն տացէ պա-  
 տասխանին :

Սակայն եթէ ծանր չը թուիր մեր զրուցե-  
լիքը, խնդիր մ'ալ կը դնեմք, եւ կը կարծեմք  
որ՝ ընթերցողք բաւական կը համարին այս մեր  
ընելիք եզրակացութիւնը, որովհետեւ գործքին  
մէջ այլ իմն խորհուրդ կ'երեւի, եւ կը յու-  
յուսամք որ ճշմարտանման է. որովհետեւ գոր-  
ծը ինքնին կը վկայէ՝ տարակոյսի տեղի չը տա-  
լով: Քրիստոս Տէրն մեր կարծեմ թէ՛ ի դէմս  
Պետրոսի աղօթելով՝ յաջորդաց համար ալ ուզեց  
աղօթել, ըստ որում Պետրոս միանգամ մեղաւ,  
եւ նա Քրիստոսի շնորհօքը վերստին դարձաւ  
'ի հաւատս՝ ի նմին ժամանակի: Սակայն կը տես-  
նեմք որ՝ նոյն Պետրոսի աչակերտ անուանողնե-  
րուն՝ մեր բողոքք ու յանդիմանութիւնը օգուտ  
չէ ըրեր հազար տարիէ՛ ի վեր, որ այս այլան-  
դակ մեծամտութեան ախտէն բժշկուին: Բայց  
ինչպէս որ երանելին Պետրոս զղջացաւ եւ դառ-  
նալովը վերցուց այս դայթակղութիւնը եկեղեց-  
ւոյ եւ ընկերացը մէջէն աղօթիւք Տեառն մե-  
րոյ, նոյնը եւ մեք վերստին կազաչեմք որ մեր  
Տէրովը օրհնեալ կամքը ըլլայ: Ինչպէս որ Պե-  
տրոսին համար աղօթեց նէ՛ նոյն աղօթքին շնորհ-  
քը եւ զօրութիւնը հասնի պապերուն վրայ, որ  
այս դայթակղութիւնը վերնայ եկեղեցւոյ մէջէն  
եւ հաստատի միաբանութեամբ (հաստատելով՝  
վստահ ընելով եղբայրները) ՚ի մի հաւատս կա-  
թուղիկէ եկեղեցւոյ մէջը, որպէս զի Տէրովը ձայ-  
նին հետեւելով. « Եղիցի մի հօտ եւ մի հովիւ » .  
ո՛հ ե՛րբ իցէ տեսանել . . . :

Եւ օրինակ մ'ալ կը կը զնեմք Ս. Աւետարանէն այս բանիս թ յարմար եւ վերջ կընեմք ։ Արդ՝ Բրիտանո Տէրն մեր յայտնապէս կը վկայէ իրեն համար ըսելով թէ՛ « Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ է, եւ որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ » (Ղուկաս ԺԱ. 23) ։ Յիրաւի պապերը եւ պապականները Վառանց Բրիտանոսի ազատ տեսանելի միապետական տիեզերական եկեղեցւոյ դըռն իրենց Պապը ուսուցանելով, կը ժողովեն Աստուծոյ ժողովուրդը առանց Բրիտանոսի (այսինքն առանց Բրիտանոսի կամայցը եւ հրամանացը) ։ դուք մոլորեալ էք, եկէ՛ք ճշմարտութիւնը ճանչցէք ըսելով իրենց կը յակեցնեն, ու Բրիտանոսի արեամբը վրկուած ժողովուրդը իրենց հպատակեցնելու կաշխատին, հակառակ Պօղոսի բանին « Տիրելով վիճակացն » եւ ոչ « Օրինակ ըլլալով հօտին » եւ հակառակ տիեզերական եկեղեցւոյ սահմանադրութեան այլանդակ հերետիկոսական վարդապետութեամբ, որուն մէջ անզոյշ մոլեռանդութեամբ կը սահին ու Նեստորի ազանդին մէջ կը մոլորին միամտութեամբ, այնչափ աղճատանօք եկեղեցւոյ Բրիտանոսի մարդեղութեան հաւատքը, այն տեսրին մէջ՝ որ Մասիս լրագրոյն 114 թուոյն դէմ Գառնիէ Ի. Ի. անունով հրատարակուած է վիէննայի Մ. Միաբանութենէն 1854ին, որուն երրորդ երեսը Բրիտանոսի աստուածութիւնը եւ մարդկութիւնը բաժանելով՝ մարդկութեանը բնութենախից անձ մը (Պապ մը) փոխանորդ զնելով եւ աստուածու-

Թեան բնութենակից Ս. Հոգին եկեղեցւոյ մէջ  
կը ներկայացնէ, որով մեր նախնեացը կասկա-  
ծանացը իրաւացի ըլլալուն կերպով մը տեղի  
կուտայ իբր 'ի Նեստորականութիւն հակամիտ-  
եալ . . . :

Երկրորդ Քրիստոսի մարդեղութեան բնու-  
թենակից Պապը եւ Աստուածութեան բնութե-  
նակից Ս. Հոգին ներկայ ըլլալէն ետքը աւե-  
լորդ կը ցուցնէ այն խօսքը, որ ըսուեցաւ Առաքե-  
լոց. « Ես ընդ ձեզ եմ զամենայն առուրս մինչեւ  
'ի կատարած աշխարհի » : Ուրեմն ալ պէտքը չէ  
որ ներկայ ըլլայ Տիեզերական եկեղեցւոյ մէջ  
Քրիստոս. այս օրինակ մոլորական անտեղի դը-  
րութիւն մը՝ այնպէս կը կարծուի՝ որ չէ տես-  
նուած ուղղափառութեամբ պանծացող եկեղեց-  
ւոյ մը մէջ. որովհետեւ Պետրոսի նման յանձ-  
նապատանութիւն է որ հոգւոյ վտանգներուն  
ճանապարհը կը բանայ :

Եւ անկից քիչ մը ետքը՝ նոյն տեսրակին  
եւ նոյն երեսին մէջ՝ յանիրաւի զբազարտել կու-  
ղէ սուրբ եկեղեցին Հայոց, 'ի կրից շարժեալ իր  
փաստը ընդունել տալու համար կը հայհոյէ,  
իբրեւ թէ ժամանակ մը եւ կամ դարու մը մէջ՝  
Քրիստոսի մարդկային բռնութիւնը ուրանալով  
միայն Աստուածային բնութիւնը 'ի Քրիստոս  
ընդունած ըլլայ. բայց չեմ գիտեր՝ ո՞ր ժամա-  
նակ, ո՞ր դարու մէջ, ո՞ր Հայրապետի օրը եւ  
այս վարդապետութիւնը հաստատելու ժողովը  
ո՞ր քաղաքին մէջ եղած է . . . :


Ահա այս ամեն զրպարտութիւնները ու մո-  
լորութիւնները աշխատելով յանձնառու կըլլան  
Պատգամեան, Տիեզերական եկեղեցւոյ դաշտա-  
բութիւն մը եւ միահեծան իշխանութիւն մը  
դոյացնելու համար, եւ որ է Աստուածային  
կամայը դէմ յայտնի հակառակութիւն, եւ Անոր  
կամայը դէմ յայտնապէս զինիլ մ'է . ինչպէս  
որ երբեմն Պետրոս ամեն բան ըստ մարմնոյ  
խորհած ժամանակ կը հակառակէր Քրիստոսի  
կամայը դէմ, անոր տնօրէնութեան ժամանա-  
կը, ինչպէս կըսէ Մատթէոս Աւետարանիչ ԺԶ.  
22, 23. « Եւ առեալ զնա մեկուսի Պետրոսի սկը-  
սաւ կապիլ ընդ նմա եւ ասել . քա՛ւ լիցի քեզ  
մի եղիցի քեզ այդ » : Եւ նա դարձեալ 'ի Պետ-  
րոս ասէ . « Երթ յետ իմ, սատանայ, դայթակ-  
ղութիւն իմ ես, զի ոչ խորհիս դու զԱստուծոյն՝  
այլ զմարդկան » : Այս է նաեւ այժմեան պապա-  
կաններուն վիճակը, որ ոչ խորհին զԱստուծոյն՝  
այլ զմարդկան, վասնորոյ անոնք ալ այս սպառ-  
նալիքէն ազատ չեն. ասոր համար բոլոր աշխարհ  
դայթակղեցուցին, եւ այս պատճառաւն է որ  
միշտ իւր ժողովուրդը հոգեւոր վտանգի մէջ է  
. . . . . ասոր համար բողոքականութիւնը եւ  
ուրիշ մոլորական դրութիւններու հեղինակու-  
թիւններ ելան իր ծոցէն ու տարածեցան եւ ան-  
համար կորուստներ կընէ ամեն օր . . . այս աս-  
մեն կողատեան դառն աղբիւրին խցանքները  
գահասիրութեան ախար բացաւ, որով երկնաւոր  
Փրկչին արդար դատապարտութեանը եւ վա՛յն

ներքեւ կը ձգմուխն , ինչպէս որ ըսաւ . « վա՛յ  
 աշխարհի գայթակղութեանց , հարկ է գալ գայ-  
 թակղութեանց , բայց վա՛յ մարդուն այնմիկ յոյր  
 ձեռն գայցէ գայթակղութիւն » Մատթէոս ԺԶ .  
 6, 7 : Եւ թէ՛ « Որ ոք գայթակղեցուցէ զմի՛ ի  
 փոքրկանցս որ հաւատան յիս , լաւ է նմա տ-  
 ուաւել՛ եթէ արկեալ էր ընդ պարանոցս նորա  
 երկան իշոյ եւ ընկեցեալ ՚ի ծով . » Մարկ . Թ . 41 :  
 Քանզի այն սրատճառաւ բոլոր աշխարհքը գայ-  
 թակղեցոյց , որ Քրիստոսի շնորհած իշխանու-  
 թենէն աւելի չափազանցին ձեռք զարկաւ եւ  
 բոլոր եկեղեցին իր բռնութեան տակը ձգել  
 ցանկացաւ եւ անիրաւ ու տարապայման հնազան-  
 դութիւն պահանջեց , որուն ՚ի Քրիստոսէ հրա-  
 մայեալ չէր , եւ այնպիսի տիեզերական միահեծան  
 գլխաւորութիւն մը յափշտակելով Ս . Գրոց ի-  
 մաստը վերոգրեալ եղանակներով ծռմուկելով  
 անոր համար չափէն դուրս անիրաւ դրսար-  
 տութիւններ ալ լսեց . բայց բոլոր անկարդու-  
 թեանց ու դառնութեան մբուրը իր անճոռնի  
 դրութենէն բղխեց ու զինքը կործանեց ամ-  
 բարտաւանութեամբ , երկրի վրայ աստուածա-  
 նալ կամելով , որով սրբոյն Դիոնիսի խօսքը իւր  
 վրայ ճշմարտացաւ , ինչպէս կըսէ . « Իսկ եթէ  
 ոք չափաւորաբար տուեցերոյն նմա տեսութեան  
 զսահմանօքն ՚ի բաց վաղիցէ , եւ աւ գերադոյն  
 քան զնա տեսութեան ճաճանչոն համարձակա-  
 պէս ձեռնարկիցէ , որոց անընտանեբարն ոչ հա-  
 սանի , եւ ՚ի չափաւորէն անզարդուպէս բարձրա-



մըտեալ վրիպեցի, եւ զնոյն կրեցէ՛ զոր կըր-  
եաց նախկին ամբարտաւանն, որ ՚ի չարութեան  
ըմբռնեցաւ, իսկոյն ՚ի յերկնային եւ յանխառն  
արդարութենէ Աստուածոցն ՚ի վայր անկաւ \* :  
( Գիրք երկնայնոց քահանայապետութեանց ) :  
Եւ ահա այն է Սրբոյս ըսածը, որ Սաղայէլը զը-  
րուցեց Աթոռ Աստուածութեան դէմ՝ ըստ այ-  
նրմ \* Եղից զաթոռն իմ ընդ ամպս, եւ ես ե-  
ղեց նման Բարձրելոյն՝ Որն որ յայտնի է՝ իսկոյն  
սանդարամետ իջաւ . նաեւ այս Սրբազան վար-  
դապետին խօսքը մէկ կերպով մըն՝ ալ կը շոշափէ  
Քրիստոսի Փրկչին մերոյ այն խօսքը, որ փառա-  
սիրութեան ճանբուն մէջ քալողներուն սաստ-  
կութեամբ կը խօսէր . \* Որ բարձր է առաջի  
մարդկան՝ պիղծ է առաջի Աստուծոյ \* :

Կնիք բանիս, այն նախանձոտ Աստուածն է՝  
որ կըսէ սաստելով մը իր փառքը յափշտակող-  
ներուն համար թէ՛ \* Ես Աստուած նախաձոտ  
եմ, զփառս իմ այլում ոչ տամ \* . . . բայց այս  
աստուածային վճիռներուն եւ սաստերուն դէմ՝  
երկրի վրայ աստուածանալ կը քարոզեն պա-  
պերը, Եզո՛ւկ . . . Որ ունիցի ականջս լսելոյ լը-  
ւիցէ . . . :




ՀՐԱԲՈՒՂ, Խ

Ա. Ր Ա. Ր Ա. Դ Ա. Յ

ՄԱՍՆ Գ.

ԳՈՐԾ ԵՕԹՆԵՐՈՐԴ



ԹԱՂԱԳՄ ԳՂԽԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՒ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԹԱՂԱԳՄ ՊԱՏՈՒՈՅ ԵՒ ԳՈՎԵՍՏԻ ԵՒ ԹԱՐԳԱԿԱՆ ԳՐՈՒԹԵԱՆՅ

ՆԱԽՆԻ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՐՅ ԱՌ Ս. ԱՌԱՔԵԱՆՆ ՊԵՏՐՈՍ

---

« Սիրեցին (եւ դեռ սիրեն) մարդիկ  
դիտարար առաւել քան զլոյս, զի  
էին (եւ են) գործք իւրեանց չար-  
ութեան » : (Աւետ. Պտղմ. Աստ . )

« Երանի մարդոյ՝ որ թեւակոխեաց  
'ի գիտութիւն Աստուածեղէն, զի  
նովաւ խզին արմատք աղահու-  
թեան » : (Յակովբ Մծքն. Զգօն . Ե-  
րես 350 'ի ճառն վասն հակառա-  
կութեան հերձուածոց) :

---

Ա. Արդ՝ այս մեր տուած բնաբանը կերպիւ-  
մը կը հաստատուի Հռովմէականաց վրայ, քան-  
զի Հռովմէականները Պետրոս Սրբազան Առաք-  
եայը ընդհանուր եկեղեցւոյ վրայ գլուխ կա-  
ցուցանելու համար Ս. Գրքէն եւ Առաքելադիր  
կանոններէն վկայութիւն մը չունենալով, միջին

գարեբէն սկսեալ նոր գրութիւն մը հնարեցին, իրենց օժանդակ առնելով նախնեաց Ս. Պետրոսի վրայօք զուրցած ճարտասանական եւ բանաստեղծական ձեւերով յարգական գրութիւնները, որոնցմով Պետրոսի եկեղեցւոյ վրայ իշխուելու եւ գլուխ ըլլալու իրաւասութիւնը կը պնդեն որ կարգը իրենց դայ, ըստ որում՝ կրսն, Հռովմի Պոպը իբր յաջորդ Պետրոսի հարկանոյն պատիւն եւ արտօնութիւնը ունի, թէպէտ եւ Սրբազան Ս.Ռ.Քրիստոսի մտքէն անգամ անցած չըլլալը յայտնի է իր գործքերէն, որ « Զերկցակից » կանուանէ միւս Աշակերտները, սակայն մտքերնին Պետրոսը մեծարել չէ, այլ Պետրոսին միւս Ս.Ռ.Քրիստոսի աւելի գերազանց իշխանութիւն ու պատիւ մը վաստկցնել ուզելով, անկից հետեւութիւն մը հանել կուզեն, որ իրենց բաժին իյնայ, եւ իրենք իբր աշխարհային կառավարութեամբ ընդհանուր եկեղեցւոյ վրայ իշխեն, հակառակ եւ ընդդէմ Քրիստոսի պատւիրանաց եւ սահմանադրութեանը, Ս.Տա՛ սյս գաղթակցելի գրութենէն խարտելով ոմանք՝ վերջին գարեբէն սկսեալ տարածայնութիւն եւ վէճ յարուցին եկեղեցւոյ մէջ, ինչպէս որ այժմ յայտնի է, որ բաց ՚ի հռովմէական տարածայնութեն, այլ եւ մեր Պրոսոպի Չամբրճեան Պ. Յօհաննէսին գրութիւնները՝ որ իր հրատարակած թուրքերէն Զօհաննէս կիսամեայ տետրակներուն միջոցաւ նոյն հռովմէականներուն անտեղի գրութիւնները իբր թէ հաստատել կուզէ,

սարսձայնութիւն եւ գայթակղութիւն ձգելով մեր անարատ Ս. Եկեղեցւոյն մէջ. ուստի եւ մենք ալ կը պարտաւորիմք թէ նորին եւ թէ հռովմէականաց անտեղի դրութիւնները մերժել ու նշաւակել Սրբազան Հարց գրութեամբք, որն որ մեր նախնական եկեղեցւոյ եւ Առաքելագիր կանոնացը եւ Տասնամանացը դէմ է:

Արդ՝ Ս. Աւետարանի վարդապետութեան եւ առաքելոց գործին մէջ չկայ թէ Պետրոս եւ այլ ով ոք եւ իցէ Առաքեալ, Գլուխ է միապետական ընդհանուր եկեղեցւոյ, բաց ՚ի Քրիստոսէ, զոր կը խոստովանի եւ կը դաւանի կաթողիկէ սուրբ եկեղեցի Հայոց, թէ Նա մի միայն է բացարձակ եւ միապետական Տէր, Գլուխ եւ կառավարիչ երեւելի եւ աներևոյթ ընդհանուր եկեղեցւոյ: Եւ նա է ըստ սուրբ գրոց Քահանայապետ, Առաքեալ, Գլուխ, Պետ, Ղեկավար, Հովուապետ, Գատաւոր, ուսուցիչ եւ կառավարիչ եկեղեցւոյ: (Վկայութիւն, Երեխ. Ա. 21, Գ. 15, Ե. 23, Կողոս Ա. 18, Բ. 10, 18 եւ 19 մինչեւ 24, Եբրա. Բ. 17, Գ. 1, Կորնթ. Գ. 41, Հռով. Թ. 33, Պետրոս. Բ. մինչեւ 8, Պետրոս Գ. 5, Ե. եւ այլն . . . )

Դիցուք թէ ըստ հռովմէական գրութեան Քրիստոս Աստուած նախապէս բացարձակ աներևոյթ գլուխ, եւ երկրորդապէս երեւելի դլուխ եկեղեցւոյ է Պետրոս Սրբազան Առաքեալն, եւ զանի միայն իւր ակողմ վոխանորդ կացուցած է, ինչպէս որ կերեւտկայեն ոչ միայն

Հռովմէականք՝ այլ եւ անոնց համամիտ եղող մեր սուրբ եկեղեցիէն բաժանեալ Հռովմէական ներք եւ ընդ նոսին հռովմէասէր տարածայնները, առանց ճշմարտութեան Աւետարանական վարդապետութեան եւ առանց ապացուցութեան նախնի եկեղեցւոյ սուրբ հարց, եթէ այդպէս ըլլար, ուրեմն պէտք էր ճշմարտապէս ըսել՝ եկեղեցին «Մարմին է Պետրոսի», որ է բոլորովին սուտ ինչպէս ըսինք, Ս. Գիրքը միայն ՂԱտաւած կը կոչէ Գլուխ եկեղեցւոյ, իսկ եւ եկեղեցին, այսինքն բոլոր անգամք հաւատացելոց՝ առաքեալները եւ հայրապետները մէկտեղ առնելով կը կոչուին «Մարմին Քրիստոսի» եւ ոչ ուրեք կը կոչուին մարմին Պետրոսի, Ապա ուրեմն ըստ սուրբ գրոց, եկեղեցին ոչ է մարմին Պետրոսի, եւ ոչ Պետրոս է գլուխ եկեղեցւոյ: (Տես Եփեսա. Ա. 22, 23, Ե. 2, 23: Հռովմ. ԺԲ. 5, Ա. կորնթ. ԺԱ. 3, ԺԲ. 27, Եփեսա. Դ. 13, 16, Ե. 23, կողոս. Ա. Բ. 19 եւ այլն):

Այս բանիս համար բաւական վկայութիւն կրնայ համարուիլ, Պօղոս Սրբազան Առաքեալին գրածը, որ կըսէ. (1) «Բաղումքս մի՛ մարմին

(1) Պ. Չամուրճեանը իր գրութիւնները հաստատելու համար 20 օրինակ թուահամարով վկայութիւն բերած էր Պետրոս Առաքելոյն համար, վասնորոյ պարտաւորեցանք մենք ալ նոյն օրինակ թուահամարով դնել, եւ այն ալ Ս. Գիրքէն սկսելով:



եմք 'ի ֆրիստոս, այլ է-բ-ռ-ն-չ-բ Բ-Բ-ն-ց անդամ  
 եմք: (Հռովմ. ԺԲ. 5): Ահա Պետրոս Առաքեալն  
 ալ մեկտեղ առնելով իւրաքանչիւր քրիստոնէ-  
 ից անհատ անդամներուն հետ կը կոչէ Մարմին  
 ֆրիստոսի: Արդ ինչո՞ւ չըսեր թէ 'ի մէջ անդա-  
 ցքս՝ Պետրոս է գլուխ: Ապա ուրեմն ըստ սուրբ  
 գրոց նոյն ինքն Պետրոս Առաքեալ եւս է անդամ  
 ինչ նախապատիւ այլոց հաւատացելոց կամ ան-  
 դամակից այլոց քրիստոնէից եւ ոչ գլուխ նոցա:

Նոյնը կուսուցանէ Բ. Գրիգոր հայրապետն  
 Հռովմայու ութերորդ դարուն այսպէս (2) « Ա-  
 ռաքեալն Պետրոս ճշմարտիւ է Ա. անդամ որբոյ  
 ընդհանրական եկեղեցւոյ. Պօղոս, Անդրէաս եւ  
 Յովհաննէս զի՞նչ այլ իցեն՝ քան թէ չլու-ի մաս-  
 նոր ազգոց, եւ սակայն են տեղեւեմն անդամք էկեղեց-  
 ւոյ 'ի ներքոյ Բոյ չլինոյն ֆրիստոսէ (Գիրք Ե. Թղ. 18):

Եթայց խնդիրը սա է որ արդեօք ի՞նչ է  
 այն որ շարդի Հռովմէականք՝ երեւելի գլուխ  
 կուզեն կացուցանել Պետրոս Սրբազան առաք-  
 եալը եւ ֆրիստոսափոխան կառավարիչ ընդ-  
 հանուր եկեղեցւոյ, կըսեմք որ եթէ Հռովմէա-  
 կանք ուղիղ մտօք լայնաբար առնելով միւս սրբ-  
 բազան Առաքելոց համար ալ ըսէին, բոլորովին  
 անտեղի չէր լինէր իրենց այս գլուխ թիւնը. բայց  
 մասնաւորապէս առնելով միայն Պետրոս սրբ-  
 բազան Առաքելոյն վերայ բեռցնել ուղելով  
 անոր չընկալած եւ չընդունած իշխանութիւնը,  
 եւ միւս սրբազան Առաքելոց արտօնութիւնները  
 եւ իշխանութիւնները՝ որք ընկալան 'ի ֆրիստ-

տոսէ եւ եւ 'ի Հոգւոյն Սրբոյ՝ ժխտել ուղել-  
նուն համար է մեր այս բողոքը, եւ միանգա-  
մայն խնդիրը դատաքննութեան տակ ձգելը.  
եւ ասոր համար ահա կը բողոքեմք եւ կը մեր-  
ժեմք, թէ անտեղի եւ մոլորական է այս դը-  
րութիւնը. քանզի ինչպէս ըսինք, եթէ միւս  
Առաքելոց ալ մէկտեղ համահաւատարնոյն արտո-  
նութիւնը տալու որ ըլլային Հռովմէականք, բո-  
լորովին անտեղի չէր լինէր. ըստ որում այս եւս  
պէտք է գիտնալ, որ բաց 'ի Գրխատոսէ եկեղե-  
ցին ունի երկրորդական դլուխներ, եւ այն ալ  
ոչ ըստ իրին՝ այլ ըստ ըստ պատուոյն. որովհե-  
տեւ իւրաքանչիւր ազգաց հաւատացելոց լու-  
սաւորիչ եղող Առաքեալները մասնաւոր դլուխ  
կը՛ կոչուին. ընդ նմին եւ առաքելոց յաջորդները,  
ինչպէս որ վերը Գրիգոր հայրապետը՝ Պօղոսը  
Անդրէասը եւ Յովհաննէս սրբազան առաք-  
եալները օրինակ բերելով վկայեց թէ մասնաւոր  
ազգաց դլուխ են: Ոչ թէ միայն սոյն հայրա-  
պետը կը վկայէ, այլ եւ ընդհանուր եկեղեցւոյ  
նախնի Սրբազան Հարք նոյնը կը վկայեն, ինչ-  
պէս որ հոս պիտի նշանակենք: Սակայն 'ի գէպ  
դայ Առաքելական բանն որ կը զուրցէ. «Զան-  
ձինըս առ իմաստունս ունէին՝ յիմարեցան»: ըստ  
որում պապականք Աստուծոյ պատգամը եւ  
խրատը մէկգի թողելով, եւ իրենց նախնի սուրբ  
Հարց ոգին կորուսանելով, եւ միանգամայն ի-  
րենց իմաստութեանը ապաւինելով՝ սկսան մը-  
տացածին վարկածներով նոր դրութիւն մը

հնարել եկեղեցւոյ մէջ. այսինքն՝ իրենց հայրաւ պետը ընդհանուր եկեղեցւոյ վրայ իշխելու եւ գլուխ դաւանելու կռիւը եւ ոչ ճշմարտութիւն թիւնը: Ինչպէս յայտնի է, որ նախնեաց միայն Պետրոսի եւ անոր Հռովմայի յաջորդացը համար գրուածները մէջ բերելով, մասնաւորը ընդհանուրի վերաբերել կուզեն. այսինքն՝ միւս առաքելոց եւ անոնց յաջորդացը համար գրուած գովեստի եւ պատուոյ գրութիւնները կամ չեն ուզեր տեսնել, եւ կամ տեսնելը բաներնուն չգալով բոլորովին զանց ընել կուզեն, որ իրենց սուաը կլլեցընեն. այսպիսի տարտամ վկայութիւններով, եւ կամ մասնաւոր մարդոց կարծեացը եւ գրութեանցը ապաւինելով, ինչպէս մինչեւ ցայսօր նոյն գովեստի եւ ճարտասանութեն ձեւերով գրութիւնները, զոր գրած են նախնիք մեր՝ Ս. Պետրոսի եւ անոր Հռովմի յաջորդացը, կը համարձակին անոնցմով պարծենալ, եւ կը սնդեն ալ իրը հաւատոյ էական դաւանութիւն եւ ճշմարտութիւն.\* վասորն այնորիկ յանդգնութեամբ ընդունել տալ կուզեն ընդհանուր Քրիստոնէից զՊետրոս եւ յաջորդ նորին Հռովմայու հայրապետը միապետական տէր, գլուխ եւ դատաւոր կառավարիչ ընդհանուր եկեղեցւոյ: Եւ այս անտեղի գը-

\* Տես «Աթոռ Պետրոսի» անուանեալ մոլորական մատենը, եւ անոր արձագանքը եզոզ Չամուբճեան Պ. Յօճաննէսին հրատարակած Զեւթ գրութիւնները: Եւ այլն եւ այլն:

բութիւնը (չըսեմ մոլորական վարդապետութիւնը) իրենց դրութեամբը ով ոք չընդունի, իբր թէ հողւոյն փրկութիւն չկայ, եւ որոշեալ եւ հօտեալ անդամ է եւ եկեղեցիէն դուրս է եւ այլն: Բայց անոնց իբր հաստատուն եւ անկործանելի կարծած վահաննին Աստուծով կը խորտակեմք ու կը նշաւակեմք այս դրութեանս մէջ, որով Հայոց Ս. եկեղեցին նոյն Հռովմէականները եւ Հռովմէասէր տարաձայնները կը պարտաւորեն. որ այս դրութեամբ Պապին հնազանդի եւ իւր հպատակութիւնը ցուցնէ, ինչպէս ըսինք, նոյն նախնեաց Պետրոսի եւ Հռովմի համար սղուած գովութիւններէն ձեռնարկելով. Բանդի յերաւի մեք շնորհայի Սրբազան Հարք՝ Պետրոս սրբազան Առաքեալը իւր պրութեանը եւ հաւատոյը ու առաքելական արդեանցը համար կը պատուեն գովութեամբ, ինչպէս որ շարականին մէջ կը կարդամք. «Որ գերագոյն ընտրելոց Առաքելոցն դասուց անուանեցեր լինել զերանելին զՊետրոս գլուխ սուրբ հաւատոյ հիմն եկեղեցւոյ»:

Եւ Ս. Լուսաւորչի Ագաթանդեղոսին՝ մէջ. «Եւ արար զնա վէմ հաստատութեան ամենայն եկեղեցեաց», եւ «Գլխոյն ընտրեալ հօտին վորու սաստէր՝ զխորհուրդն ոչ գիտելոյ»\* Ահա

\* Չամուրճեանին այս վերոյգրեալ վկայութիւնները մէկզի թողելով միայն մէջէն սոյն վրկայութիւնը կառնումք, որ բաւական է ընթերցողաց թէ մեր եւ թէ Չամուրճեանի տարակոյսը լուծելու հա-

ատոր նման խօսքեր շատ կը գտնուին Սրբազան  
 Հարց դրուածոց մէջ, ինչպէս որ Պ. Չամբու-  
 ճեանը իւր Զօհալ անուն կիսամակայ տետրին  
 1856 յունուար 1 թուոյն միջոցաւ քսան օրինակ  
 բերեր էր, բայց նա կը հաստատէ որ իբր թէ միայն  
 Ս. Պետրոս Առաքելոյն եւ անոր յաջորդներուն  
 համար տրուած է այս տիտղոսները, եւ հետե-  
 ւաբար ալ հաւատոյ էական մաս մ'է, եւ կը  
 պահանջէ՝ որ Հռովմէականք ինչ անտեղի կեր-  
 պով կրնդուենին նէ, Հայաստանեայց եկեղեցին

մար. արդ սոյն շարականը շինողը Ս. Ներսէս շը-  
 նորհալի Հայրապետնիս է, բայց հարկ կըլլայ այս  
 տեղ, նոյն Հռովմէական եկեղեցւոյ երեւելի վար-  
 դապետներէն մէկուն մեկնութիւնը գնել 'ի յան-  
 գիմանութիւն անոնց՝ որ ասանկ գովեստի գրու-  
 թիւններէն Պետրոսի եւ անոր յաջորդ անուանեալ  
 Հռովմի Հայրապետներուն համար եկեղեցւոյ վրայ  
 ընդհանուր գլխաւորութիւն մը կուզեն հաստատել,  
 ինչպէս որ սոյն մեկնիչ Աւետիքեան Հ. Գարբիէլն  
 ալ ըրած է, իրեն մեկնութեան սկիզբը կեղծելով.  
 բայց յետոյ ինքն ալ խոստովանելով մերժած է իւր  
 վերոգրեալ դրութիւնը, եւ Շնորհալոյն ուղիղ միտ-  
 քը բացատրած է այսպէս. « Գլխոյն ընտրեալ հօտին  
 փոքու, յայննապէս խոստովանի զսուրբն Պետրոս լի-  
 նել զլութ հօտին փոքու, այսինքն առաքելոցն եւ  
 այլոց հաւատացելոց, 'ի հրաժարիլ նորա յօտիցն լը-  
 ուացմանէ, խաստէր նմա Քրիստոս ոչ գիտել ըզ-  
 խորհուրդն, եւ յասելն թէ 'ի չլուանալդ չունիս  
 ընդիս մասն, գառնայր Պետրոս եւ հնազանդեալ ա-  
 զաչէր լուանալ նանեւ զգլուխն եւ զձեռս . . . »

ալ կը պարտաւորի ընդունիլ, եւ եթէ չընդունի, անոնց ու Չամուրճեանի դրութեամբը ու դիտողութեամբը բողոքականութեան վտանգէն ազատ չէ, այլ իւր նախնեաց դէմ հակառակող կը համարուի:

Սակայն Ո՛ պատուելի Չամուրճեան, եթէ այս տեսակ խօսքեր ու տխրողանք սրբազան հարց դրուածոց մէջ երբոր կը տեսնեմք ու կը կարդամք, Ս. Պետրոսի եւ անոր յաջորդներուն տրուածներէն աւելի չըսեմք, այլ հաւատար դըր-

եւ յետոյ խելքը գլուխը գալով կըսէ. «Սակայն Շնորհալին այլաբանութեամբ առեալ գլուխ մեկնէ զնա ինքն Քրիստոս, եւ ոտս՝ զաշակերտան, ուստի ասէ. «Ի՞նչ» այսինքն ինձ որ գլուխ եմ ձեր՝ շուտեմն չէ պիտոյ, այլ ձեզ ոտիցդ պէտք կն մաքրութեան, զի կարիցէք յողի ՚ի գլուխս սրբութեամբ Յացաօր. Երկ. եր. 218. Ահա Պ. Չամուրճեանի Պատրոսի համար բերած Գ. Մ. Ա. Մ. որ անով պատկերուն եկեղեցւոյ վրայ իշխելու իրաւասութիւն ունենալը կը ձեւացնէ. զորն որ իրեն համամիա շքութեան մեկնիչն Հ. Պարրիէլ՝ իրեն պէս կեղծելով ու երեւակայելով՝ ետքը ինքը խստութանած է ճշմարտութենէն բռնադատուելով. Թող մտածեն ընթերցողք եւ Պրուսիացիին բերած միւս վկայութիւններն ալ ինչ յարգ ու պատիւ կը բերէ նէ ճշմարտութեան, այն աստիճանով յարգեն ու պատուեն . . . . Եւ շարականին այն տունը որ կը դուրցէ «Աեցս զօրդի ծառայի քս եւ այլն», մասնաւորապէս շորթորդ մասին մէջ անոր բացատրութիւնը կուտամք՝ որ ոչ միայն Մխիթարեանց, այլ եւ

ուածներ ալ կրնամք գտնալ: Եթէ չդտնայինք, հարկաւ ձեր բերած ապայուցութեանց գլուխ ծռելով առանց պայմանի կընդունէինք: Բայց տեսնեմք՝ որ նախնի եկեղեցւոյ սուրբ հարք՝ միւս առաքելոց եւ անոնց յաջորդներուն ինչեր խօսեցան, դիտաւորապէս Յակոբ սրբազան առաքելոյն համար գրուածները մէջ բերենք, ինչպէս ՚ի հարկէ կը հետեւի ուրիշ Սրբազան Հարց ալ:

Նախապէս Յակոբ Սրբազան Առաքելոյն համար, որ Առաջին Քահանայապետ եւ Առաջին Պատրիարք կարգեցաւ յերուսաղէմ, կը գրէ Կղեմէս կամ Կղեմենասո՝ Պետրոս Սրբազան Առաքելոյն Հռովմի յաջորդ անուանողը այսպէս.

(3) « Զարմանքս յառաջեաց անով՝ Յակոբոս եղբայր Տեառն մերոյ, այն որ Սրբաբն համարեալ էր յամենայն մարդոց ու (Առ Եւսեբ. Պատմ. Եկեղ. Կ. 23):

Նոյնպէս եւ Սուրբն Կղեմէս Հռովմայ հայրապետը Պետրոսի եւ Յովհաննէսի հետ հաւատար եւ դիտաւոր ցոյց տալով՝ Յակոբ Տեառն եղբայրը, եւ միանգամայն իր գրութեանը մէջ առաջին դասելով անունը կը գրէ, (4) « Յակոբոս.

Պատուելի Չամուրձեանին ալ յուսացած վահանին 20 երորդ եւ վերջին բերած վկայութիւնն է, որ անով Ս. Պետրոսի Հռովմայ հայրապետներուն փեղեքահան՝ եկեղեցւոյ դիտաւորութիւն մը կը գոյացնեն. ինչպէս նաեւ ըսինք իրենց առաջնորդ կողմ Ռոմէոսի անունը ալ:

անն արդարոյ, եւ Յովհաննու եւ Պետրոսի,  
 յիս յարութեան Տեառն մերոյ 'ի մեռելոց,  
 եր նոցա որք շէնդոս-Տիւն իւր, եւ նոս երոսն այլոց  
 առտեւոցն : (Եւս. Պատմ. Եկեղ. Դպր. Բ. Գլ. Ա.)  
 Եւ գարձեալ կը գրէ Եւսեբին. (5) « Զաթոսն  
 Յակոբու, այն որ ընկաւ շէնդոս-Տիւն 'ի Փրկչ-  
 շէն Բրժ, եւ յԱռտեւոց անոր շէնդոս-Տիւն Երոսոս-  
 շէն, այն որ եղբայր է Քրիստոսի » : Պատմ. Եկեղ.  
 Դպր. 7. Գլ. 18 : Եւ սուրբն Դաւիթ Անյազթ  
 վարդապետն մեր այն Յակոբ Տեառն եղբայրէն  
 կարգած եկեղեցական ընկերցուածոց ճառին  
 մէջ կը գրէ այսպէս (6) : « Յետ համբառնա-  
 լոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, կորէնցն  
 առտեւոցն հրամանաւ Հոգոյն սրբոց շէնդոս-Տիւն,  
 որ էր ըստ ճարտոց կոչեցեալ եղբայր Տեառն, եղեւնոցն Ա-  
 ռաքն եւ Գառնայոցն յԵրոսոսաշէն » : Նոյն եւ Դա-  
 վիթ կը գրէ. (7) Առաջին քահանայապետ էր  
 յԵրուսաղէմ, եւ առաջինն նա կորէնոց շէնդոս-Տիւն  
 յեւ եւ շէնդոս կոչեցեալ եւ այլն » : (Պատմաւ գրոյնս)  
 Եւ Շարականին մէջ կերգէ Ս. Յովհանն Օճնեցի  
 հայրապետ մեր (8) . « Ս եղև զլուի Առտեւոց  
 սրբոց եւ կոչեցաւ եղբայր Տեառն 'ի տանէ Դաւ-  
 թի » : Տես նաեւ Հ. Գաբրիէլի Բացա. Շար. Ե-  
 լրես 121, որ մեղմելով կը խոստովանի նախա-  
 գահութիւնն այն Յակոբ սրբազան առաքելոյն  
 ըսելով : (8) « Յայտ է թէ՛ զլուի իմանի Բոյն ըստ  
 նախադրոս-Տիւն ինչ, իբր զի այս Յակոբ կարգե-  
 ցաւ առաջին եպիսկոպոս Երուսաղէմի, եւ իբր  
 յառուկ առաջնորդ ակթոսոյն ակնածեալ էր



յայրոց առաքելոց, որպէս եւ սուրբն Պօղոս 'ի  
 դնալ խրում՝ յերուսաղէմ՝ մտանելու նախ յող-  
 ջոյն նորա 'ի նշանակ պատուոյն . յաւել եւ դո-  
 ճմարտասէր ընթերցողը՝ « 'ի նշան հպատա-  
 կութեան իբր գլխոյ եկեղեցւոյն », ինչպէս եւ  
 ինքն ալ քիչ մը վարը կը վկայէ՝ որ մենք ալ  
 պիտի գնեմք. տե՛ս ստորեւ .

Եւ Ս. Բարսեղ Կեսարացին Ս. յլակերպու-  
 թեան ճառին մէջ կը գրէ (10) . « Ընդրեցէր յառաջ-  
 նորոնքն վերսկսեցնան նոր ժողովրդեան +  
 զերանելին զՅակոբոս զեղբայրն քո՝ զՀնորհի » :  
 եւ Հեղինկոս (11) . « Իշխան +ահանայից եւ առաւելոց  
 բնի » կը կոչէ (Մատեն. փոսոյ. մատեան 275) :

Եւ կղէմէս Ազէքսանդրայի Մեծ վար-  
 դապետն եկեղեցւոյ (12) . « Այք եպիսկոպոս,  
 էջիան եպիսկոպոսոց, եպիսկոպոսական իշխանու-  
 թեամբ հրամանատար անոցն առաւելոց » (Գիրք Ք.  
 քննութեանց) : Կարծեմ այս տեսակ իշխանու-  
 թեան վերտառութիւն մը արուած չէ յԱւետա-  
 րանի եւ 'ի գիրս հարց Ս. Պետրոսի եւ անոր  
 յաջորդացը համար :

Ասկից աւելի փառաւոր վկայութիւն մը,  
 Հիւսիքոսերէց Երուսաղէմի կանուանէ զսա (13) .  
 «Նորոյ Երուսաղէմի (այսինքն նորոյս Ս. եկե-  
 ղեցւոյ) ծայրագոյն առաջնորդ, իշխան քահա-  
 նայից, եւ առաւելոց բնի » եւ ոչին : (Առ Հ.  
 Գարբիէլի Ա. ետիքեան, Բացատր. Շարժ Եւ Ե-  
 րանելին Գրիգոր Սրչաբունեաց եպիսկոպոսը՝ որ  
 'ի վերջն վեցերորդ դարուն երեւեցաւ, կը գր-

ըէ (14). «Ա. եպիսկոպոս յերուսաղէմ՝ Յակոբոս  
եղբայր տեառն ձեռնադրեցաւ ՚ի Գրիստոսէ» :  
(Յաղագոս. ընթրց.)

Նոյն եւ Գրիգոր, Գառասնօրեայ պահոյ  
մեկնութեան մէջ սոյն Յակոբ Սրբազան Առա-  
քեալին համար կրէ (15). « Գրիստոսի աշակերտ-  
քնն եղին մեզ քաղաք ապաստանի ամբու-  
թեան ընդդէմ սատանայի. էսի 'է որդի ճակարոյն  
չՊարթ առաւելուն Յակոբոս զեղբայրն Տեառն շխտե-  
րակերպն, որ Ասորոսացիանման աստուծոյ Տեառն հար-  
կանելով շինմանն հրձացեալ եւ զրոտեալ զճակար-  
թանասրկանն եւ զճերեալն եւ զկողեւուն յընդարձա-  
կութեան հանեալ » :

Որ ըստ օրինակի Գրիստոսի պատերազմի զօ-  
րականօքն Մովսէսի եւ Առաքելովք եւ Մարգար-  
էիւք, զորս ընթեռնումք յեկեղեցւոյ, եւ քա-  
ջալերութիւն պատրաստեաց սուրբ Հայրապետն  
Կիւրեղ՝ իւր ընթերցումովքն, որ իշխանակից  
եւ օգնական Առաքելական ընթերցումովքն  
լինելով, որ իշխանականք են եկեղեցւոյ եւ ա-  
ռաջնորդաց, եւ մարդարէական յառաջատես  
ընթերցումովքն. վասն այնորիկ վարդապետոս-  
թեմոյ « Կաննի զբաւարել ըստ Յակոբոյ » (Ձեռ. հին  
տիպ Պօլսոյ, եր. 7) :

Եւ երեւելին Յովհաննէս Տօնատէր զխանա-  
կան վարդապետը՝ որ յերեքտասներորդ դարու  
երեւցաւ, կը դրէ այսպէս (16). « Որպէս Յակո-  
բոսի Տեառնեզօր յերուսաղէմ, Առաջնորդին  
նախնւոյ եղբայրութեանց Առաքելոյ եւ երկրցանց

եւ եպիսկոպոսոսաց հաւանէին կամաց նորա, եւ ոչինչ ՚ի գործելեացն առանց կամաց նորա լինէր, եւ յորժամ նա իրաւունս համարէր իրի իմիք, գործ կամ բանք, յայնժամ իրը օրէնք հաստատեալ լինէր յեկեղեցին Աստուծոյ՝:

Պետրոս եւ Պօղոս եւ Բառնաբաս եւ այլք, նմա զգացուցանէին զպատահմունսն, թէ զյաջողութիւնսն եկեղեցւոյ եւ թէ զձախորդութիւնսն՝. Առ նա ելանէին տեսանել զկամս նորա վասն Աւետարանին, զոր քարոզէին՝ զի մի ընդունայն ինչ ընթացեալ իցեն : Կամօք նորա կամ ՚ի նմանէ առաքէին յայլ եւ այլ տեղիս՝ : Եւ նա միշտ անդ էր իրը զէլուար նաւու եւ Առաքելոց Եկեղեցւոյն Վերստիսն՝ : Եւ ահա վասն այսորիկ ասի ՚ի Շարականս մեր. թէ Սեղեւոյն Վերստիսն Երէւանն (՚ի ճառն Առաքելոց ձեռ.) :

Եւ Յայսմաւուր հօկա . ԻԳ. կը դրէ այսպէս. (17) «Եղին (Առաքելք) զՅակոբոս յԱթոն Վերստիսն յերուսաղէմ, որպէս . . .

\* Ի բնագրին ի լուսանցն եղեալ էր վկայութիւնքըս այսպէս. (Գործ. ԺԲ. 17.)

\*\* Նոյնպէս Իմա. (Գաղ. Բ. 2. Գործ. ԺԱ. 2, 22. Թ. 24. ԺԵ. 2. ԻԱ. 18.)

\*\*\* (Գործ. 22. ԺԲ 25. Գաղ. Բ. 12. Գործ. ԺԵ. 19. 20. Ը. 14)

\*\*\*\* Գաղ. Ա. 19. Թերեւս այս ծանօթութիւնները Ամասեացի Տէր Խահակ գրասէր Մ. վարդապետն եղեալ իցէ. քանզի այս կտորը նա հաղորդեց մեզ՝ որքան որ սոյն ճառին մենք եւս հանդիպած էինք անկէ :

սեպհական ժառանգաւոր այնմ Աթուի եւ վիճակի, Եւ Էնտեան էրկոթասան Ս. Առատեալի ՀԲ. ոչնչեթոսին, որդեա լե է Յակոբայ Առատեալի գընացին է Կորոզմելեան Աւերաբանին Գրեթոթոն ընդ մեանցն ուրբոս ոչեթոսին, եւ Յակոբոս նորեալ յերասացէ որդեա եղբայր եւ հայրենաթեր եւ արժանաթասան է Ալեքոսին Գրեթոթոն, զրեաց նոցա զթուղթն ընդհանրական . . . եւ հաստատէր զիւրաքանչիւր ոք 'ի հաւատս ճշմարտութեան, զԱռաքեալն 'ի քարոզութեան բանին եւ զժողովուրսըն 'ի հաւատալ Աւետարանին» :

Եւ սուրբն կիւրեղ Երուսաղէմացի հայրապետը իւր կոչումն լնծայութեան մատենին մէջ՝ Քրիստոս Տէրն մեր Յարութեան ժամանակը որոնց որ տեսնուեցաւ, մի առ մի դասաւորելէն ետքը, Յակովբոս Առաքեալին գալով այսպէս կըսէ (18). «Ապա երեւեցաւ Նա Եղբօր իւրում Յակոբայ եպիսկոպոսի Առաջնայ այս իշխանութեան» : (Հին ախյ Պօլսոյ, 289, Նոր. վեհ. 292.)

Եւ Ս. Եպիփան «ի մեծահրաշ եւ առաջին նշանաց Տեառն մերոյ» գրած ճառին մէջ այսպէս կը գրէ. (19) «Հաճեաց եւ զԱռաքեալս ըմբռնմամբ ձկանցն դալ զհետ կոչմանն նորա, եւ Յովհաննէս եւ Յակոբոս որդիքն Զերեթեայ եւ առ ժամայն արժանաւորեցան լինել ՈՐԴԻՔ ՈՐՈՏՄԱՆ, 'ի վերուստ որոսալով զբանն կենաց» : Եւ միւս Յակոբ Առաքելոյն հետ սոյն Յակոբ սրբազան Առաքեալը 'ի նախնեաց անտի մեր Եկեղեցին կը հռչակէ, սոյն Գերագրական վեր-

տառութեամբ, ինչպէս որ գրուած է յամագրքին մէջ (20). «Սրբոց Յակոբեանց քերթերն էն է ընդդէմ Աստուծոյն», որպէս եւ Յոյնք մինչեւ ցայժմ նոյն երուսաղէմայ Հայրապետաց տրւած տխաղոսնին այս է «Մաքարիօթաթօս» որ ըսել է «Ամեներանեալ» եւ «գերերջանիկ», զոր այս տխաղոսը ամբարտաւանութեամբ Աստուծոմէ չի վախնալով եւ Անոր եկեղեցիէն չի պատկառելով, այժմեան հռովմէականաց ուրուական կաթողիկոսն Լիբանանու, որ ինքզինքը կիլիկիոյ կաթողիկոս կը քարոզէ, սոյն վերտառութիւնը իրեն սեփականեւ կուզէ, քանզի ուրիշ այս տեսակ գերագրական անուն մը չի կրցան գտնել Առաքելոց եւ եկեղեցւոյ Հայրապետաց վրայ: Ուրեմն հարկ կըլլայ ըսել՝ ինչ որ Գրիստոս կափառնայում քաղքին վրայ ըսաւ, նոյնը եւ մենք կը պարտաւորիմք այլաբանօրէն այս մանղէն արձանին վրայ ըսել. «Եւ դու կափառնայո՛ւմ, մինչեւ յերկինս բարձրացա՛ր, մինչեւ ՚ի դժոխս ի ջցես» . (Ղուկ Գլ. Ժ. համար 15.) Ուրեմն այս Աստուածային սաստը՝ կամ Պապը առնելու է իր վրայ, եւ կամ իւր ձեռնասուն անուամբ եւ եթ փքացեալ կաթողիկոսը . . . . Եւ Մեծն վարդան իր ներքողին մէջ այսպէս կը գրուատէ, Յովհաննէս Աւետարանիչն ալ մէկտեղ առնելով . . . (21) Գերեօնն զորքն զբարբեւ զսուրբ Յովնէս Եւ Յովհաննէս, զի են սոսո Գլխորոցն երկորորորնէն Եւ ընդդէմ, զի թէ Պետրոս ՚ի Տեառնէ եղաւ Գլուխ երկուսասանիցն, եւ կոչեցաւ վէմ

հաւատոյ, բայց Սոքա սուաւել մերձակայք էին Քրիստոսի, քան զտասունքն, յամենայն բանս եւ ՚ի դործս: Եւ այս այնքան, որ ՚ի նախանձ դրդեալ շարժեցան տասունքն հակառակելով ընդ նոսա, թէ ընդէ՞ր դուք սուաւել համարձակիք սու Քրիստոս՝ քան զմեզ: ( Ի ներքոզն Առքլց. ձեռ.: )

Այժմ կարծես թէ մարդարէութիւն մ'է այս գրութիւնը վերոյիշեալ կաթուղիկոսին վերայ, եւ վերոգրեալ վկայութեանս ալ բացատրութիւն . . . :

Եւ վերջապէս սոյն Յակոբ սրբազան Առաքելոյն համար, Ս. Յովհանն Ռսկերբերան տիեզերական վարդապետը Աւետարանի մեկնութեանը մէջ այսպէս կը վկայէ (22). «Իսկ ընդէ՞ր սենն նախ Յակոբոս (Տեառնեղբայր) ընկալաւ զԱթոռն Երուսաղէմի: Առ որս ասեմք, եթէ զՍա ամենայն տիեզերաց Առաջնորդ եւ վարդապետ կացոյց (Քրիստոս)»: (Մեկն. Յօհ. եր. 951)\*:

Այժմ տեսն՞ր, ո՞չ Պաղճեան, որ Պետրոսը հոյիւ եւ Առաքելները հօտ կանուանես, եւ կըսես, ո՞չ միայն դուն, այլ եւ քեզի հետ համամիտ եղող պապապաշտներն ալ մէկտեղ, թէ՛

\* Ահա Չամուրճեանին Պետրոսի համար բերած 20 հատ վկայութեան փոխարէնը, եւ այս ալ միայն Ս. Յակոբ Տեառնեղբօր համար գտածնիս է, ինչպէս որ Բ. Մասին մէջ ալ տեսանք. եւ միւսներն ալ վարդ կը տեսնեմք Աստուծով . . . :

Քրիստոս համբարձաւ եւ իր տեղը փոխանորդ-  
Պետրոսը դրաւ, նոյնպէս եւ Չամուրճեանն ալ:  
(Տեա. Զօհալ տետր, 14, էր. 58) Ահա այս վը-  
կայութիւններէն յայանի եղաւ, որ ո՞վ է եղեր  
Առաքելոց գլուխ, եւ ո՞վ է եղեր Քրիստոսի  
փոխանորդ եւ եկեղեցին կառավարող, եւ ո՞վ  
է եղեր Առաքելոց մէջ Առաջնութեան պատիւ  
ունեցողը եւ կամ ո՞վ է եղեր Առաքելոց ու-  
սուցանող եւ հրամայող, յետ Համբարձման Քրի-  
ստոսի եւ այլն: Որ ետքը միւս գործերնուս մէջ  
ընդարձակ պիտի ապացուցուի, այս խնդրոյս  
վրայօք: Աւրեմն կըսեմք ձեզի, թէ քերած վկա-  
յութիւններնունդ Քիսերի կը տեսնէք . . . որով  
Ռոջքաներով, Ռայնալլոսներով, Ստեփան Լեհա-  
ցիներով եւ այլ ձեզիպէս մուրամիաներով սուրբ  
եկեղեցւոյս վրայ կը խրոխտաք, իբր թէ հոգի-  
նուդ փրկութեան առաջնորդ մը համարելով  
զանոնք . . . :

Ահա ասոր պէս ալ Անդրէաս Առաքելային  
համար «Նախապատիւ եւ գլուխ Առաքելոց,  
սրբոց» կըսուի, ինչպէս որ Պօղոս Առաքելալ (23)  
«Սիւն» կը կոչէ Պետրոսի հետ հաւասար բը-  
նելով: Եւ սուրբն Հերոնիմոս (24) «իշխանս Ա-  
ռաքելոց» կը կոչէ զԱնդրէասը Պետրոս Առաքե-  
լոյն հետ հաւասար (Մեկն. Սաղմ. ԿԼ.) եւ Հեզի-  
կիոս Երուսաղէմայ Պատրիարքը՝ որ վեց դա-  
րուն մէջ երեւցաւ կը գրէ (25) «Սրբազան փոզ  
Անդրէաս, առաջին ճշունից Առաքելոց, տե՛ն է՛ն շե՛ր-  
վե՛ յառաջ ասն գլխէն (այսինքն զՊետրոս), հիմն

հիման (Պետրոսի) • (Մատեն. փոստայ, մատենան Գ. 269) : Այս դրութիւնը Չամբուրնեանի՛ն գրածին ներհակն է, որովհետեւ նա՛ ըսաւ թէ Պետրոսի միայն ձէ՛ եւ միւս Առաքելոց հի՛ Թ կըսուի, եւ հետեւցուց ալ թէ այս բառերուն նշանակութեանցը չինայելով՝ կը կարծեն թէ Պետրոս միւս Առաքելոց հետ հաւասար է, եւ ասանկ անտարբեր բռնելով՝ միւս Առաքելոց հետ զՊետրոս, իրենց եկեղեցւոյն երեւելի հայրապետացը հաւատոյն եւ վարդապետութեանցը դէմ՝ կուգան. եւ անոնց հետ համամիտ չըլլանին կը յայտնեն. (երես 58) • եւ ես.քը ձէ՛ եւ հի՛ Թ բառերուն բացատրութիւնը ընելով՝ Պետրոսը միւսը Առաքելաներէն գերագոյն, եւ Քրիստոսի փոխանորդ կը կացուցանէ, հետեւցնելով թէ միայն Քրիստոսի՛ եւ փոխանորդաբար Պետրոսի ձէ՛ կըսուի, եւ միւս Առաքելոց հի՛, բայց ընդհակառակը նախնի.ք մեր անտարբեր կերպիւ Պետրոսի ալ հի՛ կըսեն եղեր, ինչպէս որ վերոգրեալ վկայութենէն յայտնուեցաւ, որ Հեղիկիոս Պատրիարքը գրեր է, եւ ձէ՛ բառին համար ալ վարը պիտի տեսնամք, թէ Սրբազան նախնի.ք մեր ո՞րպէս անտարբեր գործածեր են միւս Առաքելոց համար, ինչպէս որ այս վերոգրեալ վկայութեան համեմատ, նախնի Սրբազան Հարք մեր՝ Անդրէաս սրբազան Առաքելոյն համար ալ վէմ կերգեն, Շարահանին մէջ. (26) • Հարազատ ձէ՛ հաւատոյ Պետրոս եւ Անդրէաս՝ կոչելով, եւ Շնորհալի Ս. Հայրապետն մեր Ներսէս՝



Ս. Գրիգոր վկայասէր Հայրապետին ընտրութեանը համար այսպէս կը ներբողէ. (27) «Եկեղեցւոյ վէճ հիշեալ վերուստ կոչմամբ անօթ ընտրեալ» (Յիսուս որդի Շնորհ:) Եթէ ուղղապէս առնելու որ ըլլանք այս վկայութիւնը, յայնժամ կը հետեւի որ կամ եկեղեցւոյ վէճ «հիշեալ բարձեր է, եւ կամ նորոգապէս ՚ի վերուստ վէճ եւ հիշեալ գրուեր է եկեղեցւոյն ըսել կըլլայ որ մինչեւ Գրիգոր վկայասէր սուրբ Հայրապետն մեր եկեղեցւոյ մէջ վէճ հիշեալ չկայ եղեր, հետեւաբար ալ Քրիստոս դեռ մինչեւ մետասաներորդ դարը իր եկեղեցին չէ հաստատեր ՚ի վերայ վիժի դաւանութեան Պետրոսի, եւ Պետրոսի ալ չէ զուրցեր «Դու ես վէճ եւ այլն» : Ուրեմն ՚յայնժամ լինի սոսկ տղխութիւն. չըսեմք հայհոյութիւն ընդդէմ Աւետարանական ճշմարիտ վարդապետութեանցն Քրիստոսի, ուստի հարկ է ըսել թէ ոչ միայն սուրբ Առաքեալք, այլ եւ անոնց հետեւող Սրբազան յաջորդք եւս՝ եկեղեցւոյ վէճ հիշեալ կը կոչուին եղեր իրենց աստիճանին եւ արդեանցը համար: Այս վկայութիւնը Զահարի գրութեան հակառակ է, քանզի նա ըսաւ որ՝ միայն Պետրոսն է վէճ կըսուի, միւս Առաքելոց հիշեալ Եթէ պատուելին գաղափարովը վէճ բառը՝ հիշեալ բառին նշանակութենէն աւելի փառաւորութեան պատուանուն մ'է նէ, այս կերպով Քրիստոսի՝ ՚ի սրբազան Առաքելոյն Պողոսէ հիշեալ ըսուած է (28) «Հիմն այլ ոք ոչ կարէ դնել քան զեդեալն որ է (ինքն) Յիսուս Քրիստոս»: Ուրեմն

կը հետեւի որ ըստ գրութեան պատուելոյն, ֆր-  
րիտոս ալլոց Առաքելոց հետ հաւասար, բայց  
Պետրոս աւելի մեծ քան զՅիսուս ֆրիտոս . . .  
որ է հայհոյութիւն եւ յայտնի իմաստակութիւն  
որուն մէջ կամ միամտութեամբ ինկած կը համա-  
րինք, եւ կամ օտար ուսմանք առնելով եւ մոլո-  
րամիտներուն գրութեանցը հետեւելով, ահա այս  
րինակ սխալած է Պ. Չամուրճեանը\*, բայց թէ  
որ ըսէր թէ Ս. գիրք եւ սրբազան հարք Վե-  
նէն հիշուի բառերը լայնաբար եւ նըմա-  
նութեամբ առեալ անխտիր գործածեր են,  
այն ժամանակը զբոց սղջմտութիւնը չէր եղ-  
ծաներ ու այսպիսի անտեղի հետեւութիւն մը  
չէր բղխեր իւր գրչէն, ինչպէս որ պտուղը տե-  
սանք ։ Եւ շիտակը զուրցելու է որ այս մասին  
Պ. Չամուրճեանը վիճենայու Մ. Միարանութե-  
նէն աւելի դիտուն եւ իբր աւելի ջերմեռանդ-  
կը ցուցնէ զինքը պապապաշտութեան, ըստ ո-  
րում անոնք յայտնապէս Աթոռ Պետրոսի ան-  
ուանեալ գրքին ճակատը հրատարակած եւ  
խոստովանած են Պետրոս Առաքելոյ համար,  
ոչ թէ Վե՛ս այլ «Աթոռ Պետրոսի հիշուի եկեղեց-  
ւոյ կոչելով : Եւ գուցէ մեր երանելի լամբ-  
րոնացին ներսէս ալ բողոքական կը համարէ  
Պ. Չամուրճեանը, որովհետեւ նա ալ իրեն  
գրութեանը գէմ գրած է, ըստ որում Պետրոս

\* Ասոր պատասխանը սոյն գործոյս վերջարան  
Յաւելուած գրութեանս մէջ տես ։

Առաքելոյ համար ոչ թէ լէ՛՛՛ այլ հէ՛՛՛ կը կոչէ՛  
 (29) «Որպէս հէ՛՛՛ եկեղեցւոյ Պետրոս ասէր՝ զանցս  
 չարչարանաց եղբայրութեան ձերոյ յանձինս  
 կատարեալ» (Յատե. հին տիպ. վէճէտ. եր. 9.)  
 Նմանապէս Յովհաննէս սրբազան Աւետարանիչը  
 հաւասար Պետրոսի եւ Յակոբայ «է՛՛՛ կը կոչ-  
 ւի, (Գաղա. Բ.)։ Եւ սուրբն Կիւրեղ Աղեքսանդ-  
 րային՝ առ Նեստոր գրած թուղթին մէջ կըսէ-  
 (30) «Պետրոս եւ Յովհաննէս հասարակորէ՛՛՛ եւ  
 Քեթեղ, զի Առաքեալք եւ Աշակերտք են Քրիս-  
 տոսի»։ Զըջայ որ Կիւրեղ սրբազան Առաքեալն  
 ալ բողոքականութեան մելորած ըլլայ . . . :  
 Բաց ՚ի ամանէ յայտնի է գերազանցութիւնը  
 սրբոյն Յովհաննու, որ իր եղբօրը Յակոբայ եւ  
 Պետրոսի հետ փառաւորեցաւ ՚ի Թափօր լերին,  
 որ այս երեք Առաքեալները Յովհան Դամաս-  
 կացի (31) «Պարագլուխք Առաքելոց» կը կոչէ,  
 (Քարոլ վարդապետի)։ Կը թողունք Սրբոյս գե-  
 րազանցութիւնը՝ որ ոչ Պետրոսի եւ ոչ այլ Առա-  
 քելոց վրայ տեսնուեցաւ . բաւական է որ  
 Տէրն մեր իր տեղը որդիութեան համար սոյն  
 Առաքեալը արժան դատեց իր Սուրբ Մօրը, եւ  
 Պետրոս Առաքեալն անդամ՝ ակնածութիւն ու-  
 նէր սոյն Առաքեալէն, եւ ոչ անոր չափ համար-  
 ձակութիւն ունէր բան մը հարցնելու առաջի  
 Տեառն մերոյ. ինչպէս որ Վասնութեան խոր-  
 հուրդէն յայտնի է\*։ Նոյպէս եւ Պօղոս Առաքե-

\* Նթէ Պետրոս տեղակալ եղած ըլլաք Քրիստոսի, եւ  
 կամ Քրիստոս յատկապէս իրեն փոխանորդ կացուցած

լոյն համար ալ «Սիւն» եկեղեցւոյ կոչուած է Մովսէս Խորենացիէն, կամ ըստ տմանց Ս. Յոհանն (Օճնեցիէն՝ Պետրոսի հետ հաւասար ՚ի Շարակաւնի (32). «Որ երկօքումբք ընտրելովք, Լուսաւորչօքն աշխարհի հասարակեցեր շէկեղեցի + «Քրիստոսն» եւ թէ (33) «Որ ընտրեաց զերանելի Առաքեալսն «Տէր հասարոյ, «Քննեցեցեաց», ՚ի տիեզերական ՚ի հրապարակին զդատողական Աթոռան շնորհելով» :

Այս տունը՝ սկիզբը լաւ կը մեկնէ Հ. Գարբիէլ (Բացա. Շար. եր. 131) : Եւ վերջը եր դըրութիւնը կրկնեցնելու կը ջանայ, թէ եւ հաւասար ալ կը բռնէ Պօղոս սրբազան Առաքեալը Պետրոսի հետ, բայց այն վերջի գրածը մէկդի թողելով, սկիզբը գրած ողջամիտ վարդապետ

---

ըլլար, պէտք էր որ ամեն բան անոր ձեռքը հարցուէր Քրիստոսի, իբր տեղակալի պատուով. եւ ալ Քրիստոս փոխան Յովհաննու՝ Պետրոսին յանձնելու էր իւր Մայրը Աստուածածինն, միւս Առաքեալներէն աւելի փառաւորելով եւ իբր առաւելանոր հաւատարմութիւն մը ցոյց տալով, ըստ Հռովմէական գրութեան. եթէ Պետրոս Քրիստոսի տեղակալ եւ փոխանորդ եւ միւսներէն աւելի հաւատարիմ ծառայ եւ փառաւոր Աշակերտն էր նէ՝ հարկաւ անոր կիցնար այս փառքը. բայց ասոնց հակառակը կը տեսնեմք. Պետրոսի եւ Յովհաննու մէջ տեղը, որէ Պետրոսի ընկալած յանդիմանութիւնները Քրիստոսէն, եւ Յովհաննէսին պարզեւած հաւատարմութեան եւ որդիութեան պատիւները. արդ՝ բողոքատէ մի քրիստոնէկայ . . . :

առթիւնը՝ ոչն որ իր ներքին համոզումը կը համարուի, կը գնեմք հոս, ըստ այնմ (34) «Ամսօրք հաւատոյ, նմանութեամբ ցուցանէ զսուրբն Պետրոս եւ Պօղոս իբր զոյդ մի քանաւոր եզանց, որք զակօս քարտզութեան հաւատոյ ձգեցին ընդ ամենայն աշխարհս. Պետրոս՝ առ հրէայս, եւ Պօղոս՝ ի հեթանոս . . . . .»

Արդ՝ շոտս ընդրեաց ասէ լինել ահալս հաւատոյ, եւ սինս եկեղեցոյ, եւ նոցա խոսքացաւ ընդհել զբարեպաշտն Անտան ՚ի Գեղեղեբան արեւնն, ՚ի Գառաւոր Գալատեանն իբրում: Յաւել եւ դու ճշմարտասէրդ, ո՛չ միայն նոցա խոստացաւ զգատողականն Աթուն եւ այն, այլ երկոտասանիցն եւս. նոյնպէս եւ ոչ միայն սոյն երկուքին Առաքեալքն են «Ամսօրք հաւատոյ սինք եկեղեցոյ», այլ եւ միւս Առաքեալքն եւս, ինչպէս կը ցուցնէ միւս կանոնները Շարականին:

Եւ Ս. Դիոնիսիոս Արիսպագացին առ Ս. Տիմոթէոս կը գրէ (35). «Պօղոս՝ որ զգեցեալն էր զԱստուած եւ խաչեալն ընդ Քրիստոսի, եւ անօթ ընարութեան հոգեւորական, որ արեգակն իմաստութեան էր, եւ հայր լեզուաց, եւ լուսաւորել էկեղեցոյ որդոյ . . . վէմ անդամանդեայ . . . հրեշտակ երկրաւոր էր՝ եւ փայլակն երկնաւոր . . . նմանող Քրիստոսի էր՝ Լ գաղտնիք բրեւոյնն ինն . . . բարձրացուցիչ եկեղեցւոյ . . . վահան արդարութեան . . . զարգարիչ եկեղեցւոյ. որ բերան սոսոստայնն էր՝ եւ լեզու հոգւոյն սրբոյ, որ գտիչ կորուսելոց էր՝ եւ

ձեռնառու մոլորելոց . . . քննիչ աշխարհի էր եւ խաղաղացուցիչ քաղաքաց, որ նաւաւար խմատուն էր՝ եւ նաւ հովանաւոր . . . եւ այլն՝ (Թղթ. Գիտնէ. առ Տիմ. ) :

Նոյնպէս Լատին եկեղեցւոյ աստուածաբան հին վարդապետներուն մէկուն գրածն ալ մէջ բերեմք, որ սուրբ կը ածեն հռովմէականք. այն է երեւելին Ամբրոսիոս, որն որ Պետրոսի հետ հաւասար կը բռնէ Պօղոս սրբազան Առաքելալը, Հոգւոյն սրբոյ գրած՝ ճառին մէջ, ըստ այնմ (36). «Ոչ Պօղոս ստորին է քան զՊետրոս. Պօղոս աւետ, ո՛չ է անարժան ընկերութեանն Առաքելոց, ըստ առաջնոյն (Պետրոսի) քաջ հաւասարի, ոչ միում՝ չաւեր (Առաքելոց) է ստորին» (Յղգս. Հոգ. Սրբ. Գրք. Բ.) : Գուցէ այս Հայրապետն ալ այժմ հերեւաիկոս կամ բողոքական համարին հռովմէականք քանզի Պօղոսը Պետրոս Առաքելալին հետ հաւասար կը բռնէ կոր :

Նոյնպէս մեծն Խոսրով ՚ի Մեկնութեան Ժամագրքի էր. 52 (37). «Գլխաւոր Առաքելալ կանուանէ զնա . Յոհաննու եւ Յակոբայ Տեառքնեղբօր հետ : Եւ Յայսմաւուր դեկտ» Ի՛շ գովութեամբ կը գրէ (38) «Պօղոս փառն Տարսունացի՝ բերան Յիսուսի՝ եւ լեղուն Գրիստոսի. . . Պօղոս՝ արեգակն մտաց եւ լոյսն աչաց վարդապետաց : Պօղոս՝ ջանն էկեղեցւոյ եւ հի՛մն հասարոյ» : Նոյնպէս եւ Պօղոսի համար կերդէ Հայկական Մ. եկեղեցին, հաւասար Պետրոսի հետ Լուսաւորիչ աշխարհի ընդունելով (39). «Որ երկօքումք

ընտրելովք լուսաւորչօքն աշխարհի հաստատոն-  
ցեր զեկեղեցիքս քս քրիստոս. մաղթանօք սոցա  
խնայեա 'ի մեզ' (Շրկ.)

Եւ Ս. Ներսէս Լամբրոնացին Պետրոսը Պօ-  
ղոսին հետ հաւասար գլուխ կը ճանչնայ Առա-  
քելոց: Ըստ այնմ. (40) «իսկ քիստոս աստեւոյն  
Պետրոս եւ Պօղոս՝ յորժամ բաժանեցին զաշխար-  
հս 'ի քարոզել, Պօղոս 'ի հեթանոսս, եւ Պետ-  
րոս 'ի հրէայս, եւ այլն. (Գնն. եւ Հաստ. Հարցն  
Աւանդ. Եր. 64. Տխլ վէճէտ.) : Եւ ո՛ւր թո-  
ղանք ինքն Ս. Պօղոս համարձակ կը գրէ իրեն  
համար, ըսելով (Ըստ Յունին) թէ՛ «Ոչինչ խիք  
պակաս իցեմ՝ զԾայրագոյն Առաքեալսն» :  
(Երկ. Կորն. ԺԱ. 5. ԺԲ. 11.)

Նաեւ նախնիք մեր՝ Պօղոս Սրբազան Ա-  
ռաքելայր Պետրոսի հետ հաւասար «Գլխաւոր  
առաքելայք» կը յիշեն. ինչպէս որ Տօնացոյցին,  
Շարահանին եւ Յայամաւուրքին մէջը (41) «Կա-  
նոն գլխաւոր առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի»  
եւ կամ «Տօն գլխաւոր Առաքելոցն Պետրոսի եւ  
Պօղոսի» : Նոյնպէս եւ Յայամաւուրքն ըստ Կիւ-  
րակոսի Արեւելցւոց կամ Երզնկացւոյ՝ գրի  
այսպէս (42) «Տօն գլխաւոր Ս. Առաքելոցն  
Պետրոսի եւ Պօղոսի». եւ սկիզբն, «Գլխաւոր եւ  
Տէ՛՛ Առաքելա՛ն քրիստոսի Պետրոս եւ Պօղոս  
քարոզեցին զաւետարանն փրկութեան ընդ տիե-  
ղերս ամենայն, եւ հաստատեցին զեկեղեցիս  
կարգօք եւ կանօնօք, եւ այլն» (ըստ ձեռ.) Այս  
նախնեաց վկայութեան ոգւոյն հակառակ՝ Հայր

Գարբրիէլ Աւետիքեան վարդապետը, (Բացատ-  
ճրկ. Եր. 130), նախնեաց այս հարազատ գրք-  
ուածոց դէմ խարդախութեամբ այսպէս կը  
գրէ. «Կանոնն Պետրոսի եւ Պօղոսի», որն որ  
հաւատարմութեան դէմ է, ըստ որում բո-  
լոր ձեռագիր եւ տպեալ Շարականները եւ  
Տօնացոյցները ու Յայամաւորները ամենքն ալ  
«Գլխաւոր Առաքել» կը կոչեն Պետրոսի հետ հա-  
ւասար, ինչպէս գրինք օրինակները:

Նաեւ ասոր պէս ալ Սուրբն Յօհանն Ռսկե-  
րերան՝ ընդդէմ այժմեան նոր գրութեան Պա-  
պականաց, Պետրոսը Յովհաննէան ու Յակոբոս  
առաքեալները հաւասարապատիւ գլխաւոր Ա-  
ռաքեալներ են կրսէ Մատթէի մեկնութեան  
Այլակերպութեան ճառին մէջ (43) «Եւ արդ-  
առաքել շէնքոսն հանէ ՚ի լեառն ՚. . . ընդէ՞ր,  
ասէ, զնոսա առնուցու, քանզի նոսա քան Ա-  
ռաքելն առաքելոցն էն», Պետրոսի կարի սի-  
րոյն յոյա առնէ զառաւելութիւնն, եւ Յովհան-  
նու այնու՝ զի ՚ի նմանէ կարի սիրէր, եւ Յա-  
կոբոս՝ ՚ի պատասխանւոյն զոր արար եզրարքն  
հանդերձ թէ՛ կարեմք ըմպել զբաժակն» :  
Նոյնպէս Ս. Եպիփան Պետրոսի՝ հետ հաւասար  
գլուխ կը դաւանի, ըստ այնմ (44) Հրամանա-  
Հոգւոյն Սրբոյ հարցանելով Պետրոսի եւ Յով-  
հաննու քիւնքոսն եւ՛ այլն», (՚ի ճառն.  
վեր. Աստուած.)

Ասոնց պէս ալ Յակոբ Ալիեանին, ի Յուդայ  
Յակոբեանին (այսինքն Թաղէս Սրբազան Առաք-



նախին) համարալ կըսէ Ս. Մովսէս Խօսրենացին 'ի Շարականի (45). «ի մաքրագործ հոգւոյն անօթ ընտրեալք եւ ձիւնափայլք, Լուսաբեր երկրէ էլիւնս՝ աշխարհի» : Յայտնի է որ ընդհանուր եկեղեցւոյ հոգեւոր իշխանութիւնը եւ թագաւորութիւնը կը նշանակէ, հակառակ անոնց դըրութեանը, որ ուրիշ Առաքեալները եւ անոնց յաջորդները, այս շնորհներէն զրկելով՝ միայն Ս. Պետրոսի եւ անոր յաջորդացը վրայ կը բեռցընեն. երբոր այս բանը չէին ըրած, նախնի եկեղեցւոյ սահմանադրութիւնը վեր 'ի վայր դարձնող անհաւատարիմ մշակներուն չէին նմաներ ու Աստուծմէ կը վարձատրէին . . . :

Եւ կըսեմք, ըստ Հռովմէական դրութեան, այս վերոգրեալ վիպութիւնով Հայոց Ս. եկեղեցին ալ բողոքելու եւ պահանջելու էր ընդհանուր եկեղեցիէն մինչեւ ցարգ, թէ մեր Ս. Թագէտս Առաքելոյն համար նախնի Սրբազան հարք՝ Յակոբ Տեառնեղբոր հետ «թագաւոր եւ իշխան» կը կոչեն, պէտք չէ՞ որ դուք ալ գլուխ եւ պարանոց խոնարհեցնելով հնազանդիք եւ հպատակիք թէ՛ Երուսաղէմայ եւ թէ՛ Հայաստանեայց եկեղեցւոյ Աթոռոց եւ անոնց Առաքելական յաջորդներուն :

Բայց կ'ըսեմք խոնարհաբար, թէ՛ Հայոց Ս. եկեղեցիին զալով, չը վախճան, ըստ որում պահանջելիք մը չունի ուրիշ եկեղեցիներէն այդպիսի մէկ հպատակութիւն մը, ինչպէս որ կը պահանջէ Հռովմ, քանզի գիտէ Հայոց սուրբ

եկեղեցին, նոյն տիաղոսներուն ի՛նչ արժէք ունե-  
նայր, ըստ որում ոչ Աստուծմէ հրամայուած  
պատուէր մը, եւ ոչ ալ Աւետարանական վար-  
դապետութիւն մըն է, այլ յարդական գրու-  
թիւններ են:

Ահա ասոր պէս ալ մեր Բարթուղիմէոս Ա-  
ռաքելոյն համար «Գլխի առաւելոյ» կը կոչեն  
մեր նախնիքը, ըստ այնմ (46) «Եւ մի ոմն յԱ-  
ռաքելոց Սրբոց ՚ի Բեռնոցն Բարթուղիմէոս՝ ոչ  
ժամանեաց ՚ի ննջումն Աստուածածնին»: (Յայ-  
սըմ . Օդոս», ԺԵ. ՚ի փոխումն Աստուածամօր.) :

Եւ Աւգերեան Հ. Մ. ՚ի վարս սրբազան Ա-  
ռաքելոյս, առնելով ՚ի Յունաց նախնի երեւելի  
մատենագրաց՝ կը գրէ (Ի Ման. անդ. Եր. 472)  
այսպէս (47): «Սուրբն Թէոդորոս ի յառաջարան  
ներբողին իւրոյ մեծացուցանէ զփառս առաքե-  
լոց երկոտասանից, եւ զԲարթուղիմէոս վեցե-  
րորդ կամ եօթներորդ թուեալ ըստ դրոց՝ դո-  
վէ իբրեւ միջաձայն ՚ի քնարո, եւ որպէս բազ-  
մախորհուրդ թիւ վեցեակ եւ եօթնեակ. ապա  
ընդ Պետրոսի եւ Յովհաննու ցուցեալ արժանի  
գովութեան, ասէ. Պետրոս ուսուցանէ զազգս,  
եւ Բարթուղիմէոս զուղապէս. գեղեցիկ են՝  
ուր Պետրոսի Աւետարանչի եւ այլն բարու-  
թեանց. եւ Բարթուղիմէոյ նոյնպէս պանծալիք-  
որ բարձրագոյնս խօսի զԱստուծոյ. Պետրոս  
դորժէ նշանս մեծամեծս, այլ եւ Բարթուղի-  
մէոս ասնէ սքանչելիս զօրաւորս: Պետրոս գըլ-  
խիվայր խաչի, այլ եւ Բարթուղիմէոս՝ այլ

օրինակ տանջանաց ժուժկալեալ՝ յետ կենդանս  
 ւոյն մտրթեղերծ լինելոյ զլխատի . . . : Արդ  
 ոմն յԱռաքելոց աստ եւ ոմն անդ կալաւ բզ-  
 մասն տիեզերաց 'ի քարոզութիւն Աւետարանին :  
 զի կացուցես զնոսա՝ ասէ զիր՝ իշխանս ընդ ա-  
 մենայն երկիրս եւ որում յարդիս դովի հռչա-  
 կաւ, վիճակ եւ բաժին եղեւ Հայաստան աշ-  
 խարհ, ձգեալ յեւրատայ մինչ ցԳարբառն՝ 'ի  
 բազում ազդս եւ 'ի քաղաքս բաժանեալ . . .  
 եւ այլն : Կարգա բովանդակն անդ :

Ահա այս երանելոյն թէոզորոսի գրութե-  
 նէն հասկցուեցաւ՝ թէ նախնի հարք եկեղեց-  
 ւոյ ո՛րքան եւ ճշմարիտ դովութեամբ միանդա-  
 մայն հաւասար բռնելով Պետրոս Սրբազան Ա-  
 ռաքելալը մեր Բարթուղիմէոս Սրբազան Առաքե-  
 լոյն հետ կը պատուեն եղեր, եւ 'ի մէջ աշխարհի  
 ալ, եւ եկեղեցւոյ մէջ հոգեւոր երկու իշխան  
 կ'ընդունին եղեր, այսինքն Պետրոս Անտիսթայ  
 կամ Արեւմտեան, եւ Բարթուղիմէոս Արեւելեան  
 կամ Հիւսիսային կողման աշխարհի, յորմէ հետե-  
 ւարար բացայայտ կերելի թէ՛ առաւելագոյն  
 իշխանութիւն եւ պատիւ ունի եղեր Հայաս-  
 տանեայ Ս. եկեղեցին՝ Հռովմէական եկեղեց-  
 ւոյ նման՝ 'ի մէջ կաթուղիկէ եկեղեցւոյ. ուրե-  
 մըն կենթադրուի թէ՛ չունի եղեր կարօտու-  
 թիւն իրր ստորին վիճակ եւ աթոռ մը՝ որով  
 կարօտի այլոց Առաքելական աթոռոց եւ կամ  
 ժողովոց դիմել եւ ընկալնուլ Պատրիարքական  
 իշխանութիւնը, ինչպէս որ այժմ այնպէս կը

ձեւացնեն Հառվմի շողոքորդները՝ մեր Ս. Լուսաւորչի Պատրիարքական իշխանութեանը համար. բնդ-հակառակն իրենց նոր հրատարակած խաբէրայութիւնները՝ իրենց այժմեան նոր գրութեանցը դէմ ելաւ. սոյն հետաքրքրական վկայութեամբ, որ 'ի նախնի հարց գրուածոց անտի հաւաքելով գրեր է գործին մէջ Հ. Մ. Աւգերեան, եւ միանգամայն հեղինակն ալ սուրբ կոչելով, որով ըսել կըլլայ թէ իւր ներքին համոզումն ալ այնպէս է եղեր Հ. Մկրտիչին:

Նշնալէս եւ Սուրբն Ներսէս Լամբրոծնացին, Հոգեգալստեան ճառին մէջ Առաքեալները բոլորը մէկտեղ հաւասարապէս «Թաղաւոր» կանուանէ, եւ ոչ Պետրոս Սրբազան Առաքելոյն նախապատուութիւն մը եւ ոչ ալ մասնաւորապէս Առաքելոց գլուխ ըլլալու նշմարանք մը ցոյց կուտայ, ըստ այնմ (48). «Յայնժամ առեալ Միածինն զՄխիթարիչն ցօղեաց 'ի Սաղիմ', եւ ձիւնացոյց 'ի նա զհոռութեւն Բռնորան' (այսինքնն զԱռաքեալն) ըստ նախադուշակ երգողին: Որ եկն եւ բնակեցաւ 'ի սիրաս նոցա, (Ս. Հոգին) եւ լուսաւոր արար զլայնութիւնն եւ գերկայնութիւնն առաւելութեան սիրոյն Քրիստոսի» եւ այլն:

Երանելին Եղիշէ սուրբ վարդապետնիս Ս. Երակերպութեան ճառին մէջ Առաքելոց համար կը գրէ (49). «Աստուած զբոլոր աշխարհս արար եւ ես մեզ, եւ երախտիս ինչ ոչ համարեցաւ մեզ, քայց միայն ճանաչել զնա եւ զհետ երթալ կա-

Մայ նորա Պարտիզից շահեցան զանեանք իւր հասարակաց շնորհաբար զամենայն աշխարհ, յորժամ Աստուծով առնիցեն զամենայն մեծամեծս վարդապետին իւրեանց՝ ծածկագլտին միայն աւանդեացեն զխորհուրդսն : (Մով. հար. ԺԼ. 45) : Եւ Բարդուղիմէոս սրբազան Առաքելուն վկայաբանութեան սկիզբը ճառընտիրին մէջ բոլոր է երկոտասան Առաքելները գլխաւոր կը կոչէ ըստ այնմ (50) : «Գլխաւորք սրբոց Առաքելոցն, երկոտասան Աշակերտքն վիճակեցան յազգս ազգս : յիշանելն ՚ի նոսա Հողոյն սրբոյ ՚ի վերնաստունն» : (Ճառընտիր. ատն նաւե Մով. Հայկ. հար. ԺԲ. եր. 5 տիպ վննեւտիկ) :

Եւ Ս. Կիւրեղ Երուսաղէմացին ալ ամեն մէկ Առաքելները Գլխի և առջին եղիսիոսականութեան, ըստ այնմ (51) : «Երբ իմաստուն իմաստնադոյնք եւ լուսադոյնք էին Առաքելքն՝ Առաջին եղիսիոսսն՝ որ Գլխի եղեցեացն էին, որ զայս հրամանս ետուն եւ այլն» : (Կոչումն Ընծ. հին տիպ Պոլտոյ, եր. 83 : Տիպ վիճենա եր. 70) : Գուցէ այս սրբազան Հայրապետն ալ հռովմեականաց առջին մեզ նման հերետիկոս եւ կամ բողոքակրօն պիտի դատուի, բայց Առաքելները՝ Պետրոսի հետ հաւասար Գլխի և Ա. եղիսիոսս դաւանելուն համար . . . :

Եւ Չամուրճեանը իր Չօհուն մէջ միայն Պետրոսի կապելու եւ արձակելու իշխանութիւնը հաստատող երկոտասաներորդ վկայութիւնը բե-

բած է. բայց Սրբազան Հարք Շարականին մէջ  
բոլոր Առաքեալները այս իշխանութեամբ պատ-  
ուեալ կը ցուցունեն (52). «Որո՞ւմ է ինչպէս ինչպէս  
'է վերայ ոչ ոք չարիքն ինչպէս և արձակել 'է յերկինս և  
'է յերկրէ», Ս. Աւետարանին այն խօսքէն առնե-  
լով, որ դրած է. «Եւ վիշեաց 'ի նոսա եւ ասէ,  
առէք զՀոգի Սուրբ. եթէ ումք թողուցուք  
զմեզ թողեալ լիցի նոցա, եւ եթէ զուրուք ու-  
նիցիք կալեալ լիցի»: Եւ Ս. Շարական (53). «Հա-  
ղարապետք աստուածային խորհրդոց եւ բա-  
ցողք դրանն Սրբայութեան երկնից» կանուանեն  
սրբազան Առաքեալք. ինչպէս Ս. Լուսաւորիչ  
հայրն ալ կը վկայէ թէ (54). «Տէրն եւ Առաքելոցն  
զինչանս Արարչութեան 'է յերկինս, զի ինքն իսկ  
Աստուածորդին էր դուռն մտողացն» (Աղ. 197):

Այսպէս ալ Ս. Կիպրիանոս կը հաստատէ (55).  
«Փականքն ոչ որոնան նա (Պետրոսի) զայնակ, այլ  
զնորութեան եկեղեցոց»: Եւ վերջապէս Շարականին  
մէջ Ս. Մովսէս խորենացի հայրն մեր կը գրէ (56).  
«Որ ուրիշան ինչպէս ինչպէս հաղորդու արարելը զսուրբ  
զԱռաքելութեան ինչպէս և արձակել զորդին յարդարան 'է յերկինս  
և 'է յերկրէ, և արձակել ինչպէս և արձակել ինչպէս յոր-  
ժամ նստցիս յԱթոռ դասողական». Ահա ասոր  
պէս ալ 'ի Շարականի բոլոր Առաքեալները մեկ-  
տեղ (57). «Առաքեալք Աստուծոյ ինչպէս հասարակ  
իմաստներէ եկեղեցոց . . . բարեկամք թրխատոսի եւ  
հաղարապետք աստուածային խորհրդոց . . .  
եւ յարարելու որեւէրոց . . . և որոնարդ ունեւ

«ԳԵՆԵՆ» եւ այլն կանուանեն մեր սրբազան նախ-  
նիքը, հաւատար Պետրոսի հետ բռնելով եւ այլն  
եւ այլն: Այս խնդրոյս վրայ շատ վկայութիւն  
բերելու կարօտ չենք, քանզի Բ. Մասին մէջ  
տեսանք . . . :

Ն. Եւ այս տեսակ գերածայրեալ իրաւացի վեր-  
տառութիւններ եւ արժանաւոր տիտղոսներ ոչ  
միայն Առաքելոց արուած են 'ի նախնեաց' այլ  
ամենայն միճակի Առաքելա կան յաջորդաց ալ  
անխախտ շնորհուած է լուս արժանաւորու-  
թեան անձանցն. զոր օրինակ: Դաւիթ Անյաղթ  
սուրբ վարդապետն մեր կը գրէ՝ Ս. Բարսեղ կե-  
սարու հայրապետին համար այսպէս (58). «Սըր-  
բոց արանց աստուածազգեցից սովորութեամբ  
առեալ 'ի միմեանց հողային հանապազ զեկե-  
զեցին Բրիտանոսի, որպէս եւ սուրբս այս յորդիս  
եւ 'ի Բլաւն Եկեղեցոյ Բրիտանոսի Բասիլիոս» ('ի  
պատճառ գրոցն): Նոյնպէս Շարականը կը գրէ (59)  
«Բրիտանոսազօր զինուորացն համախմբող 'ի հո-  
գեւոր պատերազմին, «իւն հասարոյ հասարոսեան  
եւ առջնորդ բարեկան 'ի կեանս' երանելն Բասիլիոս»: Եւ  
Ս. Մեծն Ներսէս հայրապետին համար ալ գրուած  
է Շար. (60). «Հայաստանեայց լուսաւորչի, արի  
եւ քաջ հովուապետի ընդբեւլ 'ի Բլաւն հօրէն Բրի-  
տանոսի: Եւ (61). Բահանայպետ ընդբեւլ արժանապե-  
շնորհօ հօգոյն» եւ այլն: Այս վկայութիւնը ընդ-  
գէմէ վէճնեւկու վանքէն հրատարակուած ան-  
ճոռնի պարսաւազրքին . . . :

Եւ Ս. Նիկողայոս զԶմիւռնացի սքանչելա-

գործ հայրապետին վարուցը համար ամենափա-  
 ռաւոր կերպիւ դրած են նախնի սրբազան հարք,  
 ինչպէս որ մեր քովը գտնուած հարազատ օ-  
 րինակէն զատ, այլ եւ Հ. Մկրտիչ Աւգերեան  
 Մխիթարեան վարդապետը՝ իր հաւաքածոյ  
 Վարք Սրբոցին մէջ, հար. թ. եր. 307, կը գրէ  
 այսպէս(62). Չամենայն սուրբս եւ զերջանիկ ընտ-  
 րեալս Աստուծոյ գովելէ եւ պատուել ամենե-  
 ցուն արժան է, եւ զյիշատակս նոցա գովասա-  
 նութեամբ կատարել, ըստ ասելոյ Աստուա-  
 ծահօր մարգարէին Դաւթի, թէ Յիշատակ յա-  
 ւիտենից եղիցի արդարն, առաւել զայնոսիկ՝ որ  
 քան զայսն բանիւ եւ գործով վայելչացեալք  
 են, եւ մեծամեծ նշանօք եւ արուեստիւք տա-  
 կաւին եւ այժմ՝ պայծառանան, եւ ՚ի նոցանէ  
 դարձեալ զայնոսիկ, որք նշանաւորք են եւ պայ-  
 ծառագոյնք, եւ զմարդ կային օգնականութիւն  
 եւ զԱռաջնորդութիւն յԱստուծոյ առաւել ըն-  
 կալան, խնամակալք եւ ապաստանք կենաց մե-  
 րոց, յորոց է Ե Գլուխ Ե Առաջն քան զայս, մեծս  
 այս եւ լսաստորիչ Գահանայապետ Աստուծոյ, սքան-  
 չեւագործութեամբ հռչակաւորս, եւ առաջնոր-  
 դութեամբ համբաւեալ, զի Ե Բողոքստանն անուն.  
 արագահաս օգնական, որ ՚ի ծագած մինչեւ ՚ի  
 ծագս աշխարհի քարոզելով մեծանայ եւ միառա-  
 ւորի Նաեւ ամենայն աշխարհ որ զինի նորա  
 մեծի առաջնորդութիւն երթիցեն, առատապէս  
 ՚ի խնամս նորա վայելեն, ամենայն ազգ եւ լե-  
 գութ եւ ամենայն հասակ, եւ ամենայն որդիք



մարդկան օգնական զառ եւ փրկիչ 'ի վիշտս եւ  
 'ի նեղութիւնս անկեալ կամ 'ի վիշտս ծովու, եւ  
 ապաւինեալ առ Մեծն 'իկողայոս, եւ զնա միջ-  
 նորդ առ Աստուած արկեալ, եւ ո՛չ խնդրուած  
 ծայն ամենայնի վաղվաղակի կատարումն ընկա-  
 լաւ. կամ ո՞վ որ 'ի բանտի կապեալ եւ զնիկո-  
 ղայոսի կարգացկալ զանուն ոչ արագապէս արբա-  
 մութեան լուծումն ընկալաւ, հանապազօր  
 հանդիսի Աստուծոյ, վասն այնոցիկ՝ որք ազա-  
 ղակեն առ նա 'ի նեղութիւնս. յամենայն մա-  
 սունս բարեգործէ, եւ զնոյն առնել վիշտ ոչ  
 դադարէ. քանզի 'թէ եւ 'ի պատկերս նկարագ-  
 ըի, կամ աղօթիւք յիշեալ լինի, եւ թէ միայն  
 անուամբ կոչեացի՝ ժամանէ ամենայն ուրեք,  
 սքանչելագործէ հանապազ. օգնէ իւրաքանչ-  
 իւր ումեք անպակաս. որք 'ի նեղութիւնս են՝  
 վերակացու լինի, որք 'ի տրամութեան են՝ ազա-  
 տիչ ամենեցուն հանապազ հասանէ, զամենե-  
 սին կեցուցանէ, եւ այն եւ այն : Այս վկայու-  
 թեամբ յայանի է թէ՛ չի զօրեր փաստն պա-  
 պականաց մեր Նախնիքը՝ իրենց Հռովմայ հայ-  
 րապետներուն յարդական գրութիւններ գրել-  
 նուն համար, եւ անոնցմէ հետեւութիւն հանե-  
 լով՝ իրենց հայրապետը Տիեղերական գլուխ կո-  
 չել, կարծեմք այս կերպով վկայութիւն մ'ալ  
 շունին իրենց Հռովմայ հայրապետին վրայօք. . . :

Նոյնպէս նամականիք Սրբոց հարց՝ որք կը  
 գրէին միմեանց, այսպէս ունի օրինակ, Ս. Կիւր-  
 շի Աղէքոանդր հայրապետին առ Գոմնաս հայ-

բապեա՝ Անախարու գրածը (63) «Սիրելի Տեա-  
ռըն իմոյ, եղբայր ե- գուշո՞ն-ի՞ց Դոմնասիդ՝ կիւ-  
րեղս՝ ՚ի Տէր խնդալ» (ի գործոց Քաղկեդոնի  
ժողովոյն, Գրծ. ԺԷ. Չեռ.) Տե՛ս հաւասարու-  
թիւնն եւ համապատուութիւնը նախնի Սրբա-  
ղան հարց, որ մինչեւ անդամ ո՛չ միայն եղբայր  
եւ գուշո՞ն-ի՞ց կանուանեն եղեր զմիմեանս,  
այլ եւ Տե՛ռն է՞ն, կը գրեն եղեր խոնարհու-  
թեամբ:

Նոյնպէս եւ Սրբոյն Պրոկղի կոտանդնու-  
պօլսոյ Հայրապետին առ վերոյիշեալ Դոմնաս  
Հայրապետին՝ գրածն է այսպէս. «Ամենասուրբ  
եւ գեր ՚ի վերոյ Աստուածասէր եւ գուշո՞ն-ի՞ց  
Դո՞ն-ի՞ց Պրոկղս ՚ի Տէր խնդալ» (Անդ. Գրծ. ԺԶ  
Քաղկեդ. ժողովոյն. Չեռ.) Ասոր ալ բացատ-  
րութիւնը ինքնին յայտնի է, որպէս եւ վերը  
համառօտապէս բացատրեցինք.

Սոյնպէս եւ Մեծն վարդան վարդապետն՝  
Ս. Լուսաւորչի համար կը գրէ (64). «Գրիգորիոս  
Հի՞ն հո՞տոյ, «եւն ինչե՞նցոյ, յարգել Արտաճա-  
րո՞ւր իր՞նց, յարացոյց անարատ քաղաքապօրու-  
թեան ըստ ֆրիստոսի, . . . Գրիգորիոս համա-  
պրնունդ հրեշտակաց. հո՞տոյ-ի՞նք ինչե՞նց երջանից  
(այսինքն Առաքելոց), անուանակիր պետու-  
թեանց, իշխանակից իշխանութեանց, զօրակից  
զօրութեանց, Գրիգորիոս գուշո՞ն-ի՞ց Մերձե՞նց, հո-  
ւրդո՞ն-ի՞ց ֆերձե՞նց, հանդիստ եւ Աթու Սրբոյ  
կրրորդութեանն» (Սոյի. Ե. Եր. 80): Եւ ահա՛  
տեսնուեցաւ, որ ոչ թէ Պետրոս առաքելոյն

նման թիւան հասարոյ, Սիւն Եկեղեցոյ եւ այլն կը կոչէ, այլ Նման Գրիգորոսի եւ համապարէն Առաքելաց եւ Անու Սէբոյ Երբրոս-Յեանն. ուրեմն անտեղի է միայն Պետրոս անուանել Վէճ եւ Սիւն հասարոյ, այլ եւ բոլոր Առաքելաք ընդ նմին եւ երեւելի Սրբազան Հայրապետք ալ Վէճ էն եւ Սիւն Հասարոյ հասարոս-Յեանն, իւրաքանչիւրոց արդեանցը համեմատ:

Իդնաթիոս վարդապետ Մեկնիչն Ղուկ. կը գրէ առ Գրիգոր կաթուղիկոս այսպէս (65). «Ով Գրիգորիոս, Գահանայապետական զլուսի» ի յանաջարանութեան եւ մեր Ս. Լուսաւորչին համար նախնիք մեր ՚ի շարականին կը գրեն այսպէս (66). Սրճար ճշմարիտ Ասորոսաճայնն օրինացն եւ հասարոս-Յեանն հասարոյ Աղբի հարդան Տէր Ս. Գրիգոր . . . (67) «Ընդրեալ յԱսորոս-ճոյ Գահանայապետ ճշմարիտ . եւ Հովիւ հոգեւոր բանաւոր հօտի Տէր Ս. Գրիգոր . . . (68) «Պսակ վայելլա-Յեանն Եկեղեցոյ Գրիգորոսի եւ Առաջնորդ կենացն յաւիտենից Տէր Ս. Գրիգոր» . . . (69) «Գեւ սղայճ առացան եկեղեցիք Գրիստոսի» . . . (70) «Առաջնորդ հաւատոյ եւ Լուսաւորիչ անձանց մերոց Տէր Ս. Գրիգոր . . . եւ այլն եւ այլն»:

Եւ ասոնց պէս ալ մէկզմէկու գիր գրած ժամանակնին գերածայրեալ ամականներով կը պատուէին մէկզմէկ մեր նախնիքը, եւ ոչ միայն Հռովմի Հայրապետներուն կը գրէին՝ ի՞նչ զի զի յիւն Եկեղեցայն հնագանդոս-Յեանն ցարցնելով, ինչպէս

կերպով է. Պալճեանը իր Աթոռ Պետրոսի մատ-  
 եանին Յաւելու ամին մէջ, իրեն պէս մուրամիտ-  
 ներուն գրութեանէն առնելով... Այլ ահա անոր  
 գրութեանը հակառակ միւս Աթոռոց Հայրապե-  
 տաց ալ մեր նախնիքը գերագրական ածական-  
 ներով եւ միանգամայն հարկէ եկեղեցւոյ անուանե-  
 լով դրած գրութիւններէն մէկ քանին հոս կը  
 դնեմք, որ թէ իրեն եւ թէ իրեն նման մուր-  
 եալ ու գայթակղեալ միտքեր կան նէ բժշկը-  
 լին, եւ այն Հռովմի գրուած գրութիւնները, որ  
 վերջին դարերը գրեցին մեր կաթողիկոսուն-  
 քը. մասնաւոր մարդոց գրութիւնները ըլլալէն  
 զատ, (ըստ որում Հայոց ազգը իր Հայրապետը  
 անտալ դատաւոր չը ճանչնար), այլ եւ ինչ  
 քանի համար, եւ ս'րայիսի թշուառ ժամանակի  
 մէջ գրեւորին՝ միւս մասերուն մէջ պիտի ապա-  
 ցուցանեմք, որ ճշմարտութեամբ է. Քրիստոս է. Պալճ-  
 եանը նոյն նամակներուն միայն վերնագիրները  
 դրած է, եւ մէջի եղածները, որ իրեն Հռովմի  
 աթոռին եւ իրենց նման ազգակործան միաթ-  
 նարաց ճշմարտութեամբ չը բերելուն համար  
 անոնք զգուշութեամբ (կարգա՛ խարդախու-  
 թեամբ եւ խոհեմութեամբ) մը ծածկած է, որ  
 եղած քրիստոսները խափանուի:

Ս. Յոհանն Ռսկեբերան Հայրապետը՝ մեր  
 Ս. Լուսաւորչին համար շատ դուխտներ դրած  
 ըլլալէն զատ, այլ եւ Ս. Պետրոսի եւ Պողոսի  
 հետ հաւասար դասելով այսպէս կը գրէ (71).  
 • Բազում եւ այլ եւս է սորա առաքինութիւնս.

Հասարակական (չհասարակական) Պետական Եւ Պետական զի որպէս նորա մեծաջան առաքինութեամբ զաշխարհս Արեւմտից դարձուցին ՚ի կրօնապաշտութենէ յԱստուած դիտութիւն, այնպէս եւ Երանելիս այս շնորհաւոր Արեւելոց բարոյականութեան հետեւեալ . . . . . Լուսաւորիչ Հայաստանեայց եւ հիմն հասարակական Հասարակ, Առաքելաբարիստասի եւ Առաջնորդ մարդկան (եղեւ), Անուանեամ զԵրանելիս զայս Առաքել, որպէս եւ եւեւ Առաքել, քարոզելով զԱստուածն ճշմարտաւ :  
 (Մ.Պ. Սոսիեր, չ. Հայկ. Հար. Դ. ԵՄ. 92. 94. 96.) :  
 Եւ Երուսաղէմի հայրապետութիւնը միւս Աթոռներէն աւելի ակնածելի եւ դեր ՚ի վերոյ ըլլալը մինչեւ հինգերորդ դարուն սկիզբը Հրեոսովմայ հայրապետներն անգամ կը խոստովանէին իրենց դրութեանցը մէջ, ինչպէս որ 401 թուոյն Գրիգորոսի, Հռոմի Անաստաս հայրապետը Սրբոյն Յովհաննու Երուսաղէմի հայրապետին գրած վախադարձ դրութենէն ալ յայտնի է, որ Աւգերեան Հ. Մկրտիչը յիշեալ Սրբոյն վարուցը մէջ՝ Ս. Հերոնիմոսէն եւ Ժողովոյ պատմութենէն առնելով՝ կը գրէ այսպէս (72). «Ապաքէն բարեսէր կամաց է դորձդ, զի գովութեամբ խօսիս բարեպաշտութեան (այս տեղ հասարակատիւ ըլլալնին կը յայտնէ), եւ արդյաղադս բաղմապատիկ գովեստից. զոր յօրինեցեր ճօխաբար զիմոց ինչ արդեանց, որպէս շրնորհակալիք լինեցին քումք սիրոյ, նոյնպէս ճահողակի յանկեացի ՚ի Բրեւ Կրօնականութեան սի-

բով մասամբ պանծնացուցիչ լուսավոսյու թեան  
քումբ սրբութեան եւ առաքինութեանց՝ զորս  
յանձին բարձեալ բերես ՚ի անդի փանդի արդար  
բեւ. « այդ բերազանց ամենից, այնչափ արտավայ-  
լեալ ծագիս սլայծառութեամբ գովանի մա-  
սանց, զի չիք բան բաւական հաւատաւել արդ-  
եանց, իսկ որ առ ՚ի բն առիս մեծապարիս կոչմանս,  
այնչափ շարժեն զիմ սիրտ, չեմ իրբեւ զի եւ զոր  
բաւական արգեամբ կատարել, ոչ հեղղացայց  
՚ի նոյն անդր թեւակոխել. Սհա եւ այդ ՚ի  
քում գովութեան մասին է. զի զիս այնչափ գո-  
վեցեր երկնաբերձ վսեմութեան տարազու-  
ղանն զի այդ եղիսկոպոսանելան կարգ պայծառափայլ  
գոցեմ իմ ճամնչեալ ընդ ամենայն աշխարհս, ե-  
ռա մեզ յգրեցոյց ընչոյն ճառագայելից» : (Վրբ. Սրբ-  
բայ. Հոր. Բ. եր. 468) : Ուրեմն թող տեսնեն  
այժմեան Հռովմէասէրք եւ պապապաշաք թէ  
ի՞նչ ոգւով եւ ի՞նչ եղանակաւ կը վարուին ե-  
ղեր նախնի Սրբազան հարք, թէ երուսաղէմի  
եւ թէ Հռովմի, միմեանց հեա, սիրով եւ խո-  
նարհութեամբ եւ այլն :

Հինգերորդ գարուն վերջերը երանելին  
Ստեփաննոս Սիւնեցին Կ. Պօլսոյ Յունաց Գեր-  
մանոս Հայրապետին կը դրէ այսպէս (73) : Յող-  
նապատիւ հռչակելի վառաւորութեամբ յԱռա-  
քելան ժամանեալ յայրաբնոյն նոխագահանելան Տէր  
Գերմանոս վերադարձող հոգեւոյ մեծանուն թագա-  
ւորական քաղաքիդ Կ. Պօլսոյ եւ Տէրեղբորիան  
Հայրապետ : Ղբրիստոսի խաղաղութիւն առ բերե-

լով մեզ օրինակ բարեպաշտէ, առ միմեանս կան  
սրակցութեան, հոգեւոր սիրոյ եւ մութարանո-  
թեան հաւատոյ եւ այլն: (Թղթ: Ստեփ: Սկն:  
Եպիս: Պատմնի: Թղթոյն Գերմանոս Պարքի Կ:  
Պօլտոյ Չեռ: )

Արդ Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետնիս  
Յունաց Մերտյէլ Պատրիարքին 1178 թուին կը  
դրէ (74): Ողջ լի՛ր Գլուխի յեւ Գլխոյն Եկեղեցոյ (Այ-  
սինքն յետ Գրիստոսի: (Ընդհանրական)

Եթէ Հռովմի հայրապետին համար, սուրբ  
եւ Առաջն ամենայն եպիսկոպոսաց գրած է Շը-  
նորհալի հայր մեր (որն որ ստուգութեան կա-  
րօտ է), ապաքէն ուղիղ մտօք եւ լուսաւոր  
աչօք նկատել եւ կարդալ պէտք է այս վերո-  
գրեալ վկայութիւնը, չոր ոչ միայն Առաջն այլ  
եւ Յետ գլխոյն Գրիստոսի: Գլուխ Եկեղեցոյ կան-  
ւանէ Յունաց Պատրիարքը: Եթէ Առաջն կոչելով  
Հռովմի հայրապետը Եկեղեցոյ Գլուխ ըլլալու հա-  
մար վկայութիւն մը կը համարուի կոր նէ հը-  
ռովմեականաց առջին (ինչպէս կերպով ոչ միայն  
Հ. Պալճեանը, այլ եւ անոր արձագանքը եղող  
Պ. Չամուրճեանը) ուրեմն Ս. Ներսէս Շնորհալ-  
ոյն այս գրածն ալ պէտք է որ ընդունին Հռով-  
մեականք եւ հետեւաբար հարստակութիւննին  
ցուցունեն Յունաց Պատրիարքներուն, ինչպէս որ  
Հռովմի հայրապետին համար անակզի գրու-  
թեամբ մը կը պահանջեն ասանկ կարկատուն  
ձեռնարկութիւնննրով: Եւ աս ալ կրնամք Հ.  
Պալճեանին որ Եթէ Գրիգոր Գ. Ապիրատ կա-

Թուղիկոսը իննուկենտիս Գ. Պապին «Գլուխ յետ ֆրիստոսի» դրած է իր նամակին մէջը նէ, ահա անոր հակառակ մեր Ս. Ներսէս Շնորհալին ալ Յունաց Միքայէլ Պատրիարքին համար իր նամակին մէջը «Յետ ֆրիստոսի եկեղեցւոյ գլուխ» դրած է. թող երթայ բազդատէ ամբշնալով թէ Հայր Պալճեանը եւ թէ անոր համալիտ եղող Պ. Չամուրճեանը, թէ ո՞րն է ըստոյգ. ո՞րին հետեւելու է. եւ ո՞րին վկայութիւնը վաւերական է. տիեզերահռչակ Ս. Ներսէս Շնորհալւո՞յն, թէ Գրիգոր Զ. Ապիրատ կաթողիկոսին. գոնէ իրենց Հռովմայի դրութեամբը այս Գրիգոր Զ. Ապիրատ կաթողիկոսը հերետիկոս համարուելու էր (եւ անոր ալ գրքութիւնը իբր վկայութիւն մը բերելով Պապին գլխաւորութիւնը հաստատելու չէր) իր նախնաց հողին եւ ընթացքը չբռնելուն համար, ըստ որում Շնորհալին յառաջ է ժամանակաքան զԱպիրատ կաթողիկոսն, եւ միանգամայն տօնելի սուրբ մըն է:

Կը թողումք եօթներորդ Գրիգոր Մնաւարգեցի անարժան կախողիկոսին դրածը, որ իրեն դրութեանը իբր ապատանարան մը ըրած է Հ. Պալճեանը, երես 251, որուն համար իբաւական խօսուած է Ս. Էջմիածնայ Ազգասէր միաբան վարդապետներուն. մէկէն տես «(Պաշտպանութիւն Հայաստանեայց կաթողիկէ եւ Առաքելական Ս. Եկեղեցւոյ» ըսուած տետրին մէջ, երես 86) «Եթէ նախնեաց դրութիւնները



ուղղակի կամ անուղղակի կարդալ եւ մէջէն իր նայատակին վերաբերեալ մէկ վկայութիւն մը առնելով միւսներուն ու չ չդնող ու չընդունողը բողոքական եւ նախնեաց աւանդութեանը դէմ մարանչող կը համարուի նէ, ըստ գրութեան Պրուսացւոյն (ինչպէս որ իր սովորական՝ առարկան է), ապա ուրեմն իր վճռովը ինքն ալ եւ իրեն համախոհ եղող Հռովմէականներն ալ մէկտեղ բողոքական եւ կամ նախնեաց դէմ հակառակող են . . . որ իրենց բանին գալու անգը միայն կընդունին, եւ միւսները զանց կընեն, շատ յարմար կուգայ նարեկացւոյ Ս. Հօրը խօսքը, որ կը զուրցէ. «Ասեմ եւ ոչ առնեմ . . . զայլս խրատեմ եւ ես ինքնս անփորձ եմ . . . »

Եւ երանելին Պրոկղոս Կոստանդնուպօլսոյ Յունաց Պատրիարքը մեր Սահակ հայրապետին գրած ժամանակը բազում գովութեամբ այսպէս կը գրէ (75). «Երանի հանապազորդ լինիցին՝ ի քաղցրահայեաց տեսիլ աստուածազեղ երեսացդ, եւ զի՞ ասեմ հանապազ, այլ գոնեայ աւուրս կամ ամիսս կամ տարեկանս Սսացէ եւ եւ իմ անձն սառնացեալ. Ո՞րոնէր զի՞ որ ժամն է հասանել անկանել յոսո անորոնչիդ եւ ասել, մեղոյ յերկինս եւ առաջի քո եւ զի՞ որ ժամն է ինչ անորոնցոյց + որդի» (Թղթ. առ Սահակ կաթողիկոս) :

Սոյնպէս եւ Սկակիոս Մերլինոյ եպիսկոպոսը առ նոյն Ս. Սահակն գրած ժամանակը՝ ազգիս քահանայապետութիւնը այսպէս կը դըրուատէ (76). «Որ ամենայնիւ աստուածսէրդ եւ

եւ զի սրբաթեանք Տէր Եւ Գործակէց . Եւ երկ-  
 րորդ թղթին մէջ ալ ազգիս վարդապետներուն  
 համար կը դրէ (77) . Շնորհիւն Աստուծոյ սուրբ  
 եւ ճշմարիտ վարդապետն յեր հասարակուն և ոնչորժ  
 կան ՚ի վերայ հիման հասարակ , եւ ոչ տեղի ամն  
 յարկտակող դայլոյն : (Թղթ . Սկակիտսի առ Ս .  
 Սահակ) :  
 Եւ Ատտիկոս եպիսկոպոսն Կոստանդնու-  
 պօլսոյ , առ Ս . Սահակ հայրապետ մեր գրած  
 Ժամանակը իրեն ամօռակից կը կոչէ այսպէս (78) .  
 «Ատտիկոս ինքնազլուխ եպիսկոպոս Կոստան-  
 դընուպօլսի , Եգիպտոսի Եւ Երեսնակէց Մանակայ  
 եպիսկոպոսի Հայոց ՚ի Տէր խնդալ » : (Տես , Խո-  
 բենացի ՚ի պատմութեան հին տիպ հատոր Գ ,  
 երես 57) :  
 Եւ Աբղիսոյ եպիսկոպոսն Ստորոյ՝ առ Ներ-  
 սէս Շինող Կաթողիկոսն մեր գրէ այսպէս (79) .  
 « Հայր հօգ ևւ որ , կարգիչ իմաստուն , հովիւ ար-  
 թուն , անձն լուսաւոր , նահատակ արդարու-  
 թեան , Գանձաւոր արդար հասարակ , ընկեր Սասնիցոյ ,  
 հաւանար վարդապետաց : Եւ երկրորդ թղթին  
 մէջ ոյսպէս կը դրէ (80) . « Տղղախաւաց եւ  
 ճշմարիտ հաւատացելոց , ընկերոց Սասնիցոյ , եւ  
 հովիւաց ընտելոց՝ Տեսուն Ներսէսի կաթողիկո-  
 սի Հայոց մեծաց , եւ մեր Շապհոյ եպիսկոպոսի ,  
 Տարնոյ եւ Մամիկոնից եպիսկոպոսի » : (Սա-  
 հակոյց Պատ . ՚ի վէմն Հուանոյ եր . 608 ) :  
 Եւ Արեւելեան եպիսկոպոսն ըր նախադա-  
 հո թեանք Սիւնաց Ստեփան եպիսկոպոսին

հետ կը դրեն՝ իբր 1294 թուականին, առ Գրիգոր կաթողիկոսն հայոց, սքանչելի փառաւորութեամբ մեծարելով անոր կաթողիկոսական իշխանութիւնը այսպէս (81). «Յետ որոյ ծնրահանգոյց դադարեալ սղձունէ շէշ-եւ իւր պանծայի, զսխրատեսիլդ բնաւից, զքաջը եւ զնորոգ գերահրաշեալդ՝ ի հոգւոյն Գրիգորիոս հայր հանաւոց սեռիցս Հայկայ եւ կոթայի» Տէրեւհան . . . . կաթողիկոս լիցի Աստուածային Գլխոյ հայրապետութեանդ . . . . (եւ վերջը) Ողջ լեր թագաւորական արդասիրքդ՝ ծնողդ իմաստից եւ Մայրդ սպասելուս ազբիւրդ հաւատոյ, անլախ ախոյեանդ սուրբ եկեղեցւոյ, Գրիգորիոս կաթողիկոս հայոց, եւ Տէրն տէրանց հովանացի Տէրեւհան շէշ-եւ » :

Արեւելեան եպիսկոպոսք միաբաններ են Պետրոսի այժմեան յաջորդաց եւ անոնց ջատագովներուն փաստը տկարացնելու, որով ՚ի հարկէ հերետիկոսութեան մոլորած եւ իբր եկեղեցւոյ հերձուած կը պարսաւունին, ըստ որում այսպիսի գերադրական վերտառութիւնները Պապին վերապահեալ է, եւ միայն անոր կը վայէ կըսեն. եթէ չես հաւատար, կարգա՛ վենետիկու պարսաւագիրքը, որ Ֆահանայապետ վերտառութիւնը անգամ, որ մենք ՚ի նախնեաց անտի բուրբ եպիսկոպոսաց կըսեմք, անոնք կը պնդեն իբր թէ միայն Պապին կըսուի, եւ չամաչելով եւ կամ կամակոր սղ խառութեամբ եւ սրտերնին չտանելով, կըսեն թէ՛ մօտերս հայերն ալ իրենցմէ

սովրեւրով իրենց կաթողիկոսին ալ Քահանայապետ սկսան զբույնել, որուն պատասխանը Աստուծով պիտի տանք յառաջիկայ թերթերնուս մէջ:

Նոյնպէս այս նախնի դրութեան համաձայն Արեւմտեան եպիսկոպոսները առ Կոստանդին կաթողիկոսն, իբր 1225 թուականին, կը գրեն այսպէս (82). «Աստուած պետականին ամենայն գլխոյ շնորհօք լցեալ եւ հոգւոյ նորա ներքնդունակ եղեալ Գլխի պատանիսն եւ արեւելեան Կաթողիկոսն եւ եպիսկոպոսապետ Հայոց մեծաց Տ. Կոստանդին»:

Եւ Ուրպէլեան Յօհաննէս եպիսկոպոս Սիւնեաց տէրը կը գրէ 1305 թուականին, Արսաղ գաւառին թագէտս Առաքելոյ վանքին վիճակաւոր առաջնորդ Զաքարիա Արքեպիսկոպոսին այսպէս (83). «Գերապատիւ Զեյթոն սրբազան Հոգեպետի պիտոակայիդ Առաքելական պիտոիդ Էքսարխոսիդ Հայոց, ամենիմաստ եւ քաջ հովուի պաշտօնակցիդ մեր ՚ի Քրիստոս, Տ. Զաքարիա»: Եւ մխիթար Գօշ վարդապետը կը գրէ իր Դատաստանայ գրքին մէջ Գրիգոր Տղայ կաթողիկոսի համար այսպէս (84). «Այլ եւ գլուխն ճշմարիտ, Քահանայապետան ամենեցուն Քրիստոս Աստուած, օրհնեացէ շնորհեալսն Զեյթոն սրբազան Զեյթոն Գրիգոր եւ պայծառացուցէ ուղղափառ հաւատով եւ այլն»:

Նմանապէս նոյն Մխիթար վարդապետը կը գրէ նաեւ նոյն գրքին մէջ Աղուանից կաթողի-

կոսին համար այսպէս (85). «Չոր եւ աղայեմ, ո՛վ պատուականդ Ստեփաննոս, Դւ-ի եկեղեցւոյ սրբոյ տանդ Աղուանից», կը թողումք յետագայ դարերուն գրուածները, այլ միայն Յունաց քոտ կամ Թօթիոս կոչուած Պատրիարքին՝ մեր Զաքարիա կաթողիկոսին գրածը բաւական կը սեպենք, որ Հայաստանեայց կաթողիկոսութիւնը, ազատ անկախ գլուխ ճանչնալով Հայոց եկեղեցւոյ նկատմամբ, եւ խոստովանելով զանի յաջորդութիւն Առաքելոյն Թադէոսի, եւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, ներհակ այժմեան անտեղի հըրատարակութեանց Հ. Պալճեանի՝ եւ անոր հետեւող Պ. Չամուրճեանին, կը գրէ հազար տարի առաջ, եւ մեր ձեռքը անարատ կը հասնի այն նախնի գրութեանց նշխարները, իբր առ հաւատչեայ նախկին սուրբ պարզութեան՝ այսպէս (86). «Յաւերժահրաշից արանց յողնասպառիւ հռչակաւոր եւ բոցախայլեալ ամենայն զանազան փառաւորութեամբ յոլովից, բաղձալիզ մեր Տ. Զաքարիա, յԱռաքելականդ վերածամանեալ աստիճան 'ի քարչը եւ 'ի ծայրագոյն նախնահոհան զմեծի Առաքելոյն Թադէոսի եւ զամենեւրջանկի սրբոյն Գրիգորի ընկալեալ զԱթոս սուրբ, վերադիտող եւ օրէնսուտոյց Արարատեան աշխարհիդ, վերատեսուչ, հիսիւսական ազինդ եւ Հովուապետ Ասքանաղեան զօրաց, 'ի մեծ փահանայսպետութեանք ժամանակ ասորէ՛ն եւ զապառնոյն զհատուցումն զբոլորն 'ի քեզ առբերելով զբարութիւն, որպէս զի յան-

մարմնոցն թեւասպարեոցիս տեսանիլ, Յօտ Արք եւ պիսկոպոս Կ. Պօլսոյ նոր Հռովմայ, ողջունէ ըզ- Սրբութիւնդ. քո» :

Թէ եւ յոյները շատ նախանձոտ եւ հպարտ են, բայց ճշմարտութիւնը չը կրնալով ծածկել, Հայոց Ս. Աթոռին, Թաղէոս Առաքելոյն ակթոռը ըլլալը կը հաստատեն, ինչպէս որ վերոգրուեալ Յօտ Պատրիարքին գրութենէն հասկցուեցաւ . ա՞րդեօք միթէ միայն այս հայրապետը կը վկայէ. չէ՞ որ ասիկց տասն եւ վեց դար յառաջ կեսարիոյ փիճակին առաջնորդ՝ Ղեւոնդիոս սրբազան հայրապետը՝ որն որ Թաղէոս սրբազան Առաքելոյն յաջորդը ըլլալով՝ միանգամայն Ս. Գրիգոր Լուսաւորիչը ձեռնադրելով, նոյն Երանելին ալ կը հաստատէ՝ մեր կաթողիկոսական իշխանութիւնը, գրելով մեր Լուսաւորչին այսպէս(87). «Եւ արդ՝ վասն զի ֆեւ եղեւ ծագեալ ՚ի դոսա (այսինքն Հայոց) արեղակն արդարութեան ֆրիտոտս, եւ դոս ընդբեցուր ՚ի տեղէ ընդբեւոց սրբոց Առաքելոցն՝ Բարեհոգի Թաղէոս, յիշեալ ցնոցա նահատակութիւնն, եւ մի՛ երբէք վերջացիս ՚ի շառղաց նոցա» : (Պատմութիւնը Ասորոյ, եր. Ե. Թիպ Պօլսոյ) : Բայց Չամբարձեանը՝ այս հին վաւերական գրութեանց հակառակ Պատրիարքական իշխանութիւնը Սեղբեատրոսէն առած կը ցուցնէ աւ Կաթողիկոսական ակթոռին Առաքելական ըլլալը անտակի կը ցուցնէ, եւ տկարութեամբ փաստերով կուղէ պատկանանոց ունեցած ցանկութիւնը կատարել

տայ, կորսնցնել ու գերով Հայաստանեայց՝ եկեղեցւոյ նախկին Ասածու ապարգեւ ազատութիւնը, զոր մեզմէ, այսինքն յԱ.ա.քելոցն թագէտս եւ Բարթողիմիոսէ եւ անոնց յաջորդներէն զբիւր կուզեն այս արժանավայել վերտառութիւնները, եւ միայն Պետրոսի յաջորդացը վայ լեցնել, որ հպատակութեան եւ ծառայութեան թշուառութիւնը կը հետեւի հակառակ նախնի աւանդից, որոնց ճաշակը անհամար փաստերով ունիմք հաստատուած . . . :

Եւ Պապ անունը անգամ, զոր մեծարանօք եզականաբար կը գրէ այժմ Հռոմայ հայրապետը. մեծ բան մը չհամարուի Գանդի Պապ ըսելը հայր՝ կը նշանակէ. իցէ թէ երեւակայէ այս անունը կրայը իբրեւ որդի իր ներքեւը հպատակեցնել ու գերով ազատ Աթոռոց արքեպիսկոպոսները, որնոր վատթար է քան զգերութիւնն փարաօնի էլ թէ այսպէս ըլլայ, ուրեմն մեր կաթողիկոսը անկից աւելի գերազանց է, եւ յայսրմ՝ մասին անկից աւելի կրնայ պահանջել ըստ որում կաթուղիկոս վերտառութենէն՝ ի դատ «Հայրապետ» անունն ալ կը կրէ մինչեւ ցայսօր. ուրեմն պէտք կըլլայ հետեւցնել թէ՛ Հայրերու այսինքն Պապերու ալ Պետ եւ Գլուխ է մեր կաթողիկոսը.

Եւ այս Պապ անունն ալ երբեմն Աղէքսանդրիոյ, երբեմն Միլետոյ եւ այլն Աթոռոց հայրապետներն ալ կը կրէին, ինչպէս Աղէքսանդրիոյ հայրապետական Աթոռոյն վրայ նստող հայ-

րապետներն ալ կը կրէին, Մարկոս Աւետարան-  
 շին ակնարկը նստելով, ինչպէս Հարանց վարուց  
 մէջ յիշատակը կայ, (Տես 8 եւ 9 գլուխները)  
 (88). «Պապն Աղէքսանդրու եւ ամենայն իշխան-  
 քն խնդրեցին զնա . . . Նմանապէս (89) «Սո-  
 վորութիւն էր առաջնորդայն Սկիտոյ ելանել  
 առ Պապայն 'ի տօն Զատիկին . . . Նաեւս (90)»  
 Մտեալ ծերն առ Պապն, աղաւ ընդ նմա,  
 եւ այլն եւ այլն, վերջապէս այս խնդրոյն վը-  
 րայօք դուցէ բաւական կը համարին Հռովմի  
 շողորքորդները հետեւեալ երկու վկայութեամբ,  
 որնոր մեր ճշմարտութիւնը պաշտպանելով գը-  
 բած է նոյն Հռովմի եկեղեցւոյն քաջ Աստուա-  
 ծաբաններէն մէկը, որ է սքանչելին կղօղէոս  
 Քլէօրեայ աւագ քահանայն Գաղղիացի, զորմէ  
 դովութեամբ կը խօսին Հռովմէական մատենա-  
 գիրք. այս Աստուածաբան եւ եւ հռչակաւոր ե-  
 կեղեցական պատմիչը իր «կենցաղ իարայե-  
 լացւոց եւ Գրիստոնէից ըսուած աշխատութեա-  
 նը մէջ Պապ եւ պատմանն բառերուն համար  
 այսպէս կրօէ (91). «Անուանակոչութիւնս Պապ՝  
 որ նշանակէ հայր, մանաւանդ թէ եւ քան  
 զկոչումն հօր խանդաղատական, հասարակաց  
 անուն էր ամենայն եպիսկոպոսոց (ընդ ամենայն  
 Գրիստոնէից), որով եւ ցայսօր կոչին երի-  
 ցունք եկեղեցւոյն Յունաց, եւ 'ի սկզբանէ կոչէր  
 անխափր Պապն կուռնելիոս, Պապն կիպրիանոս,  
 Պապն Յուլիոս եւ Պապն Աթանաս», Այժմ հաս-  
 կըցուեցաւ կարծեմ, որ Պապ անունն ալ աւելի



փառաւոր վկայութիւն մը չէ եղած՝ եւ ոչ աւանձնաշնորհութիւն մը եւ յատկապէս սեփհական մահանուն մը Հռովմի հայրապետաց, այլ հաւատարապէս բոլոր ֆրիստոնեայ աղգաց եպիսկոպոսները՝ ի սկզբանէ յետէ անխտիր կը գործածէ եղեր, ըստ վկայութեան նոյն Հռովմի երեւելի պատմիչ կղզոդէոս Աստուածաբանին, եւ գուցէ անոր տուած վկայութեամբը բաւականան յիշեալ մոլորամիտք եւ համոզուին՝ որ ասոնք սնոտի եւ փառացի բաներ են եւ ոչ ՚ի վերայ ընդհանուր եկեղեցւոյ իշխելու իրաւասութեան վաստեր են, զորնոր կը պահանջեն Հռովմէականք եւ այլ տարածայնք:

Եւ ասկէց ՚ի զատ այս հաւատարութեան եւ նախնեաց պարզ ոգւոյն համաձայն կը գրէ դարձեալ անդ՝ յիշեալ Ֆլէօրեայն ըսելով թէ՛ (92) «Տեարք եւս կոչէին նոքա, (տյօինքն վերոյիշեալ եպիսկոպոսունք կամ՝ Պապք), եւ ամենայն թուղթ առ եպիսկոպոսունս ՚ի շորրորդ եւ հինգերորդ դարս, այսպիսի ունին մակագիր.—Առ ամենասուրբ եւ ամենաբարեպաշտ եւ գերյարգոյ Տէր «ն» հայրապետ» (կենց. իսրայէլ. եւ ֆրիստ. եր. 511. տիպ վենետիկ.) եւ ահա՛ ասոր լուծումը իրենց ձեւով՝ զանց կընեմք աւելի բան խօսիլ այլ միայն այսքանը կըսեմք թէ՛ որոնցմով գուցէ թէ պատկառին հակառակորդք եւ գուցէ ամչնան Հռովմէականք եւ Հռովմայի շողքորդք, որ եւ այսպիսի անտեղի փաստերով տարածայնութիւն ու վէճ չը յա-

բուցանեն հաժ ու զիկէ եկեղեցւոյ մէջ:

Յօհան Ռսկեբերան Սրբազան տիեզերա-  
 կան վարդապետը՝ որ իւրով կենդանաբար քա-  
 ռոզութեամբը ընհդանուր տիեզերը լուսաւո-  
 ըեց բանիւ եւ գրով վարդապետելով եւ ծա-  
 րաւեալ հոգիները հոգւոյն հանգստութեան ջը-  
 րովը զովացուց, ինչպէս որ Շարականը եկեղեցւոյ  
 մէջ կը գովէ ըսելով (93). «Որ անապական բա-  
 նին քարոզ կոչեցար բերան ոսկի, յորմէ աղբիւր  
 կենաց հոսեալ, արբուցանելով քառալիտակ բըխ-  
 մամբ զընդհանուր տիեզերս »: Ահա՛ այս երա-  
 նելին, այս տիեզերաբոյս վարդապետը՝ մեր Գը-  
 րիգորիոս Լուսաւորիչ Սրբազան Գահանայապե-  
 տին համար կը գրէ իւր ներբողեան ճառին մէջ՝  
 ըսելով այսպէս (94). «Այլ դու՛ ո՛վ Աստուածա-  
 յին եւ Պատուական Գլուխ, որ զամենեցուն ըզ-  
 Գլուխն Գրիստոս յանձին բերելով Լոյս երեւե-  
 ցար տիեզերաց . . . : Լոյս սրայծառադոյն յեա  
 արեղականն Արդարութեան ծագեցար . . . .  
 Պետրոս եւ Պօղոս եղբարք գոլով համաշունչ  
 ըստ հոգւոյ, ամոլք ֆրիստոսի ընտրեալք եւ Ա-  
 ռաքելոց առաջինք, որք համաօխիւս տիեզերս  
 ընկալան լիճակեալք եւ դերահռչակ քաղաքին  
 Հռովմէացւոց քարոզէին զԱւետարանն Տեա-  
 սըն . . . . իսկ դու՛ ո՛վ Աստուածարեալ Հայր,  
 ոչ ՚ի միում մասին կամ յանկեան ուրեք, այլ  
 Արեւելեց Տիեզեց Արեւմտոս ՚ի ծագաց երկե Տիեզե-  
 ՚ի ծագանոցն լցեր Ղև-եդ-բանն ֆրէսոսի . . . . :  
 Արգ դու՛ ո՛վ հայր սուրբ եւ առաջնարդ վըր-

կութեան ամենայն հաւատացելոյ . . . եւ վահանաւն փրկութեան զԳլուխն հաւատոյ ամրացուցեալ ամբողջ սրահեցեր իբրեւ վէճանդբրդուէլի եւ անշարժ . եւ Քոյն նեղութեանց յեշտակաւ ի մերումս մեկեալեալ փոփեցաւ, իսկ դոս իբրեւ նմանող Քրիստոսի . . . : Սեան հեղին յերկրի . . . : Լուսաւորիչ Հայաստանեայց եւ հիմն հասարակութեան Հոռոմոց. Առաքեալ Քրիստոսի եւ Առաջնորդ Տարդևան եւ այլն՝ Այս Սրբազան հայրապետին զրութենէն ՚ի դատ, բաւական է ընթերցողաց Յովհան Երզնկացի վարդապետին, եւ Սրբահամ Աստապատէի եպիսկոպոսին շինած ներբողբ աչքէ անցնել. եւ Շարահանի (90) «Այսօր դուարճացեալ յնծայ եկեղեցի» եւ «Լեբինք ամենայն այսօր յնծացէ՛ք» եւ այլն կանոնները կարդալ խոհական մտօք, թէ ինչե՞ր գրած են մեր սրբազան նախնիքը հոգունուս Առանձնորդ Կող Ս. Գրբիգոր Բ. Լուսաւորիչ Հայրապետներնուս փրայ, որն որ կարծեմ Առաքելոց անդամ զբցուած չէ այնպիսի գովեստներ, որոց մէկ օրինակը բաւական է, որ Շարահանը կը վկայէ ըսելով (98) . «Առաջնորդ հաւատոյ եւ Լուսաւորիչ Ազգի մարդկան . . . : Եւ Արմատ ճշմարիտ Աստուածային օրինաց, եւ հաստատութիւն հաւատոյ Ազգի մարդկան Տէր Ս. Գրբիգոր» :

Քրեմն ըստ Հռովմէական զրութեան իբրաւունք ունի սրահանջելու Հայոց ազգը, որ «Յետ Արեգականնարդարութեան՝ մեր Ս. Լուսաւորիչ Հայրը ծագեր է Առաջնորդ. եւ հաս-

աատու թիւն հաւատոյ եւ Առաջնորդ Ազգի  
 մարդկան, ընդհանուր Տիեզերական եկեղեցւոյ  
 շքատ վկայութեան Ռսկերբերան հայրապետին  
 եւ Սրբազան հարց շարականիւ կը հարցունենք  
 հիմայ Պ. Չամուրճեանին, թէ այս ընտիր եւ  
 միանգամայն պատուական վկայութիւնը մոլորու-  
 թիւն մի՞ պիտի համարի չէ՞նէ, հաւատոյ էական  
 դասանութիւն մի. ինչպէս որ Պետրոս Սրբազան  
 առաքելոյն ի նախնեաց գրուածներուն համար  
 էական դասանութիւն ձեւացնել կուզէ. արդ՝ Պեա-  
 րոսի եւ Հռովմայ յաջորդաց համար գովեստի  
 եւ յարդանաց գրութիւնները հաւատոյ էական  
 շարքողութիւնն էւ ճշմարտասան կը սեփուել  
 կորնէ, մի՞թէ այս վերոգրեալ ընտիր վկա-  
 յութիւնները թէ Առաքելոց եւ թէ Լուսա-  
 ւորչին համար զրցուածները, մոլորութիւն եւ  
 խաբէյութիւն են միւ ի՞թէ Պետրոսին եւ Հռով-  
 մայի յաջորդացը համար գրուածները էական  
 հասարակ եւ ճշմարտութիւն կը համարուի  
 կորնէ, հարկաւ այս վերոգրեալներն ալ միւս  
 Առաքելոց եւ Լուսաւորչի համար, էական հասար-  
 կ համարելու է Պ. Չամուրճեանը . . .  
 Բայց կըսեմք իրեն թէ ո՛չ այնպէս, քանզի այդ-  
 պիտի դահասիրութեան իշխանութիւն մը ոչ նոյն  
 Սրբազան Առաքելք եւ ոչ նոյն Ս. Լուսաւորիչ  
 հայրերնիս ըրած ունէր, եւ ոչ ալ անոր յաջորդ-  
 ները ըրած ունին մինչեւ ջայսօր, որ այս կերպ  
 նախնեաց գովեստի եւ ճարտասանական ձեւե-  
 րով գրութիւնները իրենց առարկայ մը բանե-

լով Տիեզերական եկեղեցւոյ գլխաւորութիւն  
 մը հաստատեն՝ իբր Գրեգորիոս Բ-ի հաստատոյ, ինչ-  
 պէս որ կուզեն ձեւացնել արդի նոր հռով-  
 մէականները մեր նախնեաց Հռովմի եւ Պետրոս  
 Առաքելոյն վերայ գրուած գովեստի եւ ճար-  
 տասանական ձեւերով գրութիւնները պատճառ  
 եւ առարկայ մը բռնելով, Հռովմի հայրապետաց  
 Ընդհանուր Եկեղեցւոյ վրայ բերեցոյն Էջիպտոս-  
 իբր թէ հաստատել կուզեն, եթէ այդպիսի գր-  
 ութիւններով հարկ ըլլար Տիեզերական Եկե-  
 ղեցւոյ գլխաւորութիւն մը կացուցանել, հար-  
 կաւ իրաւունքը Հայոց սրբազան հայրապետնե-  
 րուն կիյնար, վերոգրեալ տիեզերական Ս. Յո-  
 հան Ռսկեբերան հայրապետին վկայութեամբ .  
 ինչպէս որ սոյն վերոգրեալ Ռսկեբերան հայրա-  
 պետին ներքոյը վենետիկոյ Մխիթարեան միա-  
 բանութիւնը անգամ ընդունելով եւ վաւերա-  
 ցրնելով տպեց անցեալ տարի. տե՛ս Սոփերք Հայ-  
 կական ըսուած Տեորակներուն մէջ . ուրեմն  
 կրկին կըսեմք թէ իրենց գրութեամբը եթէ  
 ճշմարտութիւն հաւատոյ եւ կամ իրաւաբանու-  
 թիւն ալ է նէ՝ նախնեաց Պետրոսի եւ անոնց  
 յաջորդացը համար գրուած գովեստի՝ գրու-  
 թիւնները, ապա ուրեմն այս վերոգրեալներն ալ  
 հարկաւ պէտք է որ ճշմարտութիւն համարելով  
 ընդունին, եւ առաւել եւս պարտաւոր ալ են  
 ընդունելու, ըստ որում, Թաղէոս եւ Բարթո-  
 ղիմէոս նախկին Լուսաւորիչ սրբազան Առաք-  
 եալները՝ եւ անոնց յաջորդ Բ. Լուսաւորիչ Ս.

Գրիգոր Գաճանյապետը ծնաւ զիրենք եւ ուսոյց հաւատքը, եւ ոչ Պետրոս եւ Պօղոս սրբազան Առաքելները՝ եւ անոնց յաջորդ Սեղբեստրոս հայրապետը ծնաւ եւ ուսոյց. ո՛հ եզկելի ազգատեցութեան եւ կամակոր կուրութեան . . . որ այս օրինակ վարման քներով ճշմարտութիւնը խաբանել կուզեն . . . : Բայց անոնց սառութիւնը եւ միանդամայն խարդախութիւնը նըշտակելու համար դարձեալ օրինակ մը կը դրնեմք հաս, որ իրենց մուտրական դրութեանը համամիտ Հ. Գաբրիէլ Աւետիքեան վարդապետը վերողբեալ Շարահանին չորրորդ տունը հակառակ այժմեան նոր դրութեան, կամ 'ի ճշմարտութենէ ստիպեալ, այսպէս կը մեկնէ (97) . «Աբրէհիայ + հասարացեալ + և կոչեցեալ + յոր է բրտնիւն որքոյն Գրիգորի» . իսկ եթէ որդեգրութիւն իմասցուք առ սուրբն Գրիգոր, իրրեւ թէ կոչեցեալք յորդիութիւն սրբոյն Գրիգորի, դրեալք յորդիս նորա, այս յայտ առնէ զբերդանց պարիւրստութիւն, զի հաստատր է զնա նահապետին Աբրահամ, որ Հոյբ աի հասարացելոց և հասարացեալն աին որքիւն արտ» : (Բցար. Շար. 428 :

Ուրեմն ըստ վճռոյ նոյն պապապաշտ Հ. Գաբրիէլի, ի տասարից սուրբ Հայր մեր. Հոյբ է եզեր եկեղեցոյ և Բուլբ հասարացելոց, ապա սրբմըն ով ու սր անոր յաջորդին ըստ հոգաբանի՝ եկեղեցիէն Խաբոս է, և հոգաբար որքիւն է եկեղեցոյ. ինչպէս որ իրենք առանց իրաւամբ Պետրոսի եւ անոր Հոսով մի յաջորդ անուանելոց՝ համար ձեւացնել կուզեն

նոյն որդիութիւնը եւ հպատակութիւնը, եւ ի-  
րենց այս դրութիւնը չլնդունողը եկեղեցիէն  
դուրս քարոզելէն զկնի, այլ եւ դժոխքի բոցե-  
րուն կը մատնեն. ուստի այս վերոգրեալ վճիռը  
իրենց վրայ յարմար կուդայ, քան թէ այլոց...

Չ. Գանք այժմ մեր հատաքննութեանը,  
որդ՝ սրբազան Յուսիկ հայրապետը խլատական  
յորդորներուն մէջ, որ Տիրան անօրէն թագա-  
ւորը Աստուծոյ հնազանդեցնել կուղեր եւ ար-  
գիլել տալ Յուլիանոս չարին պատկերը չը դնելու  
եկեղեցւոյ մէջ. սրբազան Նախնեաց եկեղեցւոյ  
համար աշխատութիւննին յիշեցուցած ժամա-  
նակը կըսէ. (գրեալ Հայկական Մովսերից մէջ,  
հօր. Ժ. երես 22.) (98). «Յիշեա զՎեճն հասարոյ  
ղրբիդորիոս եւ զՏրդատիոս»: Տրդատ՝ որ Ս.  
Գրիգորի հետ ի շինութիւն եկեղեցւոյ աշխա-  
տեցաւ, որով նա ալ Վեճ հասարոյ կոչուեցաւ Լու-  
սաւորչի հետ, որն որ սուրբն Յուսիկ՝ Ս. Լու-  
սաւորչին թողը բլալով, իր Սրբազան Նախնեոյն  
հոգին կը կրէր: Եթէ Վեճ անունը կրողը ե-  
կեղեցւոյ Տիեզերական գլուխ բլալու իրա-  
ւասութիւնը ունենար նէ՝ ըստ վճռոյ Զհա-  
ւն (Տետր 14, եր. 56, 59): արդեօք Գրիստոսի  
ընդհանուր եկեղեցւոյ Տիեզերական հրամանա-  
տարները քանի՞ հատ պիտի բլայն, որով ըստ  
վկայութեան Գրիստոսի՝ «Մմենայն թագաւորու-  
թիւն բաժանեալ յանձն աւերի, եւ սուն բա-  
ժանեալ յանձն կործանի»: Եթէ ամենայն Ա-  
ռաքելոց եւ անոնց յաջորդացը անխորաքար

զէ՛մ հաւատոյ, հի՛մ հաւատոյ, և սի՛ան հասարակութեան  
 բառերը, եւ Ա՛նչի՛ հաւատոյ, Իշխան Առա՛տեւոյ, Գլուխ  
 Առա՛տեւոյ, Թա՛շաւոր՝ երկրի, Իշխան՝ աշխարհի, Գլուխ  
 հօրին Ֆրէ՛ստի, Գլուխ եկեղեցոյ խօսքերը ըստած  
 ըլլալուն համար, ինչպէս վերսդրեալներէն յայտ-  
 նի է, ամեն մէկ Առաքելական յաջորդները՝  
 Հռովմի հայրապետին նման, անոր շողոքորդ-  
 պաշտպաններուն ըրած դրութեանցը համա-  
 ձայն՝ եկեղեցւոյ Տիեզերական գլուխ ըլլալու  
 անիրաւ դատեր բանային, ներհակ նախնական  
 եկեղեցւոյ անդահատիրութեանը, հա՛րկաւ եկե-  
 ղեցին կը կործանէին, ինչպէս Հռովմ իր մէջը  
 այս փորձը կրնէ իւր խաշանցը հովուութենէն  
 զրկուելով՝ զանանք՝ եւ ընդհանուր եկեղեցին  
 դայթակղեցնելուն համար՝ վասնորոյ Հայաս-  
 տանեայց սուրբ եկեղեցին լաւ հասկնալով այն  
 տիպաւորներուն եւ վերտառութիւններուն ուժը,  
 իւր նախնեացը դիտաւորութենէն ամենեւին  
 չխտտորելով՝ անարատ աւանդապահ ըլլալուն հա-  
 մար, դահատիրութեան ախտէն յառաջ եկած  
 անտեղի դրութիւնները ու այլանդակ վարդա-  
 պետութիւններ, որ ՚ի Հռովմէ ընդհանուր եկե-  
 ղեցւոյ կառավարիկուի ընդունուելու՝ չընդունիր՝  
 եւ չընդունելուն համար ալ բողոքական ազան-  
 դին մէջ ինկած չըլլար, ըստ որում՝ գիտէ Հա-  
 յաստանեայց սուրբ եկեղեցին, որ ամեն մէկ  
 սրբազան Առաքելները եւ անոնց յաջորդները  
 իրենց հոգեւոր իշխանութեանց համաձայն,  
 այս օրինակ տիպաւոր կրելու արժանաւոր են:



Բայց այս ալ կը խոստովանի՝ որ եւ ոչ մէկը ընդհանուր Տիեզերական եկեղեցւոյ վրայ միասեանական իշխանութիւն չունին, այլ հաւասար են հոգեւոր իշխանութեան մասին, ո՛չ Պօղոս Պետրոսէն, ո՛չ Թադէոս Յովհաննէսէն եւ ո՛չ Յակոբոսը Անդրէասէն, նոյնպէս անոնց յաջորդներուն մէջ ալ տարբերութիւն չկայ, որով եւ ոչ մէկ եկեղեցի մը՝ որ մասնաւոր է, ընդհանուր կոչուելու իրաւասութիւնը չունի, Առաջնորդաց համար գերածայրեալ տիտղոսներ տրուելուն եւ յարգանաց գրեթէ գրուելուն պատճառաւ, Այլ այսչափ միայն կընայ զրոյսիլ թէ իւրաքանչիւր Առաքեալ իրենց արդեանցը համաձայն մէկըմէկէ՝ վտար ինչ առաւել անձնական պատիւ մ'ունէին եւ ունին մինչեւ ցարդ, բայց ոչ գլուխ եւ տիրապետող եւ կամ իբր իրաւաբան հրամայող միմեանց, այսինքն ոչ թէ մէջերնուն մէկը մեծ կամ միւսը հպատակ եւ վտար, այլ հաւասար եղբայր էին եւ են, ինչպէս որ Քրիստոս պատուիրեց անոնց «Դուք եղբարք էք» կոչելով:

Ուրեմն կը հերքեմք այն գրութիւնները, որ միայն Պետրոսի համար գրուած գլուխ կամ գլխաւոր Առաքելոց ըսուած խօսքը միամտաբար կարդալով՝ եւ միւս Առաքելոց համար գրուածներուն ուշ չդնելով՝ եւ կամ հակառակորդաց հրատարակած խարդախ գրութիւնները կարդալով՝ եւ կամ անոնց կերպ կերպ վիճաբանութիւններէն խտրուելով՝ եւ կամ իբր թէ

տեղի աամբ սիրոյ ու դադարի այս վիճարա-  
 նութիւնները Աղղիս մէջ ըսելով՝ խոնարհու-  
 թեամբ եւ միամե յոթեամբ դրեցին ու հրա-  
 տարակեցին 1820 թուոյն «Հրաւեր սիրոյ» ան-  
 ուանեալ Տեարակին միջոցաւ, ըսելով թէ՝ «Իսկ  
 սուրբ Առաքեալն Պետրոս է դլու իս Առաքելոց  
 սրբոց եւ վէճ հաստատութեան ամենայն եկե-  
 ղեցեալ»։ եւ այլն, ու իրենց այս դլութեանը  
 իրր թէ շարականը առաջնորդ բռնելով՝ իրր  
 գիտցան թէ նախնիք մեր միտոյն Պետրոսի հա-  
 մար դրած ըլլան նոյն գլխաւորութեան եւ այլն  
 տիազանները, ինչպէս որ ապացոյց բերած են  
 շարականին այն տունը՝ ուր կրտէ։ «Որ գերա-  
 դոյն ընտրելոց առաքելոցն դասուց՝ անուանե-  
 ցեր լինել զերանելին զՊետրոս, Գլու իս սուրբ  
 հաւատոյ հիմն եկեղեցւոյ» (Եբ. 29. Հրաւեր  
 սիրոյ)։

Ապաքէն կրտեք, եթէ այս վերոգրեալներ-  
 ընն ալ կարդային եւ տեսնային, մանաւանդ Յա-  
 կոբ Տեառն եղբօր համար, արդեօք ի՞նչ պիտի  
 դրէին, որով եւ այս դլութեաները անտեղի ըլ-  
 լալը ցոյց պիտի աամբ, ինչպէս որ մինչեւ ցարդ-  
 ըստ բաւականին սուրինք, յատկապէս անոր հա-  
 մար, որ ադէտ Հռովմէականները իրենց իրր  
 յաղթութիւն մը կարծեղով գերանի պէս միշտ  
 մեր աչքը կուղեն խօթել, տակաւին ադէտ եւ  
 աամիկ դանտի նէ՝ զանոնք ալ որսալու դիտ-  
 մամբ, ըսելով թէ՝ Հրաւեր «Երջ» սոյսպէս կը դա-  
 ւանի եւ այլն, դեռ եւս մէկ կերպով մ'ալ այս

տեղի տամք սիրոյ ու դադարի այս վիճարա-  
նու թիւնները Ս.դղիս մէջ ըսելով՝ խանարհու-  
թեամբ եւ միամեռութեամբ դրեցին ու հրա-  
տարակեցին 1820 թուոյն «Հրաւեր սիրոյ» ան-  
ուանեալ Տեարակին միջոցաւ, ըսելով թէ՛ «Իսկ  
սուրբ Ս.աքեալն Պետրոս է գլուխ Առաքելոց  
սրբոց եւ վէմ հաստատութեան ամենայն եկե-  
ղեցեաց»։ եւ այլն, ու իրենց այս գրութեանը  
իր թէ շարականը առաջնորդ բռնելով՝ իբր  
գիտցան թէ նախնիք մեր միտոյն Պետրոսի հա-  
մար դրած ըլլան նոյն հիւսուցումն եւ այլն  
տխազաները, ինչպէս որ ապացոյց բերած են  
շարականին այն տունը՝ ուր կրէ. «Որ դերա-  
դոյն ընտրելոց սուրբերոցն դասուց՝ անուանե-  
ցել լինել զերանելին զՊետրոս, Գլուխ սուրբ  
հաւատոյ հիմն եկեղեցւոյ» (Եր. 29. Հրաւեր  
սիրոյ)։

Ապաքէն կրտսեր, եթէ այս վերոգրեալնե-  
րն ալ կարգային եւ տեսնային, մանաւանդ Յու-  
կոր Տեառն եզրօր համար, արդեօք ինչ պիտի  
դրէին, որով եւ այս գրութեանը անտեղի ըլ-  
լալը ցոյց պիտի տամք, ինչպէս որ մինչեւ ցարդ-  
ըստ բաւականին տուինք, յատկապէս անոր հա-  
մար, որ ադէտ Հռովմէականները իրենց իբր  
յաղթութիւն մը կարծելով գերանի պէս միշտ  
մեր աչքը կուզեն խօթել, տակաւին ադէտ եւ  
ուամիկ գանուի նէ՛ զանոնք ալ որսալու դիտ-  
մամբ, ըսելով թէ՛ Հրաւեր «Եր» այսպէս կը դա-  
ւանի եւ այլն, դեռ եւս մէկ կերպով մ'ալ այս

Թարգմանիչ, 'ի վարս սրբոյն Մեսրոպայ) :

Եւս 'ի Բարձրացուցէք ճառին սրբոյն Դաւթի փիլիսոփայի Հայոց, զոր ինչ կը գրէ մեր Երանելի Գիւտ կաթուղիկոսին համար (100). «Զառ 'ի յԱստուածուստ պատուեալ զերիցս զերջանկի Մեծէ Հայրապետի եւ այլն» : (Տես սոյն զիրքը (Կորիւն Մամբրէ Դաւթի անյաղթ ըսուած գործոյն մէջ, ախպ վենեաիկ) :

Այսպէս ալ Պատճառ Գրոցին մէջ զոր Գրիգոր վկայասէր բաղմարդիւն վարդապետը 'ի նախնեաց հաւաքած է. զոր գրուածը կը կարգամք թէ (101). «Սովորութիւն է սրբոց վարդապետացն զարժանն յիշատակի արձանագրութեամբ պատուել, որպէս ուսեալք 'ի սրբոց Առաքելոյն զիտեն զայսպիսի սովորութիւն : Յազա այսորիկ եւ Գրիգոր Աստուածաբանն արձանական առնէ զովեւս մահուն Բասիլիոսի օրինակ ամենայն առաքինութեան զնա ցուցանելով, «իւն էկեղեցոյ և հի՞ն հասարոյ եւ օթ եւ ան Սերրորդութեան եւ Կարաբէլ Կաճաղն Աստուծոյ» կոչելով » : (Պատճառին Գրիգորի Աստուածաբանի վասն մահուան Բարսղի) :

Ինչպէս ըսինք վերը եւ դարձեալ կըսենք թէ նախնեաց այս օրինաւոր գրութիւններուն վրայ ոչ չդնելով՝ ոմանք անբաւականութեամբ եւ ոմանք ալ խաբուելով հռովմէականներուն տարօրինակ պահանջմունքներէն եւ Պեարսի համար Վե՛՛ հասարոյ և Գլուխ սորբէ հասարոյ ըս-

ուերուն պատճառաւը՝ եւ համ' ոմանք ալ տղի-  
տութեամբ միայն Պետրոսի համար գրուած ճար-  
տասանական ձեւերով գրութիւնները կարդա-  
ով, դիտցան եւ մանաւանդ կարծեցին թէ՛  
միայն Պետրոս սրբազան Առաքելոյն համար գր-  
ւած է այսպիսի պատուոյ գրութիւնները եւ  
միայն անոր վերապահեալ է իբր հաւասոյ էա-  
կան դաւանութիւն, չդիտցան՝ որ բոլոր Առաքե-  
լոց եւ անոնց յաջորդներուն անխըտիր եւ հա-  
ւասարասլէս իրենց գովեստի գրութիւններուն  
մէջ ըստ արժանւոյն գրած են նախնի սրբազան  
Հարք. (բայց ասոնց հակառակը, սոյն վերոգր-  
եալ գրութիւնները անտեղի եւ միանգամայն  
յարգական ըլլալը ցուցնելու համար նոյն նախնի  
սրբազան Հարց եւ Առաքելոց անտի մէկզմէկու

\* Ինչպէս ճարտասանօրէն՝ չըսեմ չափազանցօ-  
րէն կը գրէ՝ ներսէս լամբրոնացին այսպէս. «Երկրորդ  
յեա Քրիստոսի դքեղ ուսաք, ո՞վ Պետրոս, յեա պըլ-  
խոյն դու նստար աշակերտելոցս. վէ՛մ հաստատու-  
թեան բնաւիցս դքեղ էարկ 'ի հիմն տաճարիս. զգա-  
սինս եւ զոչխարսն 'ի ձեռս քո աւանդեաց արածել՝  
յեա առնլոյ զգրուական սիրոյդ» ('ի ճառն): Ա. յս  
բացաքանջութեան գրոյն պատասխանը մինչեւ ցայս  
վայր անսանք, որ անաւղի է այս վարդապետութիւ-  
նը, մանաւանդ ինքն ալ ասոր դէմ գրած ըլլալը վե-  
րը (48) թուահամարով նշանակեցինք: Եւ աւելի խընդ-  
րողը մեր ընդարձակ Գատաքննական Ս. Հաղորդու-  
թեան խորհրդոյ վրայօք գրած գործոյս մէջ կրնայ  
տեսնալ, եթէ 'ի լոյս ընծայենք:

դրած խոնարհականն եւ պարզ դրութիւնները մէջ բերելով պիտի ապացուցանեմք մեր ճշմարտութիւնը. որ մէկզմէ կեղծայր և պաշտօնակէց կանուանեն. ինչպէս որ վարը պիտի դնեմք, հռովմէականաց շլացեալ աչքերնուն իբր ակնոց մը համարելով : ) Ահա՛ ինչպէս ըսինք այս վերոգրեալ պատճառներէն ստիպուելով, վերջին դարերու վարդապետք մեր՝ լատինացւոց եկեղեցւոյն յարկ ուղելով եւ անոնց նոր վարդապետութիւնները ուսանելով եւ թարգմանելով\*, տարածայնութիւն

\* Որուն օրինակ կրնայ ըլլալ Գրիգոր Տաթևաացիին դրուցածը, որ է «Տէրն մեր զչորս յատկութիւնս ունի, նախ՝ զի է Քրիստոս սկիզբն եւ հիմն եկեղեցւոյ . . . զայս յատկութիւնս եւս Առաքելոյն Պետրոսի, յասելն՝ դու ես վէմ . . . երկրորդ յատկութիւն, որ Քրիստոս միայն է Գլուխ ամենայն հաւատացելոց, եւ զայս դործս եւս Պետրոսի յասելն՝ դու կողջեսցիս կեփաս որ է Գլուխ, զի նա է գլուխ Առաքելոց: Երրորդ յատկութիւն, զի Քրիստոս է հովիւ եկեղեցւոյ, եւ զայս շնորհեաց Առաքելոյն Պետրոսի յասելն, արածեան զոչխարս իմ եւ զդառինս : Չորրորդ յատկութիւն զի Քրիստոս է դատաւոր եկեղեցւոյ, եւ զայս ասաց Պետրոսի, զոր կապիցես յերկրի եղիցի կապեալ յերկինս» : (Ն հատորն Ամատան ԴԷ . ՃՀԲ երես 682) : Թէ այս եւ թէ վերոգրեալ Լատրրոնացւոյն դրութիւնները անտեղի է, ինչպէս մինչեւ ցայս նոյնը տեսանք: Բայց Լատրրոնացւոյն դալով կրսեմք որ ինքը եռանդուն եւ չափազանցօրէն ոճ մ'ունի, ինչպէս որ յայանի է : Եւ Տարթևաացիին դալով կրսեմք՝ որ Հռովմէականաց վէմ բազում բան դրած ունի, ինչպէս որ զանոնք

ձգեցին ազգիս մէջ, ու կորուսին իրենց նախնի սուրբ Հարց ոգին եւ սկսան իրենց մէջ իրենց կարծեացը սորուած նոր գրութեանցը հետեւելով, չափազանցօրէն վարդապետութիւն մը յաւելուլ եկեղեցւոյ մէջ, եւ վեհագոյն նախադահութիւն մը կացուցանել ուղելով՝ ի մէջ աստիճանաց եկեղեցւոյ, եւ իններորդ դասեցին Պապն Հռովմայ, ինչպէս որ յայտնի է Մխիթար Գօշի գրութենէն՝ եւ զինի այնարիկ Ունիթուաց հետեւող վարդապետներուն գրութիւններէն՝ որոնցմէ

կարդացողները լուսեղեկութիւն ունին, մանաւանդ իր գրած Այլակերպութեան ճառին մէջ այս զուրցածին հակառակ Պետրոսը Յակոբոսը եւ Յովհաննէսը հաւասար կը դասէ եկեղեցւոյ, Սեւ կոչելով. ըստ այնմ. «Այսան էր միայն զերեք Առաքեալսն եհան ի լեառն. զի ՍՈՒԱ եւն երեք ՍԻՆԻՔ ԵԿԵՂԵՅԻՈՅ ըստ Պօղոսի, յորոց վեայ հանգչի Ս. Երրորդութիւնն, եւ այլն» (Վարդապետ Վարդ. ձեռ.): Եւ ահա այս այսպէս ըլլալով, մեզ զարմանք պատճառողը այն է որ սոյն Տաթևացին ալ երբեմն անոնց ազբիւրին դիմելով այսչափ մը սխալած է . . . սակայն ծիծաղելին այն է որ Հ. Մինաս Բժշ. Մխիթարեան վարդապետը իր Սրբազան Պատմութեան հատոր Ա. եր. 491 եւ 495ին մէջ անցնելով իրեն իբր թէ փաստ մը համարելով վկայութիւն կը բերէ զասոնք, բայց այս վերջինը ամեն ազդ գիտէ, սր Հռովմէականք կը պախարակեն, իրենց զէմ շատ բան գրելուն համար Երանելին Բայց առած է սր կըսուի. — ծովն ինկողը օձէն օգնութիւն կը յուսայ . . . :

\* Թէպէտ եւ այս Երանելոյն հարազատ գրութիւնը, մօտերս ձեռք անցուց Ամասիացի Տ. Խահակ

սորվելով վերջին դարերու Հայոց Աստուածարաններէն եւ վարդապետներէն ոմանք ալ, սկսան անոնց դրութեան վրայ հիմնել իրենց վարդապետութիւնը ու վերադոյն զայլ քան Առաքելայն դասել զՊետրոս եւ իրեն Հռովմայու յաջորդները, բայց առանց իրաւամբ, ինչպէս յայտնի է Կոստանդին Կասուկեցի, Գրիգոր Անաւարդեցի, Մխիթար Ապարանցի եւ Յակոբ Մսեցի, եւ այլ Ռենիթոսաց հետեւողներուն դրութիւնները, եթէ դիտնային եւ ոչ զնէին ընդհանուր եկեղեցեաց եւ մասնաւոր իրենց եկեղեցական կարգադրութեանցը, կարծեմ չէին համարձակեր այսպէս դրելու ըստ որում բոլոր Առաքելոց յաջորդները, որ մասնաւոր ազգի մը Գլուխ եւ Հայրապետ են, 'ի մէջ եկեղեցական Աստիճանաց, 'ի նախնեաց անախ' իններորդ դիտեմք զնա, զորօրինակ չորրորդ աստիճան է Դպրութիւնն, հինգերորդ կիսասարկաւարդութիւնն, վեցերորդ Աւագսարկաւարդութիւնն, եօթներորդ Քահանայութիւնն, ութերորդ Եպիսկոպոսութիւնն եւ իններորդ է կաթողիկոսութիւնն կամ Հայրապետութիւնն եւ կամ Պատրիարքութիւնն եւ այլն, Եւ ոմանք ալ Արքեպիսկոպոսութիւնը եւ կամ Մետրապօլ-

Մ' վարդապետը որուն բնագիրն ալ իր քովն է, որն որ կամ Մխիթարին իւր ձեռքի դրութիւնն է, եւ կամ անկից դադախարուած է մի եւ նոյն միջոցին մէջ ըստ որում իր հնութիւնը եւ թուականը յայտնի կրնէ. որմէ համարձակելով «\|թոռ Քրիստոսի» մականգրով պատուական գիրք մը շինեց երջանիկ Հայրը :



առ թիւնը (եւ կամ այժմեան Հռովմի կարգած  
կարաինալութիւնը) աստիճան կը դասեն, եթէ  
այդ կերպը բռնուելու որ ըլլայ իններորդ դա-  
սել հարկ կըլլայ Մետրապօլիտութիւնը, կամ  
կարդինալութիւնը եւ տասներորդ կաթուղի-  
կոսութիւնը կամ Պապութիւնը\*։ Ուստի մեր  
Հայաստանեայց սուրբ եկեղեցին կը հերքէ այս  
բոլոր նոր դրութիւնները, ըստ որում նախնա-  
կան եկեղեցւոյ սուրբ պարզութեանը եւ Աւետա-  
րանական ճշմարիտ վարդապետութեանը եւ Սըր-  
բաղան Հարց դրուածոցը ոգւոյն հակառակ է,  
ինչպէս ապացուցինք, եւ այդպիսի նոր դրու-  
թիւնները (որ հաւատոյ էական մաս մ'ալ չը  
սեպուի) մասնաւոր մարդու կարծիքներ է, եւ  
ոչ ընդհանուր եկեղեցւոյ վարդապետութիւն, եւ  
ոչ ալ հոգւոյ վրկութիւն։ Այս դրուածներուս  
ապացոյց կրնայ համարուիլ, որ այս նոր դրու-  
թեան վարդապետութիւնը մինչեւ հնդետա-  
սաններդ դար չը կար եկեղեցւոյ մէջ, այլ Տը-  
րխոնդեան ժողովոյն մէջ սահմանեցին (կար-  
դա՛ ստեղծեցին) վեհադոյն քան զամենայն  
հայրապետութիւնսն համարել Պապն Հռովմայ  
եւ Գլուխ ընդհանուր եկեղեցւոյ ։

Աւա՛ղ, լացցուք անմխիթար, արդեօք չո-  
րեքսասան դարերուն մէջ եկող այնքան քրիս-

\* Տես ասոր բացատրութիւնն ալ յազազա ինն  
գասուց եւ կարգաց եկեղեցւոյ՝ ըսուած գործոյս  
մէջ, եթէ հրատարակուի . . .

տոնեայները եւ աստուծոյ սուրբերը ու նահատակները եւ մարտիրոսները, այս նոր վարդապետութիւնները չընդունելուն համար (ըստ որում նոյն միջոցները Պատերը ընդհարուր եկեղեցւոյ դըռն չէին ճանաչէր եւ հնազանդութիւն չէին ցոյց տար) միթէ զանոնք Աստուած դժոխոց բաժի՞ն մի ըրաւ... օ՛ն անդր՝ ի բաց...

Դ. Բայց այժմ դանք լաւ մը դիտելու թէ նախնի Առաքելական կանոնական դրքերը եկեղեցեաց եւ եկեղեցւոյ Գլխոց դասաւորութեան մէջ ի՞նչ կարգ եւ ինչ դրութիւն (մէթօթ) կամ նօսնոս ՚ի դործ կածեն, թէ եւ դիտէմք անոնց մէկզմէկէ աւելի կամ պակաս իշխանութիւն չունենալը, բայց երբոր կառնումք ձեռքերնիս Առաքելական կանոնադիրը՝ որուն հեղինակները կը յիշուին, Թադէոս, Փիլիպպոս եւ Դուկաս Առաքելները, եւ կամ Պօղոսի աշակերտը, կը տեսնամք որ Հռովմի դրութեան եւ պահանջած կերպին հակառակ, կսկսի Երուսաղէմի գլխոյն Յակոբայ Առաքելոյն Պատրիարքութենէն, եւ ամեն մէկ Առաքելները եւ յաջորդները, Գեւորտ, Առաքել, Հրոնգոս, եւ Բարսիլ անուանելով իւրեանց վիճակաց, եւ ամենեւին Պատրոսի ընդհանուր եկեղեցւոյ արեւելեան հրամանատար եւ Առաքելոց իշխան կամ գլուխ ըլլալուն շնորհակց մը չը ցուցնելով, ինչպէս:

Նախ եւ յառաջ (162) Ընկալաւ զձեռնադրութիւն Քահանայութեան. քաղաքն Երուսաղէմ եւ ամենայն աշխարհն Պաղեստինացոց

եւ Սամարեայ, եւ Փրշքչտայիք, եւ դաւառն  
Ասիացոց, եւ Թիւնիկէ եւ բնակիչք կեդարու  
'ի Յակոբայ Առաքելոյ, ոք եղև Հրամանադատ և  
Առաջնորդ եկեղեցոյն Մաղիմայ, որ շինեցաւ 'ի Սիմոն :  
« Բ. (103). Ընկալաւ զձեռնադրութիւն Քա-  
հանայութեան յԱռաքելոյն՝ Աղէքսանդր մեծ  
եւ Թեոփայիթ, եւ ամենայն եղիպտոս եւ աշ-  
խարհն փիլիսոնի մինչեւ 'ի սահմանս Հնդկաց, 'ի  
Մարկոս Աւետարանչէ, զի նա եղև Գլուխ և Հրամ-  
նադար անդ, նաև Առաջնորդ, եւ շինեաց զեկեղե-  
ցիս, եւ կարդեաց 'ի նմա քահանայս եւ պաշտօնե-  
ւայս սուրբս, պարկեշտս եւ անարատս » :

« Գ. (104). Ընկալաւ զձեռնադրութիւն Քա-  
հանայութեան յԱռաքելոյն Հնդիկք եւ ամենայն  
դաւառք որ շուրջ զնովաւ եւն մինչեւ 'ի Թոփս  
վերջին, 'ի Թովմայէ առաքելոյ, զի նա եղև  
անդ քարոզ եւ Առաջնորդ և Ոստանչիւ, շինեաց  
զեկեղեցիս եւ կարդեաց 'ի նմա քահանայս եւ  
պաշտօնեայս » :

« Դ. (105). Ընկալաւ զձեռնադրութիւն Քա-  
հանայութեան յԱռաքելոյն Անախոքն մեծ փոխ-  
գիտ, եւ կիլիկիա եւ Գաղատիա, մինչեւ ցՊոնտոս  
'ի Սիմոնէ վիմէ, վասն զի նա եղև զհիմունս եկե-  
ղեցւոյն յԱնախոք, եղև անդ քարոզ, Գլուխ և Ա-  
ռաջնորդ եւ հաստատեաց զեկեղեցիս, կարդեաց  
անդ քահանայս եւ պաշտօնեայս, եւ եղև ան-

\* Այս վերջի տողը՝ մէկ օրինակին՝ մէջը չկար ;  
բայց մենք վիճարանութեան տեղի չտալու համար  
դուրս չի ձգեցինք, ասոր ալ բացատրութիւնը տես

դէն մինչեւ 'ի դնալն 'ի քաղաքն Հռովմ վասն Սիմոնի կախարդին ։

• Ե. (100). Ընկալաւ զձեռնադրութիւն քահանայութեան յԱռաքելոցն մեծն Հռովմ քաղաք եւ ամենայն իտալիա, եւ Սպանիա եւ Փիլիպիտանիա եւ Գալիլեա, հանդերձ այլովք՝ որք շուրջ զնովաւ կամ ինմին 'ի նոյն Առաքելոյ 'ի Սիմոնէ վիմին հաւատոյ, յետ կործանելոյ ըզկախարդն Սիմոն, եւ եղև անդ Գլուխ և Կաթողիկոս Առաքելոց, շինեաց զեկեղեցիս եւ հաստատեաց ինմա եւ որ շուրջ զնովաւ, կարգեաց քահանայս եւ պաշտօնեայս եկեղեցւոյ ։

• Զ. (101). Ընկալաւ զձեռնադրութիւն քահանայութեան յԱռաքելոցն Եփեսոս եւ Թէսաղոնիկէ եւ ամենայն Ասիա, եւ ամենայն աշխարհն կորնթացոց, եւ Աքայիա, եւ ամենայն որ շուրջ զնովաւ 'ի Յովհաննէ Աւետարանչէ, որ անկաւ զլանջօք Տեառն, շինեաց զեկեղեցիս անդ յԱռաջնորդութեան իւրում, եւ Եղև Գլուխ և Կաթողիկոս 'ի նմա քահանայս եւ պաշտօնեայս ։

• Է. (102) Ընկալաւ քահանայութիւն ձեռնադրութեան յԱռաքելոցն 'ի Բիւզանդիա եւ ամենայն աշխարհն Թրակացոց եւ որ շուրջ ըզնովաւ մինչեւ 'ի գետն մեծ, որ որոջէ զսահմանըս բարբարոսաց 'ի Ղուկայ Առաքելոյ, զինա

---

« Էւտագոթութիւն յաղազս ինդրոյն այնորիկ, թէ արդեօք զնացեալ իցէ սուրբն Պետրոս յԱռաքելութիւն 'ի Հռովմ » Ըսուած գործոյս մէջ, եթէ հրատարակուի ։

շինեաց անդ զեկեղեցիս եւ կարգեաց քահանայս եւ պաշտօնեայս ։

• Ը. (103). Ընկալաւ զձեռնադրութիւն քահանայութեան յԱռաքելոցն Նիկիա եւ Նիկոմիդիա, եւ ամենայն աշխարհն փութանացւոց եւ կուտինացւոց, եւ կողմունքն՝ որ զնովաւեն, Անդրէի Առաքելոյ յեղբօրէ Վիմին հաւատոյ Սիմօն Պետրոսէ, զի նա եղև Առաջնորդ և Հրամանադատ, և Գլուխ, շինեաց զեկեղեցիս եւ կարգեաց ինոսա քահանայս եւ պաշտօնեայս ։

• Թ. (104). Ընկալաւ զձեռնադրութիւն քահանայութեան յԱռաքելոցն յՍուհայ եւ ամենայն քաղաք որ շուրջ զնովաւ, Մծբին, Արարիա եւ սահմանակից Միջագետաց. Հայք, եւ ամենայն Հիւսիս, եւ Հարաւ, եւ որ շուրջ ըզնովաւ ՚ի Թագէտսէ Առաքելոյ, որ մի է յԵօթանասնիցն, շինեաց զեկեղեցիս, կարգեաց քահանայս եւ պաշտօնեայս ։

• Ժ. (105). Ընկալաւ զձեռնադրութիւն քահանայութեան Առաքելոցն, Պարսք, եւ Մարք, եւ Պարթեւք եւ ամենայն Ասորեստան եւ Խուժաստան, եւ ամենայն որ շուրջ զԲաբելոնիւ մինչեւ ՚ի սահմանս Բողաց, եւ մինչեւ ցրօք եւ Մագոք եւ աշխարհք՝ որ շուրջ զնովաւ դայնօքիւք կողմամբ, յԱդդէէ կերպասագործէ յաշակերտէ Թագէի Առաքելոյն, որ Թագաւորն Աբգար բժշկեաց յուրուք ցաւոյ ։

• Իակ (116) Պօղոս Առաքելոյն համաշունչ

աշակերտօքն շրջէր ընտանեբար հողագրեայ ընդ ծով եւ ընդ դամաք եւ ընդ կղզիս հեռաւորս զկողմանս հեթանոսաց . զՀիւսիւս եւ զԱրեւելս , զՀարաւ եւ զԱրեւմուտս լի առնէր Աւետարանաւն Քրիստոսի , հաստատէր զՀիմունս եկեղեցւոյ խրատէր եւ կարգէր քահանայս եւ պաշտօնեայս :

(107). « Բայց Առաքեալքն ընկերք նոցա եւ Առաքելից չոքան յաշխարհս Քաբեղացւոց , եւ յաշխարհս հեռաւորս , ըստ մարդարէութեան Մովսէսի . թէ՛ «կայոց զօահմանս հեթանոսաց . զթուոյ հրեշտակաց Աստուծոյ» . նա եւ ըստ եօթանասուն եւ երկու լեղուացն որ բաժանեցան յաշտարակէ անտի , Եօթանասուն եւ երկու Աշակերտք կամ՝ Առաքեալք ըստ լեղուաց սլաողամաւորք քարոզք Առաքեցան ՚ի Քրիստոսէ յողորսս աշխարհի , եւ շրջէին խոնդ ոջէ ՚ի տեղի եւ քարոզէին զԱւետարանն Արքայութեան : Զի որպէս յաշտարակէն ցրումն , նոյնպէս եւ ՚ի յաջէն Ժողովումն , եւ միաբանութիւն եղեւ ՚ի ձեռն Հոգւոյն Սրբոյ , ՚ի հաւատս ճշմարտութեան , այլ եւ սքանչելի նըշանօք եւ ճշմարիտ բժշկութեամբ հաւանեցուցանէին , աշակերտէին եւ ուսուցանէին քահանայս եւ պաշտօնեայս , եւ կատարեցան բարի անուամբ , վարուք եւ նահատակութեամբ , վրկայութեամբ եւ խոստովանութեամբ յանուն Բնութի Քրիստոսի , որպէս եւ Աշակերտքնո-

ցին հերեւեցան վարդապետաց խրեանց մինչեւ 'ի վախճան :

Եւ վերջապէս օրինակ մ'ալ կը դնեմք հաս, որ մեր սուրբ Գրիգոր վկայասէր հայրապետը, որ սուրբ Լուսաւորչայ շառաւիղն էր, իւր ներքողին մէջ Յակոբ աեառն եղբայր Սրբաղան Առաքելայն համար կը գրէ իբր. 800 տարի յառաջ, որ ո՛չ Առաքելաց եւ ո՛չ մէկ երեւելի Սուրբի մը համար գրուած է 'ի նախնեաց այս օրինակ ներքող մը եւ արժանավայել յաակութիւններով այսպիսի գովեստ մը. ահա՛ ընթերցողաց եւ Հռովմէասիրաց գայթակղեալ միաբերբ լուսաւորելու համար, այս վկայութիւնը բաւական կը համարիմք մեր ճշմարտութեանը ըստ այնմ :

(108) . ՝ Ո՞վ անարատ մարդդ Աստուծոյ ֆեւ եւ իճեռն քոյդ բանի լցաք եւ արբեալ դնայլեցար գինեաւ Աստուածային հոգւոյն : Որ քերականցեալ գործով ճեմարեցար 'ի Մեծին Կոթազառէն Յետոսէ ֆրէգոսէ՛ բան զանմարմին դատաւրկնաւորաց : Ո՞վ Արդարդ Յակոբոս օրդի արդարոյն Յովսէփայ, հօրն Քրիստոսի ըստ մարմնոյ՝ որոյ դու եղբայր հարազատ արժանաւորեցար լինել : Ո՞վ որ հրեշտակոցն եւ ցանկալի՛ եւ հրեղինացն փափաքելի : Ո՞վ երկնայնոցն բողձալի՛ եւ անմարմնոցն սարսափելի : Ո՞վ Սերովբէիցն հիանալի՛ եւ ֆերովբէիցն զարմանալի : Զի եւ ոչ նօքին բաւեն ճառել զՄեծութիւն սրբութեան քոյ վայելուչ, թող թէ երկրաւոր-

քրս եւ հողերդէնքս, . . . . .  
 Նախքան զհնարեալսն 'ի սկզբաննէ 'ի Ռա-  
 նէն ընտրեցար, եւ յառաջքան զկոչեցեալն 'ի  
 ծովէն՝ սիրելի եւ սպասաւոր Նորին եղար: Դո՛ւ  
 'ի Յիսուսէ վարդապետեալ՝ Խրիստոս էր: Սը-  
 քազան Առաքելոցն: Որ իժամ՝ չարչարանաց խա-  
 չին 'ի խռովել նոցին եւ յամբոխելն, Դո՛ւ իբ-  
 րեւ զվէժ անչարժ մնացեր, եւ իցրուելն նոցին  
 ի գթելն եւ 'ի գլորելն, Դու ձեռնառու եղեալ  
 խրատու բանիւ յարուցանելիր: Դու եւ զվասն  
 մեր խաչեալ Քրիստոս զանմահ թաղաւորն յա-  
 րուցեալ տեսեր, որ փեղ միայնոյ առանձին ե-  
 րեւեցաւ իբրեւ Եղբօր սիրելւոյ եւ հարազատի,  
 եւ սրտապնդեալ հաստատելիր յանձին քում:  
 Դու քան զամենեսեան խոնարհ գոլով եւ սրբ-  
 քառիրտ՝ ո՛վ սուրբդ Յակոբոս եւ հեղ հողւով,  
 նմանեցար Եղբօրն ինչ Ասորոսն ժբոյ: Մաքուր  
 հողւով եւ անարատ մարմնով, անախտ մտօք  
 եւ արդար գործովք: Վասնորոյ Առաքելապետ  
 յանէ եղէր ընդհանել զհոսանս Հոգոցն որքոյ, ըստ  
 Աստուածազան Առաքելոցն 'ի Ս. վերնատունն,  
 եւ զմայլեալ անմահացար անհմահական բաժա-  
 կաւն. վասնորոյ եւ զընդհանուր տիեզերս ար-  
 բուցեալ զովացուցանես կենդանարար վարդա-  
 պետութեամբ՝ Աստուածաբան Գոթղթովդ՝ Ո՞վ  
 սուրբդ Յակոբոս՝ որ 'է նոցանց ինչ գերագաննեցն  
 (այսինքն Առաքելոցն) գերազանց պարտաւ զարտեալ  
 ժեժեցար 'ի հողերդինաց հրեղէն լեզուացն, եւ  
 մանաւանդ 'ի հրեղինացն. վասն զի նորա հողիք



են հարկաւորք եւ սպասաւորք, իսկ Դու՛ գրկովդ  
 բարձեր եւ սնուցեր զտղայացեալն Աստուած.  
 եւ սննդակցութեամբն հարազատ Յիսուսի՛ եւ  
 ժառանգակից նմին եղեր յԵրուսաղէմն վերին,  
 Բողատիպ լինուքն Առաքեալքն Աստուծոյ եւ քա-  
 ըողք տիեզերաց: իսկ Դու Եղբայր Տեառն մե-  
 ըոյ ըստ մարմնոյ՝ եւ մասին Տեառն ժառան-  
 գորդ նոր ժողովրդեանս խրայէլի, որ քրիստոսի  
 Նոր կացեր է քահանայապետական Արտա ՚ի վիճակ  
 ժառանգութեան Նորա ՚ի զգալիս Երուսաղէմ:  
 Եւ Բրիստոսաբար արժանաւորապէս ֆահանայա-  
 գործել զինի Նորին Դու միայն իշխեցեր ՚ի Սուր-  
 բըն Սրբոց մտանել համարձակապէս մատուցա-  
 նելով Պատարագ: Ո՛չ զանբան ողջակեզն՝ այլ  
 զնոյն ինքն զփրկիչն մեր Յիսուս Բրիստոս զա-  
 նարատ Դառն Աստուծոյ զբարձոցն՝ մեզաց աշ-  
 խարհի, զոր խորհրդաբար տպացուցեալ է հաց  
 եւ ՚ի գինի բաշխեաց զինքն ՚ի սուրբ վերնա-  
 տունն: Եւ յետ Նորին ՚ի նոյն տեղով զառաջի-  
 նըն Եղբայրական վստահութեամբ, նախ Դու  
 բաշխեցեր է փրկութիւն ամենայն հաւատացե-  
 ըոց, եւ ետուր վստահութիւն ազգի մարդկան  
 ՚ի նոյն Խորհուրդ մերձենալ . . . : Ո՛վ սուրբ-  
 Յակոբոս՝ որ ըստ բանալ գրանն Յիսուսի՛ արա-  
 գապէս փութացար մտանել նովաւ առ Հայր  
 Նորին եւ Հոգին ՚ի ներքին կողմն վարագու-  
 ըին . . . : Արդարդ՝ ընդ արդարսն . Մարգա-  
 րէդ՝ ընդ Մարգարէսն. Առաքեալդ՝ ընդ Առաք-  
 եալսն. վարդապետդ՝ ընդ վարդապետսն. ֆա-

հանայր՝ ընդ ֆահանայան. Եպիսկոպոսդ՝ ընդ Եպիսկոպոսան. Հայրապետդ՝ ընդ Հայրապետան. Վկայդ՝ ընդ Վկայան. Մարտիրոսդ՝ ընդ Մարտիրոսան. Նահատակդ՝ ընդ Նահատական. Ճգնաւորդ՝ ընդ Ճգնաւորան. Կոյսդ՝ ընդ Կուսանան. Համբերողդ՝ ընդ Համբերողան. Ժուժկալդ՝ ընդ Ժուժկալան. Յամենայնի սուրբդ՝ ընդ ամենայն Սրբոյն. Անսուրբդ՝ Բուրբուն. Սրբոյն. մանաւանդ թէ՛ Դո՛ւն Նորունի՛ Անոյն Սրբոյ. թէ՛ եւ քան զբաղումս յետոյ, եւ Պատի Բովանորի Անոյն սրբոյ և Սրբորոյ Տէր սուրբ Թակո՛ք, եւ պարծանք համայնիցն եւ բողոքովն ընդդէմս (ձեռագիր):

Եթէ Հռովմէականաց շլացեալ աշօքը այս վկայութիւնները աչքէ անյնէինք ու Սրբազան Առաքեալներուն եւ Սրբոյ Հարց առ Յակոբոս Առաքեալն ցուցուցած ակնածութիւնը ձեռք առնելով պէս պէս ձեռնարկութիւններ հանելինք. կարծե՛մ Հռովմէականներէն աւելի իրաւունք կունենայինք. քանզի միշտ Առաքելոյ եւ վիճակաւոր Պատրիարքներուն մէջ զանի նախագաս կը տեսնեմք, սրբոյն Սիճնի Առաջին Պատրիարք ընտրուելուն համար, Առաքելական դատուն մէջ Մեծ պատիւ ունեցող կը համարվէր, բայց որովհետեւ մեր նախնիքներէն մանաւանդ Հայաստանեայցս Լուսաւորիչ Ս. Գրիգոր Բահանայապետէն Հայաստանը լուսաւորած ժամանակը, երբոր Արաաշատի դռքէն ելաւ ու վաթսուն եւ վեց օր քարողեց ժողովուրդը, Աւետար

տարանական լուսով մերժելով կռամոլութեան  
 խաւարը, ու ազատեց սատանայական դերու-  
 թենէն սկսաւ աշխարհիս ստեղծագործութենէն  
 մինչեւ Քրիստոսի վերկագործ տնօրէնութեանցը  
 վրայ տեղեկութիւն տալ, ու ծանօթացոյց ժո-  
 ղովորդեան վերկարար հաւատոյ լոյսը, ուսուցա-  
 նելով Երրորդութեան, Մարդեղութեան, եւ  
 Հոգւոյն սրբոյ՝ Աստուածութեան խորհուրդ-  
 ները եւ այլն: Եթէ այսպիսի ամենահարկաւոր  
 հաւատք մը կար, Երրորդութեան խորհուրդէն  
 կարեւոր կամ նոյն խորհուրդին համաձայն, (որ  
 է Պետրոսի Առաքելապետութիւնը եւ անոր  
 յաջորդացը Տիեզերական Իշխանութիւնը,) ին-  
 չո՞ւ համար հաւատոյ խորհուրդները չքարոզած,  
 այս ամենահարկաւոր պատուիրանէն չսկսեց քա-  
 ռողելու, եւ կամ թէ ինչո՞ւ իւր քարոզութեան  
 ընթացից մէջ կարգը եկած ժամանակը չըսաւ  
 (ինչպէս այսօր կը պահանջէ Պապը ընդհանուր  
 եկեղեցիէն) ուսուցանելով թէ՛ Հոգւոյ եկեղեցին  
 է ընդհանուր Քրիստոսի եկեղեցին, եւ անոր գլուխը  
 Պապը մնալ ճշմանն + ու չը հնազանդէ, ամենին այս  
 ըրած + արդարեւններս յեղի չէն Բասիլեան փրկա-  
 խառնարդ ըլլալու, այլ պէտք է նախ և յառաջ Քրիս-  
 տոսի, ետք անոր փոխանարդ Տիեզերական հոգւոր  
 բաժանարարը ճանչնալ, վասն զի անոր մայն հնազանդե-  
 լով, փրկա-խառն ճանքան մեզ ապահով չըլլան, քո-  
 որոսմ անոր յետն է Արտայոն-խառն Բանալին: Ահա այս  
 եղանակ քարոզութիւն չընելէն եւ այս օրինակ  
 հարկ մ'ալ ժողովրդեան վրայ չը դնելէն՝ ի դատ

ինքը եւ իւր յաջորդներն ալ չը քարոզեցին , քանզի գիտէին որ ամենքն ալ հաւատար իշխանութիւն ունին Առաքեալք , եւ նախնական եկեղեցւոյ Հայրապետք , այսպէս հաւատար կը քարոզէին . վասնորոյ եկեղեցւոյ հին տօնելի վարձակներէն մէկուն Առաքելոց ժամանակակից եւ Պօղոս սրբազան Առաքելոյն աշակերտ , սրբոյն Դիոնէսիոսի Արիսպաքացւոյ խօսքովը վերջ կուտանք խօսքերնուս , որ Առաքելոց ընտրութեանց վրայօք խօսած ատենը կըսէ (109) . «Եւ ինքն աշակերտաց դիսաւորն հանդերձ համապարօն Գահանայադեպական իւրով ասանելէ՝ 'Ի յերկոտասաներորդի թուոյ աշակերտացն եկեալ կատարուին՝ զընտրութիւնն յԱստուծապետութեանն թողոյր երկիւղիւ , Յայանեա՛ ասէ , զոր ընտրեցեր» : Այս Սրբոյս սքանչելի խօսքին մէջ նկատելու արժանի է համապարօն Գահանայադեպ քառերը . որով դիտնալու է նախնեաց Առաքելոց իշխանութեան վրայ հաւատարութեան ըմբռնումը . որն որ լատինաւոց Ամբրոսիոս երեւելի Հայրապետը կը գրէ Պետրոս սրբազան Առաքելոյն համար , որ այս Ս . Դիոնէսիոսին գրածին համեմատ կուգայ , ինչպէս կըսէ (110) . «Առաջնութիւն դաւանութեան , եւ ոչ թէ՛ պատուոյ . առաջնութիւն հաւատոյ , եւ ոչ թէ՛ կարգի» (Գր . Յգ . Մարդեղ . Գլ . Դ .) :

Վասնորոյ թէ նախնեաց սրբազան հաւատոյն եւ թէ իրենց ընդունած եկեղեցւոյն տօնելի Հայրապետին գրութեանցը դէմ , բոլորու-

վին կը մտնան չի Հ. Պալճեանը, Ամբրոսիոս կը գրէ «Ոչ պատուով եւ ոչ կարգով» մեծ է Պետրոս Առաքեալը, միւս Առաքեալներէն, ընդ հակառակն Հ. Պալճեանը իր Աթու Պետրոսի գրոյն մէջ միւս Առաքեալները հոգեւոր իշխանութենէն զրկելով հոգեւոր արտօնութիւնները ու ձիրքերը միայն, միայն, միայն ըսելով Պետրոսին վրայ անիրաւ կերպով մը կը բեռցնէ, ինչպէս որ յերես 51, կը կոչէ զԱռաքեալս հօտ նկատմամբ առ Պետրոս, եւ զնա հովիւ նոցա կանուանէ, եւ կերպով մ'ալ Պ. Չամուրճեանը կը մօտենայ այս օրինակ վարդապետութիւններուն: Սակայն Հ. Պալճեանին, եւ անոր նման հաւատակից միանդամայն երեւելի մատենագիր Հ. Գաբրիէլ Աւետիքեանը, Պօղոսի մեկնութեան մէջ, (հատոր Ա. եր. 225) 'ի ճշմարտութենէ բռնադատեալ, իրենց նոր դրսութեան հակառակ, բոլոր Առաքեալները հաւասար առաջին եւ գլուխ կանուանէ. Պետրոս Առաքեալը չը զատելով, ըստ այնմ (111). Առաքելոց յիշեցուցում էբբե- Գլուխ ճորճոյ եւ Առաքելոց, 'ի ճշմարտութենէ ինչոյ որ ճորճոյ եւ այլն: Գուցէ այս մատենագրին գրածէն ամենան եւ պատկառին Մ. Միաբանները եւ հոովմէասէր տատարածայները\* . . . : Եւ նոյն Մեկն. մէջ հատոր

\* Բայց գուցէ թէ այս Հ. Գաբրիէլին համար ալ այժմ բողոքական է ըսեն Պապամօսները, ինչպէս որ մօտերս Մասիս լրագրին դէմ Վիեննայու Մ. միաբանութենէն հրատարակուած տետրին մէջ

Ա. եր. 402 կը գրէ թէ «Ոչինչ ուսումն եւ օրէն կարէ լինել առողջ, եթէ ոչ համաձեւ լինիցի Աւետարանին»: Ահա մեր խնդիրն ալ այս է . . . :

Եթէ նախնեաց գրուած սց դէմ ուղղակի եւ անուղղակի կերպով զինկը եւ հակառակիկը բողոքականութիւն է, եւ լուսերականութեան (ինչպէս վերն ալ ըսինք) յորմէ փրկեսցէ զմեզ Աստուած. այսինչ տեսակ բողոքականութիւն է, եւ ո՛ր աղանդապետին հեղինակութիւնն է, որ նախնեաց հեղինակութիւնը պաշտպանելու նպատակաւ զանոնք եղծանելու ընթացքը բռնուած է, ինչպէս Ահա՛ն մէջ կը կարդամք, որ Լուսաւորչի գաղափարին դէմ եւ անոր դիտաւորութեանը հակառակ փաստ մը կառաջարկէ. իբր թէ ամեն եպիսկոպոս ձեռնադրելոյ կառաջարկուի եւ կը պահանջուի եղեր Պետրոսի յաջորդաց հնազանդութիւն\* . թէ եւ բերած Մաշտոցին

երեւելի Բարոնիոս Կարախնային համար գրեցին՝ իրենց գրութիւնը եւ միանգամայն շնորհ Պատերազան Բո՛ւ Լուսաւորչի գրելուն համար, Պ . Խթիւճեանը\* վասն զի իր փաստը արդարացնելու համար, նոյն երեւելի հեղինակէն վկայութիւն առած էր :

\* Այս գործն բոլորովին խարդախ ըլլալը, եւ Պ. Չամուրճեանին բերած վկայութիւնը անփաւեր ըլլալը կը վկայեմք, ընդ որում նախ իրեն բերած Մաշտոցի վկայութիւնը Կիլիկիեցոց ժամանակի զբուռած գրութենէն առած է, եւ այն ալ կարծեմք Աոստանդին Կատուկեցի ծխափոխ Լատինացեալ Կաթողիկոսին օրսիւր գրուած օրինակէն է, որուն

զուտ վկայութենէն լուսաւորչայ յաջորդացը աշակերտիլ, հետեւիլ եւ հպատակիլ կապացուցուի վասն ուղիղ հաւտացն եւ կամ իբր իւր օրինաւոր Գլխոյն . սակայն Զահաւէն հեղինակը՝ բերած վկայութեան հաստատութեան եւ ուղղութեանը վրայ վստահ չըլլալով, բառերուն դասաւորութիւնը կը խանգարէ, եւ իւր քմացը համաձայն մեկնութիւն տալով՝ կը հետեւցընէ Պետրոսի յաջորդացը հնազանդիլ :

Եւ արդ՝ ճշմարիտ աշակերտքս հաւատոյ

---

օրինակը մենք ալ ունիմք, այն օրինակն է՝ որ Ալիկիայու հանգուցեալ Արաիոս Աթողիկոսը հետը բերած էր Պօլիս 1818 եւ 19 ամին ժամանակները բաժանեալ Հոովմէական հայերուն հետ միաբանութիւն ընելու պատճառաւր եւ երկրորդ 1830 թուին Սուրբ Էջմիածնայ Մայր Աթոռը դանուած ժամանակըս, երկու անգամ ձեռնադրութիւն եղաւ այժմեան ղ հհապետին (Ներսէս) ձեռօքը, եւ մեր անարժանութիւն ալ սպասաւորութեան հրաւիրուած գտնըսուելով, ներկայ էի ձեռնադրութեան, բայց յիշեալ թէ մեր քովը դանուած եւ թէ Չամուրճեանին բերած օրինակներուն խօսքերը բնաւ չկար, այլ զըրեալ էր այսպէս (110) Աշակերտիս եւ հետեւիս, եւ կամ թէ Ալամիս դու Նրանելոյն Թաղէսի եւ Բարթոլէմիոսի եւ յաջորդի նոցին որբոյ հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչացն, որոց կտ Տէրն մեր զիսկանս արքայութեան երկնից եւայլն ւ Ուստի ինչպէս ըսինք անվաւեր յաղբերէ առած է Պ. Չամուրճեանը իւր բերած վկայութիւնը, ինչպէս սր վերը Բ. Մասին մէջ ալ ցուցուցինք :

Սրբոյն Գրիգորի, անկէց այս տեսակ վարդապետութիւն մը եւ հարկեցուցիչ հրաման մը չըլտեցինք, եթէ պէտք ըլլար, ժրաջան մշակըն Գրիստոսի, Վէմն հաւատոյ, Գլուխն եկեղեցւոյ Սուրբն Գրիգոր՝ չէր դանդաղէր ուսուցանելու, եւ իրաւամբ եկեղեցեաց մէջ կարգացուած Աղօթներուն եւ Սուրբ Պատարագին մէջ սկսեալ՝ ի Լուսաւորչէ անտի մինչեւ ցայժամ կը յիշատակէինք, եւ ամէն մէկ ձեռնադրբեալներուն կառավարկուէր ի նախնեաց անտի Հռովմի հնազանդութիւն, բայց որովհետեւ Հռովմի քահանայապետաց հնազանդելու ի նախնեաց պարտականութիւն մը տրուած չէ, զորն որ մենք ալ այժմ մեզի գլուխ չճանչնալնուս համար, Լուտերական կամ Կալուինական համարութիւնք, այլ ինչպէս մեր նախնի Սրբազան Հայրապետներէն տեսանք, այնպէս կը քալեմք սակայն զայս եւս կըսենք Չամուրճեանին թէ երբոր ամեն ժամանակ կը հարցուի ձեռնադրելի անձանց, «Աշակերտի՞ս եւ Հետեւի՞ս» այս ինչ Աստուածաբանին եւ այս ինչ Հայրապետին անոնց Հայրապետական իշխանութեան հնազանդի՞լ կը հասկուցուի, թէ անոնց Գրիստոսական Սուրբ ուղղափառ ողջամիտ հաւատոցը եւ վարդապետութեանցը շաւղացը հետեւիլ կիմացուի հարկա՛ւ պիտի ըսէ թէ անոնց հաւատոց եւ ոչ ուրիշ մէկ բանին, որպէս զի հետեւութիւնը ուղիղ ելլայ, եթէ ըսէ անոնց իշխանութեանը իբրեւ Գլխոյ ընդհանուր եկեղեցւոյ, այն ատենը



ընդհանուր եկեղեցին շատ արեղերական եւ  
 ընդհանրական գլուխներ կունենար, վասն զի  
 ձեռնադրելոց շատ ուղղադաւան հայրապետ-  
 ներ կառաջարկուին, ինչպէս Միտարանին մէջ  
 յայտնի է, ուրեմն այսպէս ալ եպիսկոպոսաց  
 կառաջարկուին հետեւել Պետրոսի իրեն դաւա-  
 նութեանը համար, եւ լուսաւորչի ու անոր  
 յաջորդներուն հաւատոյ լուսով զհայաստան լու-  
 սաւորելուն համար, անոնց հետեւելու եւ հը-  
 պատակութիւն մը ցոյց տալու, քանզի ընդհա-  
 նուր եկեղեցին եզակի միապետական երեւելի  
 գլուխ չունի, (բայց ՚ի իւր սեպհական օրինա-  
 ւոր Գլխէն որ ամեն ազգ. Առաքելական յաջոր-  
 դութեամբ Աստուծոմէ պարդեւեալ իրենց ե-  
 կեղեցւոյն Գլուխ ունին, եւ անոնց վրայ ալ ընդ-  
 հանրապէս միապետական եւ ընդհանրական ե-  
 րեւելի եւ աներեւոյթ Գլուխը ինքն Ֆրիստոս  
 Աստուած է, որ աներեւութաբար կը կառա-  
 վարէ իր եկեղեցին), ինչպէս շատ փաստերով  
 ապացուցուեցան եւ այս օրինակ հազարաւոր օ-  
 րինաւոր վկայութիւններ ալ կրնան ցուցվիլ:

Եւ վերջապէս կրտսմբ Պ. Չամուրճեանին,  
 եթէ այս վերողորեալ Սրբազան Հարց վկայու-  
 թիւնները բաւական չեղան իրեն, ահա՛ վկա-  
 յութիւն մ'ալ կը դնենք հոս եւ միանգամայն  
 ակնոց մը համարելով իր աչքին, դուցէ թէ այս  
 վկայութենէն իմանայ եւ տեսնայ, որ իր բըռ-  
 նած ընթացքը սնտոի, խաբէական, մոլորական  
 եւ ազիտական է, որնոր միայն կամ իր նպա-

տակին հասնելու համար եւ կամ ակնոց մը չունենալով քթին վրայ այս վերոգրեալ վկայութեանց խոհական մտօք եւ լուսաւոր աչօք չէ տեսեր կամ կարդացէր եւ քններ, որ իր դրութեան որքան անտեղի ըլլալը հասկնար, ահա՛ սոյն վկայութիւնը իբրեւ կնիք բանիս կը դնենք առջին, որ իւր բերած վկայութիւնը Պետրոսի համար որքան անտեղի ըլլալը իմանալով, դուցէ կամ ամէնայ եւ կամ դարձի գալով ինքք խոտովանի, թէ բերած վկայութիւնները Պետրոսի համար սխալ, մոլորական, միանգամայն անտեղի դրութիւն է, որովհետեւ եկեղեցւոյ Մեծ տօների եւ հռչակաւոր Հայրապետներուն մեկուն գրածն է, որ ինքք չկրնար արատ մը քսեր, եթէ եկեղեցւոյ զաւակ է, ահա՛ այն է Սուրբ Գրիգոր Նիւսացի երեւելի հայրապետը. Այս երանելի հայրապետը Գրիստոսի թաղման ճառին մէջ, իւղարեր կանայքը, առաքեալ, եւ վարդապետ եւ աւետարանիչ կանուանէ, Սրբոց առաքելոց եւ վարդապետաց եւ միանգամայն Պետրոսի, ուրեմն ըստ դրութեան Հրուովմէականաց եւ Պրուսացւոյն, Պետրոսի եւ Առաքելոց աստուծոյն Գլուխի եկեղեցւոյ զաւաններու է իւղարեր սուրբ կանայքը, վա՛յ անտեղի գրութեան եւ մոլորական վարդապետութեան նոցին . . . ( որ առանց ամչնալու տլ Հ. Պալճիւեանը իր Աթոռ Պետրոսի անուանեալ մատեանին մէջը վա՛յ կուտայ իւր դրութիւնները չընդունողներուն, (տե՛ս եր. 97) : Սրդ կըսէ ե-

րանելին ֆրիստուսի բերնէն առ կանայս թէ՛  
 (112) Երթայք եւ պատմեցէք եղբարցն իմոց՝  
 Նայեցարուք յիս եւ տեսէք (ասէ) որպէս անյիշա-  
 չար եւ երկայնամիտ դողով, եղբարս կոչեմ զայնո-  
 սիկ, որք թողին զիս ի ժամանակի յօնչին: Գիտեալով  
 երկայնամտեմ թշնամեաց, զիսեմ ՚ի ակարու-  
 թիւնս ծառայից իմոց պարաբերիլ: Երթայք  
 պատմեցէք աշակերտացն իմոց՝ զոր ինչ տեսիքդ՝  
 Ն֊իարբէ + Ե֊ Վարդադէր + Եղբրո֊ + Վարդադէրոցն աշ-  
 Իարբէ: Գիտասցէ Պետրոս որ ուրացան զիս, զի  
 կարող եմ եւ կանայս Աստեալս Ես Աստորանիչք  
 Յեռնարբէ, որ ի ծովակէ առեալ զորորդս ձը-  
 կանց՝ մարդկան արտորդս փոխադրեցի: (Գրի-  
 դոր Նիւսացի, Յաղագս թաղմանն ֆրիստուսի):

Եթէ վերոյգրեալները բաւական չեղան՝  
 դուցէ բաւական կը համարի Պ. Չամուրճեանը  
 այս վկայութիւնը իր Զօհրէն մէջ հրատարա-  
 կած դրութեանը դէմ. բայց միանգամայն վախ-  
 նալով, արդէն կաղղեմք եւ կղզու շայնեմք  
 զինքը, որով պատճառ մ'եղած չըլլանք իրեն,  
 այս վերոյգրեալ վկայութեամբ ուրիշ դրութիւն  
 մ'ալ հնարել տալով, իւղաբեր սուրբ կանայքը  
 Առաքելոց եւ բովանդակ եկեղեցւոյ ուսուցիչ  
 եւ վարդապետ քարոզել (Պետրոս Սրբազան Ա-  
 ռաքելոյն համար դրուած գովեստի եւ յար-  
 դական դրութեանց նման). այլ խոնարհաբար կը-  
 տենք իրեն, թէ դիպցած ըլլայ որ այսպիսի գու-  
 րեստի եւ ճարտասանական ձեւերով դրու-  
 թիւնները ո՛չ միայն Առաքելոց եւ անոնց յա-

Ջորդաջը զրուցած են նախնի Սրբազան Հարք , այլ եւ իւղարեր կանանց եւ Մարտիրոսաց ալ : Ինչպէս կրնժեռնումք 'ի Շարականի , «Տունկ անմահութեան . . . Անշէջ ճառագայթ , եւ այլն , եւ այլն» : Որ եթէ բառին իրական նշանակութեանը նայելու ըլլանք՝ Աստուծոյ միայն կը զրուցուի . այլ աս տեղը , ուր գրուած է , իրենց հաւատոցը համար այլաբանօրէն եւ ճարտասանական ձեւերով զրուցուած գովեստներ են , եւ ոչ հաւատոյ դաւանութիւն կամ վարդապետութիւն : Ինչպէս որ ասկէց զատ մեր երանելի Գիւտ կաթուղիկսն ալ աս վաչագան Աղուանից թագաւորին գրած գրոյն մէջ ալ կայ , որ Աստուծոյ կը նմանցընէ յիշեալ թագաւորը : սլատճառ՝ յուրացութենէ դառնալով՝ Գրիստոնէական հաւատոյն վրայ հաստատուելուն համար :

Ըստ այնմ (113) . «Եթէ արասցէ ոք սրպէս արարերդ , մարդկան անհաւատալի , հրեշտակաց զարմանալի , Աստուծոյ շնորհիւ , որ եթող զանժիւ բիւր բազումս հրեշտակաց , եւ եկն 'ի գծուծ կերպարանս գտաւ մարդ : Բ՞ Բ՞ Բ՞ Աստուծոյ շնորհիւ . նա բոլոր աշխարհի եղեւ կեանք եւ միրկութիւն . եւ Դ՞ Բ՞ Բ՞ աշխարհի Բ՞ Բ՞ Բ՞ շնորհիւ կենաց եւ Բ՞ Բ՞ Բ՞ եւ Բ՞ Բ՞ Բ՞ աշխարհի Բ՞ Բ՞ Բ՞ Հայրենի . . . : Դու արեգական նմանեցար , 'ի Հօրէ զօրացար , յՈրդւոյ քաջալերեցար , 'ի սուրբ Հոգւոյն լուսաւորեցար , 'ի Բնիկի Բ՞ Բ՞ Բ՞ , եւ 'ի Բ՞ Բ՞ Բ՞ Բ՞ Բ՞ Բ՞ Բ՞ Բ՞ հաւատոյ քոց » :

(Թուղթ Դիւտայ, առ վաչագան Արքայ Աղուանից ։)

Ապա ուրեմն այսքան վկայութիւններէն տեսնուեցաւ , որ անտեղի դրութիւն է եղեր Հայր Պալճեանին եւ Պ. Չամուրճեանին բերած յարգական վկայութիւնները Պետրոս Սրբազան Առաքելոյն համար միայն , որ իբր տիեզերական եկեղեցւոյ գլխաւորութիւն մը հաստատել կուզեն այս կերպ դրութիւններով , նոյնպէս եւ անտեղի է ըրած քննութիւնը եւ պախարակելը նախնիքներնիս . Սալանթեան վարդապետին եւ անոր աշակերտաց գրած գատումը . «Մուշայք Արարատեան» ըսուած գրքին մէջ , որ նախնեաց այս վերոյգրեալ գրուածոցը ոչ չդնելով՝ ԳԼԻԲԱՌԻՆ եւ Սրբոյն Սարգսի վրայ շինուած Շարականին համար սնտախ աշխատութիւններ գրած են . վախնալով Հռոյմէականաց տարօրինակ պահանջմունքներէն . որ այս կերպ դրութիւններով անտեղի դրութեամբ մը իրենց Հայրապետը ընդհանուր եկեղեցւոյ վրայ գլուխ կացուցանելու կաշխատին , որոնց արժէքը ինչ ըլլալը ըստ բաւականին գոհութիւն Աստուծոյ կարծեմք հասկցուեցաւ : Եւ ահա այսքանս բաւ համարելով ՚ի տեղեկութիւն համազգայնոց մերոց , դառնանք ուրիշ գիտողութեան մը վրայ , քանզի վերոյիշեալ Սուրբ Գրիգոր Նիւսացի հայրապետին գրուածոցը մէջ ուրիշ խնդիր մ'ալ պարունակուած կայ :

Արդ՝ միւս գիտողութիւնները վերը ըրինք ,

ինչպէս են Առաքեալ, վարդապետ ուսուցիչ եւ այլն խօսքերը սրբազան Հայրապետին, բայց միանգամայն եւջայտ խօսքն ալ կայ ֆրիստոսի Աստուծոյ մերոյ առ սուրբ Առաքեալն զըցուած ինչպէս որ Աւետարանին մէջ ալ գրեալ է. թէ (114). «Ոչ կոչեցի զձեզ ծառայս, այլ ծառայն ոչ գիտէ զինչ գործէ Տէրն. այլ կոչեցի զձեզ եւջայտ եւ բարեկամս» :

Ապաքէն կը հարցնեմք բոլոր հռովմէասիրաց, թէ ֆրիստոս Աստուած, որ իւր Աշակերտները ձկնորսութենէն եւ ստորին մարդիկներէն ընտրելով՝ խոնարհաբար եւ կամ խոնարհութիւն ուսուցանելով անոնց, իրեն իբր եւջայտ կանուանէ նէ, որ Տէրն է վառաց եւ վարդապետ եւ թագաւոր՝ ոչ միայն Առաքելոց՝ այլ բովանդակ աշխարհի Արդեօք ո՛րքան յանդգնութիւն եւ հայհոյութիւն է այս եղբայրութենէն ու հաւասարութենէն որոշել եւ զատել միւս Առաքեալները եւ իբր հպարտիկ և հօր ու շառայ Պետրոսի կացուցանել, ինչպէս որ կընեն հռովմէականք. (Տես Աթոռ Պետրոսի եր. 51):

Արդեօք ո՛ր աղանդապետին հնարքն է այս գրութիւնը, Առաքեալներէն սկսեալ մինչեւ երեքտասաններորդ դարու մէջ նոյն Առաքելոց յաջորդներն անդամ այս կերպ գրութիւն եւ վարդապետութիւն մը շուսուցին ընդհանուր եւ կեղեցւոյ՝ մէջ, եւ զիրենք միմեանց եւջայտ և շեղեցւոյն, եւ շեղեցւոյն և շեղեցւոյն կանուանէին, ուսանելով ֆրիստոսէն, մի՞թէ անոնք հերեւտիկոս

էին, եւ կամ Ս. Գիրքը չէին կարդացեր եւ կամ այս տեսակ դերածայրեալ յարդական եւ գովեստի գրութիւնները չէին տեսած, եւ իրարու գրած շունչին, ինչպէս որ վերը ապացուցինք: Ահա անոնց գրութիւնը ու նոր վարդապետութիւնը նշաւակելով եւ միանգամայն անտեղի ըլլալը ցոյց տալու համար, Առաքեալներէն սկսեալ մինչեւ երեքասաններորդ գորու մէջ. Պատրիարքաց, Հոյրապետաց մէկըզմէկու գրած խոնարհական եւ պարզ գրութիւններուն մէկ քանին հոս կը գնեմք ՚ի յանդիմանութիւն անոնց ծաղրելի եւ խաբէական գրութեանցը, ինչպէս որ վերը խոստացանք, եւ այն ալ բաւական չեմք սեպեր, այլ մեզնէ ետքը եկող աղգասիրաց եւ ճշմարտասէր վանականաց կը թողումք որ կատարեալ մատենագար ունին նէ՝ առաւել եւս լուսաւորեն զաղղը եւ միանգամայն եկեղեցին Աստուծոյ, նշաւակելով այս անտեղի եւ մոլորական գրութիւնը Հռովմէականաց եւ Պապասիրաց:

Ա. Արդ տէրն մեր եւ Աստուած՝ իր աշակերտները եւ Քրիստոսն ի յԱւետարանի, տես Մատթ. ԺԺ. 49: Մարկ. Գ. 34: Ա. յսինքն (115) « ձգեալ զձեռն իւր յաշակերտան՝ ասէ, ահա տասիկ մայր իմ եւ եղբորս իմ » . եւ « երթայք ասացէք եւ Քրիստոսն իմոց » . ( Մատ. ԻԲ. 10: Նոյնպէս եւ Գուկ. Բ. 21: Յովհ. Ի. 17: ) եւ պատուիրեց աշակերտացն ալ ըսելով (116). « Ամենեքին գուրք եղբորս եւ, ( Մատ. ԻԳ. 8: )

Չդիտեմ՝ արդեօք ինչպէս մեկզմեկու՝ վրայ իշխող ու հրամայող եւ ուսուցիչ, կառավարիչ եւ գլուխ եւ ին, կըլլան եղեր, որ արդի Հռովմէական, Պետրոսին համար միայն ճանչցնել կուզեն, որն որ միանգամայն Քրիստոս եւ Քոյր կը կոչէ զՊետրոս միւս աշակերտաց հետ հաւասար, եւ սաստելով ալ աշակերտները. «Ամենքին դուք եւ Քոյր էք» կըսէ, նոյնպէս Պետրոսի համար բնաւ որոշ Գլուխ եւ Առաջին ըլլալու խօսք մը չընեն Քրիստոս, եւ Առաքեալք եւ անոնց յաջորդներն ալ այնպէս կը ճանչնային զիրեարս, ինչպէս ըսին, մինչեւ Երեքտասաններորդ դարըն՝

Նախ եւ յառաջ Պետրոս Սրբազան Առաքեալին համար զրուցենք, որ այս Քրիստոսի պատուիրանացը համեմատ միւս առաքեալները իրեն եւ Քոյր եւ շէշիցից եւ դուռնից կը ճանչնար եւ կը խոստովանէր, եւ ոչ թէ ըստ այժմեան հայհոյելի դրոթեան հռովմէականաց, իշխան, Գլուխ եւ Հովիւ եւ այլն կը ճանչնար զինքը Առաքելոց՝ Սուրբն Պետրոս. եւ միւս Առաքեալները իրեն հօր եւ հոգիակալ եւ այլն կանուանէր. ինչպէս կաղանդաբանէ եւ մանաւանդ կը հայհոյէ իր «Աթոռ Պետրոսի» մատենին մէջ, Հ. Պալճեան վիէննայի Մ. միաբանը՝

Արդ՝ Պետրոս Սրբազան Առաքեալը Պէնտէկոստէին օրը՝ որ սկսաւ քարոզել եւ քաջալերութիւն տալ Առաքելոց, այսպէս դրուածը կը կարդանք. (Գործ Ա. 15. 16)։ (117) «Յարուցեալ



Պետրոս 'ի մէնջ եւթորցն, (այսինքն) Առաքելոց ասէ, «Արք եւթորց պարտ էր կատարել Գրոյն», եւ հետեւեալ խօսքերը ինքը կը լուծէ մեր խնդիրը: որ Յուդային համար կըսէ. «Զի 'ի Բե-ս Ժր եր ընդ Ժռ, եւ հասեալ էր նմա վիճակ դաշտաման այսորիկ», եւ ետքը Յուդային տեղը երկու հոգի ընտրած ժամանակնին անոնց վրայօք կըսէ (118). «Դու Տէր սրտագէտ յամենայնի՝ յայտնեա՛ զմի ոք զոր ընտրեցեր 'ի սոցանէ յերկոցունց, առնուլ զվիճակ դաշտաման այսորիկ՝ եւ դառափելու Բե-ս եւ այլն», Նոյնպէս եւ (Գլխ . Բ . 29.) «Արք եւթորց» կանուանէ միւս Առաքեալները: Նոյնպէս եւ Ժողովին մէջ նոյն Սուրբ Առաքեալն Պետրոս միւս Առաքեալները իրեն հետ հաւասար ճանչնալով կըսէ՝ (119). «Արք եւթորց, դուք ինքնին գիտէք»: Եւ յետոյ նոյն Ժողովին մէջ «Յետ լուելոյն նոցա (այսինքն Առաքելոց), իբր նախագահ եւ վճռատու Ժողովոյն Յակոբ Սրբազան Առաքեալը զրուցեց, ինչպէս կը զրէ Դուկաս Աւետարանիչը (120). «Պատասխանի ետ Յակոբոս եւ ասէ. արք եւթորց լուարուք ինձ» (Գործ . ԺԲ . 7 . 23 : ) Ահա Յակոբ Սրբազան Առաքեալն եւս որ նախագահ էր տեղւոյն եւ միանգամայն Ժողովոյն Առաքելոց, (ինչպէս վերոյգրեալ վկայութիւններէն ալ հասկցուեցաւ) զինքը Առաքելոց հետ հաւասար եւթորց կանուանէ, հակառակ այժմեան դրութեան, (նոյնպէս տես Գործ . ԺԵ . 33, 36, 40, եւ այլն, եւ այլն, )

Եւ ահա ասոր<sup>ք</sup> պէս ալ մէկզմէկու թուղթ  
 գրած ժամանակնին սրբազան Առաքեալք, ի-  
 բենց աշակերտներուն անգամ եղբայր<sup>ք</sup> ուսուցիչ  
 և գործակից և եղբակցականից կանուանէին . ըստ  
 այնմ Պօղոս սրբազան Առաքեալը Պրիսկեայ եւ  
 Ակիլաղեայ աշակերտներուն կը գրէ . (121) «Ող  
 ջոյն տաղիք Պրիսկեայ եւ Ակիլաղեայ՝ գոր-  
 ծակցոց իմոց՝ ի Յիիսուս Բրիստոս» : Նոյնպէս եւ  
 Անդրոնիկեայ եւ Յունեայ համար կը գրէ՝ երեւել  
 Առաքելն անուանելով՝ որ և թմանատներէն էին,  
 եւ Հռովմի այժմեան դրութեան հակառակ է,  
 ըստ որում Պօղոս՝ Պետրոսի համար երեւել և  
 Գլուխ Առաքելոց չըսելէն՝ ի զատ՝ այլ եւ Ան-  
 աիոքին մէջը յանդիմանեց Պետրոսը ու Բառ-  
 նաբասը, ըստ այնմ կըսէ (122) . «Ողջոյն տաղիք  
 Անդրոնիկեայ եւ Յունեայ աղգականաց իմոց՝ եւ  
 գերեկցաց, որք երեւելին իսկ եւ յԱռաքելս, որք և  
 յառաջ իսկ Կոնստանտինոպոլսի ի Բրիստոս» :

Նոյնպէս եւ Տիմոթէոս աշակերտին համար  
 կը գրէ իր նամակին մէջ . (123) «Ողջոյն տայ  
 ձեզ Տիմոթէոս եղբայր, եւ գործակից իմ : (Տեա  
 Հռով . Գլ . ԺԶ . Բովանդակ) :

Նոյնպէս եւ կը գրէ Կորնթացոց (124) .  
 «Պաւղոս կոչեցեալ Առաքեալ Յիսուսի Բրիստո-  
 սի կամօքն Աստուծոյ, եւ Սոսթենէս եղբայր, և  
 կեղեցոցդ Աստուծոյ որ է ի Կորնթոս» :

Կամանապէս եւ եպիսկոպոսոց ալ կը գրեն,  
 Պօղոս եւ Տիմոթէոս Առաքեալները Փիլիպպեց-  
 ւոց այսպէս . (125) Պաւղոս եւ Տիմոթէոս ծա-

աւյք Յիսուսի Բրիտանոսի ամենայն սրբոց 'ի Քրիստոս Յիսուս, որ են' ի կողմանս փրկիպպեցոց եպիսկոպոսոց եւ սարկաւաղօք: Նոյն եւ Պօղոս Տիւքիկոսին համար կը գրէ (126). «Այլ սր ինչ զինէն իցէ ցուցցէ ձեզ զամենայն Տիւքիկոս սիրելի եպիսկոպոս եւ հաւատարիմ պաշտօնեայ եւ ծառայակէց 'ի Տէր» (կող . Դ . 7):

Նոյնպէս եւ Պետրոս սրբազան Առաքեալը 'ի սիրուս հրէից աշակերտաց կը գրէ (127). «Զերկրունս այսուհետեւ աղաչեմ, իբրեւ շէնքակէց եւ վկայ չարչարանացն Բրիտանոսի»:

Ահա՛ ասոր պէս ալ առաջինն եւ երկրորդ դարերու մէջ նոյն սրբազան Աշակերտները մէկըվմէկու գիր գրած ժամանակնին եպիսկոպոս եւ ուրիշ անուններն եւ ոյնպէս կը ճանչնային զիրեարս, ինչպէս Գիորնէսիոս Արիսպագացին իր վարդապետին (Պօղոսին) հոգին կը կրէր, որ կրեաացւոց եպիսկոպոսին Տիտոսի կը գրէ (128). «Ծանիցէ եպիսկոպոս Տիտոս քո, ո՞վ Տիտէ» (Թղթ . Յաղագս ննջման Աստուածածնին): Նոյնպէս եւ կը գրէ Տիմոթէոսին (129 . «Եւեպոս է՛ Տիմոթէոս, ո՞ւր իցէ Հայրն մեր հոգեւոր» . (Թղթ . Յաղագս . մահուան Պօղոսի) եւ այլն եւ այլն :

Արդ նոյն ոգին կը տեսնանք չորրորդ եւ հինգերորդ դարերուն մէջն ալ, Երանելին Ղեւոնդիոս կեսարիայու Պատրիարքը, որն որ մեր Ս . Գրիգոր Լուսաւորիչը ձեռնադրողն էր . կը գրէ մեր Լուսաւորչին այսպէս (130). «Երջանիկ եւ Աստուածարեալ Տեառն՝ եւ մերոյ եպիսկոպոս»:

էհաս առ մեզ սուրբ եւ ուրախարարն գիր,  
 (Պատ. Չենոր. եր. Ժ. Գ.) եւ սուրբն Աղէքսանդ-  
 րոս Աղէքսանդրու հայրապետը, յառաջքան Նի-  
 կիոյ սուրբ Ժողովը, բոլոր եպիսկոպոսաց դրած  
 շրջաբերականն նամակին մէջը կըսէ (131). «Մի-  
 րելեացդ եւ պատուելեացդ կաթուղիկէ եկե-  
 ղեցւոյն պատմականաց որք յամենայն ուրեք .  
 Աղէքսանդրոս 'ի Տէր խնդալ. (Պատմ. Սոկր. հա-  
 տոր Ա. Գ. 3.) Նոյնպէս եւ Նիկիոյ Ժողովին՝  
 Լիւբիա եւ Պենտապոլսոյ եպիսկոպոսները կը  
 գրեն Աղէքսանդրիոյ եւ Եղիսպտոսի Հայրապե-  
 տաց, (132). «Սրբոյդ եւ մեծի շնորհօքն Աս-  
 տուծոյ եկեղեցւոյդ Աղէքսանդրիայ՝ եւ ամե-  
 նայն սիրելի եւ Քրիստոս, որք 'ի կողմանսն Եղիսպ-  
 տոսի, Լիւբիայ եւ Պենտապոլսոյ եպիսկոպոսս»  
 'ի Նիկիայ . 'ի Սուրբ եւ 'ի մեծ Ժողովն գումա-  
 րեցեալքս 'ի Տէր խնդալ» : Եւ նոյն նամակին  
 մէջ կը գրեն Աղէքսանդր Հայրապետին համար  
 որ Պատ կը կոչուէր (133) . «Գտանին ձեռնադ-  
 րեցեալք յամենապատուելի Աղէքսանդր եպիս-  
 կոպոսէն եւ պատմական մերմէն եւ այլն. (Թէոտ.  
 Դերք Ա. Գլ. Թ.) Նոյնպէս եւ Սարգիսկեայ Ժո-  
 ղովոյն եպիսկոպոսները՝ Յուրիոս Հռովմայ Հայ-  
 րապետին դրած Թուղթերնուն մէջը կըսեն,  
 (134) . «Ուրեմն եւ դու սիրելի եւ Քրիստ (եւ ոչ  
 գլուխ) Թէպէտ մարմնով հեռացեալ՝ սակայն  
 յամենայնի մեզ համախոհ եւ համակամ՝ գորով  
 ներկայ եղեր մեզ» . (Պատմ. Սարգ. Ժողովոյն  
 ձեռ.) : (135). Նմանապէս եւ Հռովմայ, Հիսպո-

նայ, Գաղղիոյ, Իտալիոյ, Աֆրիկայ . . . Մանկեղոնիայ, Թէսաղեայ, Աքայիա . . . Թրակիա, Պաղեստինեայ, Կրետայ, եւ Եգիպտոսի, եւ այլն . եկեղեցեաց Արքեպիսկոպոսաց եւ Գլխոց նոցին եւ Քայր կանուանեն, (Տես, նոյն Սարգիկեա Ժողովոյն գործն, ձեռ. եւ այլն) :

Նոյնպէս եւ 341 Թուին Մակար Երուսաղէմայ Սուրբ Հայրապետը առ Սուրբ վրժանէս Հայրապետն մեր գրած գրոյն առաջին կանոնն որ Մարկաւազաց մկրտութիւն չընելու համար է, կը գրէ այսպէս (136). «Գիտութիւն լիցի Քրիստոսասէր եւ Քահանայից ձեռոյ, զի եպիսկոպոսաց եւ քահանայից միայն է իշխանութիւնս այս » . (կանոն Ա.) : Որուն երրորդ կանոնն ալ յայտնապէս կը ցուցնէ Երանելին իր վրայ եկեղեցական կարգին Առաջնութիւնը. «Յետ յարութեան երեւեալ կենարարին շահնս քեր 'է վերայ կորէ, և նոյն «կրթնասորեալ 'է վեր հասարեցաս» կըսէ (կանոն Գ.) :

Նմանապէս եւ Կ. Պօլսոյ առաջին Տիեզերական Սուրբ Ժողոյն մէջ գումարեալ Հարք, առ Հռովմ կը գրեն այսպէս (137). «Տէրանց եւ Գերապատուելի եւ Գերյարգելի եւ Քայր եւ քործուցոյ՝ Դամասոսի, (որ այժմեան Պապ կոչուածն է), Ամբրոսիոսի, Բրիտաննի, վաղերիանոսի, Աքայիոսի, Անէմիոսի, Բասիլիոսի եւ այլոց սրբոց, 'ի մեծապայծառ քաղաքն Հռովմայու» (Պատմ. Ա. կոստ. Ժող. ձեռ. .) :

Նմանապէս Եփեսոսի տիեզերական Սուրբ

Ժողովին ժամանակը, Սուրբ կիւրեղ Ազգաբանու-  
րու Հարապետը առ Նեստոր գրած Թուղթին  
մէջ կը գրէ (138) . «Վասնորոյ եւ գրեցերն իսկ  
դու 'ի մեծ քաղաքն Հռովմէ, եւ ցուցեր թըզ-  
թոնն քով սրբոյ եղևնիս Բերդ կէլսորնան-  
սիս, որ այժմեան Հռովմայ Պապ կոչուածն է  
կելէստիանոսը : (կիւր . Պրպ . ԽԵ . դճկը . եւ  
դճկե) : Նոյն եւ կը գրէ առ կելէստիանոս (139) .  
«Սուրբ եւ Աստուածապաշտ եղբօր Բեր եւ դաշ-  
տնայն կէլսորնան եպիսկոպոս » : Եւս դարձեալ  
(140) . «Եւ սրբոյ Աստուածապաշտ եպիսկոպոսին  
կելէստիանոսի Գրծայն Բերդ » . (Նոյն) : Նմանա-  
պէս կելէստիանոսը (Պապը) կը գրէ առ Սուրբն  
կիւրեղ (141) . «Սիրելւոյ եղբօր կիւրղիդ կելէս-  
տիանոս » . եւ կսկսի «Թուղթն զորս Սրբութիւ-  
նըդ քո առ մեր տրամութեանս (եւ ոչ գլխոյս)  
գրեալ ուղարկեաց » եւ այլն : Նոյնպէս ժողո-  
վին կը գրէ (142) «կելէստիանոս եպիսկոպոս Ա-  
մենասիրելի եղբօրդ եւ շատայնացդ եւ այլն ,  
(Պատմ . Եփես . Ժող . ձեռ . )

Եւ նոյն Սուրբ կիւրեղ առ Դոմնաս եպիս-  
կոպոս Ապամիայու Ասորոց , կը գրէ այսպէս,  
(143) . «Սիրելի Տեառն իմոյ եղբօր եւ դաշտնայ-  
նից Դոմնոսիդ » կիւրեղս 'ի Տէր խնդալ » :  
Եւ Պօլսոյ Պատրիարք Երանելին Պրոկղոս, կը գրէ  
նոյն Դոմնաս Հայրապետին (144) . «Ամենասուրբ  
եւ գեր 'ի վերոյ Աստուածասէր եւ դաշտնայն  
Դոմնոսիդ » Պրոկղոս 'ի Տէր խնդալ » եւ հետեւ  
եալը այս նամակին մէջ , ո՞րքան լոյսի պէս կը

վայել նախնեաց բունած ընթացքը հաւասարու-  
թեան մասին, (որ է Հայաստանեայց եկեղեցւոյ  
ճշմարիտ վարդապետութիւնը եւ այժմ մերս  
գրութիւն), եւ մանաւանդ կը վկայէ ալ, Առա-  
քելոց անտի եղբայրաբար իջած ըլլալը եւ ոչ ոք  
գլուխ ցուցնելով, ինչպէս որ վարը պիտի յիշեմք:

Եւ այս ալ չմոռնանք յիշելու որ միմե-  
եանց Մարթ, «Ռեւոլուցիոն» պատուանունները կու-  
տային, ինչպէս որ վերն ալ տեսանք, եւ ալ կը  
վկայէ հինգերորդ դարուն Եփեսոսի ժողովոյն  
մէջ ֆիրմոս կամ ֆիրմիլիանոս կեսարիոյ կապա-  
ղովկացւոց եպիսկոսը, կերէստիանոս Հռովմայ  
եւ կիւրեղ Աղէքսանդրու Պապերուն եւ այլ վի-  
ճակաւոր Արքեպիսկոպոսներուն այսպէս (145) .  
«Սրբազան եւ Առաքելական «Ռեւոլուցիոն» կե-  
ղէստիանոսի աթոռն 'ի մէջ թղթոցն՝ զորս գլըր-  
եաց յառաջագոյն առ «Ռեւոլուցիոն» եղևնոս  
կիւրղի Աղէքսանդրեայ, Յորնաղայ Երուսաղէմի  
եւ Հռուփոսի Թէսաղոնիկէի, եւ զորս «Ռեւոլուցիոն»  
եկեղեցեաց կոստանդնուպոլսոյ եւ Անտիոքայ  
եւ սյլն » (Գարծք. Եփեսոս . Ժող . ձեռ . ):

Նոյնպէս եւ մուրրերոց անգամ (146) . «Ռեւո-  
լուցիոն» , եղբայր , ուշո՞՞նկէն , պատուանուննե-  
րը կուտային նախնիք , յառաջքան զնորովն ,  
ինչպէս որ մենք ալ այժմ մինչեւ ցայսօր Պ.  
Չամուրճեանին կուտանք՝ նոյն կերպիւ պատու-  
անունները իրեն աշխարհականութեան սահմա-  
նին վայելու խօսքերով, Պ. պատուելի , գիտ-  
նական , զգօնամիտ, պարոն , յարգելի, եւ այլն ,

իրք թէ իր յարգը պահելու համար կամ իրք թէ իրեն յորդոր մ'ըլլալու դիտաւորութեամբ, որ զոնէ իւր պատիւը ճանչնալով հասարակաց եւ եկեղեցւոյ ունեցած կարծիքին դէմ բան մը չը գրէ . բայց եթէ նոյն ազանգաւորաց նըման յամառեալ մնայ ( զոր Աստուած մի՞ արասցէ ) նոյն ժամանակը յայտնի է որ իր յարգը կորուսանելէն զկնի, այլ եւ իրք հոտեալ անդամ եկեղեցիէն կորսչուի, եւ այնուհետեւ նոյն ազանգաւորաց որպիսի վայնասուն խօսքեր որ կը զուրցուի 'ի հարկէ մենք ալ զրուցելու կը պարտաւորիմք, իրք ճշմարտութեան եւ եկեղեցեաց թշնամի համարելով կը հերքեմք . ինչպէս որ ըրին Սրբազան նախնիքը նոյն ազանգաւորաց, ըստ որում գրեալ է «Յառնէ հերձուածողէ յետ միանգամ եւ երկիցս խօտելոյ հրաժարեալիր . . . » : Այս զրուցածներու սպացոյց կրնայ համարուիլ կելէստինոսի եւ կիւրղի թղթերը, որ առ նեստոր գրած թուղթերնուն մէջը « Աստուածասէր, Սուրբ, Ամենասուրբ եւ այլն կը յիշէին, զոր երկար կըլլայ հոս յիշել ( Տես Ժող. Պատմ. ձեռ. եւայլն ) :

Նոյնպէս եւ ֆաղկեդոնի ժողովոյն գործքը կը վկայէ, որ Լեւոն եւ ֆլարիանոս հայրապետները մեկզմեկու գրած թուղթերնուն մէջ ( 147 ) « Եւբայր եւ պաշտօնակէց ո կանսւանեն ( տես ֆաղկ. ժողովոց Պատ. Ձեռ. եւայլն ) :

Նմանապէս վեցերորդ եւ եօթներորդ դարերուն մէջէն ալ ունիմք ապացոյց, որոցմէ մէ-



կը բաւական կը համարեմք, որ նոյն նախ-  
նեաց ոգին կը կրէր Երանելին Գրիգոր Ա. Հը-  
ռովմի հայրապետը, իր թէմական Յովհաննէս  
եպիսկոպոսին Հռաւեննայ քաղաքին, գրելով այս-  
պէս, ( 148 ) « Ամենապատիւ եւ առաջնորդ եղ-  
բոր Յովհաննէս եպիսկոպոսինցէ Գրիգորիոս » ( Տես.  
կան. հովուական ) :

Եւ իբր 595 թիւին Կ. Պօլսոյ Յովհաննէս  
Պատրիարքին գրած յանդիմանական գրու-  
թեան սկիզբը ( 149 ) « Գրիգոր Յարայ, Յարայիցն  
Աստուծոյ » կը կոչէ, Երանելի դարուն այնմիկ որ  
հետեւեալ դարերուն պէս առիւտով որեւէր  
եկեղեցոյ, զորս եւ դատաւորներ չէր նստած եկե-  
ղեցոյ մէջ . . . :

Անցնինք ութերորդ, իններորդ եւ տաս-  
ներորդ դարերը, եւ գանք մետասան եւ երկու-  
տասան դարերուն գրուածքները նկատել. որ  
մեր Սուրբ Գրիգոր վկայասէր կոթողիկոսին եւ  
Գրիգոր Է. Հռովմայ հայրապետին մէջ եղաւ  
իբր 1083 ամին. տեսնանք որ ինչ կը գրէ Հը-  
ռովմի հայրապետը, ( 150 ) « Գրիգորիոս ե-  
պիսկոպոս ( եւ ոչ պատ կւ ոչ հայրապետ եւ  
կամ քահանայապետ ըստ այժմեան դրութեան. )  
Յարայ Յարայից. Աստուծոյ Գրիգորի եղբոր մե-  
րում սիրելոյ 'ի Գրիստոս' Հայոց Հայրապետի,  
եւայն. ( Տես Չամ. պատմ. հատ. Բ. եր. 999 ) : Եւ  
այս բանիս համար հետագրգրական բան մ'ալ  
կայ որ՝ Չամչեանը նոյն երեսը մեր Գրիգոր վը-  
կայասէր Հայրապետին համար « յարգութեան »  
գիր գրեց կրէ առ Պատն Հռովմայ, բայց

«Աթու Պետրոսին» շինող խաբերայ Պալճեանը «հասարակութեան» գիր կը գրէր, կըսէ: (Տես նոյն մոլորական մատենին, եր. 235):

Նմանապէս եւ Գրիգոր Կաթողիկոսին կը գրէ իբր 1140 թուին Լուսինո հայրապետը Հրուովմայու. որ կսկսի այսպէս, (151) «Լուսինոս եպիսկոպոս ծառայ ծառայից Աստուծոյ, Ռֆնադոսական երբեք Գրիգորի Կաթողիկոսի, եւ ամենայն արքեպիսկոպոսաց. եւ եպիսկոպոսաց, եւ արքայից, եւայլն (Տես Չամ. Պատ. հատ. Գ. եր. 152):

Նոյն օրինակ կը գտնեմք երկոտասան դարուն վերջերը որ կղեմէս Գ. Պապին եւ Գրիգոր Գ. Տըղայ Կաթողիկոսին օրովն եղաւ. ուր կը գրէ իբր 1180 թուին Պապը մեր Կաթողիկոսին այսպէս (153). կղեմես եպիսկոպոս ծառայ ծառայից Աստուծոյ, պատուական երբեք Ռֆնադոսի Կաթողիկոսի ամենայն Հայոց ողջոյն եւ առաքելական օրհնութիւն: (Առ Հ. Մին. Բժշ. Սրբ. Պատ. հատ. Բ. երես 266):

Եւ վերջապէս ուսկից որ սկսանք այն տեղ կը բերեմք ապացուցանելով մեր ճշմարտութիւնը. օրինակ մ'ալ գնելով հոս, այս հաւասարական դրութեան համար, Աւաքելոյ եւ նախնի Սրբազան Հարց անտի իջած ըլլալը ցոյց տալով, ինչպէս որ երանելին Պրոկղոս Կ. Պօլոյ Պատրիարքը Անախոքայ Աթոռոյն Դոմնաս Հայրապետին դրած դրութենէն կիմանամք: ինչպէս որ վերը յիշեցինք, ահա՛ նոյն նամակին մէջ կը

դրէ այսպէս (153). «Մեծ շնորհ է եղբայրս-նիւնն, ո՞վ դերը 'ի վերոյ Աստուածասէրո՞, զի Ամենաճարտար արուեստագէտն Աստուած զսրեղծութեան թնամ-նիւնն մեր մեթանս-նեմէ կամելլէ եղբայրսերոս-նեմէ կցորդեաց զթանական եակն ընդ միմեանս, որդեա զի թնամ-նեմնակեցան զցասա այլոց իւրեանց համարելլով՝ անլաթանելի մոտորո-նեմէ ցատկոցս-նեմն ընդ միմեանս կցորդեացին. Կան զի սրբիւն միւրով 'ի միմեանց հեռաց-եալին 'ի հարկէ 'ի կորուստ միմեանց վաստակին. Իսկ կասո՞ մեացեալին ոչ քիւրբոս անկանին 'ի հաստար կացս-նեմնէ իւրեանց: Վսն այսորիկ և երանելի Պօղոսն զբազ-նս-նիւնն հաստարացելոց, և շէկեղեցեաց մեթանս-նիւնն ճարճեոյ նմանեցոսցանէ ասելլով, — Դոսո՞ ճարճին փրիստոսի եւ և անդոսո՞ անդոսոց նորո՞ — և յամենայն ժամ հրա-մայե զմեթանս-նիւնն բազմաց և յանդոսոց յօրոսածոյն տրդելլուլ ջանայ զաղան պատերազմասէր հա-կառակութեանն: (Եւ այս թուղթերն Բաղկեդոնի ժողովոյն ժ.Չ. երրորդ նիստին մէջ կարդացուե-ցաւ: Տես Պատ. ժողովոյն Բաղկեթ. ձեւ.):

Արդ՝ մինչեւ ցայս վայր տեսանք, թէ յար-գական եւ թէ խոնարհական դրութիւնները նախնեաց, թէ Առաքելոց եւ թէ անոնց յա-ջորդներուն անխափր եւ հաւասար դործ ածել-նին. ուստի ինչպէս ըսինք, սնտաի մոլար ու

\* Ահա այն է որպէս եւ վերն գրեցաք, այ-սինքն՝ առաջին թիւ վկայութեանցս, ըստ այնմ (4). « Բաղուձքս մի մարմին եմք 'ի ֆրիստոս, այլ իւրա-քանչիւր միմեանց անդամք եմք » (Հոովմ . ԺԲ. 5 .)

անհիմն կարծիք է այս կերպ գրութիւններով  
 զինել եւ հակառակել՝ նոր գրութիւն մը հաստա  
 տել ուղերով, զՊետրոս եւ զյաջորդ նորին Հռով-  
 մի Պապը եկեղեցւոյ մէջ ըստ աշխարհի կառավա-  
 րութեան գլուխ եւ պետ կացուցանել. եւ  
 եթէ այդ կերպ ըմբռնում մը ըլլար մեր նախ-  
 նիքներուն մէջը՝ Հռովմի Հայրապետները տօնած-  
 ժամանակնին եկեղեցւոյ մէջ. «Կղեմայ, Սեդ-  
 քեստրոսի, եւ Ստեփաննոսի Հռովմայ հայրա-  
 պետաց» կոչելուն տեղը, (ինչպէս որ այս Հայ-  
 րապետները կը տօնէ Հայաստանեայց եկեղեցին),  
 պէտք էր որ «Կղեմայ, Սեդքեստրոսի եւ Ստե-  
 փաննոսի Գլխոյ եկեղեցւոյն, եւ կամ Հայրապե-  
 տացն Պէտի եւ Գիտի՝ տիեզերական եւ ընդ-  
 հանուր եկեղեցւոյ» կոչէին եւ տօնէին միւս Հայ-  
 րապետներէն զատելով եւ առաւելագոյն պա-  
 տիւ մը տային, եւ կամ անոնց յարգը պահէին  
 իբր եկեղեցւոյ գլուխ խոստովանելով, եւ հե-  
 տեւաբար ալ գօնէ պատմութեանց եւ եկեղե-  
 ցական ընթերցուածոց մէջը անանկ անուները  
 յիշած ժամանակնին՝ «Կղեմայ հայրապետին»  
 գրելուն տեղը «Կղեմայ գլխոյ եկեղեցւոյն մե-  
 ըոյ» ըսելով արձանագրէին, յետագայից տա-  
 րակուսութեան տեղի չտալով, որ մենք ալ պար-  
 տաւորէինք առանց պայմանի ընդունելու եւ  
 հպատակելու, իբր աւանդութիւն եկեղեցւոյ  
 համարելով. բայց ընդ հակառակն կը տեսնամք  
 որ ո՛չ մեր նախնիքը այդ կերպ վարդապետու-  
 թիւն եւ աւանդութիւն մը ցոյց տուած են մեզի-

եւ ոչ ալ նոյն Հառվմի եկեղեցւոյ նախնիքը. եթէ այդ կերպ աւանդութիւն մ'ըլլար նէ, կարող էին արդեօք միւս հայրապետները Հառվմի Պապերուն՝ եղբայր, պաշտօնակէց, եղբակոյտակէց և շէրէցակէց անուանել, եթէ Գլուխ եկեղեցւոյ է նէ, մի՞թէ ստրուկ ծառայ՝ մը եւ հպատակ մը իրեն Տէրութիւնը եղբայր, պաշտօնակէց կրնա՞յ անուանել, նմանապէս ալ նոյն թագաւորը իրենց հպատակացը, եղբայր պաշտօնակէց կանուանէ՞ մի . . . ուրեմն սնտախ, ծաղրելի խաբէական, տգիտական եւ սուտ է այս դրութիւնը:

Եւ վերջապէս խնդիր մ'ալ այս է, թէ արդեօք ի՞նչ են այն դրուածները, զորս յարդեր ու պատուեր են մեր՝ եւ ընդհանուր եկեղեցւոյ նախնիքը, զսուրբն Պետրոս եւ զլուսաւորիչ եւ զսուրբն Յակոբ Տեառն եղբայրն. մի՞թէ անոնց յարդը ու պատիւը եւ ակնածութիւնը առ աշակերտս եւ յաջորդս չա՞նցնէր. կրսեմք ոչ. եթէ նոյն Սրբոց սենեցած եկեղեցական պաշտօնին եւ աստիճանին վերաբերեալ է խընդիրը՝ ընդունիմ, բայց նոյն Սրբոց ունեցած անզուգական Առաքելական արդեանցը եւ վարդապետութեանցը փոխարէն՝ իրենց ստացած փառքը, պատիւը եւ յարդը նոյն ընտրելեաց յաջորդացը տալուն մասին ուրանամ: Որովհետեւ անզուգական են նոյն Սուրբերը եւ ՚ի սկզբանէ աշխարհի ընտրեալ են, եւ ինչպէս որ իւրաքանչիւրոց արդեանցը փոխարէն Աստուած փառաւորեց յայսմ աշխարհի եւ ՚ի հանդերձեալն եւ . . .

պիտի փառաւորէ, (ինչպէս որ խոստացաւ փրկիչն մեր, եւ չ'ի Տան Հօր խմոյ օթեւանք բազում են՝ ասէ)։ Այս դիտաւորութեամբ եւ այս պայմանաւ եւ ակնածութեամբ նոյն Սուրբերը ըստ արժանւոյն կը փառաւորէ եկեղեցի Քրիստոնէից։ Ո՛չ սրբոյն Պետրոսի պատիւը եւ յարգը յափշտակելով եւ Անտիոքայ կամ Հռովմի այժմեան յաջորդացը կրնայ տալ, եւ ոչ Յակոբայ Տեառն եղբօր ակնածութիւնը ու պատիւը եւ յարգը իրենն այժմեան Երուսաղէմայ յաջորդին կրնայ տալ։

Նմանապէս եւ ոչ Լուսաւորչի փառքը ու պատիւը՝ զորս արեամբը եւ Առաքելական արդեամբը վաստըկած է՝ Աղղս մեր, կարող եմք տալ այժմեան նորին յաջորդին. ըստ որում պարտաւոր եղած եմք պատուել զԼուսաւորիչ հոգունուս փրկութեան եւ Առաջնորդ ըլլալու համար, եւ Աստուած ալ 'ի սկզբանէ աշխարհի ընտրելուն եւ պատճառ մը կացուցանելուն համար մեր փրկութեանը. նմանապէս եւ Սուրբն Պետրոս իրենն Առաքելական արդեանցը եւ դաւանութեանցը համար իբր նախապատիւ 'ի մէջ Առաքելոց կը պատուենք. նոյնպէս եւ Յակոբ Տեառն եղբայրը եւ այլն, եւ այլն։ Եւ ինչպէս որ ըսինք անոնց սեպհական ստացած պատիւը եւ յարգը չեմք կարող իրենց յաջորդացը տալ անխիղճ կերպով, այլ իւրաքանչիւր Առաքելոց եւ անոնց յաջորդները ըստ արժանւոյն եւ իրենց ունեցած արդեանցը փախարէն կը յար-

գեւմբ եւ կը պատուենք, նախ՝ իրենց վարդապետական արդեանցը եւ մաքուր վարուցը ու Առաքելական իշխանութեանցը համար, եւ մանաւանդ մասնաւորապէս իրենց ազգին եւ ժողովրդոցը Պետ եւ Գլուխ ըլլալնուն համար, կը յարգեմք ու կը պատուենք ՚ի սկզբանէ անտի, սովորելով մեր նախնական եկեղեցիէն :

Ուրեմն եթէ ունեցած ալ ըլլայ Սուրբ Պետրոս միւս Առաքելներէն աւելի յառաջնութեան պատիւ մը ՚ի մէջ Առաքելոց, կը տեմք նախ՝ թէ ընդհանուր եկեղեցւոյ Առաքել է, եւ երկրորդնոյն յարգը ու պատիւը անձնական ըլլալով միայն Պետրոսի կը վերաբերի եւ ոչ աշակերտացը . որովհետեւ Սուրբ Պետրոս եւ կամ Սուրբ Յակոբ Տեառն եղբայր, եւ այլ ով ոք եւ իցէ Առաքելոց եւ՝ Հայրապետաց ունեցած տօնելի եւ պատուելի վարքը իրենց Առաքելական եւ վարդապետական ու նահատակութեան արդեանցը փոխարէն ըլլալով, իրենց կը վերաբերի նոյն փառքերը՝ եւ ոչ իրեն օրինաւոր աշակերտներուն եւ անվայել մշակներուն, եւ եկեղեցի քրիստոնէից այս նպատակաւ ՚ի սկզբանէ անտի ըստ արժանւոյն եւ իրենց արդեանցը համեմատ տօնելով փառաւորած է նոյն Սուրբերը . իբր յորդոր եւ գրգիռ մը ըլլալու մտօք նոյն սրբոց հետեւողներուն, եւ այս ալ ոչ թէ նոր բան մ'է, այլ Առաքելոց անտի սկսեալ մէկ աւանդութիւն մ'է, ինչպէս որ վերը սուրբ վարդապետներէն վկայութիւն բերելով ապա-

ցուցինք: (Տես եր. 167. թիւ (99 եւ 101): Եւ այս ալ կրկին կըսեմք, թէ՛ ոչ հասարոյ ժամ եւան շարժութեան, եւ ոչ իբր եկեղեցւոյ հաւատալեաց իր կամ աւանդութիւն մը կրնդունիմք Պետրոսի առջնութեան պատիւը եւ յարդը. նմանապէս ալ անոր օրինաւոր յաջորդները, ըստ Պապական եկեղեցւոյ այժմեան դրութեանը համաձայն: Եթէ այդ կերպ ըմբռնում մը ըլլար՝ մեր նախնիքներուն մէջ, հարկաւ սուրբ Պետրոսի եւ անոր յաջորդ անւանող Պապերէն ի զատ, նոյն յարգն ու սկնածութիւնը ուրիշ Առաքելոց եւ անոնց յաջորդներուն մէկուն ալ չէին տար եւ չէին պատուէր, ինչպէս որ օրինակները տեսանք:

Բայց համառօտիւ մէկ օրինակ մ'ալ կը դնեմք հոս՝ այս խնդրոյն վրայօք եւ վերջ կընեմք: Արդ եթէ նախնիք Պետրոս սրբազան Առաքելոյն համար « Պէտն առաքելոց » եւ « Առաքելապետ » բառերը գրած ըլլալով՝, Առա-

\* Այս Առաքելապետ բառն ալ՝ նախնեաց գրուածոցը մէջ սկիզբը միայն կը գտնամք ու մեր ձեռքը անցածներուն մէջ Ս. Եփրեմին, Ս. Ստեփաննոսի վրայ գրած ճառին մէջը, դուցէ եւ այնալ իր բնագրին մէջ չըլլալով՝ այլ Ունիթորեանք խարդախած ըլլան, եւ այս պուրցածիս ապացոյց կրնայ համարուիլ, որ Վենետիու Ս. Միաբանք անգամ Հայկազեան ընդարձակ Բառարանը տպած ժամանակնին, այս բառին համար միայն Ս. Եփրեմի վերոյիշեալ գրութենէն վկայութիւն բերած




քերոց դուրս կը համարուի նէ Հռովմէականաց առջին, ուստի յանդդնութեամբ կըսեմ. թէ Նեստոր ազանդապետը եկեղեցւոյ մէջ մեծ է քան զՊետրոս Սրբազան առաքեալը, եւ անկից աւելի վառաւոր. ըստ որում եկեղեցական գրուածոց մէջ չեմք կարգար Պետրոսի համար «Ամենասուրբ» եւ «Գեր ՚ի վերոյ» մակդիրը եւ ածականը, այլ Նեստորի եւ ուրիշ սրբազան Հարց վրայ գրուածը կը կարդանք, ինչպէս վերը օրինակները տեսանք: ուրեմն կը հետեւի թէ՛ Նեստորը եւ կամ ուրիշ ուղղափառ Հայրապետ մը հաւասար համարելու եմք. եւ ընդհակառակն ազանդապետ Նեստորը եւ կամ ուրիշ ուղղափառ Հայրապետ մը հաւասար դա-

---

նն, որով կը կարծուի թէ՛ այս ածականին հեղինակը Նփրեմ եղած ըլլայ, եւ ետքը եկող վարդապետները նոյն «Առաքելապետ» բառը իրենց առաջնորդ ունենալով, միջին դարերէն սկսեալ «Պետն Առաքելոց» կոչեցին իրենց գրուածոցը մէջ զսուրբ Պետրոս, ինչպէս յայանի է Շնորհալուոյն եւ այլոց գրութիւններէն Ուստի եթէ ճշմարտապէս Ս. Նփրեմ ալ գրած ըլլայ այս ածականը, կը հետեւցնեմք թէ մասնաւոր մարդոց գրութիւնն է, եւ ոչ ընդհանուր նախնի սրբազան Հարց ըմբռնումն է: Եւ քանզի այսպիսի խնդրոց մէջ նոյն իսկ մոլորամիտներուն գրութիւնէն օրինակ բերելը աւելի շահաւոր կըլլայ, քան թէ մենք ուրիշ սրբազան Հարցմէն վկայութիւն բերենք, ինչպէս որ Հ. Գարբիէլ Աւետիքեան Մխիթարեան կրօնին հետեւող վարդապետը իր հաւաքածոց

սելէն զկնի, այլ եւ Դերադոյն քան զՊետրոս  
 դասելու եմք . « Ամենասուրբ » վերտառու-  
 թիւնը տալերնուն համար նախնի Սրբազան  
 հարք, զոր քաւ լիցի կարծել . եւ եթէ բառին  
 իրական նշանակութեանը նայելու որ ըլլանք նէ՝  
 առաւել եւս սարսափելին կը դտնամք . զի  
 Ամենասուրբ, Դերադրական մակդիրը եւ ամա-  
 կանը միայն Աստուծոյ համար յատկացած է,  
 եւ միայն Աստուծոյ կը վայէ, որ եւ հարկ է  
 մի միայն Աստուծոյ զուրցել, ուրեմն Նեստորի  
 համար ալ գրուած ըլլալով՝ միամտութեամբ  
 ( կարգա՝ տգիտութեամբ ) արդե՛օք ասկէց կը  
 հեպե՛ւի թէ՛ Աստուծոյ հետ հաւասար է աղան-  
 դապեան Նեստոր . . . որ է հայհոյհութիւն եւ  
 սոսկ ամբարշտութիւն . . . :



զրոց Պողոսի Թղթոյ Մեկնութեան մէջ, այսպէս  
 կը վկայէ ըսելով, « մի՞ ոք անձամբ խաբեսցի ու-  
 սուցանելով կամ ընդունելով զվարդապետութիւն  
 ինչ օտար, զի ամենայն ուսումն հակառակ Աւե-  
 տարանին՝ պատրանք են եւ խաբէութիւն » : (Մեկն .  
 Պօղ. 2. ա. եր. 647 .) Եւ ահա այս է մեր Յիսնդրոյն  
 ապացուցութիւնը, որն որ հակառակ կը ճանչնամք  
 Սուրբ Աւետարանին վարդապետութեանը, ինչպէս  
 որ մինչեւ յայս վայր ապացուցինք Աստուծով :

ՎԵՐՉԱԲԱՆ ԳՈՐԾՈՅՑ

Հիմայ այս վերոյդրեալ Սրբազան Հարց վը-  
կայութիւնները կարգալով՝ տարակուսանօք հար-  
ցունէ նէ պիտի մեզ յարգոյ հասարակութիւնը  
թէ՛ ապա ուրեմն Առաքելոց մէջ ո՛վ է Մեծ եւ  
Գլուխ. կրսենք՝ ինքը Հիմնադիրն սուրբ Կրօնիս  
Քրիստոս Աստուած է բացարձակ Գլուխ, Տէր կա-  
ռաւարիչ եւ Ղեկավար, եւ Առաքեալք իբր Նա-  
ւաստի են այս Նառու (Եկեղեցւոյս) : Եւ վեր-  
ջապէս թէպէտ եւ նախնի Հարք մեր եկեղեցւոյ  
շատ մը նմանութեանց, նմանցուցեր են Սրբազան  
Երկոտասան Առաքեալքն Քրիստոսի, բայց Ս-  
թօհան Ոսկերեբեան այսպէս կը վկայէ (154). «Եր-  
կոտասան ակունք էին շարակարգեալ ՚ի հան-  
դերձի Քահանայապետին ՚ի վերայ լանջացն, Սրդ՝  
մի՛ մի՛ ակն զերկոտասան Առաքեալն, եւ զնոյն  
թուով Մարգարէան նշանակէ : Եւ երիս երիս  
շարեալ՝ դչորս Աւետարանիչս դրոշմէր» . . .  
Տեսցուք թէ ընդէ՞ր Երկոտասան ընտրեաց զԱ-  
ռաքեալն, եւ ոչ աւելի կամ պակաս : եւ ապա  
Եթեանասունն. նախ առաջին տեսութիւն . . .  
Երկոտասան սէրեցան որդիք Յակոբայ, եւ նոյն  
թուով ազգ անուանեցան, եւ Երկոտասան էին  
Յաղբերք Յաղիմայ, Երկոտասան վտակք ՚ի վի-  
մէն բղխեաց : Երկոտասան ակունք ՚ի լանջս Քա-  
հանայապետին, ՚ի վերայ պճղնաւոր հանդեր-  
ձին . . . (եւ վերջապէս կրսէ) Նմանապէս եւ

Սոքա, որոց 'ի ճշմարիտ կեանքն Լոյս են, եւ որ  
 ոչն հաւատան զիշեր . . . Սոքա են որդիք նո-  
 րոյս Յակոբայ, ըստ թուոյ հնոյն. եւ ոչ սք 'ի Սո-  
 ցանէ հայր եւ որդի, այլ ամենեքեան Աղատ,  
 որդիք վերին երուսաղէմի: Սոքա են երկոտասան  
 ակունք, ոչ 'ի վերայ լանջաց ֆահանայապետի  
 կառուցեալ, այլ 'ի սիրաս եւ 'ի հողիս հաւա-  
 տացերոց ֆրիստոսի: Սոքա են երկոտասան լըր-  
 տեսքն, ոչ Հեսու կամ ֆաղէփ յանապատէն 'ի  
 ֆանան եկեալ, այլ 'ի Յիսուսէ Առաքեալք իշ-  
 խանք տիեզերաց, զի յերկրէ՝ յերկինս հրաւիրե-  
 ցէն զբոլոր ազգս մարդկան: (ի Պատճառ գրոցն  
 եւ 'ի թեւադրութեան Աւետարանչացն, ձեռ.):

Եւ ահա այս է մեր եզրակացութիւնը, որնոր  
 հաւասարապատիւ կը ճանչեմք երկոտասան Ա-  
 ռաքեալները. քանզի ֆրիստոս միաբան օրհնեց  
 զանոնք Համբարձման օրը, եւ միաբանութեամբ  
 նստելով վերնատունը, հոն միաբան արբին զնոր-  
 հըս Հողւոյն Սրբոյ: Մնաց որ դարձեալ չհամոզ-  
 ւին այս մեր ներքին համոզմանը եւ նախնի  
 Հարց վճռոյն, զոր ինչպէս ըսինք վերը. կոչ-  
 ման կամ յառաջդիմութեան նայելով, իբր  
 ծերունազարդ անդամ Առաջին կը համարուի  
 Պետրոս սրբազան Առաքեալը 'ի մէջ Անդամակ-  
 ցացը. ինչպէս որ սուրբ եկեղեցւոյս մէջ ալ օ-  
 ըրինակը կերեւի քահանայից դասուն մէջ, որ  
 օճո-նեոն կոչ կըսուի, սակայն սրբազան Առաք-  
 եալք այն օրինակ ալ չեն. քանզի միաբան ձեռ-  
 նադրութիւն առին 'ի Տեառնէ. եւ միաբան ար-

բին զչնորհս չողւոյն Սրբոյ : Բայց սա կայ որ  
 իւրաքանչիւր Առաքեալք մէյմէկ մականուհով  
 պատուեցան , ոմանք Վէմ՝ եւ Գլուխ հաւատոյ  
 (որպէս Պետրոս) , ոմանք Սրբար եւ Գլուխ Առա-  
 քելոյ (որպէս Յակոբ Տեառն եղբայր) , ոմանք  
 Վէմ՝ եւ Նախակոչ (որպէս Անդրէաս) , ոմանք Սի-  
 բելի եւ Աստուածաբան (որպէս Յովհաննէս) ,  
 եւ այլն եւ այլն . եւ այս ալ իրենց ընթացից եւ  
 դործքերնէն առնելով . . . :

Եւս դարձեալ եթէ պնդեն, թէ ո՞վ է սոյն  
 Երկոտասան սրբազան Առաքելոյ մէջ Գլուխ, կը-  
 սեմք Յակոբ Տեառն եղբայր սրբազան Առաք-  
 եալը զիճակաւոր Առաջնորդ եւ Նախագահ Ս.  
 Սիմոն կը ճանչուի, իբր Նախապատիւ Անդամ  
 Առաքելոյ եւ իբր Աւագերեց . որն որ սրբազան  
 Առաքեալք կացուցին զկնի Համբարձմանն Քը-  
 ռիստոսի : Այսու ամենայնիւ Նա ալ հաւասարա-  
 պատիւ կը ճանաչեմք միւս Առաքելոյ հետ :  
 Բայց միայն ըստ օրինակի 'ի մէջ Թագաւոր սըր-  
 բազան Առաքելոյ Յակոբ Տեառն եղբայրը կայ-  
 սերակերպ է պատուով , ինչպէս որ վերոգըր-  
 եալ Սուրբ գրոյ եւ Սրբազան Հարց վկայու-  
 թիւններէն հասկցուեցաւ : Ահա՛ տարակոյս ու-  
 նեցող մը կար նէ այս կէտիս վրայ , կարճեմ Աս-  
 տուծով փարատելով զիճաբանութեան տեղի  
 չմնաց , քանզի այս է Եկեղեցւոյն հաւատքը եւ  
 մեր բմբռնումը :

Եւ եթէ վերստին հարցուի մեզ թէ, ի՞նչ է  
 այն, որ Նիկիոյ Ս. Գողովոյն մէջ Ս. Հարք, Հոով-

մայ Աթոռը <sup>առաջին</sup> համարեցին . ատոր վրայօք  
 յաջորդ Մատին մէջ պիտի խօսիմք, եթէ Աստուած  
 կարողութիւն տայ մեզ՝ վերստին աշխատելու եւ  
 'ի լոյս ընծայելու . քանզի օգնական եւ պաշտ-  
 պան մը չունիմք . բաց յԱստուծոյ . . . ըստ ո-  
 բում այս երեք տարի կըլլայ, որ կաթուածով  
 ցաւուց իբր անգամալոյծ կաշկանդեալ կամ  
 'ի մէջ մահճի սպասելով միայն վերին այցելու-  
 թեան . . . զի նմա միայնոյ Լին Աստուծոյ է  
 գթութիւն, կարողութիւն, եւ մարդասիրութիւն,  
 զօրութիւն եւ փա՛ռք յաւիտեանս յաւիտենից  
 ամեն:



## ՅԱԻԵԼՈՒԱՆԻ ԳՐՈՒԹԵԱՆՍ

ԵՒ ՅՈՐԴՈՐ ԱՌԻ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅՆՈՑ ՄԵՐՈՑ

« Յորժամ ոչ կարես զմտու-  
« թիւն ինչ մերժել, կամ դա-  
« նըզգամն խրատել 'ի մէջ ա-  
« տենի, յայնժամ մի լինիր  
« վարդայեա » : \* \* \*

Ապաքեն այս վերոգրեալ մեր գրութիւնները կարդալով անանկ պիտի կարծեն ոմանք, թէ կամ առելու թիւն մը ունինք Պատուելոյն դէմ կամ զանի պախարակելու կը ջանանք, քա՛ւ լիցի . . . : Այլ միայն կըսենք թէ մենք ճշմարտութիւնը ըստ կարեաց մերոց պաշտպանելու եւ Ս. եկեղեցւոյս ծառայութիւն մը ընելու նպատակաւ գրեցինք . եւ քանզի յիրաւի՝ Պատուելոյն բռնած ընթացքը պախարակելի չէ, ըստ որում իւր ներքին համոզումն է՝ բայց մեզից աւ պատճառողը այն է, որ փոխանակ իւր եկեղեցւոյն պաշտպան ըլլալով Ս. եկեղեցիէս բաժանեալներուն դէմ գրելու, անոնց կողմէն գրելով, անոնց օգտին կաշխատի, որոնք որ Ս. եկեղեցւոյս դէմ կը մաքառին յարաժամ մեր հրաշագիւտ սուրբ գրերովը : Սակայն մեզ աւելի ցաւ պատճառողը այն է որ, Պատուելին այն գրութիւնները հրատարակելէն ի վեր 15 տարի ըլլալով, դժբաղդաբար մեր եկեղեցւոյ մէջ մէկ Հովիւ մը անոր դէմ չկրցաւ ելլել, ու անոր

այս մասին գրած մոլորական գրութեան դէմ պատասխան մը գրել, Եւ քանզի այս անձը որքան որ մոլորամիտ համարուի, պատճառն եւ յանցանքը մեր տգէտ եւ դանդաղ ու անձնարած վանականներնու է, որ մեր հաւաքած վերոյգրեալ այսպիսի հետաքրքրական գրեանքը, զոր Նախնիք մեր ժամանակին աշխատելով մեզի ձգած են, ո՛չ զանոնք կարդալով կը հաւաքեն եւ կրօնական Հանդես մը հանելով կը հրատարակեն, եւ ո՛չ ալ իրենք ՚ի գործ կածեն, որով տգէտ ալ մնալով բան մը հարցուցած ժամանակդ, պատասխան մը չեն կրնար տալ շատերը, Մանաւանդ ինչպէս եւ վերը Գ՛րդ երեսին մէջ յիշեցինք, որ վիէննայի Միսիթարեան միաբանութեան կողմէն 1854 թուոյն այլանդակ վարդապետութիւն մը հրատարակեցին, որուն դէմ ալ պատասխան մը չկրցին տալ մեր կղերները, այլ ապուշ ու անտարբեր դիրք մը բռնելով լռութեամբ կեցան, նոյն դժոխային վարդապետութեան դէմ . . . : Եւ ու՞ր թողունք ասկէց քանի մը տարի առաջ, այսինքն 1864ին հանդուցեալ Տատեան Պ. պէյին մահուանը վրայօք եղած տարածայնութիւնները, որ ՚ի կրից շարժեալ Նեռին արբանեակներէն մէկը Կ. Բ. Վ. Ն. ստորագրութեամբ, Հայաստանեայց Ս. եկեղեցւոյս դէմ սարսափելի հայհոյութիւններ ըրաւ, Ս. եկեղեցիս ամենագից մեհեան եւ Բանդէն համարելով, որուն ստորագրութենէն յայտնի եղաւ որ կռօց բերան վայրահաչ նեռ մ'է, (կը-



սեմք ըստ Առաքելոյն, — Արդէն նեռինք բազում եկեալ են (եւ դալոց են) յաշխարհս . . . ) Եւ ահա այս ցնորաբանն ալ դարձեալ անպատասխանի թողուցին մեր կղերները\* : Բայց միայն այս հրէշներուն դէմ ըստ բաւականին մեր Ազգ. Լրագիրք Ազգասիրաբար յիշեալ գրութեանց դէմ գրելով բերններնուն թումբ դրին . սակայն մեր ողորմելի վանականները իրենց թմրութեան քունէն չարթննալով , (կամ գուցէ չկարդալով նոյն օրինակ գրութիւնները) . դարձեալ Չաքարիային բաղդին հանդիպեցան . . . կամ թերեւս սպասելով որ Չամուրճեան պատուելին անոնց դէմ պատասխան մը կուտայ , չդիտնալով խեղճերը , որ այսպիսի իրողութեանց մէջ նա՛ լուռ

---

\* Եթէ գրող ալ կայ նէ՛ այս մասին, մեզի ծանօթ չէ , քանզի չենք հանդիպած , բայց առաւել գոհ կըլլամք , եթէ պատասխան մը տուող չըլլայ այս կերպ գրութեանց դէմ . ըստ որում՝ մէյմը որ անոնց սկզբունքն է մեր եկեղեցւոյն դէմ թշնամանել եւ հետեւաբար վիճաբանութիւն յարուցանել , մէյ մալ որ ընդ իմաստնոց «Վայրահաչութեան դէմ պատասխան լուծիւնն է» կըսեն , եւ մէյ մալ որ ոմանք կելլէն անխորհրդաբար , ոմանք անբաւականութեամբ , եւ ոմանք ալ կրիւք գրելով վիճաբանական ասպարէզ կը բացուի , ինչպէս է Տաթեւացւոյ Սուրբ Հօր գրածները , նմանապէս եւ Պ. Չամուրճեանին գրութիւնները , որուն ալ մոլորութեամբ գործոյ ըլլալը լիր գրուածներէն տեսնուեցաւ , եւ այլն եւ այլն :

կը կենայ . . . Եւ ահա ժողովուրդք այս մոլորութիւնները կարդալով կը մոլորին , քանզի ոչ միայն ասոնք կարդալով , այլ եւ օտար լեզուներ սովորելով անոնց մոլորական գրեանքը կարդալով բոլորովին կը դայթակղին , սրով իրենց եկեղեցիէն կը սլաղին , ու կըսկսին մոլորական սերմունքներ սերմանել Ս. եկեղեցւոյս մէջ , ինչպէս որ օրինակը Չամուրճեանին վրայ տեսնուեցաւ : Այսու ամենայնիւ դարձեալ մեր կղերներէն հոգ տանող մը չկայ :

Եւ ասոնք ալ երկու կերպով կը գտնամք , ոմանք վանքերու մէջ ասպահովապէս մնալով իրենց այլ եւ այլ բաներուն հետ կը մրմնջեն , եւ ոմանք ալ վանքերէն դուրս ելլելով , միանգամայն իրենց վանականութիւնն ալ մոռնալով , կսկսին Առաջնորդութեանց հետամուտ ըլլալ . եւ այնուհետեւ եթէ վարդապետ եղաւ Եպիսկոպոսութեան կը ցանկայ , եւ եթէ Եպիսկոպոս ըլլայ Պօլսոյ Պատրիարքութեան եւ Եմբիածնայ Կաթողիկոսութեան հետամուտ կըլլայ . եւ ապա իւր ուխտը բոլորովին մոռնալով կսկսի մոլորութեամբ նորանոր եւ մօտայ հագուստներ հագնիլ ու կուսակցութիւններ շահիլ . եւ ահա ասանկներուն աշակերտներն ալ ձեռնադրութիւն առնեն նէ , ի՞նչ ողբոյ տէր կըլլան , դնա մտածէ . . . Որնոր ֆրիատսսի սլատու իրածին բոլորովին դէմ ու հակառակն է , ընդամին Առաքելական եւ Հայրապետական կանոնաց բոլորովին դէմ է այս ընթացքը . եւ այսօր ալ ոչ միայն սիրելի Ազգս այս ապօրինաւոր ընթացից

մէջ կը լողայ, այլ եւ մեզնէ բաժանեալներն ալ այս գեղութեանց մէջն են\*, թող բան չունի նէ Առաքեալը սրտայ դոչելով, « Եթէ մե՞ռայք ընդ Քրիստոսի, զի՞ եւս ըստ աշխարհիս կրօնաւորեք . . . Ապա (կրօնէ) զվերինն խորհեցարուք մի՛ զայն որ յերկրի աստ է, եւայն եւայն : » Բայց մերինները ոչ միայն մոլորական գրութիւններով խափուած են, այլ միայնգամայն քանի մը տարիէ ի վեր՝ իրենց եկեղեցւոյն պարզութիւնը ձգելով ըստ աշխարհի անոնցմէ օրինակ առնելով ոմանք մնում թեան մէջ կը լողան. մինչեւ անդամ չար օրինակ ըլլալով ստորին կարգի աշխարհիկ երեցներուն, անոնցմէ ոմանք ալ սկսան ոչ միայն այս անվայել գործոց մէջ լողալ, այլ եւ մեկզմեկու հետ ալ մենամարտիլ եւն՝ եւն՝ Որով պատկառանքն ու ակնածութիւնը վերցաւ եկեղեցւոյ կղերաց մէջէն, այլ նարտերու եւ ուրիշ խաղերու մէջ սկսան պարսպիլ (ի բաց առնելով Արժանաւորները), եւ յիշեալներէն ոմանք կուզեն ամեն օր մօտայի համար քօլալը շապիք եւ ոտից ամաննին ալ եայլը բօթին եւայն հաղնին, որպէսզի ժողովուրդէն բա՛ւալի բա՛ւալի կոչուին : Եւ եթէ հարկ ըլլայ ննջեցելոց հօգւոց

\* Մենք Ազգիս պատմութենէն զիտէինք, որ Աշխարհալին թագաւորութիւննիս Նախարարաց ապրստամբութեան եւ այլ անվայել գործոց համար կորուսինք . . . բայց այժմ կը տեսնեմք՝ նոյն ազետալի անցքերը Հոգեւոր Առաքելութիւններնուս վրայ . . . որ ունիցի ականջս . . . ո՛հ, կորուստ ք՞ի՛քէն է իտայէլ . . .

պատարագ մը ընել տալ, կը դաժնուին անանկները ա՛լ որ այն ժամանակ կ'սկսին սակարկութեան ձեռնարկութիւն ընել, մինչեւ անգամ 60-70 դուրուշ ալ տաս չեն հաճիր ու Պատարաք ալ չեն մատուցաներ, որովհետեւ ոչ միայն իրենց փառացը չեն ձգեր, այլ եւ յիշեալ ճոխութեանց ու անվայել գործոց ալ չօգտէր: Բայց ասոնց հակառակ մեղմէ բաժանեալները, ոչ միայն հինգ կամ տասը դուրուշով պատարագ կը մատուցանեն, այլ եւ այս վերոյիշեալ նախնեաց դրութիւնները հաւաքելով իրենց գործերնուն եկածը մարդ որսալու դիտաւորութեամբ 'ի ըյս կընծայեն: Սակայն մերինները ապուշ ընթացք մը եւ անտարբեր դիրք մը բռնելով, միայն իրենց անձնական շահուն կը նային, եւ ննջեցեալ կը փնտռեն որ քանի մը ստակ շահին:

Եւ ապա ամեն օր կերլին կը պօռան ու կը պօռան, թէ եկեղեցին մարդ չիգար կոր, եւ ժողովուրդնիս կը ցրուի կոր եւ այլն եւ այլն. բայց անդին ժողովուրդը յուսահատաբար կը ցրուի՞ կոր, կամ թէ դայլերը զանոնք կը յափշտակեն կոր, հոգերնին անգամ չէ. եւ կամ թէ վերոյիշեալ գրութիւնները վանքերը միթէ կը փախն կոր, անննց ալ հոգ տանող չկայ. այլ կը դաժնուին անանկ անպիտան ու տղէտներ ալ, որ հետամուտ կըլլան զանոնք ալ ձեռք ձգելով իրենց թնամեաց վաճառեն՝ իրենց անիրաւ շահուն համար. . . Բայց եթէ դուն ուղերու որ ըլլաս՝ օրինակը տալ անգամ կը խնայեն. . . զորս ամեն օր

տեսածնիս եւ զդացածնիս է, (որոնց համար բաւական խոսած եմք միւս դործերնուս մէջը, մանաւանդ «Տեսարան Էջայկական եկեղեցւոյ» ըսուած աշխատութեանս մէջ, որ դեռ չէ հրատարակուած, այլ հրատարակուածները տե՛ս Սէրէասի Պատմութեան Յառաջաբանին մէջ, եւ Նկարագիր Աղէտից Երուսալէմայ, եւ Դատաբըննութիւն Դատաքննութեանց մակադրով գրքերը\*)

Ուրեմն ինչպէս որ ըսի վերը, ըստ մեզ ահա ասոնք տեսներով, վասնորոյ պատուելին ալ օտարաց դրութիւնները կարդալով հետեւած է անոնց դրութեանը, եւ ինչպէս ըսինք վերը, յիշեալ անձը այս մասին յանցաւոր չի դատուիր, քանզի թէ իրեն եւ թէ Հռովմէականաց ստացած սկզբունքն է որ կը գործածեն, բայց մենք չգիտեմք որ ինչ կընենք . . . : Ո՛հ, ըստ Ռսկերեբանի որ ասէ. «Ձի աշխատութեանցն են հատուցմունք, եւ ուսցի՛ս, թէ գործքն քան զնշանըս առաւել պիտանացու է . . . ապա քահանայ իցես, ո՛չ գործիցես եւ մեղանշես, կորեա՛ր» (ի Տեսութիւն Գործք Առաքելոց, ձեռ. ):

Բայց գիտեմք այս գէշութեանց ուսկի՛ց պատահիլը, մէյ մը որ կրթութիւն չունենալով ունախնի Սրբազան Հարց գրքերը չկարդալով . . . եւ մէյ մ՛ալ որ դպրութիւն չունենալով է. . . :

Եւ քանզի եկեղեցի ըսածդ երկնային բուրաստան մ՛է, եւ այն բուրաստանին մէջը փշեղէն եւ վայրենի ու անպտուղ ծառեր չանկուիր,

այլ պատուաւանած ու պողատու ծառեր, եւ մենք նախ պտուղները չորցուցինք, եւ հասցունելու ալ չենք աշխատիր, քանզի Աստուծոս (ժողովուրդը) պիտի տնկէ, Պօղոս (քահանան) ջուր պիտի տայ, որ Աստուած ալ աճեցունէ որ պտուղ տայ: Բայց մենք միակ մեր շահուն եւ մեր ղեղխութեանը պարապելով, չի մտածեցինք եւ տակաւին չենք մտածեր, թէ այս եկեղեցին ի՞նչով կը դառնայ: Կրտսեմք խոնարհաբար, թէ եկեղեցւոյն պայծառութիւնը ու յառաջանալը ուսմամբ եւ ձայնաւորով՝ այսպինքն դպրելով կըլլայ, որն որ եկեղեցականութեան սերմնն է, ուրկէ արժանաւորները ընտրելով Սարկաւարդ Բահանայ կըլլայ, եւ օրինաւորապէս կը յառաջանայ՝ ոչ թէ նիւթապէս, այլ բարոյապէս կը դարգանայ եկեղեցինիս, յոյնժամ որպէս ձիթենի պողալից՝ ի Տան Աստուծոյ տեսանելով եւ շրջելով՝ մենք ժողովուրդքս ալ պտուղներն կը քաղենք, բայց ինչպէս ըսի չորցունելու պտտածաւ եղան ու կըլլան, որ ոչ միայն Պօլսոյ մէջ այլ դերագոյն Աթոռներու մէջ անգամ տեսանք այս ցաւալի տեսարանը:

Եւ գիտեմ՝ այս մասին պիտի ըսուի թէ 40 տարիէ՛ ի վեր քանիցս անգամ այդ մասին աշխատեցանք, սակայն ձեռնուհայն ելանք. զոր օրինակ հոգեւոյս Պէղճեան Յարութիւն ամիրային բացած ուսումնարանը, ուրկէ օրինաւոր կղեր պիտի ելլեր, եւ նոյն Հանգուցեւոյն կտակաւ թողած եւ Սաքայեան Մարտիրոս ամիրային պաշտ-

պանութեան տակը ձգած երաժշտութեան  
ուսման համար բացուած դպրոցը, (որուն եւ-  
մենք ալ աշակերտեցանք) . եւ ճեմարան ան-  
ւամբ Ազգային վարժարանը, եւ հանգուցեալ  
Ֆիզիքայ Պարոն Պօղոս վարժապետին հովանա-  
ւորութեան տակ բացուած դպրոցը. նոյնպէս եւ  
ժառանգաւոր հասցնելու համար Տ . Երեմիա  
ուսումնական քահանային տեսչութեանը տակ  
եղած դասարանը եւ այլն եւ այլն:

Ահա ասոնց ամենէն ալ ըստ բաւականին ար-  
դիւնք մը չեղաւ, եւ ընդունայն տեղը վատնուե-  
ցաւ այնքան գումարներն ու աշխատութիւնները  
պիտի ըսեն. եւ մենք ալ պիտի ըսեմք այս՝

Բայց խնդիր մը կայ որ ազգին բնաւ ո-  
րութիւն եղած է որ, ով ոք որ առուօտուն  
կանուխ ելնէ՝ կսկսի օրէնք եւ սահման մը  
դնել եւ իւր նպատակը յառաջ տանելու աշ-  
խատիլ, եւ այս ալ շատ ժամանակ ատելու-  
թիւն յարուցանելով եւ կամ կուսակցու-  
թեամբ եւ երբեմն շահասիրութեամբ եւ կամ  
ինքնապանծ սնախառութեամբ, եւ շատ ժա-  
մանակ ալ իրենց նախնի հարցը ընթացից չհաւ-  
նելով՝ կուղեն որ նոր բան մը հաստատել, եւ  
եթէ յառաջ չերթալու ըլլայ, կը յուսահատին  
եւ այնպէս որ՝ իբր դասալիք Լքեալ կը թողուն.  
եւ ահա նոյնպէս ալ այս խնդրոյն մէջ կը տես-  
նուի. Բանդի շատ բանի մէջ այս՝ նոր բանի հետե-  
ւելիլը արդիւնաւոր կըլլայ. բայց այս բանիս մէջ  
ասպարդիւն. որովհետեւ նախնի Հարք մեր սուրբ

Եկեղեցին իբր գործարան ըրած են կղերականութեան, որ հօն մշակութիւն ու սպասաւորութիւն ընողներն ալ վարժուելով յառաջանան . եւ ապա եկեղեցւոյս պիտանի անդամ ըլլան , եւ այս ալ ձրի սահմանած են , ուստի ասկէց ի՞նչ արդիւնք կելլար ու կելլայ , դ՛նա մտածէ ո՛վ քրիստոնեայ . . . Բայց մենք ասոր հակառակ շարժեցանք ու դեռ կը շարժիմք, փոխանակ այս բուրաստանին մէջ գտնուած ծաղիկները յարդելու , անարդելով եւ դուրս ձգելով ոտից կոխան ըրինք ու կընենք ամեն օր , եւ նորէն մշակելու ու տնկելու ալ չեմք աշխատիր . այլ կուղենք որ չմշակուած եւ անպտուղ ծառեր յառաջ բերենք այս բուրաստանին մէջ , աւա՛ղ . . . .\*

\* Այս մասին գիտեմ, ոմանք պիտի ըսեն թէ իրենց պարտաւորութիւնը չճանչելով պակասութիւն կընեն, ոմանք ալ ծոյլ են, ոմանք ալ անպիտան են եւ այն . կըսեմք այո՛ . բայց խնդրոյն մէջ երկու կէտ կայ, որով կարծեմ իրաւունք չունենար այդ դատողութիւնները ընողը . մէյ մը որ եթէ ուղեմք շուտ մը կարգի կրնայ մտնել , մէյ մ՛ալ որ Հրեշտակային սպասաւորութիւն է ըսելով՝ անմարմնոց դասէն համարած են ձայներդագ դպիրները, որն որ ծուռ եւ սխալ է այս ըմբռնումը , քանզի գրեալ է թէ՛ «Ձի որ գսեղան Տեառն սպասաւորեսցէ՛ ի սեղանոյ անտի կերիցէ» : Բայց այս Առաքելական խօսքը միայն մեր Հոգեւորականք առեր են իրենց վրայ , եւ առնելով ալ գօնէ՛ փշրանքն անգամ չեն տար՝ սպասաւոր դպրաց : Ահա այս ալ անխոհեմութիւն մ՛է որ միայն դատել



Եւ չդիտանալով որ Աստուած երբեմն հրեշտակ սատան կուտայ մարդուս եւ երբեմն խրթան զարթուցիչ, գրեալ թէ ասոնք (հերձուածողներն) ալ Աստուած մեզ իբր պատիժ մեր գլխուն տուած է, որ սթափինք մեր թմրութեանէն . . . 'ի վերայ այսր ամենայնի մենք ապուշ

դիտենք, այլ ինչով կը շահուի գպիրները՝ ան չենք դիտեր, կամ չենք ուզեր տեսնել, ահա անխոհեմութեան ու անկարգութեան սկիզբը մեր եկեղեցիէն կ'սկսի . . . եւ գոնէ մեր գրացի ազգերէն օրինակ ալ չեմք առնել, այլ միայն անոնց մոլութիւնները կառնեմք ու կը տեսնեմք . . . որուն համար զոհ դացած ենք տասը տարիէ 'ի վեր . . . բայց մինակ գտնուելով, եւ աչակից չունենալով եւ ապերախտ ու ամարդի անձանց դիպելով չկարացինք կատարելագործել . . . որն որ ես 48 տարի այս գործին մէջն գտնուելով լաւ փորձառու եմ . . . Քանզի մեր հռչակաւոր Ս. Գէորգ եկեղեցւոյն դպրաց դասին մէջ, ասկէց հարիւր տարի առաջները 80էն 100 գպիր ըլլալը արձանագրութիւններէն գիտեմք, որոնցմէ միայն մենք 50ին հասանք, բայց այսօր 5 հատ օրինաւոր գպիր հազիւ թէ կելնէ, դնս մտածէ թէ՛ սէր ենք հասեր ով ընթերցող, քանզի յարգ եւ պատիւ տալ չենք գիտեր, մինչեւ անգամ Տէր-է ըսելով ծաղր ալ կընենք . . . Ապա ուրեմն սակից պիտի ծաղկի, ահա անխոհեմութեան վերջին կէտը

Ասկից դատ կուղենք որ նիւթական եկեղեցի շինենք, բայց բանաւոր եկեղեցիներուն հոգ տանող չկայ. եւ այս ալ Ազգիս ուշադրութեանը կը յանձնենք որ լաւ մտածեն :

նոտած ենք . անոնք իրենց սկզբունքը կը պաշտպանեն , բայց մենք մեր ճշմարիտ սկզբունքը չենք պաշտպանէր . այլ միշտ սովորած ենք սուսուս բայը եւ ուրեք կարգալ եւ ոչ ուրեք եւ աւելորդ բայերը . . . Եւ միշտ ալ սովորած ենք պարծենալ մեր նախահարց անուամբը եւ բարեգործութեամբը , չգիտնալով որ թուր ըսած դ. քանի որ պատեանին մէջ մնայ , առանց գործածութեան , յայտնի է որ կը ժանդասի . ահա ասոր նման է մեր եկեղեցականութեան այժմեան ընթացքը , եւ դո՛նէ հասարակութենէն ալ չենք զգար , որ քանի մը տարիէ 'ի վեր արթննալով իր խոր քունէն եւ ընկերութիւններ կազմելով ու դպրոցներ բանալով՝ արտաքին դիտութեամբ յառաջ կը քալէն , որով դրեալ թէ եկեղեցւոյն դրանը մէկը արդէն տուինք ժողովրդոց : Բայց մենք դեռ անտարբեր նստելով չենք զգար թէ եկեղեցականութիւնը ինչո՞վ կը յառաջանայ , դո՛նէ ներքին դիտութեամբ ալ մեր կղերները կամ կղերաց դասը , ժողովրդէն օրինակ առնելով յառաջանալու փոյթ չենք տանիր . վախճմայս ընթացքով եկեղեցւոյն միւս դուռն ալ պիտի տանք ժողովրդոց :

Ըստ Ռսկերեքանի որ կըսէ , ուշտամբեաց (Պօղոս) զգատարկակեացսն , եւ ստահակս կոչեաց , եւ թէ ոչ գործիցէ՛ եւ կերիցէ մի՛ ո . (Պտաճառ Առաքելոյն չորեքտասան թղթոցն Պօղոսի ձեռագիր) : Ի՞նչանդի ըստ Առաքելոյն մարմնոյ կրթութիւն օգտակար է . բայց Աստ-

ւած պաշտութիւնն առաւել քան զառաւել եւ  
 աւերտիս կենացն ունի ։ Ո՛հ, արթնցէք Հո-  
 վիւք . . . եւ բարեպաշտ ժողովուրդք, ար-  
 թընցէք դուք ալ, Ազգիս պատմութիւնները  
 կարգացէ՛ք, որ տեսնէք, թէ՛ Ազգիս մինակ միտ-  
 թարութիւն եւ պարծանք մի միայն սուրբ Կը-  
 րօնքնիս մնացեր է. ուրեմն այն ալ մեր անխոհեմ  
 ընթացքովը, այսինքն՝ պարզութիւն չսիրելով՝  
 ստակի մը չվաճառենք. աղաչեմ՝ երես անկեալ  
 ինչպէս որ աշխարհային դբօսանաց մէջ կը տա-  
 պալիմք նէ՛ դոնէ քիչ մ'ալ եկեղեցասէր ըլլա-  
 լով, եկեղեցիներս պայծառացընենք : Եւ այս ը-  
 սելով մեզի կրօնամոլ չհամարէ՛ք . այո՛, թէ եւ  
 մարմնոյ կրթութիւնը օգտակար է, բայց հո-  
 գեւոր կրթութիւնը առաւել քան զառաւել .  
 քանզի գրուած է թէ՛ « Եկեղեցիս օրհնցէք  
 զԱստուածո՛ր, եւ ոչ միայն զբօսավայրերը զուար-  
 ճացէք : Որովհետեւ ոչ թէ միայն եկեղեցի-  
 նիս մեր Նախնեաց արեամբը մնացեր է, այլ եւ  
 ինչպէս կըսէ Տէրն մեր « Հոգի առաւել է քան  
 զկերակուր, քան զզուարճութիւն մարմնոյ եւ  
 քան զհանդերձ » : Ահա պատգամ Աստուծոյ . . .  
 Ուրեմն զօգուան ձեր դուք գիտէք :

Ի վերջ բանիս, թէպէտ եւ քաջ գիտնա-  
 լով զասոնք, կը կրկնեմք մերխօսքը եւ ուղղա-  
 փառութեան ու ճշմարտութեան դալով կըսեմք,  
 ինչ որ երեւելի Հանճարին մէկը ասկէց վեց  
 դար ու կէս յառաջ իր հակառակօրդին դէմ  
 զրուցեց, թէ « Ոչ միայն նոր պիտի սովորեմք ուղ-

դափառութիւնը, այլ նախնի Հարց անտի առ  
մեզ իջանէ » (Լամբրոնացի) : Եւ եօթը դար ա-  
ռաջ ալ՝ ներսէս Շնորհալին Յունաց կայսեր դէմ  
զրուցեց, նոյնը եւ մենք կը կրկնեմք մեզի դէմ  
մաքառողներուն թէ, « Բանդի աւանդութիւն  
Եկեղեցւոյ մեր զոր ունիմք, 'ի վկայութենէ  
Աստուածաշունչ դրոց հաստատեալ են եւ մնաց-  
եալ » (Ներս . Շնորհ . Պախն . Գ . ընդդէմ Թա-  
դաւորական դրոյն) : Եւ ահա այս է մեր հա-  
ւատքը, եւ այս է մեր հակառակորդաց դէմ  
զօրաւոր, համառօտ եւ վերջնական պատաս-  
խանք : Բանդի հաւատք ըսածդ հանգերձ չէ որ  
փոխուի կամ՝ նոր ձեւ առնու . . . :

Եւ դիտեմք որ այսպիսի գործոց մէջ շատ  
մը նախանձորդներ եւ շատ մ'ալ դատաւորներ  
կը դանուին, մանաւանդ Հայկայ արիւն չունե-  
ցող եւ շատ բան դիտցող հոգւով եւ մարմնով  
ճիշդ լիթներուն շարձուած անձինքը . . . կրեմք  
ճշմարտութիւնն է խօսողը եւ ոչ մենք . ուրեմն  
թող չզայրանան, քանզի ինչ որ Սուրբ Եփրեմ  
Ժամանակաւ Յունաց դէմ զրուցեց, նոյնը եւ  
մենք կը կրկնեմք այժմ՝ մեզի դէմ մարանջող-  
ներուն . « Մի արամեացին Յոյնք, զի համարձա-  
կեցաք մեք մեկնել զՆոր կտակարանս, որպէս  
եւ ոչ Ասորիք արամեցան, փասն մեկնելոյ Յունաց  
զՀին կտակարանս » ('ի Պճռ . Հռովմ . թղթին) :  
Ուստի եւ մեք նոյնը կը կրկնեմք Սուրբ Եկե-  
ղեցւոյս դէմ մաքառողաց, թէ չզայրանան ու  
չ'արտմին Լատինք կամ Լատինացեալք : որ իրենն  
գրեանքը դատաքննեցինք . քանզի իրենք մեզի

դէմ մարտնջելով, եւ մեր Սրբազան Հարց գը-  
րու թիւնները իրենց ձեռքը փաստ մը առնելով՝  
վայրապար եւ մտայածին վարկածներով հակա-  
ռակութիւն եւ վէճ յարուցին Սուրբ Եկեղեց-  
ւոյս դէմ հայհոյելով, բայց մեք Հայքս չտրտ-  
մեցա՞նք: Ուրեմն իրենց տարտապայման նետած  
քարերուն դէմ՝ եթէ մեր գրչէն ալ ծանր ու  
նախատական խօսք մը որ ըստ տեղւոյն տեսնեն՝  
անմեղադիր ըլլալով, դիտնան թէ իրենց նետած  
քարերուն արձագանքն է . . . Քանզի Սուրբ  
Եկեղեցւոյս ու մեր նպատակէն բոլորովին դուրս  
է, այլոց խղճին եւ կրօնին ու ըմբռմանը վրայ  
դատաւոր ձեւանալով, դատել ու սրտարակել:  
Եւ վարդապետութեանս ու դիտողութեանս մա-  
տին Ս. Եկեղեցւոյս արժանաւոր Հովուաց եւ Հով-  
ւապետաց եւ հմուտ ու հեռատես Անձանց դա-  
տին կը ներկայայնեմ: Եւ գիտնալով, որ մեզնէ  
չատերը չեն հանդիպած վերոյիշեալ գրու-  
թեանց, (եւ դեռ եւս հանդիպած ալ ըլլան.  
քառ աչօք չեն կարգացած որ տեսնեն), վասն  
որոյ մեք հանդիպած եւ հաւաքած ըլլա-  
լով, ահա իբր ծաղկանց փունջ մի ներկայացուցի  
Սուրբ Եկեղեցւոյս, եւ ես իբր մուշեմիկ գործոյս.  
յուսով եմ որ Աստուած մեր քրտնաջան աշխա-  
տութիւնը կը սրտակէ, քանզի Նորա փառացը եւ  
Նորին Սուրբ Եկեղեցւոյ որդւոյը համար աշխա-  
տեցայ . . . :



## Վ Ր Ի Պ Ա Կ Ի Ք

Էջ	ՏՈՂ.	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ.
43	8	Մասին	Հատոր
48	17	Ավանեցի	Աղուանեցի
30	12	պատմութիւնք	պատմութեանք
39	11	աներեւոյթաբար	աներեւութաբար
42	24	անելանի	անելանելի
52	10	բարր է	բարրի
59	2	խօսքեր	խօսքերը
66	24	չբսեմք	չստէմք
86	11	հաստատեցիսյեղ.	հաստատեցես զեղ.
87	7	խօստացեր	խոստացեր էր
89	26	Է-Է-Է-Է-Է	Է-Է-Է-Է-Է
101	4	Աստուածոցն	Աստուածայնոցն
»	12	խօսքը	խօսքին
105	1	տուած	դրած
106	3	դուրցած	դրցուած
108	28	թուահաարովմ	թուահամարով
112	2	ոք	ոք որ
113	25	զլութ	զլութս
114	23	Պրսուսիացիին	Պրուսացիին
119	30	անէլ	ալ նէ
122	16	սենն	ասեն
123	16	հողինուդ	հողունուդ
131	13	իցեմ	իցեմ քան
»	23	Արեւելցւոց	Արեւելցւոյ
141	7	կարդացկալ	կարդացեալ
148	21	կախուղիկոսին	կաթուղիկոսին
149	16	մեր	մեր Ս.
152	6	Արեւմտեան	Արեւելեան

Էջ	ՏՈՂ	ՄԻՍԼ	ՈՒՂԻՎ
155	2	Աւածոււայարդեւ	Աստուածապարդեւ
166	30	այս	Պ
169	3	կարդաով	կարդալով
170	15	միայե	միայն
»	26	ցայս նոյնը	ցայս վայր
171	17	վեայ	վերայ
172	4	վարդադետութիւնը	վարդաստութիւնը
»	»	զայլ քաւ	քան զայլ
174	22	հրահալար	հրահալար
180	19	արտիւղի	արտիւղի
184	11	աշակերտայ	աշակերտաց
186	26	ըստ	ընդ
196	43	ըսին	ըսինք
195	16	մատենադար	մատենադարան
204	43	եկեղեցեաց	եկեղեցւոյ
109	8	նոյն	նոյն
214	20	թղթոյ	թղթոց
»	30	յայս	ցայս



## Յ ՈՒ Ց Ա Կ

### Ի ՆՄԻՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ

- |  |     |     |
|--|-----|-----|
| 1. Պատմութիւն Սէբէոս եպիսկոպոսի  | ԳԻՆ |     |
| 'ի Հերակլին  | 30  | ՂԸ. |
| 2. Նկարագիր Աղէտից Երուսաղէմի  | 25  | »   |
| 3. Գատաքննութիւն Գատաքննութեանց  | 15  | »   |
| 4. Ճառ Հաղորդութեան եւ Ս. Պատարաղի   | 5   | »   |
| 5. Յուցակ Հայկական լրագրաց եւ հանդիսից , որոնք որ 80 թուով են այսինքն 1794 թուականէ մինչեւ 1863 թուական , աես փարիզ անուն լրագրոյ թիւ 66 , 97 , 98 |     |     |
| 6. Յատկութիւն Արարադայ եւ Նորին Ս. Եկեղեցւոյ   | 5   | »   |
| 7. Հրարուխ Արարադայ , Հատոր Բ.   | 23  | »   |
| 8. Նորին երեք մասէն առանձին առանձին ապուած   | 24  | »   |

Ասոնք խնդրողը կրնայ հեղինակին՝ Շուկան թիւ 62 : Դրասենեակը եւ կամ դրավաճառաց քով դանել :



